

4696

ЗКПІ

Л-32

80

Ն. ԼԵՄԱՆ ՅԵՎ Ս. ՊԱԿՐՈՎՍԿԻՑ

Ա.Ջ ԹԵՔՄԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱԿՈՒՆՔԸ

ԸՅԿ. ԲՈՒԽԱՐԻՑԻ
ԱԽԱՂՆԵՐԻ ԵՎ ՔԵՖՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թարգմանված ռուսերեն լեկտորի փոփոխված լեզվ
լրացված հրատարակչությունից

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ—1930

15 JUL 2005

Ն. ԼԵՄԱՆ ՅԵՎ Ս. ՊԱԿՐՈՎՍԿԻՑ

ՅԿՈՂ

L-32

**Ա.Չ ԹԵՓՄԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱԿՈՒՆՔԸ**

6097
38

ԸՅԿ. Բուխարինի
սխալների յեղ բեհումների մասին

Թարգմանված ուսուրեն յերկրորդ փոփոխված յեղ
յրացված հրատարակոյունից

219

Handwritten scribbles and numbers

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ—1930



30 APR 2013

4696

ՅԵՐԿՐՈՐԴ ՇՐՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Կուսակցութեան գլխավոր գծի դեմ յերկարատեւ, համառ պայքար մղելուց հետո աջ ուպոզիցիայի լի-դերները ընկ. ընկ. Տոմսկի, Բուխարին յեւ Ռիկով վար դրին գնքերը: 1929 թ. նոյեմբերի 25-ին Համ. ԿԿ(ը) Կենտկոմին տված իրենց հայտարարութեան մեջ հի-շյալ ընկերները սխալ համարեցին այն գիծը, վոր հա-կադրում ելին իրենք կուսակցութեանը վերջին տարի-ների ընթացքում: «Մեր հայացքները, գրում են ընկ. ընկ. Տոմսկի, Բուխարին յեւ Ռիկով,—արտահայտված ծանոթ փաստաթղթերում, սխալ դուրս յեկավ... Այս վեճում (կուսակցութեան հետ ունեցած իրենց վեճը— Հեղ.) նիշտ դուրս յեկավ կուսակցութեանը յեւ նրա կենտկոմը*):

Հնգամյակի սուաջին տարին, «մեծ բեկման տա-րին», իսկապես ցայտուն կերպով ցույց տվեց կու-սակցութեան գլխավոր գծի նշտութեանը, բար-բարի վրա չթողնելով աջ ուպոզիցիայի մուսյլ մարզարեու-թեաններէից յեւ դեն շարտելով նրանց մտացածին զր-պարատութեանները: Դյուդատնատութեան «դեզրագա-ցիան», վոքպես հետեւիանք իբր թե կուսակցութեան անց կացրած «ուազմա-ֆեոդալական շահագործման» զյուզացիութեան վերաբերմամբ, ինդուտորիացման



705-83

Հրատ. № 1118

Գրառեպ. № 5016 (ը) Պատվ. № 331 Տիբ. 5000

Պետհրատի Յերկրորդ Տպարան Յերեանում

*) Տես «Պրավդա» № 276, 1929 թ. նոյ. 26:

յեւ կողեկտիւացման մեջ առնված տեմպերի «անիրականութիւնը», հացի կրիզիսի անխուսափելիութիւնը—ազերի այս բոլոր պնդումները վաղուց ջախջախված են մեր սոցիալիստական արշավի ընթացքով: Ջախջախվելով կյանքից յեւ վեռական հակահարված ստանալով կուսակցութեան ամբողջ մասսայի կողմից՝ աջ ուպորտյունիստներն անճնատուր յեղան կուսակցութեան առաջ:

Բայց սխալ կլիներ յենթադրել, թե աջ ուպորտիցիայի իդերների անճնատուութիւնը անտեղի յեւ անկարելի է դարձնում պայքարը աջ թերման իդեոլոգիայի դեմ, ինչպես յեւ վերացնում է կամ թեկուզ յետին պլանի վրա յե տանում աջ թերման գաղափարական ակունքները պարզելու խնդիրը: Իդերների անճնատուր լինելով չի դադարում պայքարն աջ թերման դեմ՝ թե իդեոլոգիայի յեւ թե առանձնապես զործնականի ասպարիզում: Ընկ. Բուխարինի հայացքները, վորն ինքը այժմ սխալ է համարում, հանդիսանում են գաղափարական պատփորմա թե մեր կուսակցութեան յեւ թե Կոմիւնտերնի մեջ յեղող ուպորտյունիստական ամեն տեսակ տարրերի համախրմման համար:

Այս հայացքները վաղուց իրենց վահանի վրա յեն վերցրել նայել բուրժուական զանազան տնտեսագետները, վորոնք դեռ բուն են դրել մեր ապարատի ճեղքերում, ակամա դեպի այդ հայացքներն են ձգտում մեր կուսակցութեան գլխավոր գծի ճշտութեան մասին բոլոր կասկածողները յեւ տատանվողները, վորոնք ցանկանում են մի կերպ կամաց-կամաց զնալ դեպի սոցիալիզմ, յերագում են յոլա զնալ առանց դասակարգային պայքարի:

Յեւ դժվարութիւնների ամեն մի սրում սպառնում է դարձյալ ուժեղացնել մանր-բուրժուական տատանումները՝ թե «ձախ շեղումների» յեւ թե առանձնապես աջ, ակնհայտ ուպորտյունիստական թերումների ձեւով, վորոնք ընկ. Բուխարինի մշակած ծրագրի մեջ կգտնեն հիմք իդեոլոգիական ձեւ ստանալու համար: Դրա համար մեր ամբողջ կուսակցութիւնը պետք է յուրացնի ազերի դեմ մղված պայքարի դասերը, ազերի գաղափարական-քաղաքական պլատփորմի եյութիւնը, ինչպես յեւ այդ պլատփորմի թեորիական արմատները:

Բուխարինն էր, վոր ընկ. Սորինի «կուսակցութիւնը յեւ ուպորտիցիան» աշխատութեան առաջաբանում գրում էր, թե «գուցե յեւ չկա ավելի լավ միջոց ուսումնասիրելու լենինիզմը, քան շարունակ համեմատելով նրա գիծը մեր կուսակցութեան ներսում, կամ նրան «մոտիկ» յեղող՝ լենինիզմին հակառակորդ հոսանքների գծի հետ»:

«Յուրաքանչյուր մոմենտում,—գրում է ընկ. Բուխարինը,—ամեն մի յերկրում մանր-բուրժուական թերումները կարող են յերեւան գալ զանազան ձեւերով: Բաց անել այդ ձեւերի մեջ նրանց եյութիւնը (մի կողմից՝ սոցիալական, մյուս կողմից նրանց «լոգիկայի» տիպը) միաժամանակ «հետաքրքրական» յեւ զործնականորեն չափազանց կարելի խնդիր է: Դա յե հենց այդ թերումների «լուրջ ուսումնասիրութեան» պրոբլեմը:

Ընկ Բուխարինն էր, վոր գրում էր իսկապես պատմութեան գիրկն անցած «ձախ» կոմմունիզմի մասին: Իսկ ավելի այժմեական յեւ անհրաժեշտ է աջ

Թեքման գաղափարական արմատները պարզելու խընդիրը, մի Թեքում, վոր դեռեվս հեռու յե պատմության զիրկն անցնելուց, յեվ շարունակում ե մալհեղափոխության զարգացման ժամանակակից շրջանի գլխավոր վտանգը: Պետք ե ասել ուղղակի, ընկ. Բուխարինին աջողվեց իր Թեորիական մտակառուցումների մեջ լիակատար ձեւով արտացոլել մանր բուրժուական յեվ բուրժուական տարերքի յեվ նրանց իդեոլոգիայի ճնշումը: Իրա համար պայքարել այդ իդեոլոգիայի դեմ՝ նշանակում ե պայքարել ընկ. Բուխարինի Թեորիաների դեմ: Այդ պայքարը խոստացել ե մղել այժմ յեվ ընկ. Բուխարինը իր նախկին համախոհների հետ:

«Պայքարի ժամանակ, — գրում եր ընկ. Բուխարինը Վ. Սորինի գրքի նույն առաջաբանում, — այդ կովի գործակալների համար չափազանց դժվար ե լինում հաճախ Թափանցել մինչեվ սեփական դիրքի արմատները: Ճշմարիտ լույսի տակ տեսնելու համար այդ պայքարը՝ վերին աստիճանի ոգնում ե այդ պայքարի պատմական արմատների անալիզը, ուրիշ կրուիվներից անդադար ձգվող պատմական ժառանգորդության Թելերը, վորոնց հասարակական իմաստը արդեն պարզ ե»:

Աջ Թեքման պատմական գաղափարական արմատների ուսումնասիրությունը իսկապես մինչեվ վերջը մերկացնում ե այն իդեոլոգիայի յեվ տակափկայի ըզվիզիոնիստական եյությունը, վորը վերջին տարիների ընթացքում այնքան կատաղի յեվ համառ կերպով պաշտպանում եյին ընկ. Բուխարինը յեվ նրա համախոհները, որչեկտիվորեն արտացոլելով յերկրի

կապիտալիստական տարրերի ընդդիմությունը մեր սոցիալիստական հարձակման: Աջ Թեքման գաղափարական պատմական արմատների ուսումնասիրությունը կոզնի լիովին բաց անելու նրա «հասարակական իմաստը»:

Առաջին հրատարակության առաջաբան

Ներկա աշխատանքի նպատակն է հետևել ընկ. Բուխարինի սխալների ու թեքումների պատմությանը: Դրա անհրաժեշտությունը բղխում է նրանից, Վոր, յեթե ընկ. Բուխարինի աչքի ընկնող ծառայությունները, մասնավորապես 1923—1927 թ. թ ընթացքում արոցկիզմի դեմ մղվող պայքարում, հայանի յե կուսակցության ամեն մի անդամին, ապա նրա պայքարը Լենինի և Լենինիզմի դեմ և ծրագրային ու տակտիկական հարցերի շուրջը, շատ ավելի քիչ է լուսաբանված վոչ միայն հանրամատչելի բրոշյուրներում, այլև հաճախ զուտ հետազոտական բնույթ կրող աշխատություններում: Նույնը վերաբերում է Բուխարինի, նաև վորպես տեսաբանի: Մեր մամուլում քիչ են վերլուծվել նրա շեքումները մարքսիզմից:

Սակայն, բրոշյուրը նպատակ է դնում վոչ միայն, կամ ավելի ճիշտ՝ վոչ այնքան ակադեմիական պատմական հետազոտություններ անել այլև նպատակ ունի ոգնելու՝ ըմբռնել ժամանակակից տարածայնությունները, մինչև վերջը հասկանալ ժամանակակից աջ թեքման ռեզիդուստական եյությունը, մի թեքման, վորի իդեոլոգիան, ընկ. Բուխարինի վերջին մի շարք յեյություններում, ձևակերպված է վորպես հայացքների բավականին լրիվ մի սիստեմ:

Իմպերիալիզմի գնահատական հարցերում, աջ ուղղակցիայի առաջնորդ և տեսաբան ընկ. Բուխարինը, կոմինտերնի դեմ մղվող պայքարում, հանդես է գալիս տեսական հին դեմքերով, ուժեղ կերպով հենվելով բուրժուական վուլգար անտեսագետների վրա: Այստեղ, ընկ. Բուխարինի հայացքների հակալենինյան եյությունը հանդես է գալիս շատ պարզորոշ կերպով:

Մոցիալիստական շինարարության հարցերում, կարծես, վոչ մի ընդհանուր կետ չկա 1925—1929 թ. թ. աջ թեքման և մեր

հեղափոխութեան հերոսական շրջանի ձախւթը դարձնել միջև Մակայն, ուստի ընտանացիները ցույց ե տալիս, վոր չնայած արդև աջ ուղղութիցիայի և ձախ կոմունիզմի հայացքներէ բոլոր տարբերութեաններին, չնայած սոցիալիստական շինարարութեան հարցերում տեղի ունեցող տնցյալ և ներկա տատանումների արտահայտման ձևերի ամբողջ բազմազանութեան, նըրանց եյությունը հանդիսանում ե մանր-բուրժուական թեքումը, իոկ գաղափարական տեսական հիմքը՝ լենինյան դիալեկտիկան չհասկանալը:

«Պատմութեան ամեն մի յուրահատուկ շրջադարձը—գրում եր Լենինը—վորոջ փոփոխութեաններ ե առաջ բերում մանր-բուրժուական տատանումների ձևերի մեջ, վորոնք միշտ տեղի յեն ունենում պարբտարիատին հարակից, միշտ թափանցում են պարբտարիատի միջավայրը այս կամ այն չափով: Մանր-բուրժուական ռեֆորմիզմը, այսինքն՝ դեմոկրատական ու սոցիալ-դեմոկրատական բարեհոգի ֆրագներով, յեվ անդոր ցանկութեաններով քողարկված լախյութեանը բուրժուադիայի առաջ, և մանր-բուրժուական հեղափոխականութեանը՝ խոսքով անեղ, վրք-ված, գոռոզամիտ և իրականում ցրվածութեան, դատարկագլխութեան մի անսպառտ,—սրանք են այդ տատանումների յերկու «հոսանքը»: Դրանք անխուսափելի յեն, քանի դեռ չեն վերացված կապիտալիզմի տմենախորն արմատները: Նրանց ձևը փոխվում ե:»¹⁾

Հավանորեն կգանվեն այնպիսի ընկերներ, վորոնք կկանգնեն տարակուսանքի առաջ, թերևս նաև կղալրանան, վոր մենք, ինչպես ասում եր Տրոյկին, սկսեցինք «քրքրել անցյալը»: Մակայն, բանն հենց այն ե, վոր առանց ուսումնասիրելու նախկին սխալները, դժվար ե հասկանալ ներկա սխալներէ եյությունը: Լենինը, վորը վճռաբար դեմ եր այս կամ այն սխալները հրապարակ հանելուն՝ յերբ նրանք արդեն ուղղված են, միևնույն ժամանակ մեղ սովորեցրել ե, վոր անհրաժեշտ ե հիշել և ուսումնասիրել այդ սխալները: Քիսկական դիալեկտիկան, գրել ե նա, չի արդարացնում անձնական սխալները, այլ ուսումնասիրում ե

¹⁾ Վ. Ի. Լենին: Գրվածքների ժողովածու, հատոր 18, մասն 1-ն, էջ 325:

անխուսափելի շրջադարձերը, ապացուցելով նրանց անխուսափելիութեանը, մանրադնին ուսումնասիրելով զարգացումը, նրա ամբողջ կոնկրետութեամբ¹⁾: Յեվ, վերլուծելով պրոֆսիոնթեանական դիալեկտիկայի ժամանակ Տրոյկու ու Բուխարին գործած սխալները, նա ասում եր.—«Ընկերներ, մենք կուսակցութեան պատմութեան մեջ այդպիսի տատանումները չպետք ե մոռանանք:»²⁾

Ներկա բրոյուրում, մենք ծանոթացնելով ընթերցողներին ընկ. Բուխարին և կուսակցութեան միջև գոյութեան ունեցող տարաձայնութեաններէ պատմութեանը, յերկու հատուկ գլխում մանրամասն քննում և վերլուծում ենք՝ պատմական զարգացման կարգով, ընկ. Բուխարին հայացքները իմպերիալիզմի եյութեան և սոցիալիստական շինարարութեան վերաբերմամբ, հարցեր, վորոնք հանդիսանում են ներկուսակցական տարաձայնութեաններէ առանցքը: Վերջին գլուխը (ավելացված յերկրորդ հրատարակութեան մեջ) նվիրված ե ընկ. Բուխարին քաղաքական սխալների և տատանումների փերսոփոյական արմատների պարզաբանման:

Առաջին գլուխը հիմնականում գրել ե Ն. Լեւանը, մնացածը՝ Ս. Պակրովսկին:

¹⁾ Վ. Ի. Լենին: Գրվածքների ժողովածու. հատոր 5, էջ 480:

²⁾ Վ. Ի. Լենին: Գրվածքների ժողովածու, հատոր 18, մասն 1-ին, էջ 125:

1. ԸՆԿԵՐ ԲՈՒԽԱՐԻՆԻ ՍԻԱԼՆԵՐԻ ՅԵՎ ԹԵՔՈՒՄ- ՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Պատերազմի տարիները

Ընկ. Բուխարինի և Լենինի միջև առաջին, ամենալուրջ տարաձայնությունները յերևան յեկան համաշխարհային պատերազմի տարիներին: Դրանք վերաբերվում եյին այնպիսի հիմնական հարցերին, ինչպիսիք են իմպերիալիզմի, սոցիալիստական հեղափոխություն, պրոլետարիատի դիկտատուրայի և ազգային հարցի ըմբռնումը: Դրա հետ միասին, վեճեր զույլություն ունեցին նաև պարտիոզականություն լողունգի շուրջը, վոր առաջագրել էր Լենինը իմպերիալիստական պատերազմի ժամանակ:

1915—1918 թ.թ. շրջանում, ընկ. Բուխարինի հայացքները կազմում եյին մի ներդաշնակ սխտեմ: Յովալին միայն այն է, վոր այդ հայացքների սխտեմը մարքսիստական չէր, վոր նա թյուր պատասխաններ էր տալիս այն հարցերին, վորոնք առաջագրել է պրոլետարիատին, պատերազմների և հեղափոխությունների ժամանակաշրջանը:

Ինչ բանի էյին հանգում ընկ. Բուխարինի և նրան պաշտպանող խմբակի հայացքները:

Ընկ. Բուխարինը իմպերիալիզմը համարում էր հասարակական-տնտեսական մի ամբողջական սխտեմ:

տեմ, վորը ամբողջովին յենթարկել և իրեն և վերափոխել և հին կապիտալիզմի և ապրանքային պարզ արտադրութեան ամբողջ հիմքը: Ընկ. Բուխարինը բնավ չի նկատել այն, վոր իմպերիալիզմի տմենուլքիվ ձևերի հետ միասին, իմպերիալիզմի վորը հանդիսանում է մի վերնաշենք կապիտալիզմի, հին ձևերի վրա, գոյութուն ունեն համաշխարհային եկոնոմիկայի մեջ չափազանց մեծ տեսակարար կշիռ ունեցող հին կապիտալիզմի ու պարզ ապրանքային տընտեսութեան ձևեր ևս: Ընդամին ընկ. Բուխարինը միանգամայն տնտես եր առնում համաշխարհային կապիտալիզմի զարգացման անհամաչափութեանը: Բացի դրանից, ընկ. Բուխարինը, նկարագրելով իմպերիալիզմը, գործը պատկերացնում եր այնպես, վոր հին իրավակարգը, իբրև թե վոչ թե շարունակութունն եր կապիտալիզմի բոլոր հիմնական առանձնահատկութունների, այլ նրա ուղղակի հակադրութունը: Ընկ. Բուխարինի կարծիքով, կապիտալիզմը հաղթահարել և մրցութունը, շուկան, ճգնաժամերը, արտադրութեան անարխիան:

Այդ հիման վրա, ընկ. Բուխարինը ստեղծել է չափազանց պարզ և մակերեսային պատկերացում սոցիալիստական հեղափոխութեան, նրա մղիչ ուժերի բնութեան (առանձնահատկութունների) և խնդիրների մասին: Նա չի հասկացել, վոր «սոցիալիստական հեղափոխութունը չի կարող տեղի ունենալ այլ կերպ, բաց չեթե վորպես մի շրջան, վորը միացնում է պրոլետարիատի քաղաքացիական պատերազմը բուրժուազիայի դեմ՝ առաջավոր չեղկերներում, և մի շարք դեմոկրատիկ ու հեղափոխական — ներառյալ նաև ազ-

գային-ազատագրական-շարժումներ՝ չզարգացած, հետաճաց ու ճնշված ազգերի մեջ¹⁾:

«Զուտ իմպերիալիզմի» նրա սխեմի մեջ (պետական-կապիտալիստական տրեստներ) տեղ չեկին գտնում ուրիշ վորևէ դասակարգեր, բացի պրոլետարիատից և կապիտալիստներից: Ուստի բնական է, վոր Բուխարինը հեղափոխութեան միակ մղիչ ուժը համարում է միմիայն պրոլետարիատին: Մանր-բուրժուազիայի դեմոկրատական շարժումները և գաղութային ժողովրդների ազգային-ազատագրական պայքարը, նա անտես եր առնում:

Այդ տեսակետը նա, առաջին անգամ, զարգացրեց դեռ բայրևիկներին արտասահմանյան կազմակերպութունների Բեռնի կոնֆերենցիայում (1915 թվին փետրվար-մարտ ամիսներին): Դատելով Լենինի զրի առած նրա ճառից, նա ապացուցում էր, վոր կենտրոնական որպանի իմբազրութունը (Լենին և Զինովյեվ) սխալ է գործում, փորձելով «հրավիրել դեմոկրատիկ բուրժուազիային»: Մի իլլյուզիա չե, — առում եր նա, մտածել, վոր մանր-բուրժուազիան կարող է տրեստների դեմ լինել: Մանր-բուրժուազիա — դա ակցիաների տերերն են և դրանով իսկ կապված են խոշոր կապիտալի հետ²⁾:

Այն ժամանակ բայրևիկներից վոչ վոք չպաշտպանեց այդ հայացքները, սակայն ընկ. Բուխարինը

1) Լենին, — Գրվածքների ժողովածու, 2-րդ հրատարակութուն, հատոր 19, էջ 221:

2) Գ. Բայնվոլիյ. — Բայրևիկների 2-րդ կոնֆերենցիանայի համար մղվող պայքարում: «Խոտորիկ-Մարքսիստ», հատոր 2-րդ, էջ 38:

զրանցից չհրաժարվեց և հետագայում հաճախ պաշտպանել է զրանք:

«Դեմոկրատիկ ուղեբեկները» միացնելու հնարավորութիւնները ժխտման հետևանքով³⁾, Բուխարինը ժխտում էր ընդհանրապես դեմոկրատիկ լողունները և մասնավորապես ազգերի ինքնորոշման համար պրոպագանդ և ազիտացիա մղելու անհրաժեշտութիւնը:

Հին «տնտեսագետները» նման, նա չգիտեր սոցիալիզմի համար մղվող պայքարը կապել դեմոկրատիայի համար մղվող պայքարի հետ և նույն այդ Բեռնի կոնֆիրենցիայում առաջարկում էր դեմ գցել ամբողջ միջնիմում ծրագիրը: Չնայած այդ սխալների վճռական քննադատութեան, (Լենինը զրանք բնորոշեց վորպես «գերադանց անհեթեթութիւն, մի խայտառակութիւն, կիսասանարխիզմ»⁴⁾):

Բուխարինը և շուտով նրան միացած Պլատակովը և Բոշն սպացուցում էին, վոր իմպերիալիզմը նշանակում էր դեմոկրատիայի ժխտում և այդ պատճառով դեմոկրատիկ լողունները առաջադրումը ընդունակ է միայն իլլուզիա ներշնչել մասսաներին, թե այդ լողունները հնարավոր է իրականացնել՝ առանց տապալելու իմպերիալիզմը:

³⁾ 1917 թվականին Բուխարինը ժխտում էր նույնիսկ մանր-բուրժուազիայի գոյութիւնը: «Արհեստը, գրում էր նա, «Պատերազմ և Հեղափոխական Սոցիալ-Դեմոկրատիան» հոդվածում («Սպարազ» № 1, էջ 4), վոչնչացված է: Մանր արտադրութիւնը վոչնչացված է: Միջակ կապիտալը դարձավ խոշորի մի կորրը»:

⁴⁾ Լենինի նամակը Շլյապնիկովին: Տես «Բույլնիկ», 1929 թ., № 17, էջ 91:

Առարկելով նմանորինակ մակերեսային դատողութիւններին, Լենինը գրում է. «Ընդհանրապես կապիտալիզմը և առանձնապես իմպերիալիզմը դեմոկրատիան դարձնում են մի իլլուզիա: Միևնույն ժամանակ կապիտալիզմը դեմոկրատիկ ձգտումներ և առաջ բերում մասսաների մեջ, ստեղծում է դեմոկրատիկ հիմնարկներ, սրում է հակամարտութիւնը դեմոկրատիան ժխտող իմպերիալիզմի և դեմոկրատիային ձգտող մասսաների միջև»:


Այդ փաստից Լենինը հետևցնում էր, «Դեմոկրատիայի հարցի մարքսիստական լուծումն այն է, վոր իր դասակարգային պայքարը մղող պրոլետարիատն ոգտագործի դեմոկրատիկ բոլոր հիմնարկները և ձգտումները բուրժուազիայի դեմ, նպատակ դնելով պատրաստել պրոլետարիատին բուրժուազիայի դեմ, նրան տապալելու համար»:

Վորոշելով ընկ. Բուխարինի սխալների ելութիւնն ու հիմքը, Լենինը գրում է,—«Այստեղ է նրա (Բուխարինի Ս. Պ.) չարաբխտութեան արմատը՝ նա չի կարողանում հասկանալ այն հարցը, թե ինչպես շահկապել վերահաս իմպերիալիզմը ուֆորմների համար, դեմոկրատիայի համար մղող պայքարի հետ»⁵⁾:

Այնինչ, դեմոկրատիկ լողունները հարցը ամենահիմնական նշանակութիւն ունեն: Նրա այս կամ այն իմաստով լուծվելը վորոշում էր պրոլետարիատի, վորպես հեգեմոնի, դերը: Իմպերիալիստական ճնշումը, մասսաների ամենատարրական դեմոկրատիկ պահանջների նշավակումը, առաջ էր բերում, ինչ-

⁵⁾ Լենին: Իմպերիալիստական եկամտի մի ծնվող ուղղութիւնը, «Բույլնիկ», 1920 թ., № 5, էջ 88:

6097
85
6905-5066



պես նշում եր Լենինը, մանր-բուրժուական (և վոչ միայն մանր-բուրժուական) մասսաների ուժեղ ձեռնարկը դեպի դեմոկրատիան: Պրոլետարիատը պետք է գլխավորեր այդ շարժումը, սովորեցնելով պայքարի ընթացքում տատանվող դասակարգերին և խմբակներին, վոչ դեմոկրատիկ ձգտումներ իրականացումը հնարավոր է միմիայն իմպերիալիզմի տապալմամբ, պրոլետարիատի ղեկատուութան հաստատմամբ: Բացի դրանից, պրոլետարական ղեկատուութան նույնպես անքակտելիորեն կապված է բոլոր աշխատավորների համար ամենալրիվ դեմոկրատիայի իրականացման հետ:

«Իմպերիալիստական պատերազմը, դեմոկրատիալի, կարելի չի ասել, յեռակի ժխտումն է՝ (1. Սմեն մի պատերազմ «իրավունքները» փոխարինում է բռնութիամբ. 2. Իմպերիալիզմը դեմոկրատիալի ժխտումն է. 3. Իմպերիալիստական պատերազմը միանգամայն հավասարեցնում է հանրապետութունը միապետութուն), սակայն իմպերիալիզմի դեմ սոցիալիստական ապստամբութեան ծագումն ու աճումը անխզելիորեն կապված է դեմոկրատիկ դիմադրութեան և դալույթի աճման հետ: Սոցիալիզմը մահացնում է ամեն մի պետութուն, հետևապես նաև ամեն մի դեմոկրատիա, սակայն սոցիալիզմը այլ կերպ անիրագործելի չէ, բացի պրոլետարիատի ղեկատուութան միջոցով, վոչը միացնում է բռնութունը բուրժուազիայի, այսինքն՝ ազգաբնակչության փոքրամասնութեան դեմ դեմոկրատիայի լիակատար զարգացման հետ, այսինքն՝ պետական բոլոր դործերի և կապիտալիզմի լիկվիդացիայի բոլոր բարդ հարցերին ազ-

գաբնակչության ամբողջ մասսայի իրոք իրավահավասար և իրոք ընդհանուր մասնակցութեան հետ»:

Հասկանալի չէ, վոչ, հնարավոր չհամարելով իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում ոգտագործել «դեմոկրատիկ ռեզիստենցիան», թողնելով պրոլետարիատին առանց դաշնակիցների, Բուխարինը և նրա կողմնակիցները միանգամայն անխուսափելի կերպով պետք է գլորվելին դեպի արոցկիստական (սոցիալ-դեմոկրատական) տեսութունը՝ մի յերկրում սոցիալիստական հաղթական հեղափոխութեան անկարելիութեան մասին:

Նրանց կարծիքով, առանձին յերկրներ ղեկավարող տարիատի յերկրները անխուսափելիորեն պետք է լինեն «անշատ, անճակապ, թույլ» և չեն կարող ճեղքել իմպերիալիստական ճակատը⁶⁾:

Բուրժուազիայի հիմքը փորելու համար, կարծում է հյին նրանք, անհրաժեշտ է «պրոլետարիատի միլիոնավոր բանակների գրոհը բոլոր յերկրներում», անհրաժեշտ է պրոլետարական բոլոր ուժերի «Միաժամանակ մորիլիզացիան»⁷⁾:

Յուրացրած չլինելով Ֆինանսական կապիտալի առաջ բերած համաշխարհային տնտեսական կտպերը և անտես առնելով կապիտալիստական զարգացման անհամաչափութունը, նրանք չչլին կարող սոցիալիստական հեղափոխութունը պատկերացնել այլ

⁶⁾ Ն. Բուխարին: Համաշխարհային տնտեսութունը և իմպերիալիզմը «Կոմունիստ» 1915 թ., № 1-2, էջ 48:

⁷⁾ Ն. Բուխարին: Համաշխարհային տնտեսութունը և իմպերիալիզմը «Կոմունիստ» 1915 թ., № 1-2, էջ 48: Ընդգծումը մերն է:

կերպ, բայց չեթե վորպես արդյունք «բոլոր չերկըր-
ների պրոլետարների միացյալ գործողության, վո-
րոնք կործանում են բուրժուական պետության սահ-
մանները, տապալում են սահմանային սյուները, պայթեցնում են ազգային ընդհանրությունը և սահ-
մանում են դասակարգային ընդհանրությունը»⁸⁾):

Քննադատելով այդ «տեսությունը», Լենինը
գրում էր. — «Սոցիալական հեղաշրջումը չի կարող լի-
նել բոլոր չերկրների պրոլետարների միացյալ գոր-
ծողությունն այն պարզ պատճառով, վոր չերկրների
մեծ մասը և չերկրագնդի ազգարնակության մեծ մա-
սը մինչև այժմ ել դեռ չի կանգնած զարգացման կա-
պիտալիստական աստիճանի վրա, կամ միայն կապի-
տալիստական աստիճանի սկզբում»: Յերագել «բոլոր
չերկրներն պրոլետարների միացյալ գործողության
մասին» նշանակում է հետաձգել սոցիալիզմը անորոշ
ժամանակով, այսինքն մինչև չերբեք»⁹⁾):

«Կապիտալիզմի զարգացումը անդի յե ունենում
վերին աստիճանի անհամաչափ՝ զանազան չերկրնե-
րում: Այլ կերպ չի չի կարող լինել ապրանքային
արտադրության պայմաններում: Դրանից բխում է
անժխտելի հետևություն՝ սոցիալիզմը չի կարող հաղ-

⁸⁾ Պ. Կիյեվսկի: Պրոլետարիատը և ազգերի ինքնորոշ-
ման իրավունքը Ֆինանսական կապիտալի շրջանում: Քաղվածքը
վերցված է Լենինի «Մարքսիզմի կարեկատուության մասին» հոդ-
վածից: Հատոր 12, էջ 220:

⁹⁾ Պ. Կիյեվսկի: Պրոլետարիատը և ազգերի ինքնորոշ-
ման իրավունքը Ֆինանսական կապիտալի շրջանում: Քաղվածքը
Լենինի «Մարքսիզմի կարեկատուության» հոդվածից, հատոր 12,
էջ 220:

թահարել բոլոր չերկրներում միաժամանակ: Նա
կհաղթահարի սկզբում մի կամ միքանի չերկրներում,
իսկ մյուսները մի առ ժամանակ կմնան, վորպես
բուրժուական կամ մինչ-բուրժուական չերկրներ»¹⁰⁾)

Սոցիալիստական հեղափոխության պարզաց-
րած—դոկտրիներական կոնցեպցիան իր տրամաբա-
նական լրումը ստացավ ընկ. Բուխարինի կիսաա-
նարխիստական վերաբերմունքի մեջ դեպի պետու-
թյունը: Այդ կիսաանարխիզմն արտահայտվում էր
նրանով, վոր Բուխարինը չէր հասկանում պետու-
թյան անհրաժեշտությունն անցողիկ շրջանում:

Գերադնահատելով կապիտալիզմի «կազմակերպ-
վածությունը» և չտեսնելով տնտեսության մինչ-կա-
պիտալիստական ձևերը, յուրաքանչյուր իմպերիալիս-
տական պետությունը համարելով, վորպես միասնա-
կան տնտեսական և քաղաքական պետական-կապի-
տալիստական տրեստ, Բուխարինը, ըստ եյության,
չերես էր դարձնում սոցիալիզմի կառուցման պրոբ-
լեմից: Պետական իշխանությունը,— գրում էր նա,—
այդպիսով ներծծում է արտադրության գրեթե բոլոր
ձյուղերը, նա վոչ միայն պահպանում է շահագործման
պրոցեսի ընդհանուր պայմանները, պետությունը
գնալով ավելի ու ավելի դառնում է անմիջական շա-
հագործող, վորը կազմակերպում է և դիկավարում է
արտադրությունը, վորպես կոլլեկտիվ, հավաքական
կապիտալիստ*):

¹⁰⁾ Լենին: Գրվածքների ժողովածու, հատոր 19, էջ 325:

*) Ն. Բուխարին: Իմպերիալիստական պետության տե-
սություն շուրջը: «Իրավունքի հեղափոխությունը» ժողովածու 1,
էջ 21:

Բավական է «հարթել բոլոր ուղիները սոցիալիստական մարդկության լազատ զարգացման համար»¹¹⁾ այսինքն՝ «պայթեցնել» կապիտալիստական արտադրական հարաբերությունները, տապալել բուրժուազիալին: «Իսկ բուրժուազիային տապալել, գրուծել էր Բուխարինը, — նշանակում է խախտել նրա շարքերը, ընկճել և կաշմալուծել նրա գլխավոր կազմակերպությունը՝ ժամանակակից պետությունը»¹²⁾:

Այդպիսով, հանդելով իմպերիալիստական պետության «պայթեցմանը», ընկ. Բուխարինը նույնացնում էր այդ ընդհանրապես ամեն մի պետության վոլնչացման հետ, շփոթելով այն դասակարգային հարաբերությունների վոլնչացման հետ: «Դասակարգային հարաբերությունների վոլնչացմամբ (բառացի՝ «պայթեցմամբ» — Sprengung), կապիթեզի նաև նրա քաղաքական արտահայտությունը՝ պետությունը և առաջ կգա անդասակարգ և անպետական սոցիալիստական հասարակություն»¹³⁾:

Այդ պատճառով, պրոլետարիատի դեպի պետությունը ունեցած հարաբերությունների վերաբերյալ իր հոգվածներում, ընկ. Բուխարինը ընկնում էր կիսա-անարխիզմի մեջ, չափազանց մանվածապատ կեր-

11) Ն. Բուխարին: Իմպերիալիստական պետության տեություն շուրջը «Իրավունքի հեղափոխությունը» հավաքածուն, էջ 32:

12) Ն. Բուխարին: Պետական կապիտալիզմը և մարքսիզմը: «Նովլյա Միր» թերթը, № 848, 1916 թ., դեկտեմբերի 2:

13) Jugendinternationale, № 6: Քաղված է Բայնսկու հոդվածից, էջ 44:

պով առաջադրելով պրոլետարիատի դիկտատուրայի հարցը: Նա կամ բնավ չէր հիշատակում նրա մասին¹⁴⁾ կամ մատնանշում էր նրա խնդիրներից մեկի մասին՝ «աեաիցիայի վորև հնարավորություն ձնշումը»:¹⁵⁾

Ուստի, նույն այն պատճառով, նա չկարողացավ ճիշտ պատասխան տալ այն հարցին, թե ինչ տարբերություն կա մարքսիստների և անարխիստների վերաբերմունքի մեջ դեպի պետությունը:¹⁶⁾

Վերջապես, Բուխարինը դեմ էր «պարտվողականության» լոզունգին, առաջադրելով «պայքար խաղաղության համար» լոզունգը: Նա վճռաբար մերժում էր «վորև կերպ առաջադրել, վորպես լոզունգ Ռուսաստանի համար, այսպես կոչված Ռուսաստանի պարտությունը»: Սակայն դրանով իսկ նա ցույց էր տալիս, վոր նա դեռ բոլորովին ձեռք չի քաշել սոցիալ-դեմոկրատական ժառանգությունից:

Յեվ հիրավի, յեթե կուսակցությունը լուրջ կերպով պարզում է քաղաքացիական պատերազմի դրոշը, ապա նա անխուսափելիորեն պետք է վոչ միայն ցանկա «իր» կառավարության պարտությունը իմպերիալիստական պատերազմում, այլ և գործնականորեն նպաստի այդ պարտությանը: Յեթե հեղափոխական պայքար մղվի «իր» կառավարության դեմ, ստեղծվի հեղափոխական կազմակերպության բանակում, յեթե նա առաջ բերի բանվորական շարժում,

14) Տես, որինակ, «Նովոյե ռաբստվո» հոդվածը, «Նովլյա Միր» թերթում, № 830, 1916 թ., նոյեմբերի 11:

15) Պետական կապիտալիզմ: «Նովլյա Միր» թերթը, № 848, 1916 թ., դեկտ. 2:

16) Դրա մասին տես Լեհին: Գրվածքների ժողովածու, հրատ. 2-րդ, հ. 19, էջ 296, 1925 թվականին, ընկ. Բուխարինը փոր-

կաշմակերպի գործադուհներ, բանակը զորավի պրոլետարիատի կողմը, ապա այդ բոլորն անխուսափելիորեն նպաստում են «իր հայրենիքի» ռազմական գործության թուլանալուն, նրա պարտութայնը: Մյուս կողմից, կառավարութայն պարտությունը իմպերիալիստական պատերազմում, ռազմական ձախորդությունները թուլացնում են իմպերիալիզմի դիմադրությունը «նեքրքին թշնամուն», ավելացնում են պրոլետարիատի և նրան հարող գյուղացիական խավերի մասսայական շարժման թափը, արագացնում են իմպերիալիստական բանակի քայքայումը և թեթևացնում են նրա անցնելը հեղափոխական մասսաների կողմը:

Այդպես ուրեմն, կամ պետք է լինել կողմնակից քաղաքացիական պատերազմի, բուրժուական կառավարութայն դեմ հեղափոխական պայքար մղելու — այն ժամանակ հարկավոր էր և առաջադրել, և պաշտպա-

ձում էր հետին թվով ուղղել իր սխալները պետութայն վերաբերյալ հարցում, հայտարարելով, թե այն ժամանակ նա «պարզորոշ կերպով հասկանում էր պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը»: Թե վորքան «պարզորոշ» էր Բուխարինի այդ լմբոնումը, ընթերցողը կարող էր տեսնել մեր նախորդ շարադրությունից: Բացի դրանից, ընկ. Բուխարինը հայտարարել էր, վոր Լենինը «սխալ էր վերաբերվում պետութայն» (հարկավ բուրժուական) «պայթեցման» դրութայն, շփոթելով այդ հարցը պրոլետարիատի դիկտատուրայի մահացման հարցի հետ»: (Տես «Իրավունքի հեղափոխությունը» ժողովածու 1, 1929 թ.): Մինչդեռ, Լենինը Բուխարինին քննադատում էր այն բանի համար, վոր նա չէր հասկանում, թե բուրժուական պետութայն պայթեցումից հետո, սխալում է պրոլետարիատի դիկտատուրայի շրջանը և պետութայն այդ վերջին պատմական ձևը կանհետանա մահացմամբ:

նել իմպերիալիստական պատերազմում իր կառավարութայն պարտութայն լողունը: Կամ պետք է հրաժարվել այդ լողունից — և այն ժամանակ հրաժարվել վորև հեղափոխական պայքար մղելուց բուրժուական կառավարութայն դեմ (վորովհետև հեղափոխությունը, ջլատելով նրա ուժերը, նպաստում է պատերազմում պարտություն կրելուն), պետք էր քարոզել քաղաքացիական խաղաղություն, հրաժարվել դասակարգային պայքարից պատերազմի ժամանակ, այսինքն՝ լիովին և վերջնականապես անցնել սոցիալ-շովինիստական կողմը:

Այդպիսով, ընկ. Բուխարինի խմբակը ի վիճակի չէր հետևողական և դասակարգայնորեն հստակ պրոլետարական պատասխան տալու իմպերիալիստական պատերազմի հարցին:

Ինչպես տեսանք, պատերազմի ժամանակ Լենինի յե՛վ Բուխարինի միջև գոյություն ունեցող տարաձայնությունները, վերաբերում էին պրոլետարական հեղափոխութայն ամենահիմնական հարցերին: Ուստի, Լենինը, տարաձայնությունները ծագելիս, հույս ունենալով «ընկերաբար» հայթհարել իր և Բուխարինի տարաձայնությունները», առաջարկելով «սպասել մինչև վոր վերջնան Բուխարինյան տատանումները»¹⁷⁾ և այդ պատճառով, չքննելով նրա սխալները մամուլում, շուտով հարկադրված էր սկսել ընկ. Բուխարինի սխալների «բացահայտ» քննությունը:

Գործն ավելի լերկար ժամանակ անհայտութայն մեջ թողնելն, գրում է Լենինն ավելի ուշ, — անթույ-

17) Լենին: Նամակ Շլյապնիկովին՝ 1916 թ., «Պրոլետարական հեղափոխություն», 1929 թ., № 7, էջ 126:

լատրելի յե. այդ նշանակումն է՝ ոժանդակել զազափարական խառնաշփոթութեանը և ուղղել նրան թերախոտութուններէ Վասնավորը կոնֆլիկտներէ, անվերջ «շփոմներէ» ամենավատ կողմը: Ընդհատուակն, մեր պարտքն է, ամենաանպայման և ամենակատեգորիկ կերպով պնդել վոր պարտավոր ենք մտածել արծարծված հարցերի մասին և վերջնականապես քննել դրանք»¹⁸⁾

Ընկեր Լենինը ամենալուրջ խնդիրն է համարում «գտել» կուսակցութեան գիծը ընկ. Բուխարինի անհեթեթութուններից և խառնաշփոթութունից, վորովհետև Բուխարինի «սխալները կարող են կորստի մատենել» 3-րդ Ինտերնացիոնալի տեսական բազան ստեղծելու գործը»¹⁹⁾

Ընդհանուր ամփոփում տալով Բուխարինի, Պյատակովի և այլոց բռնած դիրքին՝ պատերազմի տարիներում, Լենինը գրում էր «Պատերազմը կործանում և ընկճում է վոմանց, կռում և լուսավորում ուրիշներին, — Ինչպես ամեն մի կրիզիս մարդկային կյանքում կամ ժողովուրդների պատմութեան մեջ»: Բուխարին-Պյատակովի խումբը հենց ցուցց ավեց «պատերազմի հետևանքով մարդկային մտածողութեան նկատմամ կամ ընկնված լինելու ձևերից մեկի*» որինակ, կրիզիսի ազդեցութեան տակ մանր-բուրժուական շփոթվածութեան որինակ:

¹⁸⁾ Լենին: Իմպերիալիստական եկոնոմիզմի սոցիալիստիկ ուղղութեան մասին: «Իսկուհի», 1929 թ., № 15, էջ 81:

¹⁹⁾ Լենինյան ժողովածու, 2, էջ 293:

*) Լենին, պատմական Պ. Կրիզիսիսում, «Պրոլետարական հեղ.» 1929 թ. № 7, էջ .

1917-18 Ժամանակաշրջանը

Ընկ. Բուխարինի լենինիզմի հակասող հայացքները յերևան էյին գալիս նաև 1917 թվականի ընթացքում: Մոսկվայի կուսակցութեան կոմիտեի «Սպարտակ» որգանում դետեղած մի շարք հոդվածներում, նա պաշտպանում էր «կազմակերպված կապիտալիզմի» տեսութունը: 6-րդ համագումարում նա հանդես յեկավ մի ճառով, վորտեղ զարգացնում էր սոցիալիստական հեղափոխութեան վերաբերյալ իր կոնցեպցիայի հետևութունները:

Յեվ այդ շրջանում ընկ, Բուխարինը միանգամայն անճիշտ էր դնում պրոլետարիատի դեմոկրատական (մանր-բուրժուական) ռեզերվներ հարցը և ժըխտում էր սոցիալիստական հեղափոխութեան հաղթանակի հնարավորութունը մի յերկրում:

Հակառակ Լենինի, վոր ասում էր, թի ուս պյուզացիոնութեան չքավոր-միջակ լայն մասսաները լոկ անգիտակցաբար, բարեխղճորին մոլորված, պաշտպանում են բուրժուա-կարվածատիրական ժամանակավոր կուսավարութունը:

Բուխարինը իր մի շարք յելույթների մեջ խոսում էր գյուղացիների և իմպերիալիստական բուրժուազիայի բլոկի մասին: «Գյուղացին, ապացուցում էր նա, — վորպես սեփականատեր անխուսափելի կերպով պետք է ձևոք մեկնեք գաշնակից իմպերիալիզմին»: «Իրագործվեց գյուղացիության բլոկը կալվածատերերի յեկ գարձարանատերերի նեց»:

Բուխարինը չէր կարող, ինչպես, բոլորովին ժըխտել ներքին հակասութունների գոյութունը այդ

ըրկում: Բայց նաչելով ամբողջ գյուղացիութեան վրա, վորպես ինչ վոր «միասնական սեփականատիրական մասսայի» նա տեսնում էր միայն այդ հակասութեաններ լոկ մի շարքը, այսինքն՝ գյուղացիների պայքարը կալվածատերերի դեմ: Նա չէր նկատում պայքարը գյուղացիութեան ներսում՝ զանազան շերտերի միջև:

Իրա համար, նույնիսկ անխուսափելի համարելով գյուղացիական պատերազմի նոր վերելքը, նա անջատում էր այդ պատերազմը պրոլետարական հեղափոխութեանից և հնարավոր չէր համարում պրոլետարիատի դաշինքը գյուղացիութեան — քիչ թե շատ լայն մասսաների հետ սոցիալիստական հեղափոխութեան մեջ:

Տրոցկու նման՝ Բուխարինը ուսական պրոլետարիատի միակ դաշնակիցը տեսնում էր արեվմաս-յեվրոպական պրոլետարիատի մեջ:

Իր այս սխեման նա շատ վորոշակի ներկայացրեց կուսակցութեան 6-րդ համագումարում: «Հեղափոխութեան նոր վերելքը, — Ասում էր նա այնտեղ, — Յես ընդունում եմ չերկու հաջորդական փուլերի մեջ. առաջին փուլը — Գյուղացիութեան մասնակցութեամբ, վոր ձգտում է հող ստանալ, յերկրորդ փուլը — կեցացած գյուղացիության մի կողմը բաշխելուց հետո — պրոլետարական հեղափոխութեանը, յերր ուսական պրոլետարիատին կպաշտպանեն Արևմտյան յեվրոպայի միայն պրոլետարական տարրերը *):

Այս սխեման իրատ քննադատութեան յենթարկվեց ընկ. Ստալինի կողմից, վորը նշում էր, թե ընկ.

*) 6-րդ համագումարի արձանագրութեանները, էջ 122:

Բուխարինի «խաղալիքային սխեման» «սխալ և հենց հիմքում», վորովհետև «գյուղացիական հեղափոխութեանը չի կարող չղուգադիպել բանվորական հեղափոխութեան»:

Սակայն Բուխարինը չհրաժարվեց այս հայացքներից և նրանց հետ միասին մտավ «Հոկտեմբերյան հեղափոխութեան մեջ»:

Իրա համար հասկանալի չէ, վոր պրոլետարիատի կողմից իշխանութեան նվաճումից անմիջապես հետո տարածանութեանները դարձյալ պետք է սրվելին:

Պայքարը առանձնապես սուր ձևեր ընդունեց Գերմանիայի հետ հաշտութեան կնքելու հարցում:

Չհավատալով ուսական հեղափոխութեան ներքին ուժերին, Բուխարինը և նրա կողմնակիցները այդ շրջանում (1917 թ. վերջը, 1918 թ. առաջին կեսը) ստանալով «ձախ կոմունիստներ» անունը, վճռականորեն դուրս յեկան Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ հաշտութեան ստորագրելու դեմ և պաշտպանում էին «հեղափոխական պատերազմը համաշխարհային իմպերիալիզմի դեմ»:

«Վոչ մի սոցիալիստական հեղափոխութեան, — գրում էին նրանք իրենց թեզիսներում, — չի կարող հաղթական լինել, առանց դուրս գալու ազգային շրջանակներից, առանց վերածվելու միջազգային պրոլետարական հեղափոխութեան»:

Ուստի լիովին համապատասխան Տրոցկու պերմանենտ հեղափոխութեան թեորիաի, նրանք ապացուցում էին, վոր չեթե նույն իսկ մենք հաշտութեան կնքենք և ստանանք «դատար», յերկար չենք կարող պահպանել պրոլետարիատի դիկտատուրան — նա կամ

կվերասերվի, կամ կկործանվի ներքին հակասություններին հետևանքով»: Ռուսական սոցիալիստական հեղափոխությունը, — գրում եր Բուխարինը, — կամ կմահանա, կամ կտարածվի ավելի հեռուն:

Բայց առայժմ մյուս չերկրներում պրոլետարական հեղափոխություն դեռևս չկա: Ուրեմն վորտեղ ե յեւքը:

— Հեղափոխական պատերազմում, — պատասխանում եյին «ձախերը», — մի պատերազմ, վոր առաջ կմղի Արևմուտքում «ուշացած» հեղափոխությունը:

Պատասխանելով այն ցուցմունքին, թե այն ժամանակ գոյություն ունեցող ուժերի փոխհարաբերության պայմաններում ղինված պալքարը գերմանական իմպերիալիզմի դեմ՝ անխուսափելի կերպով կտանի ղեպի խորհրդային իշխանության տապալումը, ձախերը «հպարտ» հայտարարում եյին, թե լավագույն ե կործանում, քան կոմպրոմիսները բուրժուազիայի հետ:

Չհասկանալով պրոլետարիատի ղրկատուութիւն յերկրի գոյության հեղափոխիչ նշանակությունը, ընկ. Բուխարինը գալիս եր այն յեզրակացության, թե «պահելով մեր սոցիալիստական հանրապետքայունքը, մենք կորցնում ենք միջազգային շարժման շանսերը»:

Ի պատասխան Լենինի, վոր ասում եր թե այդ պայմաններում պատերազմը պատճառ կլիներ անխուսափելի խղճման գոյուղացիության հետ, Բուխարինը և նրա ֆրակցիան հայտարարում եյին, թե պրոլետարիատի քաղաքականությունը պիտք ե ամբողջովի դաշինքը միջազգային պրոլետարիատի, և վոչ թե ուս գոյուղացիության հետ, վորին նրանք, Տրոյկու նման, հասկանում եյին, վորպիս յուրատեսակի «հակասու-

ցիալիստական չերաշխիք»: Ձախ կոմմունիստները ըստ եյության կոչ եյին անում խզել կապերը մանր գոյուղացիության հետ, չմբռնելով, վոր նա յեւ հանդիսանում ե մեր չերկրի պրոլետարիատի սեղերվը, այն ել ամենամոտական, թեև պակաս հուսովի, քան համաշխարհային պրոլետարիատը:

«Ռուսական պրոլետարիատի հեռագա քաղաքականությունը, — գրում եյին ձախ կոմմունիստները — պիտք ե վորքան կարելի յե քիչ հիմնվի ուս գոյուղացիության դաշինքի վրա, նրա հուսովի դաշնակիցը այժմ հանդիսանում ե միայն միջազգային պրոլետարիատը*):

«Ձախ կոմմունիստներն, արտացոլելով գաղազած մանր բուրժուազիայի անհամբերությունը, առաջադրում եյին սոցիալիստական շինարարության այնպիսի մի ծրագիր, վորը պահանջում եր անհապաղ կիրառել սոցիալիստական ձեռնարկումներ, անհապաղ և լիովին ազգայնացնել բոլոր և՛ խոշոր, և՛ միջակ, և՛ մանր ձեռնարկությունները, հաղթահարել շուկայական տնտեսությունը և անցնել միտրափոխանակության:

Ձախ կոմմունիստները, մանր բուրժուական սոցիալիզմի մյուս հոսանքների նման, պատկերացնում եյին իրենց, թե բավական ե միայն «փակել» շուկայական ապրանքաշրջանառությունը և իսկույն կանհետանա «մանր-բուրժուական վարակը» և գոյուղացիական տնտեսության կապիտալիստական զարգացման հնարավորությունը:

*) «Ձեջումները քաղաքականությունը և պրոլետարիատը»: Խմբ. հոդ. «Կոմմունիստ» թերթի № 1, 19 մարտի 1918 թ.:

Դրա հետ միասին, ձախ կոմմունիստները վճարահան ուղղիցիա կազմեցին լենինյան այն պլանի դեմ, վորով պետական կապիտալիզմը պետք է ոգտագործվի մանր բուրժուական տարերքի դեմ պայքարելու համար: Նրանք ուղղիցիա կազմեցին, կարգապահութիւն հաստատելու, հաշվառում ու վերահսկողութիւն սահմանելու, աշխատանքի արտադրականութեան համար պայքարելու լենինյան լուղունքների դեմ, դրանով յերևան հանելով իրենց մանր-բուրժուական ելութիւնը:

Տակտիկական այդ տարաձայնութիւններին զուգընթաց, 7-րդ և 8-րդ համագումարներում ծրագրային վեճեր էյին ծավալվել Բուխարինի և Լենինի միջև: Դիսկուսիայի կենտրոն էր կազմում իմպերիալիզմի զնահատման և ազգային հարցը: Ազգային հարցում ընդ. Բուխարինը, արդեն հեռանալով իր անհաշտ դիրքից (նա միանգամայն ժխտում էր ազգերի ինքնորոշման իրավունքի լուղունգի որինականութիւնը), այնուամենայնիվ, կանգ առնելով կես ճանապարհին, համաձայնում էր ինքնորոշման իրավունքը ճանաչել միայն չուրաքանչյուր տվյալ ազգի աշխատավորութեան համար: Բայց դրանով իսկ, Բուխարինը ինքնորոշման իրավունք էր տալիս միմիայն կապիտալիստական ստրկութիւնը տապալած ազգութիւններին, վորովհետև մշուս բոլոր յերկրներում տիրապետում են կապիտալիստներն ու շահագործող այլ դասակարգեր և դեռ վորոշակի շերտավորում տեղի չի ունեցել աշխատավորների և շահագործող դասակարգերի միջև: Նախ, Գերմանիայում տեղի ունեցած հեղափոխութեան հետևանքով և յերկրորդ՝ քաղաքացիական պատերազմի շրջանը սկսվելով, կյանքը հետին պլան էր փոխադրել

ձախ կոմմունիստների և կուսակցութեան մեծամասնութեան մեջ գոյութիւն ունեցող տարաձայնութիւնները:

Գերմանիայի հեղափոխութեանը, ընդ. Բուխարինին հարկադրեց խոստովանել, վոր նա սխալ է գործել, պահանջելով հեղափոխական պատերազմ, ինչ գնով էլ լինի և ժխտելով դադարի որինաչափութիւնն ու անհրաժեշտութիւնը: Իսկ քաղաքացիական պատերազմը կուսակցութեանը հարկադրեց արգելել ապրանքաշրջանառութիւնը, նացիոնալացման լենիթարիկ բոլոր, նուէնիսկ ամենափոքր ձեռնարկութիւնները, մացնել պրոդրագվորութիւն և այլն: Յեւ այդ՝ վոչ թե նրա համար, վոր կուսակցութեանը, Լենինի գլխավորութեամբ, հնարավոր է համարում արտադրական ուժերի զարգացումը և սոցիալիզմի կառուցումն այդ ուղիներով: Վոչ: Տընտեսական շինարարութեան լենինյան պլանը, վոր կազմվել է 1918 թվականին, միանգամայն տարբեր էր և կուսակցութեանը, Լենինի գլխավորութեամբ, ռազմական կոմմունիզմի դիմեց, վորպես մի հարկադրյալ միջոցի: «Ռազմական կոմմունիզմը առաջ յեկավ պատերազմից և քայքայումից: Նա չէ համապատասխանում և չէր կարող համապատասխանել պրոլետարիատի ճիշտ տնտեսական խնդիրներին: Դա ժամանակավոր միջոց էր»²⁰):

20) Ռազմական կոմմունիստական իդեոլոգիան և այն պատկերացումը, թե սոցիալիզմը հնարավոր է կառուցել ռազմական կոմմունիստական քաղքենիութեան միջոցներով, կուսակցութեան վորոշ շրջաններում ծագեց հետագայում միայն, վորպես տեսական հիմնավորում ռազմական կոմմունիստական տակտիկայի ճշտութեանը բոլոր պայմաններում: Այդ պատկերացումը Լենինը սխալ է գտնում:

ԴԻՍԿՈՒՄԻՍ. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՍՍԻՆ

Քաղաքացիական պատերազմի վերջանալը հարց առաջադրեց, թե անհրաժեշտ և փոխել տնտեսական քաղաքականության կուրսը: Յեւ պատեհ, ՆՆՊ-ի շնորհիւ, կուսակցության մեջ դիսկուսիա ծագեց արհմիությունների մասին. ընդվորում տարածայնությունների հիմքը կազմում եւ տարբեր մոտեցում դեպի յերկրի սոցիալիստական վերակառուցման ճանապարհները:

Տրոցկին, վորի դիրքերը գլորվեց, սկզբում բուֆերական դիրք բռնելու փորձող ընկ. Բուխարինը, պահանջում եր արհմիություններին հանձնել արդյունաբերական կառավարումը և պետականացնել արհմիությունները: Տրոցկին այդ լոզունգները որինաչափությունն ապացուցելու համար, հենվում եր կուսակցության ծրագրի վրա, վորտեղ ասված է, թե «արհմիությունները պետք է փաստորեն իրենց ձեռքը կենարոնացնեն ժողովրդական ամբողջ սննտուրյան, վորպես սննտական միասնական մի ամբողջուրյան կառավարումը:

Այնինչ, ինչպես յերևում է մեջբերված ցիտատից, կուսակցության ծրագրի մեջ խոսվում է վոչ թե արդյունաբերությունն արհմիությունների կողմից կառավարվելու, այլ ժողովրդական ամբողջ տնտեսությունը, վորպես մի ամբողջություն, կառավարելու մասին, այսինքն՝ խոսքը ծրագրի մեջ վերաբերում է վոչ թե սոցիալիստական շինարարության առաջին քայլերին, այլ նրա լրման շրջանին:

«Ոպպոզիցիան, գրում է ընկ. Բուձուտուկը, իր

տակտիկան կառուցում եր, յեղնելով այն դրույթից, թե մենք անմիջականորեն անցնելու ենք ծավալուն սոցիալիզմին, պետական որգանները միաձուլվելու յեն արհմիությունների հետ արդյունաբերության կառավարումը հանձնվելու յե արհմիություններին: Ոպպոզիցիան, Տրոցկու գլխավորությամբ, թերազնահատեց յերկրի մանր-բուրժուական ընույթը, զարգացման յերկարատևությունը, ապրանքա-շրջանառության մեջ դրուզացիական տնտեսության հաշվառման անհրաժեշտությունը: Ոպպոզիցիան չգնահատեց արհմիությունների դերը պրոլետարիատի դիկտատուրիայի զարգացման ներկա աստիճանում, վորպես բանվորական մասսանների դասակարգային դաստիարակության, ուսուցման և համախմբման որգաններ... Արհմիությունների շուրջը մղած դիսկուսիան յերևան հանեց Տրոցկու և ոպպոզիցիայի բացարձակայնորեն սխալ գնահատականը պրոլետարական դիկտատուրայի շրջանի նկատմամբ: Արհմիությունների վերաբերյալ հարցում, ոպպոզիցիան փորձում է դիկտատուրայի շրջանը համարել անմիջականորեն ծավալուն սոցիալիստական շինարարության անցնելու մի շրջան, վորպես սոցիալիզմի փաստական իրականացումը, առանց վորեւ անցողիկ աստիճանների»²¹⁾:

Արհմիությունների շուրջը տեղի ունեցող դիսկուսիայի ժամանակ, ընկ. Բուխարինը սկզբում գրավել եր «բուֆերական», եկեղիտիկ դիրք: Մի կողմից, ասում եր նա, իրավացի յե Տրոցկին, վոր առաջադրում է արտադրական տեսակետը, սակայն մյուս կողմից

²¹⁾ Յա. Բուձուտուկ: Առաջարան «Դիսկուսիա արհմիությունների մասին», ժողովածու: 1927 թ. էջ, VIII, IX—X:

իրավացի յի նաև Լենինը, վորը պաշտպանում է այն թեզը, թե «արհմիությունները կոմմունիզմի զբաղ-րոցն են»:

Ընկ. Բուխարինի դիրքը, պրոֆմիութենական դիսկուսիայի ժամանակ, ներկայացնում է տեսական մեծագույն խառնաշփոթության և անսկզբունքության ցայտուն պատկերը: Ընկնելով Տրոցկու «արհմիություն-ների պետականացման» դիրքերը, Բուխարինը, դրա հետ միասին, պաշտպանում էր անարխո-սինդիկալիստական գաղափարները, ցույց տալով դրանով գաղափարական գերազանց քայքայում: Այդ անորինակ տա-տանումների մեջ արտացոլվում էլին մանր-բուրժուա-կան տարերքի տատանումների ՆեՊ-ի շեմքին:

Իր քննադատության կրակը Բուխարինի դեմ ուղղելով, Լենինը գրում էր. «Գաղափարական քայ-քայման գազաթնակետն է հանդիսանում Բուխարինի և ընկ. թեզերը: Այստեղ իրականացված է այն «շրջ-ջադարձերից» մեկը, վորոնց մասին վաղեմի ժամա-նակներում մարքսիստները սարսափում էին. «վոչ այնքան պտտմական, վորքան հիստերիկ մի շրջա-դարձ» («Поворот не столько исторический, сколько истерический»)». 17-րդ թեզում, մենք կարդում ենք.

«... ներկայումս անհրաժեշտ է այդ թեկնածու-թյունները, (այն է՝ արհմիությունների թեկնածու-թյունները և համապատասխան «գլխուկներն ու կենտ-րոնները») պարտադիր դարձնել: Այդ կատարել խղում է կոմմունիզմից և անցնում սինդիկալիզմի դիրքերը: Այդ, ըստ ելուցյան, կրկնություն է «պետությունը արհմիութենականացնելու» շլյապնիկովյան լողունգի-ալի ԺՏԳԽ-ի մաս-մաս հանձնումն է համապատասխան

արհմիությունների ձեռքը: Յեթե արհմիությունները, այսինք ⁹⁾10-ով անկուսակցական բանվորները նշա-նակվում են («պարտադիր թեկնածու-թյուններ»), ար-դունաբերության վարչություն, ապա ել ինչացի-կ կուսակցությունը: Այն, վորին հանգեց Բուխարինը և՛ արամաբանորեն, և՛ տեսականորեն, և՛ գործնակա-նորեն՝ նշանակում է կուսակցության պառակտումը, ավելի ճիշտ, սինդիկալիստների խղումը կուսակցու-թյունից: Մինչև այժմ պաշարի մեջ «գլխավորը» Տրոցկին էր: Այժմ Բուխարինը «շատ հեռու անցավ» և միանգամայն «նսեմացրեց» նրան, վորովհետև այն-պիսի մի սխալ բան ասաց, վորը հարյուր տնգամ ա-վելի մեծ է, քան Տրոցկու բոլոր սխալները միասին» ²²⁾:

Սրանք էլին ընկ. Բուխարինի մանր բուրժուա-կան տատանումները ՆեՊ-ի շեմքին:

ՆԵՊԻ ՇԻՋԱՆԸ

Սակայն ՆեՊ-ն ըմբռնելու մեջ ել Բուխարինն այնպիսի շեղումներ եր կատարիլ նրա իսկական ի-մաստից, վորոնք կանխորոշեցին նրա հետագա թեքում-ներն ու լերերումները ՆեՊ-ի ելուցյան գնահատման մեջ և դրա հետ կապված շեղումները պրոլետարական դասակարգային գծից՝ տնտեսական քաղաքականու-թյան հարցերում:

«Պատերազմը վերջանալու հետևանքով, գրում էր Բուխարինը, հերթի դրվեցին տնտեսության, ար-տադրական ուժերի գարգացման պրոբլեմները, մի

²²⁾ Վ. Ի. Լենին: Դրվածքների ժողովածու, հատոր 18, մասն 1, էջ՝ 32—33,

դարգացում, վոր գյուղատնտեսութեան նկատմամբ հնարավոր ե միայն մանր-բուրժուական տնտեսութեան աճման ձևով»²⁰):

Մինչդեռ Լենինը պարենհարկի վերաբերյալ իր բրոշյուրում ամեն կերպ ընդգծում էր, վոր կուսակցութունը, ներգրավելով գյուղացիներին կոոպերացիայի մեջ, ըստ ամենայնի պայքարելու յի «մանր տերերի կոոպերացիայից սոցիալիզմին անցնելու համար», ընկ. Բուխարինը հնարավոր ե համարում գյուղացիութեան մանր բուրժուական զարգացումը:

«Յեթե գյուղացիական տնտեսութունը կարող ե ավելի ևս զարգանալ, գրում էր Լենինը նույն բրոշյուրում, անհրաժեշտ ե հաստատապես ապահովել նաև հետագա անցումը, իսկ հետագա անցումը անխուսափելիորեն հանդիսանում ե այն, վոր ամենից քիչ ձևներսուռ և ամենահետաքնաց մանր, առանցձնացած գյուղացիական տնտեսութունն աստիճանաբար միանա, կազմակերպի համայնական, խոշոր հողագործական տնտեսութուն»²⁴):

Իսկ ընկ. Բուխարինը մեր, մեջբերած աշխատութեան մեջ, անտես առնելով, թե անհրաժեշտ ե ապահովել հետագա աստիճանին անցնելը, գտնում էր, վոր եկոնոմիկայի մեջ «պրոլետարիատի և գյուղացիութեան ճիշտ հարաբերութունն այնպիսի մի հարաբերութուն էր, վորն ազատութուն ե տալիս արտադրական ուժերի զարգացմանը»²⁵), այսինքն անասնման ազա-

²⁰ Ն. Բուխարին: Տնտեսական քաղաքականութեան նոր կուրսը: 1921, էջ՝ 5:

²⁴ Լենին: հատոր 18, մասն 1, էջ՝ 189:

²⁵ Ն. Բուխարին: Տնտեսական քաղաքականութեան նոր կուրս, էջ՝ 5:

տութուն ե տալիս մանր բուրժուական տնտեսութեան զարգացմանը²⁶):

1923 թ. կուսակցութեան 12-րդ համագումարում ընկ. Բուխարինը հանդես ե դալիս պաշտպանելով վրացական ուկրոնիստներին: Մինչդեռ վրացական ուկրոնիստները պաշտպանում էին մեծապետական տենդենցները, դեմ լինելով խորհրդային հանրապետութունների Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպմանը: Բուխարինի այս սխալ գիծը սերտորեն շարկապվում ե ազգային հարցին վերաբերյալ նրա հին հայացքների հետ, ազգերի ինքնորոշման իրավունքի ժխտման և պրոլետարական հեղափոխութեան մեջ ազգային հարցի նշանակութեան թերազնահատման հետ:

Սկսած 1925 թվականից, յերբ կուսակցութեան առաջ իրենց ամբողջ մեծութեամբ կանգնեցին գյուղի սոցիալիստական շինարարութեան հարցերը, ընկ. Բուխարինը մշակում ե սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներաճման տեսութունը և գյուղին նետում ե «հարըստացեք» լոգունգը, վորը բացարձակորեն ուղղված ե գյուղի ունեւոր և կուլակային վերնախավին: Ըստ Բուխարինի գյուղատնտեսութեան արտադրական ուժերի զարգացումը կարող ե տեղի ունենալ համարյուս բացառապես վորպես գյուղացիական անհատական տնտեսութունների զարգացում²⁷):

²⁶ Գյուղատնտեսական արտադրական ուժերի զարգացումը, ըստ ընկ. Բուխարինի, հնարավոր ե միայն մանր-բուրժուական տնտեսութեան զարգացման ձևով:

²⁷ Համեմատել այն մտքերը, վոր արտահայտել ե Բուխարինը՝ ՆեՊ ին անցնելու շրջանում:

Լենինի կոպերատիվ սլանը խեղաթյուրվում է արմատապես: Լենինն իբրև թե կողմնակից է յեղել սպառողական-վաճառքային և վարկալին կոպերացիայի զարգացմանը. իսկ նրա արտադրական տեսակներին վճռական նշանակություն չի տվել: «Մենք պետք է ամեն կերպ ոժանդակենք կոլտնտեսական շարժմանը, ասում եր Բուխարինը, սակայն սխալ կլիներ կարծել, թե դա դեպի սոցիալիզմը տանող գլխավոր ճանապարհն է»:

1925 թվականին կուսակցությունը դեռ չեր կարող իր ուղարկություն կենտրոնը դարձնել արտադրական կապի և կոլտնտեսությունների ու խորհանտեսությունների ծավալուն շինարարության խնդիրները: Գյուղի արտադրական ուժերի վերելքի խնդիրները լուծվում էին և կարող էին լուծվել գլխավորապես չքավոր և միջակ անհատական տնտեսությունների զարգացման հիման վրա: Այդ պատճառով կուսակցությունը վերացրեց այն խոչընդոտները, վորոնք կաշկանդում էին այդ զարգացումը, միաժամանակ միջոցներ ձեռք առնելով սահմանափակելու կուլակություն տնտեսական գործության աճումը: Այդ բոլոր ձեռնարկումները կուսակցությունը համարում էր ժամանակավոր, մանր և 15-րդ համագումարի պահին, հենվելով սոցիալիստական արդյունաբերության և մասնավորապես մեքենաշինարարության զարգացման բնագավառում մեր ձեռք բերած նվաճումների վրա, բաց է թողնվում հետևյալ լուրենդը. «Գյուղ, դեպի առաջ, դեպի խոշոր համայնեցված տնտեսություն»:

Կուսակցությունն այդ անխուսափելի մաներին դիմեց վոչ մի բույն չմոռանալով, վոր նրա խնդիրն

է հողագործություն մեջ ստեղծել խոշոր կոլլեկտիվ տնտեսություն, վոր այդ խնդրի լուծման քիչ թե շատ տևական հապաղումը ստեղծում է վիթխարի դժվարություններ և կապիտալիզմի վերականգնման իրական սպառնալիք:

«Քանի դեռ ապրում ենք մանր-գյուղացիական յերկրում,— ասում եր Լենինը, Ռուսաստանի կապիտալիզմի համար ավելի ամուր տնտեսական բազա կա, քան կոմունիզմի համար: Այդ անհրաժեշտ է հիշել: Գյուղի կյանքին ուշի-ուշով հետևող ամեն մեկը, համեմատելով քաղաքի կյանքի հետ, գիտե, վոր մենք կապիտալիզմի արմատները չենք վոչնչացրել, հերքին թշնամու հիմքը չենք կործանել: Վերջինս կանգուն է մնում մանր տնտեսության վրա և դրան վոչնչացնելու մի միջոց կա, այն է՝ փոխադրել յերկրի տնտեսությունը՝ ներառյալ նաև հողագործությունը, տեխնիկական նոր բազայի վրա, ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական բազայի վրա: Այսպիսի բազա չե հանդիսանում էլեկտրականությունը:

...Միմիայն այն ժամանակ, յերբ յերկիրը կենթարկվի էլեկտրիֆիկացիայի, յերբ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և որանսպորտը կգրվեն ժամանակակից արդյունաբերության տեխնիքական բազայի վրա. միմիայն այն ժամանակ մենք կհաղթանակենք վերջնականապես»²⁸⁾:

Սակայն ընկ. Բուխարինը 14-րդ կուսկոնֆերենցիայի վորոշումները համարում էր վոչ թե ժամանակավոր անհրաժեշտ մի մաներ, մինչև վոր ստեղծվեն նվազագույն պայմաններ՝ անցնելու պրոլետարիատի

²⁸⁾ Լ.ԵՆԻՆ, Հատոր 18, էջ 427—428:

խնդրին, այն և խոշոր հողագործութեան շինարարութեանը, այլ կուսակցութեան ամփոփոխ և տևական կուրսը: Գյուղի ունևոր վերնախավի հարստացմանը համաքայլ սովորեցնում եր նա, նրա շահերն ավելի ու ավելի զուգակցելու լին պրոլետարական պետութեան շահերի հետ, մի պետութեան, վորի ամբողջամբ պուղը հաստատապես շահագրգռված կլինի: Անհատական տնտեսութեանները աճամբը զարգացող գյուղը ստանակով կսլանա դեպի սոցիալիզմ: Այդ պատճառով վոչ մի հիմք չկա արգելք հանդիսանալու և խոչընդոտներ հարուցելու այդ զարգացմանը:

Այդ ժամանակ կուսակցութեան գլխավոր խընդիրն եր՝ հաղթահարել «ձախ» թեքումը, վորը չեք հասկանում թե անհրաժեշտ և մի շարք գիշումներ անել միջակ գյուղացիութեան: Սակայն ուղղելով իր կրակը դեպի ձախ, կուսակցութեանը դատապարտեց նաև աջ թեքումը, վոր արտահայտվել եր Ն. Ի. Բուխարինի և մյուս յերիտասարդ ընկերների աշխատութեաններում: «Կոմսոմոլսկայա Պրավդա» թերթում Սլեպկովի հոդվածը զեանդվելուց հետո, վորով ժողովըրդականացվում եր բուխարինյան «հարստացեք» լողունը, ընկ. Ստալինը մի նամակ ուղղեց այդ թերթի խմբագրութեանը, հիշեցնելով, թե կուսակցութեան գիծը ուղղված և վոչ թե դեպի անհատական, այլ սոցիալիստական կուտակումը, թե «հարստացեք» լողունը վոչ բայլեհիկան, և վոչ լինինյան լողունը և:

14-րդ կուսկոնֆերենցիայի վորոշումների սխալ մեկնաբանութեանը, վոր տվել եր ընկ. Բուխարինը, հարկադրեց մասնավորապես ընկ. Որջոնիկիձեյին 14-րդ համագումարում սահմանագծվել նրանից և հայտարար-

րել, վոր կուսակցութեանը Բուխարինի հետ համաձայն և միայն այն հարցերի նկատմամբ, վորոնց շուրջը ընկ. Բուխարինը համաձայն և լինինի հետ:

Ընկ. Բուխարինը ստիպված լեղավ հրաժարվել «հարստացեք» անհեթեթ լողունդից: Սակայն, ինչպես պարզվեց հետագայում, այդ հրաժարումը զուտ ձևական բնույթ և ունեցել, վորովհետև նա չի հրաժարվել սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման իր ստութեանից:

Յեկ յերբ 15-րդ համագումարում շրջադարձ կատարվեց դեպի ուշադրութեան ուժեղացումը գյուղատնտեսութեան կուլեկտիվացման հանդեպ, դեպի արշավի ուժեղացումը կուլակի դեմ՝ նրան հրապարակից դուրս մղելու նպատակով, դեպի կոլլեկտիստութեանների և խորհրտնտեսութեանների մեծաթափ շինարարութեանը, ընկ. Բուխարինը ընկավ խիստ հակասութեանների մեջ կուսակցութեան հիմնական գծի նկատմամբ, տարակելով ինդուստրացման և գյուղատնտեսութեան կուլեկտիվացման ընդունված տեմպի դեմ:

Սոցիալիստական վերակառուցման առաջին հտապի անխուսափելի դժվարութեանների լելքը ընկ. Բուխարինը համարում եր վոչ թե արշավի շարունակումը կապիտալիստական տարրերի վրա, վոչ թե գյուղատնտեսութեան սոցիալիստական հատվածի ուժեղ շինարարութեանը, այլ անհատական (ներառյալ նաև կուլակային) տնտեսութեանների անարգել զարգացումը:

Այդ որյեկտիվ կապիտալիստային պլատֆորմը տնտեսական շինարարութեան հարցերում վերջերս լրացվում և նույնպիսի գրույթով, միջազգային հեղափոխութեան հարցերում:

Այս և ընկ. Բուխարինի սխալների և թեքումների համառոտակի պատմութիւնը: Այդ պատմութիւնը հսկայական շահագրգռութիւն և ներկայացնում, թե աչն պատճառով, վոր նրա ժամանակակից հայացքների գաղափարական արմատները թագնված են նրա հին մուսուլմանների մեջ, վորոնք յենթարկվել են Լենինի խիստ քննադատութեանը. և թե այն պատճառով, վոր նրանց հիմքը կաղմում եր վոչ դիալեկտիկ մտեցումը քաղաքականութեան:

«Գրանատ»-ի հանրագիտական բառարանում զետեղված ինքնակենսագրութեան մեջ, ընկ. Բուխարինը պատմում և, վոր նա շատ հրապուրվել և եմպիրիոմոնիզմ կամ եմպիրոկրիտիցիզմ փիլիսոփայական «մոդալիզմ» ուղղութեամբ, վորի ամենահետևողական կողմնակիցներից մեկն և յեղել Ա. Ա. Բազդանովը: Այդ հրապուրի հետքերը սակայն, հետագայում պահպանվեցին նաև ընկ. Բուխարինի մի շարք տեսական աշխատութիւններում. դրանով յերևան և գալիս բազդանովչինայի անտարակուսելի և դեռ չվերացված ազդեցութիւնը: Մասնավորապես, թեպետ ընկ. Բուխարինը չեր արտահայտվել վերջին փիլիսոփայական դիսկուսիայի հարցերի առթիվ, սակայն նրա առանց փոփոխութեան վերահրատարակված «Պատմական մատերիալիզմի տեսութիւնը» գրքի վրա դրոշմված և մեխանիստական փիլիսոփայութեան ակներև կնիքը:

Լենինը հաճախ նշել և, վոր ընկ. Բուխարինը չի հասկանում դիալեկտիկական և համակված և եկլեկտիզմով: Յավալիորեն ընկ. Բուխարինը դեռ մինչև այժմս ձեռք չի քաշել եկլեկտիզմից, ինչպես և մեխա-

նիստական մոտեցումից իրականութեանը: ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարութեան հարցերին ու արդի իմպերիալիզմի դարգացման վերլուծմանը, նվիրված նրա վերջին աշխատութիւնները տեսական բնագաւում կրում են չվերացված եկլեկտիզմի և մեխանիստական թեքման կնիքը:

«ԶԱՆԻՅ» ԴԵՊՒ ԱՁ ԹԵՔՈՒՄԸ

Յեթե պատերազմի շրջանից սկսած մինչև նեպը Բուխարինի համար բնորոշ ելին «ձախ» թեքումները, ապա սկսած նեպից, նրա բոլոր շեղումները գնում են դեպի աջ՝ կուսակցութեան Լենինյան գծից: Այս հանգամանքը արժանի յե քննութեան,

Ըստ ելութեան Բուխարինը, սկսած պատերազմից և վերջացնելով պրոֆմիլիթենական դիսկուսայով, արել և արոցկիստական սխալներ, հաճախ ավելի հետևողական արոցկիստ լինելով, քան նույնիսկ Տրոցկին:

Որինակ՝ իմպերիալիզմի վերացական ըմբռնումը վորպես հասարակական-տնտեսական, կարգի, վոր մինչև վերջը վտարում և տնտեսական նախկին հարաբերութիւնների մնացորդները, կապիտալիստական զարգացման և առանձին յերկրներում նրա մակարդակի անհամաչափութեան անգիտացումը—սա հատուկ եր և Տրոցկուն, ճիշտ և, ավելի քիչ չափով, քան ընկ. Բուխարինին:

Այստեղից բխուով՝ առանձին յերկրներում պրոլետարական հեղափոխութեան հաղթանակի անկարելիութեան թեորիան զարգացնում էլին դարձյալ թե Տրոցկին, և թե ընկ. Բուխարինը:

«Հեղափոխական շարժումը... գրում եր Տրոցկին կարող է հաջող կերպով զարգանալ և զնալ դեպ հաղթանակ միայն վորպես համաեվրոպական շարժում: Մեկուսացած մնալով ազգային շրջանակներում այդ շարժումը կմասնավեր կորստյան... հաղթական հեղափոխութիւնը Ռուսաստանում կամ Անգլիայում անհնար է առանց Գերմանիայի հեղափոխութեան և ընդհակառակը» *):

Սոցիալիստական հեղափոխութեան հաղթանակի համար—պնդում եր ընկ. Բուխարինը, ձայնակցելով Տրոցկուն անհրաժեշտ է «զրոն պրոլետարիատի բազմամիլիոն բանակների կողմից բոլոր յերկրներում»:

Բուխարինի հետ միասին Տրոցկին ժխտում եր ազգերի ինքնորոշման լոզունգը, Բուխարինի հետ միասին ժխտում եր դեմոկրատական ռեզերվները ոգտագործման հնարավորութիւնը և նշանակութիւնը պրոլետարական հեղափոխութեան մեջ:

Տրոցկու հետ միասին ընկ. Բուխարինը բաժանում եր այն վստահութիւնը, թե ազգային հեղափոխութիւնից հետո դուրսգիւցնելու անխուսափելի կերպով կանջատվի պրոլետարիատից և հետևաբար համոզված եր վոր ռուսական հեղափոխութիւնը դատապարտված է կորստյան, թողնված իր սեփական ուժերին:

Բերում ենք նրանց մի շարք հայտարարութիւնները այդ մասին, վորոնք ցույց են տալիս, թե վորքան հեռու յե գնացել «քաղաքական մաքի զուգահիպումը» Տրոցկու և Բուխարինի մոտ:

*) Լ. Տրոցկի, յերկ ժող. հատ. 3, մաս 1 էջ 88—89:

**) «Կոմունիստ» 1925 թ. № 1—2:

Յ Ր Ո Յ Կ Ի

«Մեր ամբողջ հույսը դնում ենք այն բանի վրա վոր մեր հեղափոխութիւնը կհրահրի Յեվրոպական հեղափոխութիւնը: Յեթե Յեվրոպայում ապստամբած ժողովուրդները չլախջախեն իմպերիալիզմը, մենք կըլախջախվենք: Մա անկասկած է կամ ռուսական հեղափոխութիւնը Արևմուտքում կբարձրացնի պայքարի մրրիկը, կամ բոլոր յերկրները կապիտալիզմը կխեղդի մեր հեղափոխութիւնը»:

«... Իհայտ է յեկել վորոշ անհամապատասխանութիւն, վորի արմատը շատ խորն է մեր յերկրի հետամնացութեան մեջ... Մեր հեղափոխութիւնը իր զարգացման առաջին շրջանում չգտավ անհրաժեշտ աջակցութիւն»:

Այստեղից են տակտիկական այն մեծագույն դժվարութիւնները, վորոնց առաջ կանգնած յենք... մեզ փրկել բառի բուն իմաստով կարող է միայն Յեվրոպական հեղափոխութիւնը»:

ԲՈՒՆԱՐԻՆ

«Արդեն հեղափոխութեան հենց սկզբում մենք ասում էյինք, թե ռուսական հեղափոխութիւնը կամ կփրկվի միջազգային հեղափոխութեամբ, կամ կկործանվի միջազգային կապիտալիզմի հարվածների տակ: Դա մեր հիմնական թեզիսն եր»:

«Վոչ մի սոցիալիստական հեղափոխութիւն չի կարող հաղթական լինել, առանց դուրս գալու ազգային շրջանակներից, առանց վերածվելու միջազգային պրոլետարական հեղափոխութեան: Այլ կերպ ասած՝

սոցիալիզմի ամրապնդումը և հաղթանակը անըմբռնելի են միայն տվյալ ազգի և տվյալ յերկրի սահմաններում»:

Յեվ պետք է ասել, վոր ընկ. Բուխարինը Բրեստի շրջանում գրավում էր Տրոցկու ավելի հետևողական դիրք, կոչ անելով անպայման հեղափոխական պատերազմի ընդդեմ գերմանական իմպերիալիզմի: Հեղափոխական պատերազմ ամեն գնով — սա շատ ավելի հետևողական յեղրակացութուն է մեր յերկրի շրջանակներում հեղափոխության կործանման դատապարտված լինելուց, քան Տրոցկու դիրքը, վոր նույնպես կարծում էր, թե մեր հեղափոխության կործանումը «տոպրակավորի» ձեռքից, անխուսափելի յե առանց արևմտա-յվրոպական պրոլետարիատի պետական ոգնության, բայց պաշտպանում էր «վոչ խաղաղութունն վոչ պատերազմ», կիսատ-պուտ լողունգը:

Բուխարինը հաղթահարեց իր տրոցկիզմը, կուսակցության հարվածները տակ: Բայց դյուրացնելով դիալեկտիկան, ընկ. Բուխարինը չկարողացավ մինչև վերջը հասկանալ կուսակցության գիծը, դիսավորապես գյուղացիական հարցում և անցավ աջ թեքման դիրքերը:

Տրոցկու և տրոցկիստների համար յերբեք հասկանալի չէ յեղել մանր գյուղացու յերկգիմի ելութունը, վոր բղիում է նրա յերկգիմի դրութունից՝ արտադրության մեջ: Տրոցկին չէր հասկանում, վոր մանր գյուղացին մի կողմից սեփականատեր է, մյուս կողմից աշխատավոր և վոր կյանքում նրա այս յերկու «կողմերը» ձուլվում են և կազմում մի ամբողջութուն: Տրոցկին նայում է գյուղացու վրա լոկ վոր-

պես սեփականատերի և սրանից հանում է այն յեակութունը, թե անխուսափելի յե պառակտումը պրոլետարիատի և գյուղացիության միջև, անխուսափելի յեն նրանց կոնֆլիկտները: «Կոնֆլիկտը կվերջանա քաղաքացիական պատերազմով և պրոլետարիատի պարտությամբ՝ մեր յերկրում» *):

Իսկ Բուխարինը, ժխտելով տրոցկիստական վերաբերմունքը դեպի գյուղացիութունը, ընկավ մյուս ծայրահեղության մեջ և այլևս չի տեսնում ելական հակասություններ պրոլետարիատի և գյուղացիության միջև, չի տեսնում այն, վոր պրոլետարիատի դաշինքը միջակ գյուղացիության հետ հանդիսանում էր գաճազան գասակարգերի դաշինք, վոր առաջադրում է սխտեմատիկ դեկավար ազդեցութուն պրոլետարիատի կողմից, գյուղացիության մանր-սեփականատիրական հոգեբանության վերամշակումը, նրա ներգրավումը կոլլեկտիվ շարժման մեջ:

Այսպես, խզելով կապը տրոցկիզմի հետ Բուխարինը չխզեց կապը տրոցկիստական մեթոդոլոգիայի հետ, չթողեց տրոցկիստական ֆորմալ, միակողմանի վոչ դիալեկտիկական մոտեցումը իրականության: Սրանից են նրա տատանումները և հակադիր դեպի սխալները:

Այս կողմից չափազանց բնորոշ է այն փաստը, յերբ Տրոցկին յերևույթապես փորձում էր լոյալ կերպով պարզաբանել կուսակցության վորոշումները, ընդունված 14-րդ կուսկոնֆերանսում, նա պարզաբանում էր այդ վորոշումները բուխարինյան վոգով:

*) 1. Տրոցկի «Կոսակցիստները և ուր. հեղափոխութունը»:

Այսպէս, 1925 թ. սեպտեմբերին Չապորոժիայում արած իր զեկուցման: մեջ հայտարարեց:

«Քանի դեռ մենք չենք կարող տալ գյուղին քար-ձրը տեխնիկա, մեզ մոտ կան յերկու հնարավորութիւններ, կամ գյուղում կիրառել ռազմական կոմ-մունիզմի մեթոդները և կասեցնել այնտեղ արտադրական ուժերի զարգացումը, ինչ վոր պատճառ կլիներ շուկայի նեղացման և դրանով՝ արտադրական ուժերի կասեցմանը արդունաբերութեան մեջ, կամ քանի դեռ չենք կարող մեր արդունաբերութեան միջոցներով կոլլեկտիվացնել գյուղատնտեսութիւնը, մենք պետք է թույլ տանք գյուղում արտադրական ուժերի զարգացումը, թեկուզ և կապիտալիստական մեթոդների ոգնութեամբ: Սրանումն է մեր քաղաքականութեան ներկա շրջանի հատկութիւնը:

Յեւ այսպէս, Տրոցկին, հեռավոր ապագային թողնելով գյուղի կոլլեկտիվացման խնդիրները, մեր տնտեսական քաղաքականութեան ելութիւնը տեսնում նրանում, վոր պետք է ապահովել յերկրի արտադրական ուժերի զարգացումը կապիտալիստական մեթոդների ոգնութեամբ:

«Արտադրական ուժերի զարգացումը,—հայտարարում է Տրոցկին լիովին համապատասխան այն բանին, ինչ գրում և ասում ելին այն ժամանակ և հետո աջ ուղիւնիստները,—մեզ համար բարձրագույն չափանիշ են, գերագույն կանոն: Առանց արտադրական ուժերի զարգացման սոցիալիզմ լինել չի կարող: Յեւ յերբ պարզվեց, վոր գյուղում մեր սահմանափակումները կապիտալիստական հարաբերութիւնների բնազավառում՝ կասեցնում են արտադրական ուժերի

զարգացումը, կուսակցութիւնը և խորհրդային իշխանութիւնը նրա ղեկավարութեամբ միջիշ լայնացրին կապիտալիստական հարաբերութիւնների շրջանակները գյուղում» *):

Այսպէս աղավաղելով կուսակցական քաղաքականութեան ելութիւնը, Տրոցկին իսկույն սկսում է արդարացնել այն, կրկնելով Բոգուշևսկու ծանոթ յելութիւնները:

«Կուսակցութեան վերջին միջոցառումները գյուղացիական քաղաքականութեան բնազավառում նշանակում են շրջանակների լայնացում ապրանքա-կապիտալիստական հարաբերութիւնների համար գյուղում: Սա տնհերքելի փաստ է: Ռազմական կոմունիզմի ժամանակ կիրառվող ապակուլակացումից մեր կուսակցութիւնը և խորհրդային իշխանութիւնը իրերի բերումով հարկադրված յեղան թույլ տալ գյուղում այն կապիտալի կուտակումը, վոր մենք առաջ անվանում էինք կուլակային, իսկ այժմ ավելի ճիշտ կըլիներ անվանել ֆերմերական կապիտալ: «Կուլակ» բառը կապված է դեռևս կիսաճորտատիրական կարգի հարաբերութիւնների, կալվածատերերի, իսպրաֆնիկի բռնութեան հետ: Այժմ մեզ մոտ գյուղում առաջ է գալիս նոր ախպի ֆերմեր-սեփականատեր: Իհարկէ մենք կարող ենք հին հիշողութեամբ անվանել նրան կուլակ, բայց շատ ավելի ճիշտ կլիներ անվանել նրան կապիտալիստական ֆերմեր» **):

*) Լ. Տրոցկի «Մեր նոր խնդիրների մասին» Ռուս. պետ-հրատ 1926 թ. էջ 19:

**) Լ. Տրոցկի «Մեր նոր խնդիրների մասին», 1926 թ. էջ 3:

Միաժամանակ Տրոցկին ամեն կերպ մեղմացնում էր կուլակային վտանգի սրությունը՝ դարձյալ լիովին համապատասխան այն ամենին, ինչ գրում և ասում էին աջերը, հայտարարելով, թե կուլակը միայն մեր հնարավոր (!) և հավանական թշնամին է, այն էլ վորոշ աստիճանի վրա:

«Կամ այստեղ վտանգ, կա, անպայման: Կապիտալիստական ֆերմերը կապիտալիստական ֆերմեր ե. զարգանալով նա դառնում է ամուր դեմք նա մեր հնարավոր և հավանական թշնամին է վորոշ աստիճանի վրա» *):

Այս որինակով մենք Տեսնում ենք, վոր սայթաքումը դեպի աջ թեքումը բնավ պատահական չեր ընկ. Բուխարինի համար, վոր չկարողացավ իր վրայից դեռ շարտել տրոցկիստական մեթոդողիտայի «հին Սդամին»:

Ցեթե այժմ վերցնենք կազմակերպված կապիտալիզմի թեորիան, ապա դարձյալ պարզ է, վոր չետպատերազմյան քայքայման և կապիտալիստական հարաբերությունների կազմալուծման պայմաններում այդ տեսությունը սնուցանում էր «ձախ» բնույթի մանր բուրժուական սխալներ, վոր իրենց արտահայտությունը գտնում էյին ամեն գնով մղվելիք հեղափոխական պատերազմի լողունգում, սոցիալիստական շինարարության դժվարություններից չերես դարձնելու մեջ: Իսկ այժմ, ժամանակավոր և համեմատական կաշունացման պայմաններում նույն թեորիան սնուցանում և աջ սխալներ, սնունդ է տալիս ուղղորտու-

*) 1. Տրոցկի «Մեր նոր խնդիրների մասին» Ռուս. պետհրատ 1926 թ. էջ 3:

նիստական հայտարարությունների այն մասին, թե հեղափոխությունը կարող է ծագել միայն նոր արագոր հետևանքով:

2. ԸՆԿ. ԲՈՒԽԱՐԻՆԻ «ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ընկ. Ն. Ի. Բուխարինի իմպերիալիզմի կոնցեպցիան մի բացահայտ թեքում է դեպի սոցիալ-դեմոկրատական տեսությունը, կազմակերպված կապիտալիզմի մասին, մի ակնհայտ կապիտալիզմի չեռնֆորմիստական իդիոլոգիայի առաջ: Այդ կոնցեպցիան հիմնականում կազմվել էր դեռ 1914—17 թվականների պատերազմի շրջանում. այդ ժամանակից ի վեր նա բազմիցս լեթալիզմի է Լենինի ջախջախիչ քննադատությանը և ներկայումս պաշտպանվելով Բուխարինի կողմից համարյա անփոփոխ ձևով, կատարում է տեսական բազայի դեր կոմիստերնում չերևան յեկող լիկվիդատորական թեքումների համար:

Իմպերիալիզմի բուխարինյան տեսության գաղափարական արմատները թաղված են հեռավոր անցյալում: Նման գաղափարներ դեռ ներկա դարի արշալույսին, ստեղծել են մի շարք բուրժուական գիտնականներ:

«Բուրժուական տնտեսագետը, նշում էր Մարքսը՝ կուզելմանին իր ուղղած նամակում, սողոսկում է չերևութականի առաջ, նա չերևութականն ընդունում է իբրև վախճանական բացատրություն²⁹⁾»:

²⁹⁾ Մարքս: Նամակներ կուզելմանին. Նամակ 25-րդ, էմ 51:

Մարքսի այդ բնորոշումը միանգամայն արդարացիում է «կազմակերպված կապիտալիզմի» տեսութայամբ:

Յեղնելով մոնոպոլիաների աճման փաստից, վորոնք ավելի ու ավելի մեծ դեր են խաղում կապիտալիստական զարգացած յերկրների տնտեսական կյանքում, բուրժուական տնտեսագետները ստեղծել են մի տեսություն, վորի համաձայն, մոնոպոլիաների զարգացումը լիովին վերացնում է մրցակցությունը: Ժամանակակից կապիտալիզմի մեջ,—ուսուցանում են նրանք, ավելի ու ավելի ուժեղանում են կազմակերպվածության տարրերը, վերանում է արտադրության անարխիան: Առանձին տնտեսությունների կապի շուկայական բնույթը, ըստ ելույթյան, ստանում է ձևական բնույթ: Շուկայական տարրերը սանձահարվում են: Գներն այլևս չեն հանդիսանում ուժերի տարբերային խաղի արդյունքը, այլ սահմանվում են կարտելների և տրեստների կողմից: Ճգնաժամերը դադարում են այլևս ժամանակակից բուրժուական հասարակության պատուհասը լինելուց—տրեստացած կապիտալը սահմանում է արտադրության չափերը՝ համաձայն ազգաբնակչության գնողունակության:

«Ճիշտ է այն—գրում է The Annalist» ամերիկյան բուրժուական տնտեսագիտական ժուրնալը,—վոր դեպրեսիայի սաղմերը այժմ վոչ պակաս անհաղթելի յեն, քան տուրքերկուլիոգի միկրոբները:

Այդպես ստեղծվեց կազմակերպված կապիտալիզմի տեսությունը յուրաքանչյուր առանձին յերկրի շրջանակներում: Սակայն բուրժուական գիտնականները դրանով չսահմանափակվեցին:

Հենվելով միջազգային մոնոպոլիաների առաջգալու փաստի վրա, նրանք արդեն սկսեցին քարոզել թե մրցությունը համաշխարհային մաշտաբով ևս անհետանում է, թե իմպերիալիստական պատերազմների շրջանը փոխարինվել է միջազգային համաձայնությունների նոր շրջանով: Դեռ ավելին՝ հերթի յե դրված արդեն դերիմպերիալիզմի դարաշրջանը, այսինքն՝ այնպիսի մի շրջան, յերբ կապիտալիստական առանձին պետություններ կմիաձուլվեն, կկազմեն համաշխարհային մի միություն, համաշխարհային միասնական տրեստ:

Այդ գաղափարները ներկայումս առանձնապես ուժգին կրկնում են բուրժուական գիտնականները:

Այդպես, Ջոմբարտը, կապիտալիզմի ճակատագրի մասին իր աված գեկուցման մեջ, պնդում է, վոր կապիտալիզմը «ընթանում է դեպի շաղկապված տնտեսության սիստեմը», թե «շուկայի հին մեխանիկական վերացել է»:³⁰⁾

«Մահացավ,—զարգացնում է այդ թեզը Ջոմբարտը, հին «շուկայական մեխանիկան», վորի համաձայն պահանջը և առաջարկը վորոշում է յին շուկայի դրությունը, շուկայի դրությունը վորոշում էր ապրանքների գները, ապրանքի գները վորոշում էին աշխատավարձը, աշխատավարձը վորոշում էր շահույթը: Այժմ դրա տեղը գրավեց գները, աշխատավարձի և շահույթների կարգավորումը կարտելների կողմից, անկախ շուկայի դրությունից»³¹⁾:

³⁰⁾ Բուրժուական գիտնականները կապիտալիզմի վերջալույսի մասին, էջ 90:

³¹⁾ Բուրժուական գիտնականները կապիտալիզմի վերջալույսի մասին, էջ 23:

Նման դադափարներ են դարգացնում Բենտոն և Շմալենբախը, վորոնք անմիջականորեն «մեղավոր» են, վոր ընկ. Բուխարինը 1929 թվականին խտացրած ձևով կրկնեց իր հին, սխալ հայացքները իմպերիալիզմի եղության մասին: ³²⁾

«Յես համոզված եմ, գրում ե Շմալենբախը, վոր մենք մոտ ապագայում կանցնենք այն սիստեմին, վորը գոյութուն ունեւր համաբարության շրջանում, այն ե՝ տնտեսական նոր դարաշրջանի մոնոպոլիստական կազմակերպությունները պետք ե, վոր իրենց մոնոպոլիստ ստանան պետությունից, վորը՝ մյուս կողմից հետամուտ ե լինելու, վոր կատարվեն մոնոպոլիստից բղխող պարտավորությունները»: ³³⁾

Բուրժուական այս գիտնականներին ջանադիր կերպով ձախակցում ե սոցիալ-դեմոկրատիան, վորը դարձել ե բուրժուազիալի յերրորդ կուսակցությունը: Կազմակերպված կապիտալիզմին վերաբերյալ խոսակցությունները չեն պակասում սոցիալ-դեմոկրատական մամուլի եջերում:

«Ազատ մրցության շրջանը, գրում ե որինակ, Ռ. Հիլֆերդինգը, մոտենում ե իր վախճանին: Խոշոր մոնոպոլիաները դառնում են տնտեսության իսկական տերերը... Այդ նշանակում ե մի անցում ազատ մրցության կապիտալիզմից անցնել կազմակերպված կապիտալիզմին: ³⁴⁾

³²⁾ Ընկ. Բուխարինի վերջին հոդվածները «Պրավդայում» ներկայացնում են Շմալենբախի և Բենտոնի հոդվածի ըննադատական վերլուծումը:

³³⁾ Պրոֆ. Շ. Շմալենբախ. Կապիտալիզմը կադանքների մեջ:

³⁴⁾ Կապիտալիզմը, սոցիալիզմը և սոցիալ-դեմոկրատիան: Ժողովածու հոդվածների և ճառերի Ռ. Հիլֆերդինգ, հրատարակ. «Մասկովսկիյ Ռաբոչիյ», 1928 թ. էջ 32:

Իսկ Կիլի կուսակցական համագումարում (1927 թվին) իր արտասանած ճառում, Հիլֆերդինգն ավելի ցայտուն կերպով ընդծում ե այդ միտքը, արդեն կատարված փաստ համարելով կազմակերպված կապիտալիզմը:

«Մենք, ասում ե նա, գտնվում ենք ներկայումս կապիտալիզմի այն շրջանում, վորը հիմնականում հաղթահարել ե ազատ մրցության և շուկայի կուլորենքների տիրապետության դարաշրջանը: Մենք այժմ ընթանում ենք դեպի տնտեսության կապիտալիստական կազմակերպությունը, այլ խոսքով, տնտեսական ուժերի ազատ խաղից ընթանում են դեպի կազմակերպված տնտեսությունը»: ³⁵⁾

Յեվ Հիլֆերդինգը իսկույն և յեթ շտապում ե ցույց տալ, վոր կազմակերպված կապիտալիզմի դարաշրջանի սկսելը բանվորներին հնարավորություն ե տալիս ավելի մեծ չափով ազդելու (կապիտալիստական պետության միջոցով) գների և աշխատավարձի վրա, վոր կազմակերպված կապիտալիզմը բերել ե գործազուրկների ապահովագրում և այլ բարիքներ: «Այդ հնարավոր ե միայն այն պատճառով, վոր մենք ունենք կազմակերպված տնտեսություն, վորը հարածուն կերպով յենթարկվում ե հասարակության, պետության ներգործությանը»: ³⁶⁾

³⁵⁾ Կապիտալիզմը, սոցիալիզմը և սոցիալ-դեմոկրատիան, Ժողովածու հոդվածների և ճառերի Ռ. Հիլֆերդինգ, Հրատարակ. «Մասկովսկիյ Ռաբոչիյ», 1928 թ. էջ 120:

³⁶⁾ Կապիտալիզմը, սոցիալիզմը և սոցիալ-դեմոկրատիան: Ժողովածու հոդվածների և ճառերի Ռ. Հիլֆերդինգ, հրատարակ. «Մասկովսկիյ Ռաբոչիյ», 1928 թ. էջ 131:

Վերջին քաղվածքից պարզ յերևում է կազմակերպված կապիտալիզմի տեսութեան սպասարկելու դերը: Նա կոչված է թմրեցնելու պրոլիտարիատի դասակարգային զգոնութիւնը, ստեղծելով իլլյուզիաներ, թէ կապիտալիզմի բոլոր հիմնական հակասութիւններն անցնում են անցյալի վերելք, իսկ նոր կազմակերպված կապիտալիզմը բերում է փրկութիւն ճգնաժամերից և գործազրկութիւնից:

Կազմակերպված կապիտալիզմի տեսութիւնը յեվ կապիտալիստական իրականութիւնը

Սակայն այդ տեսութիւնը վոչ մի ընդհանուր կեա չունի իրականութեան հետ: Նա խեղում է իրականութիւնը, վերանալով կապիտալիզմի ամենաեյական կողմերից, վորպես մի իրավակարգից, վոր հիմնված է մասնավոր սեփականութեան վրա (ճգնաժամեր, շուկա, մրցութիւն, արտադրութեան անարխիա): Նա կոծկում է կապիտալիզմի բոլոր հիմնական հակասութիւնները:

Յեվ այդ հակասական իրականութիւնը դուրս է ցայտում նույնիսկ սոցիալ-դեմոկրատիայի խորամանկութիւնների վոտաչնի միջից: Նրա առանձին տեսարանները, վորոճալով կազմակերպված կապիտալիզմի տաղտկալի տեսութիւնը, հարկադրված են խոստովանել, վոր նա բնավ չի վերացրել կապիտալիստական իրավակարգին հատուկ բոլոր հակասութիւնները:

Սյդպես, ավստրո-մարքսիստ Ռաոու Լայխտերը, «Կազմակերպված կապիտալիզմը և նրա դիալեկտիկան» հոդվածում, գրում է, վոր «կազմակերպված կապի-

տալիզմի փուլը լի չէ կապիտալիզմին հատուկ հակասութիւններով»: ³⁷⁾

Ճգնաժամերը վոչ միայն չեն վերացվել, այլև «կազմակերպված կապիտալիզմի շրջանում ստիպված ենք աչքի առաջ ունենալ նույնիսկ մի ճգնաժամից մինչև մյուս ճգնաժամը տեղ ժամանակաշրջանի կրճատումը, ավելի հաճախակի տատանումների հնարավորութիւնը»:

«Մրցութիւնը, գրում է Ռաոու Լայխտերը, շարունակում է գոյութիւն ունենալ տնտեսութեան վոչ միայն կարտելներում և արեսոներում— թեպէս վորոշ բացառութեամբ— կազմակերպված ճյուղերում, այլ շարունակում է նաև կարտելի մեջ, վարտել ամեն մի մասնակից աշխատում է փրցնել ավելի մեծ պատառ— և այստեղ մրցութիւնը հաճախ ավելի մեծ կատաղութեան է հասնում, քան առաջ ազատ շուկայում: Իրան միանում է նաև արտադրութեան տարբեր ճյուղերի փոխադարձ սյայքարը և այդ պայքարը ավելի ու ավելի յի տարածվում տեխնիկական առաջադիմութեան աճմամբ, վորը հնարավորութիւն է տալիս միեւնոյն պահանջը բավարարել այլև այլ ճանապարհներով (գոլորշու և էլեկտրականութեան, սև ու սպիտակ ածուխի, արհեստական և բնական մետաքսի մրցութիւնը): Մրցութեան այդ պայքարի ասպարեզը որեց-որ լայնանում է»:

Այդպես ուրեմն, նույնիսկ սոցիալ-դեմոկրատները ցանկալով հաշտեցնել իրենց կազմակերպված կապիտալիզմի տեսութիւնը իրականութեան հետ

³⁷⁾ Dor Kambf. № 8—9, 1928 թ.

ցանկանալով կամուրջ դցել իրենց տեսութեան և կյանքի միջև, հարկադրված են անել այնպիսի վերապահումներ, վորոնք առ վոչինչ են դարձնում նրանց տեսութեանը:

Հիրավի վերցնենք այնպիսի մի յերկիր, ինչպիսին է Միացյալ Նահանգները, վորտեղ մոնոպոլիաների տիրապետութեանը բացառիկ ուժի չե հասել: Վերացրել են արդյոք այդ մոնոպոլիաները՝ շուկան: Բնականապես, հենց ամերիկյան տնտեսական կյանքի բոլոր հետազոտողները հատկապես սարսափահար են լինում այն վիթխարի ծախսերից, վոր անում է Ամերիկյան ռեկլամի վրա: Վերջտվին արդյոք կամ թեկուզ թուլացրին նրանք մրցութեանը: Յեզ դարձյալ բոլոր հետազոտողները միաբերան ասում են՝ վոչ: Մոնոպոլիաների մրցութեանը՝ իրենցից դուրս գտնված ձեռնարկութեանների հետ և մոնոպոլիաների մրցութեանն իրար հետ գնալով ուժեղանում է: Յեզ բնորոշ է, վոր մրցութեանը տեղի չե ունենում վոչ միայն արդյունաբերութեան միևնույն ճյուղի ձեռնարկութեանների կամ տրեստների միջև, այլև այն ձեռնարկութեանների միջև, վորոնց արտադրանքը այսպես կամ այնպես կարող է փոխարինվել արդյունաբերութեան մի այլ ճյուղի արտադրանքով և նույնիսկ այնպիսիների միջև, վորոնց արտադրած ապրանքները վոչ մի ընդհանուր բան չունին իրար հետ: Նրանք պայքարում են ազդելին չեկամտի ավելի մեծ բաժինը ստանալու համար:

«Մեծ կռիվներ են տեղի ունենում — նկարագրում են մրցութեան այդ տեսակը ամերիկյան բուրժուական չերկու տնտեսագետներ՝ Սոյուլարտ Չեզը և Ֆ. Շլին-

կը — կռիվներ, վորոնց նպատակն է հարկադրել սպառողին լինել կարմիր փայտի սիրող, անուշահոտ ոճանիլիքի սիրող, վոտնամանների սիրող, ծղոտե գլխարկների սիրող, մետաքսե շապիկների սիրող» և այլն: ³⁸⁾

Չնայած տրեստների և կարտելների գործադրած բոլոր կարգավորող ձեռնարկումների, վոչ միայն չի հաջողվում վերացնել ճգնաժամերը, այլ ըստ ելուժեան գոյութեան ունի հետապետելազմյան դեռ չվերացված ճգնաժամ, վորն ընդունում է ամենատարբեր ձևեր: Չի հաջողվում նաև հաղթահարել դրերի տատանումը և շուկայի տարերբը:

«Կապիտալիստական պայմաններում, զրում է ընկ. եվկուսովը, գնի դոյացման տարրերային պայմանները վերջին հաշվով ավելի ուժեղ են, քան ռացիոնալ ֆակտորի ներդրածութեանը: Նույնիսկ ամբողջ ճյուղի մոնոպոլիզացիան չի ապահովում լիակատար տիրապետութեանը շուկայում, վորովհետև պահպանվում է առանձին ճյուղերի մրցութեանը յերկրում և յերկրից դուրս: Մի այլ սահմանափակում է հանդիսանում վճարունակ պահանջը, վորը վորոշում է շուկայի ծավալը: Յերբորդ սահմանափակող մոմենտ պետք է համարել գների ընդհանուր — ապրանքային ինդեկսը, վորն ազդում է մոնոպոլիստական կազմակերպութեան արտադրութեան ծախսերի վրա, մինչդեռ այդ կազմակերպութեան ազդեցութեան բնագավառն են հանդիսանում մի կամ յերկու ապրանք: Վերջապես, չորրորդ սահման է հանդիսանում փողային

³⁸⁾ Սոյուլարտ Չեզ յեզ Ֆ. Շլինկ: Ինչպես են մտնում սպառողի փողերը: Պետհրատ (ՌՍՖՍՀ), 1928 թ. հջ 34:

Այդպես, կարտեզներին և տրեստներին վերաբեր-
 յալ հայտնի աշխատանքի հեղինակ Ռ. Լիֆմանը, բա-
 նավե՞ն ունենալով Շմալինբախի հետ, գրում էր, վոր
 ներկայումս տնտեսական պայքարը չնայած ամեն տե-
 սակ կազմակերպությունների առկայութեանը, մասամբ
 նաև հենց դրանց շնորհիվ, չափազանց սրվել է համե-
 մատած անցյալ ժամանակների հետ... Կարտեզները և մո-
 նոպոլիտական մշուկ կազմակերպությունները վոչ մի
 չափով չեն նշանակում տնտեսական կարգերի փոփո-
 խումը: Կարտեզներին, կոնցերներին և տրեստներին
 վերաբերյալ իմ գրքում ևս վաղուց արդեն դեմ եմ
 արտահայտվել այդ տարածված մոլորութեանը»⁴⁰:

«Շուկայական աղատ տնտեսութեան գորութեանը
 գրում է Արտուր Փայլերը, դեռ այսոր ել (և հատկապես
 այսոր) ավելի ուժեղ է քան դեպի շաղկապված տնտեսու-
 թյունը ցուցաբերվող տենդենցները, վորոնց նշանակու-
 թյունը չի կարելի գնահատել միմիայն ամբի կամ չեր-
 կաթագործական արդյունաբերութեան գրութեամբ»⁴¹:

Վերոհիշյալ հեղինակները, վորքան էլ նաեւ ան-
 դոր լինեն, վորքան էլ չկարողանան հասկանալ յերե-
 վույթների կապակցութեանը, անպայման ճիշտ են ար-
 տացողում իրականութեանը, յերբ առարկում են ժա-
 մանակակից կապիտալիզմի այն բնորոշման դեմ, թե նա
 «շաղկապված» կամ «կազմակերպված» կապիտալիզմ է:
 Այդպես և կազմակերպված կապիտալիզմի տեսու-
 թյունը:

⁴⁰ Ռոպերտ Լիֆման, «Նոր տնտեսութեան» ուղիների
 ժողովածու՝ «Բուրժուական գիտնականները կապիտալիզմի վեր-
 շարուի մասին», էջ 149.
⁴¹ Արտուր Փայլեր, «Վերջ աղատ տնտեսութեան» տես
 վերոհիշյալ ժողովածուն, էջ 141:

ԸՅԿ. Բուխարինի կազմակերպված կապիտալիզմի
 տեսութունը յե՞վ նրա բնագրաւորութեանը Լեհինի
 կողմից

Այնինչ, ներկայումս բուրժուական ամենա-
 մակերեսային գիտնականներից և սոցիալ-դեմոկրա-
 տիայից հետո, «կազմակերպված կապիտալիզմի» տե-
 սութունը զարգացնում և պաշտպանում է նաև ընկ.
 Ն. Ի. Բուխարինը: Կոմինտերնի գործկոմի 10-րդ
 պլենումի բացումից առաջ սպառված իր յերկու հոդ-
 վածներում, ընկ. Բուխարինը, բուրժուական տնտե-
 սագետների նոր գրվածքներում գտնելով իր հին և
 Լեհինի կողմից դատապարտված տեսութեան «հաս-
 տատումը», հրամցնում է այդ տեսութեանը Կոմին-
 տերնին:

Սակայն հետեւնք թե ինչպես է յերկնել ընկ.
 Բուխարինը իմպերիալիզմին վերաբերյալ իր հայացք-
 ների սխտեմը, և տեսնենք թե վորքան համապա-
 տասխանում է նա լեհինիզմին:

Լեհինը միշտ ընդգծել է, վոր իմպերիալիզմը
 սոսկ մի վերնաշերտ է հին կապիտալիզմի վրա, վոր
 իմպերիալիզմը հանդիսանում է «կապիտալիզմի և ընդ-
 հանրապես ապրանքային արտադրութեան ամենախորը
 և արմատական տենդենցների անմիջական զարգացումը,
 ընդարձակումը, շարունակութեանը»⁴²), վոր նրա համար
 բնորոշ է հատկապես նորի և հնի, մոնոպոլիայի և մրցու-
 թեան ներշնչումը և պայքարը, վոր մոնոպոլիայի

⁴² Լեհին. Առաջաբան Ն. Բուխարինի «Համաշխարհային
 տնտեսութեանը և իմպերիալիզմը» գրքի: Լեհինի ինստիտուտի
 աշխատութեանները էջ 11:

ծնունդը չի վերցնում մրցությունը: այլ բարձրացնում է նրան մի նոր ավելի բարձր աստիճանի վրա:

Իսկ իմպերիալիզմի բուխարինյան ըմբռնումը իմպերիալիզմը պատկերում է, վորպես հասարակահան-տնտեսական գուտ իրավակարգ, անջատված կապիտալիզմի հին ձևերից, վերանալով այն փաստից, վոր իմպերիալիզմը գոյություն ունի կապիտալիզմի հին ձևերի կողքին, վոր նա միայն մի վերնաշինք է «հին» կապիտալիզմի վրա: «Չուս իմպերիալիզմը, առարկում եր Լեհիեր Բուխարինին, առանց կապիտալիզմի հիմնական բազայի, յերբեք գոյություն չի ունեցել, վոչ մի սեղ գոյություն չունի յեվ յերբեք գոյություն ունեցալու չե⁴³):

Իմպերիալիզմի վերլուծման նվիրված իր բազմաթիվ բոլոր աշխատություններում, Բուխարինը անշեղորեն գործում է նույն այդ սխալը, այսինքն վորպես հիմք ընդունում է տեխնոլոգիայի մոնոպոլիալի աճումը, բարձրացնում է նրան բացարձակության աստիճանը և, վերանալով հակամարտ տեխնոլոգիայից, ավելի կամ պակաս չափազանցումով, պատկերում է ժամանակակից կապիտալիզմը, վորպես մոնոպոլիստական կապիտալիզմի միանգամայն լրիվ սխտեմը, վորը ամբողջովին դուրս է մղել հին կապիտալիզմի հիմքը: Նշելով մոնոպոլիաների, կազմակերպված ու թյան տարրերի աճումը, Բուխարինը չի տեսնում, վոր կապիտալիզմի որոք հնարավոր չէ վոչնչացնել արտադրության անարխիան, շուկայական հարաբերությունները,

⁴³) Լեհին: 8-րդ համագումարում կուսակցական ծրագրի մասին արտասանած ճառը: Դրվածքների ժողովածու, հատոր 16-րդ էջ 112:

մրցությունը և այլն և իրականում ընկնում է «կազմակերպված կապիտալիզմի» սոցիալ-դեմոկրատական գուհիկ տեսությունների մեջ:

Այդպես դեռ «Համաշխարհային տնտեսությունը և իմպերիալիզմը» իր աշխատության մեջ (վոր պրված է 1915 թվականին), Բուխարինը առաջադրեց «Պետական կապիտալիստական տրեստները» տեսությունը⁴⁴),

⁴⁴) 1925 թվականին, այն ժամանակ Բուխարինի դեկավալում «Բայլեիկ» ժուրնալում, փորձ եր արված պետական կապիտալիստական տրեստների տեսությունը վերագրել... Լեհինին: Հնարավորություն չունենալով մեջ բերել վորևէ հավաստի փաստ, այդ հայտարարության հեղինակը սահմանափակվել է մատնանշելով, վոր «համաշխարհային տնտեսությունը և իմպերիալիզմը» աշխատությունը առաջին անգամ ապագրված է յեղև «Կոմմունիստ» ժուրնալում (1915 թվականին, № 1—2) և անցել է Լեհինի խըմբազուրթյամբ, վորն իբրև թե «ամբողջովին հավանություն է ավել այդ հոգվածին» (տես «Բայլեիկ», 1925 թվականին, № 17—18, էջ 20): Ներկայումս «Կոմմունիստ» ժուրնալի առթիվ Լեհինի և Շլյուսսերիկովի գրադրությունը հրատարակելուց հետո (տես «Պրոլետարսկայա սելովյուցիա», 1929 թ. № 7 կամ «Բայլեիկ», 1929 թ. № 17), արդեն կարելի յի փաստաթղթերով հաստատել, վոր այստեղ կատարվել է նույնպես կեղծիք ինչպես և պետության վերաբերյալ հարցում: Իրոք, այդ նամակներում Լեհինը նշել էր, թե «Կոմմունիստը» մեր ժամանակավոր բրվին է յեղև յերկու խմբակների կամ տարրերի հետ՝ այն է 1) Բուխարինի և ընկ-ի հետ, 2) Ռադեկ և ընկ.-ի հետ: Թե այն ժամանակ Ամենք պետք է ժամանակավոր զիջումներ անեյինք՝ առավելագույն ներդրամություն ցուցաբերեյինք «Կոմմունիստում», վորովհետև «այն ժամանակ այլ կերպ չեր կարելի ժուրնալ հրատարակել»: Բացի դրանից Լեհինն ուղում եր «ստեղծել գործը պարզելու համար մի հարմար ձև՝ կհաջողվի արդյոք «ընկերաբար» հաղթահարել Բուխարինի աստիճանները»: Իսկ ժուրնայի 1-ին և 2-րդ համարը հրատարակվելուց հետո, տարածայնություններն արվեցին, «ժամանակավոր բրվիք» լուծվեց, և «Կոմմունիստ»-ը վերջացրեց իր գոյությունը:

վորի համար «ժողովրդական սնտուրյունը» (յուրա-
փանչյուր առանձին յերկրի Ս. Պ.), «վերածվում ե մի վիր-
խաբի միացյալ քրեսի, վորի փայտերերն են հանդիսա-
նում Ֆինանսական խմբակները յեվ պետությունը»⁴⁵;

Ապա ընկ. Բուխարինը շարունակում եր, թե ժա-
մանակակից կապիտալիզմի առաջավոր յերկրները, ար-
դեն զգալի չափով հանդիսանում են «կոլլեկտիվ-կա-
պիտալիստական մի ձեռնարկութուն», «միաստր
կազմակերպված ամբողջություն»⁴⁶;

Պատերազմն ուժեղացրեց պետութայն միջա-
մտությունն արտադրութայն և բաշխման գործին: Պետությունը սահմանում եր գնիերը, մտցնում եր բաշխ-
ման նորմաներ, մտցնում եր վերահսկողութուն ար-
տադրութայն վրա և նույնիսկ գնում եր վորպես սե-
փականութուն առանձին ձեռնարկությունները, չեր-
կաթողիները և այլն: Առանց այդ կարգավորիչ ձեռ-
նարկումներին, հնարավոր չեր պատերազմ մղել, և
պատերազմող բոլոր պետությունները, ավելի կսմ
պակաս չափով, բռնում եյին այդ ուղին: Առանձնապես
հեռու գնացին Գերմանիայի պետական-կապիտալիս-
տական ձեռնարկումները, վորը գանվում եր պաշարված
դրութայն մեջ:

Վերացրին արդյոք այդ ձեռնարկումները կապի-
տալիստական հասարակութայն անարխիան, հաջողե-
ցրին արդյոք նրանք պլանային տնտեսութայն ստեղ-
ծումը: Իհարկե վոչ: Ինչպես միանգամայն ճիշտ ե
նշում ընկ. Մ. Ռուբինշտեյնը, «պլանայնութայն տե-

⁴⁵ Ն. Բուխարին. Համաշխարհային տնտեսությունը յեվ
իմպերիալիզմը, էջ 113:

⁴⁶ Նույնը էջ 114—115 (ընդգծումը իմն ե: Ս. Պ.):

սակեաց ամենայրիվ ռազմական տնտեսությունը,
կապիտալիստական պայմաներում, չի կարող (և չի ել
ձգտում) հաղթարել մասնավոր սեփականութայն շրթ-
ջանակները, շահույթի կատաղի հետապնդումը, կապի-
տալիստական զանազան խմբակների հակասական շա-
հերը: Մասնավոր սեփականատիրական շահերի պա-
րիսպը վերջին հաշվով փակուղու յե հասցնում պլա-
նային լրիվ կազմակերպութայն ամեն մի փորձ»⁴⁷;

Իրոք, բուրժուական պետութայն կարգավորող
բոլոր ձեռնարկումները չեյին կարող վերացնել սպե-
կուլացիայի սանձարձակությունը և հաղթահարել ար-
տադրութայն կապիտալիստական յեղանակը, վորով-
հետև պետութայն միջամտությունը, ընդհանուր առ-
մամբ, վորոշ սահմանից չեր անցնում (և չի անցնում):

«Կապիտալիստական ռեակցիոն պետությունը,
գրում եր Լենինը, վորը վախենում ե խախտել կապի-
տալիզմի հիմքը վարձու ստրկութայն հիմքերը, հա-
րուստների տնտեսութայն հիմքերը... այդպիսի պետու-
թյանը վոչինչ հարկավոր չե, բացի հացի գործույկից:
Այդպիսի պետությունը վոչ մի բոպե, վոչ մի քայ-
լափոխում, աչքաթող չի անում ռեակցիոն նպատակը՝
ամբողջել կապիտալիզմը, թույլ չտալ, վոր նա խախ-
տվի, սահմանափակել ընդհանրապես կյանքի կարգա-
վորումը, և մասնավորապես սպառման կարգավորումը
այնպիսի միջոցներով, վորոնք անպայման անհրաժեշտ
են ժողովուրդը կերակրելու համար»⁴⁸;

⁴⁷ Մարքս Բուրխուսեյն, Ապագայի իմպերիալիստական
պատերազմները, Հրատարակություն Կոմ-ակադեմիայի, 1920 թ. 172:

⁴⁸ Լենին: Հատոր 14, մասն 2-րդ, էջ 100:

Բայց սոցիալ-դեմոկրատիան, վորը պատերազմի ժամանակ սկսեց բաց-իբաց պաշտպանել «իբ» բուրժուազիայի շահերը, գովաբանեց բուրժուազիայի բոլոր կազմակերպչական ձեռնարկումները, վորպես «ուղի-ուղի սոցիալիզմ», վորպես կապիտալիստական տնտես-սության պլանազրկության, անարխիականության հողթահարում:

Ընկ. Բուխարինը նույնպես չկարողացավ ճիշտ, մարքսիստորեն գնահատել ժամանակակից կապիտալիզմի նոր չերեուլթները և տենդենցները: Այն է՝ նա միանգամայն վերացավ այն գործոններից, վորոնք արգելք են հանդիսանում ստեղծելու կազմակերպված տնտեսութուն՝ կապիտալիստական հիմքի վրա, և փաստորեն կրկնեց սոցիալ-դեմոկրատական հեքիաթները կազմակերպված կապիտալիզմի մասին:

«Սոցիալիզմի դավաճանները, գրում եր ընկ. Բուխարինը, Յեվրոպայում բանվորներին պատմում են, վոր իրերի այդ դրութունը շատ լավ է, վոր դա սոցիալիզմի մի հատուկ տեսակն է, «ուղիական սոցիալիզմ», վորովհետև իբրև թե այստեղ արտադրութունը կազմակերպված է ամբողջ յերկրում»: Յեվ ջննադատելով ռազմական սոցիալիզմի դուստաններին, ընկեր Բուխարինը գրում եր, «արտադրության կազմակերպումը դեռ անհն ինչ չէ... Իսկական սոցիալիզմի կյութունը վոչ միայն այն է, թե արտադրութունը, կազմակերպված է այլ նաև այն, վոր վոչնչացված է կապիտալի տիրապետութունը, վոչնչացված է շահագործումը, վոչնչացված է բաժանումը դասակարգերի»⁴⁹):

⁴⁹) Ն. Բուխարին: Նոր ստրկութուն: «Նովի Միր» թիւրթլ. Նյու-Յորք № 850, 1916 թ. Նոյեմբերի 11:

Այսպիսով մենք այստեղ տեսնում ենք, վոր ընկ. Բուխարինը, արդարացի կերպով ջննադատելով սոցիալ-շովինիստներին այն պատճառով, վոր նրանք խաբեբալորեն ռազմական կապիտալիզմը պատկերացնում են, վորպես սոցիալիզմ. միևնույն ժամանակ ամբողջովին ընդունում է նրանց այն պնդումը, թե կապիտալիզմը դարձել է արդեն կազմակերպված տնտեսութուն⁵⁰):

Չարգացնելով այդ թեզը, ընկեր Բուխարինը գրում եր.

«Չանազան չերկրներում տարբեր ձևով, ավելի կամ պակաս չափով, սակայն ամենուրեք նկատվում է միևնույն բանը, այն է՝ աստիճանաբար իմպերիալիստական ավազակային պետութունների ձեռքն է անցնում մթերքների արտադրութունը և նրանց բաշխումը: Հասնում է պետական կապիտալիզմի ժամանակը»⁵¹):

«Կապիտալի» միասնական, կենտրոնացված, ամենազոր կազմակերպութունը՝ իմպերիալիստական ավազակային պետութունը, ամեն ինչ վերածում է մի վիթխարի զորանոցի, մի հսկայական ստրկային տըն-

⁵⁰) Չնայած այն հանգամանքին, վոր մի շարք հետազոտութուններ (տես որինակ Ն. Սոսկինիցկայա: Գերմանիայի ռազմական տնտեսութունը) ցույց տվին թե վորքան մեծ անհեթեթութուն է պատկերացնել Գերմանիայի ռազմական տնտեսութունը վորպես «պլանային» և «կազմակերպված», ընկ. Բուխարինը 1929 թ. կրկնում է իր սխալ այն թեզը, թե «Գերմանիայի տնտեսութունը վերածվել է առանձնացված պլանային ռազմական կապիտալիստական տնտեսության» (տես Ն. Բուխարին: Կազմակերպված տնտեսականության տեսութունը):

⁵¹) Ն. Բուխարին: Կազմակերպված տնտեսականության տեսութունը:

տեսութեան, վորտեղ պրոլետարիատն անմիջականորեն հակադրված է կապիտալիստական կառավարութեանը միաձուլված կլինին»⁵²):

Ստրկաչին տնտեսութեանը ինչպես հայտնի յե կազմակերպված, պլանային տնտեսութեան է: Այնպես վոր վերջին հատվածում Բուխարինը դարձյալ ընդգծում է, վոր ռազմական կապիտալիզմը հաղթահարել է շուկայի տարերքը:

Պետական կապիտալիզմը Բուխարինի կողմից համարվում է վոչ թե վերնաշենք «Նեո կապիտալիզմ վրա», մի վերնաշենք: Վոր չի վերափոխել և չեր կարող վերափոխել ապրանքային տնտեսութեան հիմքերը և նրա հակասութեանները: Վոչ: Ըստ Բուխարինի «պետական կապիտալիզմը պետական կապիտալիստական տրեստի լրացած ձևակերպումն է (1): Կազմակերպման պրոցեսը աստիճանաբար վերացնում է «ժողովրդական—տնտեսական» մեխանիզմի առանձին մասերի անարխիան, տնտեսական ամբողջ կյանքը դնելով միլիտարիստական պետութեան յերկաթե կլորունկի տակ»^{*}):

Բուխարինը չկարողանալով հասկանալ, նախ այն, վոր պետական-կապիտալիստական տնտեսակերպերը չեն տանում դեպի կազմակերպված կապիտալիզմի կազմութեանը, և յերկրորդ, վոր այդ տնտեսակերպերի ուժեղ աստիճանը հանդիսանում է իմպերիալիստական պատերազմի անցողիկ հետևանքը:

⁵²) Ն. Բուխարին: Կազմակերպված տնտեսականութեան տեսութեանը:

^{*}) Ն. Բուխարին, իմպերիալիստական պետութեան տեսութեանը շուրջը, «Նովիյ Միր» թերթի № 848, 1926 թ. դեկտ. 2:

Գուցե այնպիսի ուժեղ պետական կապիտալիստական տնտեսակերպերը հանդիսանում են իմպերիալիստական պատերազմի անցողիկ հետևանքը միայն: Գուցե նրանք զգալի չափով կթուլանան այդ պատերազմը վերջանալուց հետո: Ընկ. Բուխարինն այդ հարցը սովել է, սակայն պատասխանել է բացասաբար:

«Պատերազմը,— դրում էր նա, իմպերիալիստական ժամանակաշրջանի նորմալ դեպքն է, այդ պատճառով էլ արտադրութեան պետականացումը մեր ժամանակի համար, նմանապես «նորմալ դեպք է»⁵³):

Ընկ. Բուխարինը այդ մտքերը կրկնում էր ամենատարբեր վարիացիաներով նաև պատերազմի շրջանում գրած իր այլ հոդվածներում: Ինչի մասին էլ նա գրի. լինի դա գործադուլային պայքարը, թանգութեանը կամ պրոտեկցիոնիզմը. միևնույն է, նա միշտ նույն տեսական յեկակեալից է սկսում:

Այդպես, գործադուլային սլայքարին վերաբերյալ իր հոդվածում նա ասում է.— «Իսկ առանձանպես արժեք ունի գործադուլների իրավունքը ներկայումս յերբ բանվորների դեմ հանդես է գալիս կազմակերպված կապիտալը»⁵⁴):

Պրոտեկցիոնիզմի վերաբերյալ իր հոդվածում, Բուխարինը դրում է. Պրոտեկցիոնիզմը կենսական անհրաժեշտութեան է կազմակերպված կապիտալիզմի համար»⁵⁵):

⁵³) Ն. Բուխարին: Պետական կապիտալիզմը և մարքսիզմը: «Նովիյ Միր» թերթը, № 848, 1926 թ. դեկտեմբերի 2:

⁵⁴) Ն. Բուխարին, Գործադուլների իրավունքը վտանգի մեջ է: «Նովիյ Միր», № 855, 1926 թ. դեկտ. 11-ը:

⁵⁵) Ն. Բուխարին: Պրոտեկցիոնիզմը և բանվոր դասակարգը: «Նովիյ Միր», թերթը № 836, 1926 թ. նոյեմբերի 18:

Թանգության վերաբերյալ հողվածում, գրում ե. «առաջ արտադրությունը կազմակերպված չէր: Այժմ այլ բան ե: Ներկայումս ամբողջ արտադրությունը վոչ թե առանձին կապիտալիստների, այլ ամբողջ կազմակերպության ձեռին ե տրեստների ձեռին. վորոնք գործում են վորոշ պլանով և վոչվոք չի կարող խանգարել նրանց... Արտադրությունը գտնվում ե կազմակերպված կապիտալի ձեռին»⁵⁶):

Բուխարինի այդ բոլոր գրվածները կազմակերպված կապիտալիզմի մասին, ցույց են տալիս, վոր նա չի յուրացրել մարքսիզմի էյուլթյունը, նրա հեղափոխական դիալեկտիկան: Յեվ իրոք, դիալեկտիկան սովորեցնում ե, վոր իրերն ու յերևույթները պետք ե ուսումնասիրել բազմակողմանի կերպով, նա սովորեցնում ե յերևան հանել հակադրությունների պայքարը և յուրաքանչյուր առարկայի մեջ գոյություն ունեցող այդ հակադրությունների միասնությունը, գտնելով այդ առարկայի մեջ ներքին հակասական տենդենցները և կողմերը: Իսկ Բուխարինի մոտ, մենք տեսնում ենք պարզացրած սխեմ՝ նա վերցնում ե իմպերիալիզմի միայն մի կողմը՝ նրա տենդենցը դեպի մոնոպոլիզացի աճումը, անկարող լինելով կապել այդ տենդենցը մրցության և արտադրության անարխիայի պահպանող և նույնիսկ ուժեղացնող դործոնի հետ: Իմպերիալիզմի վերաբերյալ նրա տեսական հետազոտությունների մեջ, իմպերիալիզմը պատկերացվում ե վորպես հին կապիտալիզմից անջատված մի ինչ վորսիստեմ, նա չի տեսնում իրականում նորի և հնի արտա-

ուց ներհուսումը նկատի չի առնում, վոր իմպերիալիզմն ընդհանրապես կապիտալիզմի բոլոր հիմնական առանձնահատկությունների միայն զարգացումն ու շարունակությունն ե, և հենց այդպիսի առանձնատեղությունների թվին ե պատկանում մրցությունը և արտադրության անարխիան:

«Մարդու ճանաչողությունը, — գրում եր Լենինը — ուղիղ գիծ չե, այլ մի կոր գիծ ե, վորն անվերջ մոտենում ե շարքին, պարույրին: Այդ կոր գծի ամեն մի հատվածը, բեկորը, կտորը կարելի յե վերածել (միակողմանի վերածել) ինքնուրույն, ամբողջական, ուղիղ գծի, վորը, յեթե մարդ քթից դենը բան չի տեսնում տանում ե այն ժամանակ դեպի ճահիճ, դեպի տերտերությունը»⁵⁷):

Այդ պատճառով, բացատրում եր Լենինը Բուխարինին, «առարկան իրապես գիտենալու համար պետք ե ընդգրկել, ուսումնասիրել նրան բոլոր կողմերը, նրա բոլոր կապակցությունները»⁵⁸):

Իսկ յեթե մենք, միակողմանի կերպով, դուրս քաշենք իրականության առանձին փաստերը (ինչպես որինակ տենդենցը դեպի պետական կապիտալիզմը) և քննենք դրանց, անկախ կապիտալիզմի ընդհանուր իրավակարգից, յեթե մենք վերանանք պետկապիտալիզմին հակադրոծող տենդենցներից, այն հանգամանքից, վոր իրար հետ թշնամի մոնոպոլիտները իրենց գործունեյությունը սահմանափակում են միմիայն վո-

⁵⁷) Լենին: Դիալեկտիկայի հարցի շուրջը, «Պոդ Զնամե-նեմ Մարքսիզմա», 1925 թվականը, № 2—3

⁵⁸) Լենին: Դարձյալ արհմիությունների մասին, — քննա-ցիկ մոմենտի և ընկ. ընկ. Տրոցկու ու Բուխարինի սխալների մասին: Հատոր 16-ը մասն 1-ին էջ 55:

⁵⁶) Ն. Բուխարին: Թանգությունը և կապիտալիզմը: «Նովիյ Միր» թերթը, 828, 1916 թ. նոյեմբերի 7-ը:

րոշ սահմաններում, այն չափով, վոր վերջիններս չխանդարեն նրանց՝ ինքնուրույն վարելու իրենց արնտեսությունը և պայքարել մեծագույն շահի համար, ապա ոպպորտությունիստական ճահճի մեջ ընկնելը ապահովված է: Սակայն ընկ. Բուխարինը նկատի չե առնում գործի հենց մի կողմը (տենդենցը դեպի պետկապիտալիզմը), անկարող լինելով բազմակողմանի կերպով ընդգրկելու և հասկանալու ժամանակակից կապիտալիզմի ելությունը:

Այդպես եր պատերազմի տարիներին: Նույնը կըրկնվում է նաև այժմ: «Կազմակերպված տնտեսական-նության տեսությունը» հոդվածում⁵⁹), ընկ. Բուխարինը, ուժգին և չափազանցված ձևով ընդգծում էր, վոր ներկայումս նկատվում է «խիստ ուժեղացած տենդենց դեպի պետական կապիտալիզմը», վոր ներկայումս «պետական կապիտալիզմը աճում է», թեպետ «նոր բազիսի վրա». նա միանգամայն մոռանում է պետական կապիտալիզմի աճման հակագործող նոր տենդենցները, վորոնք պարունակվում են կապիտալիստական իրավակարգի հենց ելության մեջ:

1917 թվականին, կուսակցական ծրագրի քննարկման առթիվ, ընկ. Բուխարինը հանդես է գալիս մի շարք հոդվածներով, վորոնց մեջ վերաբտադրում է իր պարզացրած պատկերացումն իմպերիալիզմի մասին:

«Կապիտալիստական տնտեսության ներքին հարաբերությունների բնագավառում, գրում է նա, անկազմակերպ ձեռնարկությունների և «ազատ մրցու-

⁵⁹) «Պրավդա», 1929 թ. հունիսի 30:

թյան» ուղը գրավել է կազմակերպված մոնոպոլիստական կապիտալը»⁶⁰):

Մի այլ հոդվածում, բնորոշելով ժամանակակից իմպերիալիզմի տարբերությունը նախկինից, ընկ. Բուխարինը գրում է.

«Հին «անարխիական» կապիտալիզմը «ազատ մրցության» կապիտալիզմը և տնտեսական հարաբերություններին պետական իշխանության չմիջամտելու շրջանի կապիտալիզմը, վերածվեց իր սեփական հակադրության: Վոշ միայն համարյա մահացավ ազատ մրցությունը, այլ և գոյացավ մի ուժեղ տենդենց դեպի արտադրության կարգավորումը՝ պետական և մունիցիպալիզացիայի յենթարկելով»⁶¹):

Յեվ ապա՝

«Վոչնչացնում է արդյոք, կապիտալիստական հարաբերությունների այդ նոր տիպը կապիտալիստական հասարակության հակասությունները: Վոչնչացնում է արդյոք, նախ և առաջ արտադրության արդի յեղանակի անախիան:

Յեթե սահմանափակվենք միմիայն պետական կազմակերպության շրջանակներով, այսինքն՝ կապիտալիստական հայրենիքի շրջանակներով, ապա այդ հարցին կարելի չե դրական պատասխան տալ: Պետական կապիտալիստական փուլը զգալի չափով կազմակերպված մի կապիտալիզմ է:

Արտադրության անարխիան բնավ չի անհետացել: Սակայն այժմ դա համաշխարհային արտադրու-

⁶⁰) Ն. Բուխարին, Կուսակցական ծրագրի վերանայնու առթիվ: «Սպարտակ», ժուրնալ, № 4, էջ 4:

⁶¹) Ն. Բուխարին, Կապիտալիզմի կործանումը: «Սպարտակ», № 10 էջ 5:

թշան անարխիա յե: Մրցութունը նույնպես մնում է: Սակայն, ներկայումս, դա պետական կապիտալիստական մարմինների վիթխարի պայքարն է համաշխարհային շուկայում: Արտադրութչան հասարակական բնույթի է մասնավոր չուրացման հակասութչունը, նմանապես, չի վոչնչացվել: Նա ընդունում է սուր հակասութչյան ձև, վոր գոյութչուն ունի աշխատանքի ընդհանուր համաշխարհային բնույթի և պետականորեն կազմակերպված բուրժուազրայի մրցակից խմբակների կողմից այդ աշխատանքի չուրացման միջև»⁶²):

Մենք, ընկ. Բուխարինի 1917 թվականի աշխատութչուններից այդպիսի խոշոր քաղվածքներ արինք այն պատճառով, վոր 1929 թվականին նա այդ մտքերը կրկնում է համարյա բառացի: Անցյալ 12 տարվա ընթացքում, ընկ. Բուխարինը վոչինչ չի մոռացել և վոչինչ չի սովորել: Մինչդեռ, Լենինը մի շարք հողվածներում հատկապես քննել է ընկ. Բուխարինի հայացքների ամբողջ անհեթեթութչունը, միակողմանիութչունը և սխալը: 1929 թվականին Բուխարինը վրեժ է լուծում Լենինից և «Չարդ ու փշուր» է անում նրան, հիմնվելով բուրժուական գոհիկ տնտեսագետների գրվածքների վրա: Լենինը կտրուկ կերպով հանդես յեկավ այն հայացքների դեմ, վորոնք 1917 թվականին զարգացնում էին ընկ. Բուխարինը և մի շարք այլ ընկերներ (Լոմով և ուրիշները):

«Այդ առանձնահատկութչունները (կապիտալիզմի, վորպես հասարակական-տնտեսական իրավակարգի,

⁶²) Ն. Բուխարին, Կապիտալիզմի կործանումը «Սպարտակ», № 10 էջ 6—7: Ընկ. Բուխարինը նման մտքեր է զարգացրել նաև պետական կապիտալիզմի վերաբերյալ իր այն հողվածում վոր գետեղված է «Սպարտակ» ժուրնալի № 2-ում:

ամենագլխավոր առանձնահատկութչունները, այսինքն մրցութչունը, արտադրութչյան անարխիան, ճգնաժամերը և այլն: Մ. Պ.) արմատապես չի փոխել կապիտալիզմը», վորը հանդիսանում է «կապիտալիզմի զարգացման շարունակութչունը»,— գրում էր Լենինը:

Իմպերիալիզմը իրոք չի վերակառուցում և չի կարող վերակառուցել կապիտալիզմը ցածից մինչև վեր: Իմպերիալիզմը բարդացնում և սրում է կապիտալիզմի հակասութչունները, «խառնում է» մոնոպոլիային ազատ մրցութչունը, սակայն չի վերացնում փոխանակութչունը, շուկան, մրցութչունը, ճգնաժամերը և այլն:

Իմպերիալիզմը վերացող, բայց դեռ չվերացած, մեռնող, բայց դեռ չմեռած կապիտալիզմ է: Վոչ թե դուռ մոնոպոլիաներ, այլ մոնոպոլիաներ փոխանակութչյան, շուկայի, մրցութչյան ճգնաժամերի հետ միասին ահա ընդհանրապես իմպերիալիզմի ամենաեղանակալի առանձնահատկութչունը»⁶³):

Մենք տեսնում ենք, վոր Բուխարինի և Լենինի իմպերիալիզմի ըմբռնումը վոչ միայն տարբեր է, այլ և հակադիր: Բուխարինը, ծիծաղելի չափով չափազանցնելով տենդենցը դեպի մոնոպոլիան, յենթադրում է, վոր իմպերիալիզմի արդեն այնպիսի լրիվ տընտեսական իրավակարգ է, վորը վոչնչացրել է հին կապիտալիզմի ամբողջ հիմքը: Մոնոպոլիստական կապիտալիզմը նա պատկերացնում է վորպես կազմակերպված կապիտալիզմ, վորը վոչնչացրել է ներքին

⁶³) Լենին, — Նյութեր, կուսակցական ծրագրի վերանայման առթիվ: Գրվածքների ժողովածու, 2-րդ հրատարակութչուն հատոր 20 էջ 297:

շուկայում մրցութունը, ճգնաժամերը, արտադրութ-
յան անարխիան և այլն: Իսկ Լենինը հենց իմպեր-
իալիզմի ամենից ավելի եյակյան առանձնահատկու-
թյունը համարում է այն, վոր նա մոնոպոլիային
խառնում է մրցությունը, հնարավորություն չունե-
նալով վերացնել այդ վերջինը:

Դեռ ավելին: Լենինը յենթադրում էր, վոր մըր-
ցության և մոնոպոլիաների այդ ներհյուսումը և
նրանց հակասությունը ժամանակակից կապիտալիզ-
մի ամենախորը հակասությունն է, վորը պատասխան
է սոցիալիստական հեղափոխությունը:

Իրար հակասող «սկզբունքներին» մրցության և
մոնոպոլիայի այդ միացումն է հենց, վոր էյակյան է
իմպերիալիզմի համար, հենց նա չէ, վոր պատրաս-
տում է կործանումը, այսինքն՝ սոցիալիստական հե-
ղափոխությունը»⁶⁴):

Յեւ տալով իմպերիալիստական ժամանակաշրջա-
նի ընդհանուր բնութագրությունը, Լենինը գրում էր:

«Արտադրությունը դառնում է հասարակական,
սակայն, չուրացումը մնում է մասնավոր: Արտադրու-
թյան հանրային միջոցները մնում են վորպես փոք-
րաթիվ անձանց մասնավոր սեփականություն: Ձեվա-
կանոսեմ ճանաչվող ազատ մրցության ընդհանուր օր-
ջանակները մնում են, և սակավաթիվ մոնոպոլիստնե-
րի ճնշումը մնացած ազգաբնակչության վրա, դառ-
նում է հարյուր անգամ ավելի ծանր, ավելի զգալի
և անաանելի»⁶⁵)

64) Լենին: Նյութեր կուսակցական ծրագրի վերաբնման
համար: Գրվածքների ժողովածու: 2-րդ հրատ. հատոր 20:

65) Լենին.— Իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի բարձ-
րագույն աստիճանը:

Լենինը բուրժուական գուհիկ տնտեսագետներին
քննադատում է հենց այն բանի համար, վոր նրանք
հնարել են ճգնաժամերի, արտադրության անարխիայի
և արտադրության կապիտալիստական չեղանակի մի-
յուս մշտական ուղեկիցները վերացման առասպելը:

«Ճգնաժամերի վերացումը կարտեղների միջոցով
գրում էր նա,—բուրժուական տնտեսագետները հեք-
իաթն է, վորոնք արգարացնում են կապիտալիզմը
ինչ միջոցով էլ լինի: Ընդհակառակը, արդյունաբե-
րության մի քանի ճյուղերում ստեղծվող մոնոպոլիան
ուժեղացնում և սրում է ընդհանրապես կապիտալիս-
տական ամբողջ արտադրությանը հատուկ քառը»⁶⁶):

Մի քանի ընկերներ բուրժուական տնտեսագետ-
ների այդ հեքիաթը գերադասում են իմպերիալիզմի
մաքժսիպտական անալիզից և համառորեն չեն ուղում
բաժանվել նրանից:

Լենինը կաուցկու իմպերիալիզմի «քննադատու-
թյունը» հենց այն պատճառով է վորակել վորպես
բուրժուական քաղաքականության քողարկում, վոր
այդ քննադատությունն «անտես է առնում և սքողում
է իմպերիալիզմի հենց ամենախորը և հիմնական հա-
կասությունները, այն է՝ մոնոպոլիաների և միաժա-
մանակ գոյություն ունեցող ազատ մրցության հակա-
սությունները, Ֆրիանսական կապիտալի վիթխարի
«տրանսակցիալի» (և վիթխարի շահույթները) ու ա-
զատ շուկայում տեղի ունեցող «ազնիվ» առևտրի մի-
ջև, մի կողմից կարտեղների ու տրեստների և մյուս
կողմից կարտելացման չյենթարկված արդյունաբերու-

66) Լենին.— Իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի բարձ-
րագույն աստիճանը:

Թյան միջև գոյութուն ունեցող հակասությունները
և այլն»⁶⁷⁾;

Այդ քննադատությունը շեշտակի հարված է
հասցնում նաև այն ընկերներին, վորոնք չեն տեսնում
իմպերիալիզմի այդ ամենախորը հակասությունները:
Ընկ. Բուխարինը «անցողիկ շրջանի եկոնոմի-
կան» վերնագիրը կրող իր հետևյալ մեծ աշխատու-
թյան մեջ, կրկնելով «պետական կապիտալիստական
տրեսաների» իր տեսությունը, վոչ պակաս կտրուկա-
նությամբ առաջադրում է կազմակերպած կապիտա-
լիզմի թեզը:

«Փինանսական կապիտալը վոչնչացրեց⁶⁸⁾ արտա-
դրության անարխիան կապիտալիստական խոշոր յերկր
ների ներսում: Ձեռնարկատերերի մոնոպոլիստական մի-
ությունները, միացյալ ձեռնարկությունները և բանկա-
լին կապիտալի թափանցումն արդյունաբերության մեջ
ստեղծեցին արտադրական հարաբերությունների նոր
տիպ վերածելով ապրանքային կապիտալիստական կազ-
մակերպված սխտեմը ֆինանսական կապիտալիստական
կազմակերպության... աշխատանքի հասարակական բա-
ժանումը փոխարինվում է աշխատանքի սեխնիկական
բաժանումով կազմակերպված «ժողովրդական անտե-
սության» ներսում⁶⁹⁾;

⁶⁷⁾ Լեհին. — Իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի բարձ-
րագույն աստիճանը:

⁶⁸⁾ Լեհինը Բուխարինի գրքի, իրեն պատկանած որինակի
մեջ, ընդգծելով «վոչնչացրեց» բառը,—լուսանցքում մակագրել
է՝ «չվոչնչացրեց»: Իրա մասին տես Խորհրդ. մեծ Ենցիկլոպեդիա,
հատոր 8-րդ «Բուխարին» հոդվածը:

⁶⁹⁾ Ն. Բուխարին. — Անցողիկ շրջանի եկոնոմիկան:— Եջ
10—11: Ժամանակակից կապիտալիզմին վերաբերյալ այն հայացք-

«Պետական կապիտալիզմի որով—գրում է Բուխա-
րինը.—արտադրության պրոցեսը հանդիսանում է հա-
վելյալ արժեքի արտադրության պրոցես, վորը (հա-
վելյալ արժեքը) ընկնում է կապիտալիստների դասա-
կարգի ձեռքը, այդ արժեքի հավելյալ արդյունքի վեր-
ածելու տեղեկացում...»: Ընդգծելով նախադասության
այս մասը, Լենինը լուսանցքում գնում է չորս հար-
ցական նշան և բացականչում է «արտառոց»: Բայց
ինչ՞ե՞, հարց է տրվում, Լենինն արտառոց եր համա-

ները, վոր զարգացնում է ընկ. Բուխարինը, ընդունում եր այն
ժամանակ նաև «ձախ կոմունիստներին» ամբողջ հոսանքը: Իրանք
կազմում էյին հեղափոխության և սոցիալիստական շինարարու-
թյան ձախ կոմունիստական տեսության հիմքը: Որինակ՝ ընկ.
Ոսինսկին «սոցիալիզմի կառուցումն» իր աշխատության մեջ,
բնորոշելով պետական կապիտալիզմի սխտեմը, գրել եր, վոր այդ
շրջանում տեղի չե ունենում «արտադրության պլանաչափ կա-
զավորումը սինդիկատներ և տրեսաների կողմից... կապիտալիզ-
մը վորպես ապրանքային տնտեսության մահացումը, մի տնտե-
սության, վորտեղ արտադրության հարմարեցումը սպառումը
ստեղծվում է շուկայում գոյութուն ունեցող պահանջի և առա-
ջարկի և անկախ սեփականատերերի մրցության միջոցով... (Ն.
Ոսինսկին Սոցիալիզմի կառուցումը: 1918 թ. էջ 12—13): Նախկին
«ձախ կոմունիստ» Լ. Կրիցմանը 1925 թվին լույս տեսած իր
գրքում, նույնիսկ չէ կարողանում ձեռք բաշել նույն այդ հա-
յացքներին: կապիտալիզմը,—գրում է նա, եվոլյուցիայի չե յեն-
թարկվել, դիմելով «արտադրության ապրանքային անարխիկ
արտադրությունից» դեպի «պլանաչափ», «նատուրալ արտադրու-
թյան», (Լ. Կրիցման: Ռուսական մեծ Հեղափոխության հերոսա-
կան շրջանը, էջ 582:

Նույնպիսի մեխանիստական հայացքներ ունի իմպերիալիզ-
մի եյության վերաբերմամբ նաև Ա. Կոնը (տես՝ նրա «Փինանսա-
կան կապիտալ» գիրքը, հրատարակություն Սվերդլովի անվան
համալսարանի):

րում այն միտքը, թե ֆինանսական կապիտալիզմի եպոխտում հավելյալ արժեքն ունի հավելյալ արտադրանքի վերածվելու տենդենց: Այս նկատողության խմաստը լիովին հասկանալի կդառնա, յերբ հիշենք, վոր հավելյալ արտադրանքը, յուրացված շահագործողներին կողմից՝ տարբերվելով հավելյալ արժեքից, հանդիսանում է անտագոնիստական, բայց կազմակերպված օճեստուրյան կատեգորիա:

Նման տնտեսությունն է, որինակ, ստրկատիրական տնտեսությունը: Այնտեղ հավելյալ արտադրանքը յուրացվում է իշխող ստրկատերերին կողմից անմիջականորեն նատուրալ (բնանյութ) ձևով, իսկ կապիտալիզմի որով դա իրացվում է շուկայում, վորպես հավելյալ արժեք: Հետևաբար այն պնդումը, թե հավելյալ արժեքը եվոլյուցային չէ չենթարկվում և դառնում հավելյալ արտադրանք, համազոր է նրան, վոր կապիտալիստական արտադրությունն ազգային տնտեսության շրջանակներում կորցնում է իր շուկայական ձևը և շուկայական տարերային հարաբերությունների տեղը բռնում է պլանային բաշխումը: Վոր ֆինանսական կապիտալիզմի այս պատկերացումն իսկապես հատուկ է ընդ. Բուխարինին, չերևում է հենց հիմամբ բերած նրա ուղղակի հայտարարություններին:

Այնինչ, նման պատկերացում իրականության արտառոց խեղաթյուրումն է և դրա հետ միասին մարքսիզմի խեղաթյուրումը, վորպես գիտության, վոր ճիշտ կերպով պատկերացնում է այդ իրականությունը:

«Կապիտալը, որինակ, — գրում էր Մարքսը, — վոչինչ է առանց վարձու աշխատանքի, առանց դրամի ար-

ժողովրդան, գնի»*): «Յերբեք, — գրում էր Մարքսը, — մի ալ տեղ չի կարելի պատկերացնել կապիտալիստական արտադրությունն այնպես, ինչպես նա չի լինում, այսինքն այնպիսի արտադրություն, վոր անմիջական նպատակ ունի գործածել կամ պատրաստել գործածության առարկաներ կապիտալիստների համար: Իրանով լիովին կմոռացվեր նրա սպեցիֆիկ բնույթը (այսինքն՝ արտադրության ապրանքային ձևը. — Մ. Պ.) վոր իր մեջ գտնում է արտահայտություն այդ արտադրության ներքին բոլոր հարաբերությունների մեջ»**)

Հավելյալ արժեքի արտադրությունը և տնտեսության ապրանքային ձևն ըստ Մարքսի «յերկու հատկանշական գծեր են», վորոնք «հենց սկզբից պանազանում են արտադրության կապիտալիստական յեղանակը»: «Արտադրանքներն սպրանքի վերածելը, ըստ Մարքսի, հանդիսանում է արտադրության կապիտալիստական յեղանակի գերիշխող և վորոշող գիծը***)

Իսկ Բուխարինի ուսմունքը և ժամանակակից կապիտալիզմի մեջ շուկայի և ապրանքային տնտեսության մահացման մասին՝ ուղղակի խզում է մարքսիզմի հետ:

«Կազմակերպված կապիտալիզմ» հասկացողությունը հենց անհեթեթությունն է, ինչպես որինակ, «փայտը և յերկաթը»: Իրականության մեջ կապիտալիզմը չենթադրում է վարձու աշխատանքի գոյություն

*) Մարքս. Ներածություն քաղաքատնտեսություն քննադատության

**) Մարքս. «Կապիտալ» հատ. 3, մաս I, էջ 224

***) Մարքս. «Կապիտալ» հատ. 3, Մասն II, էջ 418

և հետևաբար աշխատավարձի, վորովհետև «աշխատավարձը վարձու աշխատանք է, գիտված մի այլ ուղիքի կողմ»^{*)}). Իսկ մրցակցութեան վոչնչացումը՝ աշխատավարձի պահպանումով, ինչպես նշում է Մարքսը, «լիակատար անհեթեթութունն է»^{**)}, վորովհետև աշխատավարձը յենթադրում է շուկայի պահպանում:

«Կապիտալիստական ժողովրդական տնտեսութունը» գրում էր Բուխարինը նույն այդ աշխատութեան մեջ իրացիոնալ սիստեմից վերածվեց ուսցիոնալ կազմակերպության, անսուբյեկտ տնտեսութունից՝ տնտեսավարող սուբյեկտի»⁷⁰⁾:

«Ապրանքային տնտեսութունը յերկրի ներսում անհետանում է, փոխարինվելով կազմակերպված բաշխումով: Յերկրի ներսում կազմակերպված կերպով բաշխվող մթերքը, հանդիսանում է մի ապրանք», համաձայն ընդ. Բուխարինի «գյուտի», այն չափով, «վորչափով վոր նրա գոյացութունը՝ կապված է համախառնային շուկայի գոյութեան հետ»⁷¹⁾:

Ֆինանսական կապիտալիզմի արտադրական հարաբերութունների ամբողջ կազմակերպութունը, Բուխարինի ասելով, մոտենում է համապարփակ պետական կապիտալիստական կազմակերպության տիպին, վոչնչացնելով ապրանքային շուկան, վերածելով փողը հաշվարկու միավորի, կազմակերպելով արտադրութունը պետական մասշտաբով»⁷²⁾...

*) Մարքս, Զարգացման տնտեսության քննադատության ներածութունը

***) Գ, Մարքս. փիլիսոփայութեան աղբատութունը, էջ 139

70) Ն. Բուխարին. — Անցողիկ շրջանի յեկոնոմիկան, էջ 14.

71) Ն. Բուխարին. — Անցողիկ շրջանի եկոնոմիկան, էջ 15.

72) Ն. Բուխարին. — Անցողիկ շրջանի եկոնոմիկան, էջ 34.

Յեվ թեպետ 1918|19 թվականներին Լենինի գլխավոր ուշադրութունը գրավել էր «ձախ կոմունիստների» տակտիկական հայացքների հաղթահարումը հեղափոխական պատերազմի և տնտեսական շինարարութեան հարցերում, բայց և այնպես Լենինը միևնույն ժամանակ, վճռական դիմադրութուն էր ցույց տալիս Բուխարինի և նրա համախոհների փորձերին՝ խցկելու իմպերիալիզմի իրենց սխալ գնահատականը կուսակցական ծրագրի մեջ:

Այդպես, կուսակցական 8-րդ համագումարում, առարկելով Ֆինանսական կապիտալիզմի բուխարինյան վերացական շարադրութեանը, նա դարձյալ ընդգծում էր, վոր «աշխարհում մոնոպոլիստական կապիտալիզմն առանց ազատ մրցութեան մի շարք ճյուղերում յերբեք գոյութուն չի ունեցել և չի ունենա»⁷³⁾:

Այդ ժամանակից իվեր, ընդ. Բուխարինը վոչմի տեղ բացահայտեց հանդես չի չեկել կապիտալիզմի լենինյան գնահատականի դեմ: 1926 թվականին հրատարակելով 1917 թվականի հոգվածների ժողովածուն «Հոկտեմբերի նախադրանք» վերնադրով, Բուխարինը այդ ժողովածվի մեջ չի մտցնում «Սպարտակ» ժուրնալում սպադրված իր այն հոգվածները, վորտեղ նա տալիս է իմպերիալիզմի լենինյան գնահատականից արմատապես տարբերվող գնահատական:

Բայց այդ շրջանի մի շարք գրական յեւույթները ցույց տվին, վոր ընդ. Բուխարինն իր կեղծ թեորրաներից չէր ազատվել, վոր իմպերիալիզմի լենինյան

73) Լենին. — Գրվածքների ժողովածու, 1-ին հրատարակութուն, հատոր 16, էջ 114:

դիւրեկտիւական տեսութիւնն առաջվա պես խորթ
եր նրան:

1924 թ. սոցիալ-դեմոկրատիայի տեսական նոր
ժողովն «Die gesellschaft»-ի (հասարակութիւն) ա-
ռաջին համարում հանդես յեկավ Հիլֆերդինգը «Ժա-
մանակի պրոբլեմները» հոդվածով*) վորտեղ նա ներ-
կայացնելով հետպատերազմյան սոցիալ-դեմոկրատիայի
credo-ն, հռչակում էր, թե կապիտալիստական աշ-
խարհը, մտել է իր զարգացման գոտին, «կազմակեր-
պված կապիտալիզմի դարաշրջանը»: Այս հոդվածին
արձագանգեց ընկ. Բուխարինը**): Նշելով, վոր «պա-
րոն Հիլֆերդինգն արդեն յերազում է, թե գալիս է
«գիտակցաբար ղեկավարված, առանց ձգնաժամերի,
առանց գործազրկութեան, կայուն և խելացի կար-
գավորված աշխատավարձով աչդ կազմակերպված կա-
պիտալիզմի» դարաշրջանը, ընկ. Բուխարինը պատաս-
խանում է Հիլֆերդինգին:

«... Իրականութեան մեջ այդպիսի բան չկա, և
վորն ավելի եյական է չի կարող լինել: Վորովհետև ա-
զատ քրքման վոչնչացումը կապիտալիստական յեր-
կըրներին ներսում, արտադրական անարխիայի հաղթա-
հարումն այստեղ միաժամանակ նշանակում է «ազատ
մրցման» ուժեղացում յերկրներին միջև համաշխարհա-

*) Տես այս հոդվածը Հիլֆերդինգի հոդվածներին և ճանե-
րի ժող. «Կապիտալիզմը, սոցիալիզմը և սոցիալ-դեմոկրատիան»
հրատ. «Մոսկովսկի Բարոչի» 1927 թ.

***) Ն. Բուխարին. Ժամանակակից կապիտալիզմի հավասար-
ութիւնները, «Բուխարին» № 10, 1924 թ.

լին տնտեսութեան անարխիայի անում*): Այսպէս, ընկ.
Բուխարինի ամբողջապէս ընդունում է սոցիալ դեմոկ-
րատական թեզիսը «կազմակերպված կապիտալիզմի»
զարգացման, յուրաքանչյուր առանձին կապիտալիստա-
կան յերկրում հակասութիւնների վերացման մասին
հայտարարելով միայն, վոր արտադրութեան անար-
խիան և մրցումը մնում են կապիտալիստական յեր-
կըրներին հարաբերութիւններին մեջ: «Իհարկէ,—գրում
է ընկ. Բուխարինը, աճած, խոշորացած տրեստերի**)
ներսում անարխիան հաղթահարվում է և ներքին
ձգնաժամներն այստեղ չքանում են»***):

Կազմակերպված կապիտալիզմի գաղափարից չը
հրաժարվելը պարզ յերևում է նաև 1925 թ. ընկ. Բու-
խարինի գրած «Իմպերիալիզմը և կապիտալի կուտա-
կումը» գրքում:

Իր այդ ամենից ավելի հետաքրքիր աշխատու-
թեան մեջ, ընկ. Բուխարինը սիրտ չանելով բացի ի-
բաց հանդէս գալու Լենինի դեմ, այնուամենայնիւ
տուրք է տալիս պետական կապիտալիստական տրեստ-
ներին վերաբերյալ իր տեսութեանը: Այդպէս, այդ
աշխատանքի մեջ նա, վորպէս վերլուծման հիմք է
ընդունում հաստրակական-տնտեսական յերեք կա-
ռուցվացք. 1) «կլասիկ» կապիտալիզմ, այսինքն՝ ազատ
մրցութեան անսահման տիրապետութեան շրջանի կա-
պիտալիզմը. 2) սոցիալիստական հասարակութիւն. և
3) «կոլեկտիվ-կապիտալիստական իրավակարգ» (պե-

*) Այսինքն պետութեան-տրեստերի:

***) «Բալլիկ» № 10, 1924 թ. էջ 9

***) «Բալլիկ» № 10, 1924 թ. էջ 8:

տական կապիտալիզմը), վորտեղ կապիտալիստական զասակարգը միացած է մի տրեստով և վորտեղ, հետեւապես, գոյութիւն ունի կազմակերպված բայց միևնույն ժամանակ դասակարգերի սեսակեցից հակամարտ տնտեսութիւն»⁷⁴), «վորտեղ չկա արտադրութիւն անարխիա, այլ կա, կապիտալի տեսակետից, ռացիոնալ պլան»⁷⁵), վորտեղ «չի կարող ճգնաժամ լինել»⁷⁶):

Ճգնաժամերը, արտադրութիւն անարխիան, շուկայական հարաբերութիւնները վոչնչացնող պետական-կապիտալիստական կազմակերպված այդ հասարակութիւնը գոյութիւն ունի և կարող է գոյութիւն ունենալ միմիայն ընկ. Բուխարինի չերեակալութիւն մեջ: Իսկ իրականութիւնը ցույց է տալիս, վոր, չնայած ժամանակակից կապիտալիստական աշխարհում գոյութիւն ունեն միանգամայն ակներև տեղեկացներ դեպի պետկապիտալիզմը, արտադրութիւն անարխիայի ուժերը և ճգնաժամերը չեն վերանում, այլ ուժեղանում են:

Սակայն, մեզ կարող են առարկել. չէ վոր ընկ. Բուխարինի այդ աշխատութիւն մեջ վերապահում կա, թե այդպիսի իրավակարգ իրականութիւն մեջ դեռ չկա: «Գրագետ ընթերցողը միշտ հիշում է, գրում է

74) Ն. Բուխարին. — Իմպերիալիզմը և կապիտալի կուսակումը, էջ 83:

75) Ն. Բուխարին. — Իմպերիալիզմը և կապիտալի կուսակումը, էջ 84:

76) Ն. Բուխարին. — Իմպերիալիզմը և կապիտալի կուսակումը, էջ 87:

նա, — վոր մենք ունենք հասարակական կառուցվածքներ Վերացական, իդեալական «տիպեր և վոչ թե հասարակութիւն ամպիրիկ տվյալներ»⁷⁷):

Սակայն, բանն էլ հենց այն է, վոր այդպիսի արտադրական գոյութիւն իրավունք չունի, վորովհետև նա վերանում է կապիտալիզմի հենց ամենաբնական կողմերից՝ արտադրութիւն անարխիայից, վորը հանդիսանում է արտադրութիւն կապիտալիստական յեղանակի մշտական և անփոփոխ ուղեկիցը, նրա «սովերը», վորը կարող է վոչնչացվել միմիայն մասնավոր սեփականութիւն վոչնչացմամբ՝ սոցիալիստական հեղափոխութիւն բոցի և կոմիւնիստի մեջ:

«Ինչպէս հարաբերութիւնները արտադրական, դրել էր Մարքսը, Աննենկովին ուղղած իր մի նամակում, միմիայն այն չափով ճշմարիտ է, վոր չափով վոր այդ հարաբերութիւնները իրոք գոյութիւն ունեն»⁷⁸):

Յեւ ջննադատելով Պրուդոնին, վորը չի հասկացել, թե արտադրական այն ժամանակ միայն որին նական է, յերբ հետագոտողը վերանում է գոյութիւն չունեցող, տվյալ յերևույթի համար պատահական բնույթ կրող այն փաստերից, վորոնք չեն բղխում յերևույթի զարգացման ներքին որինաչափութիւնից, այլ հանդիսանում են արտաքին ուժերի ներգործութիւն արդյունքը, Մարքսը շարունակում է.

77) Ն. Բուխարին. — Իմպերիալիզմը և կապիտալի կուսակումը:

78) Մարքս. — 1846 թվականի գեղեմներէ 28-ի նամակները Աննենկովին: Նամակը քաղված է Կ. Մարքսի «Փիլիսոփայութիւն աղբատութիւնը» գրքից Մարքսիստի գրագարան. հատոր 12—13, 1928 թվական, էջ 176:

«Գ. Պրուդոնը, իր միատիկ յերեակայության մեջ, ամեն ինչ շուս օտարով հակառակ կողմը, ռեալ հարաբերությունների մեջ տեսնում է սոսկ այդ արտարակցիաների մարմնավորումը»⁷⁹):

Մարքսի այդ խոսքերը շեշտակի հարված են հասցնում ժամանակակից այն ուղորտյունիստներին, վորոնք իրականության մեջ տեսնում են կազմակերպված կապիտալիզմի իրենց հնարած վոչ կենսական, գոեհիկ—մեխանիստական արտարակցիաների մարմնավորումը և հոգուտ այդ արտարակցիաների, յերես են դարձնում անվիճելի փաստերից:

Կոմիստերնի 6-րդ կոնգրեսում, նորից յերևան յեկավ, վոր ընկ. Բուխարինը չի հրաժարվել իմպերիալիզմի էյուլթյան վերաբերյալ իր բեխիդիոնիստական հին հայացքներից: Այն ե՛ ընկ. Բուխարինը, վորին ջերմապես համամիտ ելին ներկայումս Կոմիստերնից վտարված ռենեգատներ Պեպպերը, Լովստոնը և ուրիշները, մի ամբողջ տեսություն զարգացրեց արտաքին հակասությունների գերադասության («պրիմատ») մասին ներքին հակասությունների նկատմամբ, մի տեսություն, վորը վոչ այլ ինչ եր, բայց յեթե այն, վոր կապիտալիզմի ներքին հակասությունները Բուխարինի կողմից ուժգին ընդգծվող պետական կապիտալիստական տենդենցների աճմամբ, չջանում են, և մնում են միայն հոչակավոր «պետական—կապիտալիստական արեստների» միջև գոչություն ունեցող արտաքին հակասությունները:

1929 թվականին, ընկ. Բուխարինը, վոզկորված

⁷⁹) Մարքս.—1846 թ. դեկտեմբերի 23-ի նամակները Ան-նեկոպին:

բուրժուական անտեսագետների նոր գրվածքներով, հանդես յեկավ լենինիզմի բացահայտ ռեկդիայով: Համաշխարհային տնտեսության վերաբերյալ բուրժուական հայեցակետերին նվիրված մի շարք հոդվածներում, նա ծավալուն կերպով վերարտադրում է կազմակերպված կապիտալիզմի իր տեսությունը, առանց քննադատության կրկնելով Շմալենբախի, Զոմբարտի, Բենտեյի և բուրժուական այլ գիտնականների ու սոցիալ-դեմոկրատների պնդումները՝ «չադկապված» և «կազմակերպված» կապիտալիզմի նոր շրջանի սկսելու մասին:

«Նրա (կապիտալիզմի Մ. Պ.) անարխիկ էյուլթյունը, գրում է Բուխարինը, փոխադրվում է միջազգային—տնտեսական հարաբերությունների հիմնական գիրքերը: Շուկալի, գնբրի, մրցության, ճգնաժամերի պրոբլեմները ավելի ու ավելի դառնում են համաշխարհային տնտեսության պրոբլեմներ, փոխարինվելով «յերկրի» ներսում կազմակերպության պրոբլեմով: Կապիտալիզմի ամենացավոտ, ամենաարյունալի վերքերը, նրա ամենից ավելի աղաղակող հակասությունները ծալր են առնում հենց այստեղ, կովի միջազգային դազմադաշտում: Նույնիսկ բոլոր պրոբլեմների պրոբլեմը՝ այսպես կոչված «սոցիալական հարցը», դասակարգերի փոխհարաբերության և դասակարգային պայքարի պրոբլեմը, հանդիսանում են մի ինդիլր, վոր մեծապես կապված է կապիտալիստական այս կամ այն յերկրի համաշխարհային ռուկայում ունեցած դրության հետ»⁸⁰):

⁸⁰) Ն. Բուխարին.—Կազմակերպված տնտեսականության տեսությունը: «Պրավդա» 1929 թ. հունիսի 30.

կամ մի այլ հոգիածում՝

«Վորոշ չափով վերանում ե շուկայի պրոբլեմատիկան, թեպետ շուկաների հետևից ընկնելը ծառայած ե վորպես հրատապ գործնական հարց... Կազմակերպչական պրոբլեմը, գնալով ավելի ու ավելի առաջին տեղն ե գրավում, կազմակերպչական պրոբլեմը ամենալավ, տվյալ պայմաններում «ուպոխմալ»--այն ել մասնավոր տնտեսութեան սահմաններից շատ հեռու դնացող կազմակերպութեան պրոբլեմը: Այդ պրոբլեմը պարունակում ե, նախ և առաջ, կազմակերպութեան այս կամ այն տիպի սնեսսական ռացիոնալականութեան հարցը... Փոխվում ե բուրժուազիայի տեսական եկոնոմիայի «տրամաբանական վոճը»: «Արտադրութեան յեղանակը», սկզբունքորեն մնալով արտադրութեան կապիտալիստական նույն այդ յեղանակը՝ հիմնական և վճռական այն կետում, վորտեղ խոսքը վերաբերում ե պրոլետարիատի և բուրժուազիայի դասակարգային հարաբերութեանը, այնուամենայնիվ ներքուստ վերակազմվում ե՝ այն չափով, վորչափով վոր խոսքը վերաբերում ե վոչ թե համաշխարհային տնտեսութեանը այլ «սոցալիզմ» կապիտալիստական մարմիններին, ավելի ու ավելի ցայտուն և պարզորոշ յերևան ե գալիս տնտեսական պրոցեսը ռացիոնալացնելու տենդենցը... Վոչ ռացիոնալ տարբերքի պրոբլեմը փոխարինվում ե ռացիոնալ կազմակերպութեան պրոբլեմով»⁸¹):

Վերև մենք արդեն ցույց տվինք, վոր կազմակերպված կապիտալիզմի տեսութեանը հիմնովին հա-

⁸¹) Ն. Բուխարին. — Ժամանակակից կապիտալիզմի մի քանի պրոբլեմները՝ ըստ բուրժուազիայի տեսաբանների: «Պրավդա» 1929 թվական, հունիսի 26:

կասում ե իրականութեանը, վոր իրոք իմպերիալիզմի շրջանում արտադրութեան անարբիտան չի վերացվում և կարող ե վերացվել միմիայն սոցիալիստական հեղափոխութեան միջոցով: Սակայն, չնայած դրան. չնայած վոր Լենինը շարունակ քննադատել ե Բուխարինյան սխալները իմպերիալիզմի տեսութեան մեջ, Բուխարինը 1915 թվականից սկսած շարունակում ե սայթաքել միշտ միևնույն կետում⁸²), գերադասելով բուրժուական գիտնականների վուլգար գոհնութեանները իմպերիալիզմի լենինյան ըմբռնումից, կոնցեպցիայից, վորը յերևան ե հանում նրա բոլոր հակասութեանները:

Քաղաքական հետեվություններ կազմակերպված կապիտալիզմի տեսութեանը

Այլերը, յեկնելով «կազմակերպված կապիտալիզմի» իրենց տեսութեանից, կապիտալիստական առանձին յերկիրների շրջանակներում ներքին հակասութեանների թուլացման մտքից պնդում են, վոր իմպերիալիզմի արտաքին հակասութեանները այժմ վճռական դեր են խաղում, իսկ ներքին հակասութեանները անցնում են հետին պլանը և ունեն միայն յենթակա, յերկրորդական նշանակութեան: Իր լրիվ արտահայտութեամբ, այդ տեսութեանը հանգում ե այն հետևութեան, վոր հեղափոխութեանը կարող ե ծնվել միմիայն վորպես նոր պատերազմի արդյունք: Այդ հետևութեանն ել անում ե Բուխարինը՝ ունիդիո-

⁸²) Լենին. — Նամակ Ա. Կոլոտային: 1917 թվականի, փետրվարի 18, Լենինյան ժողովածու, հատոր 2-րդ, եջ 282.

նիստների ամենասիրած ձևով, վերագրելով այդ հետևությունները Լենինին: Մեկնաբանելով Լենինի քաղաքական կտակը, ընկ. Բուխարինը ուղղակի ասում է, թե Լենինը «հետևյալ հեղափոխական պոսթիկումը կապում էր անվիզակահորեմ առաջիկա պատերազմի հետ»:

Հիրավի՞ քանի վոր առանձին չերկրների շրջանակում կապիտալիզմը ավելի ու ավելի ուժգին և արագ հաղթահարում է նախնում իրեն հատուկ անարխիան, քանի վոր նա վոչնչացնում է մրցությունը, քանի վոր նա հաղթահարում է շուկայի տարերքը, ապա հետևապես, ներքին հակասությունները իմպերիալիստական յուրաքանչյուր չերկրում հարթվում են, ուրեմն, մինչև վոր իմպերիալիստական նոր պատերազմը չբռնկի, ավելորդ է սպասել վոր կայսրեն այդ հակասությունները, ճգնաժամը, վորն առաջ է բերում մասսաների հեղափոխական յելույթը: Յերևան է գալիս մի իդեոլոգիա, վորի համաձայն, մինչև նոր պատերազմը ծագելը, պրոլետարիատի բոլոր յելույթները նախապես դատապարտված են անհաջողության, սընվում է պասսիվ սպասողության և նոր պատերազմից չբխող հեղափոխական բոլոր յելույթները դանդաղեցնելու տակտիկա:

Զուր չէ, վոր գերմանական կոմկուսի աջերը և հաշտվողականները, սոցիալ-դեմոկրատների հետ միասին, «պուտչ» են անվանում Բերլինի բանվորների մայիսյան յելույթները: Զուր չէ, վոր նրանք դանդաղեցնում են բանվոր դասակարգի հարածուն ակտիվությունը, չնկատելով մասսաներում տեղի ունեցող հեղափոխական խորը վերելքը, զուր չէ, վոր նրանք

դեմ են մեր հարձակողական գործադուլային տակտիկային և սարատեգիային:

Այդ բոլորը, գերազանցորեն համաձայնում է Բուխարինի նեխված տեսական կառուցվածքների հետ:

Սակայն, աջերը խեղում են իրականությունը, ոնվիդիայի չեն յենթարկում Մարքսի և Ենգելսի այն թեզը, թե կապիտալիզմի արտաքին հակասությունները հանդիսանում են ներքին հակասությունների շարունակությունը: Աջերը կոծկում են այն հանգամանքը, վոր կապիտալիստական հակասության հիմնական մղիչ ուժը դասակարգային պայքարն է:

Կոմինտերնի 5-րդ կոնգրեսում, յուրացնելով Բուխարինի այն խոսքերը, թե արտաքին հակասությունները գերադաս են («պրիմատ») ներքինների նկատմամբ, ներկայումս Կոմինտերնի շարքերից վտարված Լովստոնը գրում էր. «Ներկա վիճակի բանալին արտաքին հակասությունների մեջ է գտնվում. նրանք, հարկավ, ներյուսվում են ներքինների հետ, վորոնք ձևում-անում են առաջին հակասություններից»:

Այստեղ ամեն ինչ շուռ է տված գլխի վայր: Սակայն, աջերի համար այդպիսի մի salto-mortale հարկավոր է բանվորական շարժման նկատմամբ լիկվիդատորական հետևություններ անելու համար:

Քանի վոր, յեղբակացնում են նրանք, առանց պատերազմի և պատերազմից առաջ հեղափոխություն ծագել չի կարող, ապա էլ ինչի՞ յե պետք պայքար մղել: Չէ վոր պայքարը նախապես դատապարտված է ձախողման:

Ըստ հյուսթյան, ներքին հակասությունների թուլացման տեսությունը նույն վորոշումն է տվյալ

պետութեան պրոլետարիատի և բուրժուազիայի շահերի նույնութեան այն գաղափարները, վոր ուժեղ թափով աշխատում են ներշնչել բանվորներին բուրժուազիան և սոցիալ-դեմոկրատիան: Բանվորների չարիքը, ուսուցում են սոցիալ-դեմոկրատները, բըղխում են վոչ թե հասարակութեան, կապիտալիստական կառուցվածքից, այլ ուրիշ չերկրները մըցութեանց: Այդ գրութեանց յեւթ պետք է փնտռել վոչ թե կապիտալիստական ստրկութեան տապալմամբ, այլ տըվյալ յերկրի կապիտալիստների հետ միասին պայքար մղելով մըցող յերկրների դեմ: Ուստի, պետք է ավելի գոտեպնդվել (բանվորներին), ավելի ու ավելի ինտենսիվ աշխատել (բանվորներին) ի փառս հայրենի բուրժուազիայի, վորը ցանկանում է օրրապետել համաշխարհային շուկայում:

Աջերն, իրենց տակտիկական հետևութեաններով, ընկնում են այն գոհիկ տեսութեան մեջ, թե տվյալ յուրաքանչյուր յերկրի պրոլետարիատի և բուրժուազիայի շահերը ընդհանուր են: Պրոլետարիատը, պընդում են սոցիալ-դեմոկրատները և նրանց ձայնակիցները, շահագրգռված են իր բուրժուազիայի իմպերիալիստական եքսպանսիայով (ծավալմամբ), վորովհետև քանի ավելի չափ պատառ կորզի բուրժուազիան համաշխարհային շուկայի համար իր մղած մըցութեան պայքարում, այնքան ավելի լիառատ կլինեն պրոլետարիատի ձեռն ընկած փշրանքները: Պրոլետարիատի և բուրժուազիայի միջև տիրող դասակարգային հակասութեանները ծածկվում են շահերի ընդհանրութեամբ:

Նման գաղափարներ ամենից ավելի ցայտուն կերպով զարգացրեց Ֆ. Շտերներբերգը իր «Իմպերիա-

լիզմը» գրքում: Նրա կարծիքով, բանվոր դասակարգը կենսականորեն շահագրգռված է, վոր իր իմպերիալիզմը տիրապետի ու շահագործի գաղութները և բուրժուազիայի հետ միասին պայքար է մղում համաշխարհային շուկային տիրապետելու համար՝ իր կենսական մակարդակը պահպանելու և բարձրելու նպատակով:

Բանվոր դասակարգը,—այնպես է Շտերներբերգը, այն ժամանակ միայն կարող է լինել ճգնաճամի սուրջեկտ, յերբ կհամակվի այն դիտակցութեամբ, թե նրա բարորութեանը ձեռք է բերվում միլիոնավոր դիակների վնով: ⁸³⁾

Այդպես ուրեմն, պրոլետարիատը աջակցում է իր բուրժուազիային իմպերիալիստական պայքարում՝ յերկրի յերեսին իր տեղն ունենալու համար: «Քաղաքական կոնֆլիկտների սրումը իմպերիալիստական պետութեանների միջև, չի ընթանում դասակարգային հակասութեանների սրմանը զուգահեռ... Ընդհակառակը՝ բարձր զարգացած կապիտալիզմի յերկրներում, դասակարգային պայքարն անցնում է պատենցիալ վիճակին»: ⁸⁴⁾

Այս քաղաքացիական խաղաղութեանը կարող է խախտվել միայն միլիոնավոր դիակներով, պատերազմի սարսափներով:

Այսպես է Շտերներբերգի բացահայտ լիկվիդատորական դրույթը, վորը համարյա ամբողջովին գու-

⁸³⁾ F. Sternberg; Der Imperialismus, էջ 340: Քաղված է Պրոլետարիատի հոդվածից. «Բայբլիկ», № 4, 1927 թ. էջ 14:

⁸⁴⁾ Շ. Պրոլետարիատի տեսութեան մեջ տիրող խառնաշփոթութեան դեմ: «Բայբլիկ» № 4, 1927 թ. վակահի: էջ 14:

զադիպում ե ներկայումս մեր աջ ուղիորդությունիստների գծին:

Ընկ. Գուրգենբերգը, քննադատելով Շտերնբերգի այդ հակահեղափոխական տեսութիւնը, դեռ 1917 թվականին գրել էր, վոր Շտերնբերգը ամբողջովին մերժել է Մարքսի ուսմունքի հիմունքները, վորը հաստատում է, թե պրոլետարիատի հեղափոխութիւնը վորոշվում է արտադրութեան մեջ նրա բռնած գրութեամբ, թե պրոլետարիատի շահերը ուղղակի հակադիր են բուրժուազիայի շահերին, թե ըստ Շտերնբերգի, պրոլետարական հեղափոխութեան փոխարեն ստացվում է «դասակարգային բովանդակութիւնից զուրկ անձե շարժում «ընդհանրապես» ընդդեմ պատերազմի»: «Մենք պնդում ենք, գրել էր նա, վոր այստեղ մեր առաջն է լիակատար հրաժարում պրոլետարական հեղափոխութեանից, կատարյալ, 100 տոկոսային անկումն բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի դիրքերից ամենախայտոակ, մեղձանական-պացիֆիստական, կեղծ-հեղափոխական պոռոտախոսութեան ճահիճը»: ⁸⁵⁾

Ինչ վոր ճիշտ է, ճիշտ է: Սակայն, կուսակցութիւնը և կոմիստերնը չեն կարող գործողութիւնների համար իրեկավարութիւն ընդունել այդ խայտառակ տեսութիւնը և մերժում են վերջինս, ով էլ պաշտպանի այն:

Մինչդեռ Բուխարինը դեռևս առաջ էլ հայտարարել է աջ թեքում դեպի այդ սոցիալ-դեմոկրատական թեորիան: Այսպես, դեռ «Անկման շրջանի եկոնոմի-

⁸⁵⁾ Գ. Գուրգենբերգ. — «Իմպերիալիզմի տեսութեան մեջ տիրող խառնաշփոթութեան դեմ»:

կայի» մեջ նա գրում էր, վոր իմպերիալիզմի եպոխա-յում «ստեղծվել է «ընդհանուր շահերի» հնարավորութիւն իմպերիալիստական «հայրենիքի» և բանվոր դասակարգի միջև»: Լենինը լուսանցքներում գրում է. «Պետք էր ասել — բանվոր դասակարգի վերնաշերտերի*):

Չնայած լիովին պարզ այս դասին, վոր սակիս է Լենինը Բուխարինին, սա 1929 թ. կրկնում է այն պնդումը, թե ժամանակավորապես ընդհանուր շահեր են ունենում պրոլետարիատը և բուրժուազիան իմպերիալիզմի յերկրներում: «Գաղութների շահագործման հիման վրա, գրում է ընկ. Բուխարինը, — ստեղծվում է վորոշ համեմատական շահերի ընդհանրութիւն բուրժուազիայի և պրոլետարիատի միջև, հանդիսանալով մեծ խոչընդոտ հեղափոխութեան համար**): Այս պնդումը՝ իմպերիալիզմի յերկրներում բուրժուազիայի և պրոլետարիատի շահերի ընդհանրութեան մասին, բացահայտորեն հակասում է կոմիստերնի ծրագրին:

«Իմպերիալիստական պետութիւնների բուրժուազիան, ստանալով լրացուցիչ գերհասուլթ, թե համաշխարհային շուկայում ընդհանրապես իր գրաված դիրքի շնորհիվ (ավելի զարգացած տեխնիկա, կապիտալի արտահայտութիւն և ավելի բարձր նորմալի յեկամուտներ ունեցող յերկիրները և այլն) և թե գաղութների ու կիսագաղութների կողոպուտից, այդ գերյեկամուտների հաշվին բարձրացրել է «իր» բանվորների մի մասի աշխատավարձը, այդ միջոցով շա-

*) Լենինյան ժողովածու, 11, էջ 398

**) Ն. Բուխարին. Համաշխարհային ժամանակակից տեսութեան մի քանի պրոլետներ բուրժուազիայի տեսարանների մաս. «Պրավդա» 26 հունվ. — 1929 թ.

հագրագետիով նրանց «հայրենական» կապիտալի զարգացման, դադուլթային կողոպուտի և իմպերիալիստական պետութայան հավատարիմ մնալու գործում: Այս սիտեմատիկ կաշառումն առանձնապես լայն կերպով կիրառվել է և կիրառվում է ամենաուժեղ իմպերիալիստական չերկրներում, իր ամենացայտուն արտահայտությունը գտնելով բանվորական արիստոկրատիայի և բանվոր դասակարգի բյուրոկրատական խավերի իդեոլոգիայի և պրակտիկայի մեջ, — սոցիալ-դեմոկրատիայի և արհմիությունների ղեկավար կադրերի, վորոնք հանդիսացան բուրժուական ազդեցութայան ուղղակի հաղորդիչները պրոլետարիատի վրա, և կապիտալիստական կարգի լավագույն նեցուկը:

Բայց, ուժեղացնելով բանվոր դասակարգի կաշառված վերնախավի աճումը, իմպերիալիզմը վերջիվերջո խորտակում է նրա ազդեցությունը բանվոր դասակարգի վրա. վորչափով իմպերիալիզմի հակասությունները խորացումը բանվորական լայն մասսաների դրության վատացումը, պրոլետարիատի մասսայական գործադրկությունը, սաղմական կոնֆլիկտների հսկայական ծախսերը և նրանց ծանրությունը, մի քանի պետությունների մենաշնորհ գիրքերի կորուստը համաշխարհային շուկայում, դադութների անջատումը և այլն քանդում են սոցիալ-իմպերիալիզմի հիմքերը մասսաները մեջ*):

Իսկ աջերի մոտ պատկերը ստացվում է իսկապես մուսլի:

Առանձին չերկրների ներսում աճում է կազմա-

կերպված կապիտալիզմը, վոր վերացնում է շուկան, արտադրութայան անարխիան, ճգնաժամերը: Դասակարգային պայքարն էլ հանդարտվում է, վորովհետև իմպերիալիզմը ստեղծում է շահերի վորոշ ընդհանրություն բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Բնականաբար, դասակարգային պայքարի սրումից հեղափոխական բռնկումը կարելի չէ սպասել միայն վորպես հետևանք նոր պատերազմի:

Բոլոր պրոբլեմների պրոբլեմը, — գրում է ընկ. Բուխարինը, — այսպես կոչված սոցիալական հարցը — դասակարգերի փոխհարաբերությունների և դասակարգային պայքարի պրոբլեմը մեծագույն չափով կապված է այս կամ այն չերկրի դրության հետ կապիտալիստական աշխարհում*): Այսպես մեկնելով «կազմակերպված կապիտալիզմի» սոցիոլոգիստական իր կոնցեպցիայից, ընկ. Բուխարինը սայթաքեց մինչև կոմինտերնի 6-րդ կոնգրեսի այն թեզիսի ռեվիզիան, վորի համաձայն կապիտալիստական ստարիլիզացիան անկայուն է և շարունակում է խարխվել:

Դեռ քիչ է, վոր ներքին հակասությունների թուլացման տեսությունը բերում է լիկվիդատորական հետեությունների՝ աճող հեղափոխական վերելքի նկատմամբ — այդ տեսությունը զինաթափ է անում կոմինտերնին սոցիալ-դեմոկրատական քննադատության առաջ: Յեվ իրոք, սոցիալ-դեմոկրատները, ամեն կերպ ապացուցելով, վոր ժամանակակից կապիտալիզմում Վամբացել և կոնֆլիկտների ուղմական չեղանակով լուծումը միջազգային համաձայնություններ

*) Ն. Բուխարին «կազմակերպված տնտեսութայան թեորիան», «Պրավդա» 30 հուն. 1929 թ.

րով փոխարինելու տենդենցը», պնդում են, վոր խազաղությանը վտանգ է սպառնում միմիայն այնպիսի յերկրները գոյությամբ, վորտեղ «գեմոկրատիան դեռ չի գարգացել», այսինքն ԽՍՀՄ-ի գոյությամբ, վորտեղ բայլըկիկները «ծարավի յեն» նոր պատերազմի:

«Բայլեփիկները, գրում է որինակ Ոտտո Բաուերը, այն պատճառով են խոսում նոր պատերազմի անխուսափելիության մասին, վոր նրանք ծարավի յեն այդ պատերազմին, վոր նրանք այդ պատերազմից սպասում են համաշխարհային հեղափոխության իրենց պլանների իրականացումը»:

Ոտտո Բաուերը հենց նրա համար բուրժուազիայի հավատարիմ սպասավորն է, վոր, իհաճույս այդ բուրժուազիայի, ամեն ինչ շուռ տա գլխիվայր: Այն փաստը, վոր բայլըկիկները ցանկանում են և պատրաստում են հեղափոխութունը, նպատակ ունենալով փրկել մարդկութունը կապիտալիստական շահագործումից և իմպերիալիզմի ժամանակ անխուսափելի պատերազմից, նա պատկերացնում է այնպիսի ձևով, թե բայլըկիկները «ծարավի յեն» պատերազմի: Սակայն, աջ ոպպորտունիստների պնդումները, թե հեղափոխությունը կարող է ծնվել միմիայն վորպես պատերազմի հետևանք, լուր ոգնում են սոցիալ-դեմոկրատներին՝ խեղելու Կոմինտերնի տակտիկայի հիմքը կազմող լենինյան գրութիւնները:

ՍԱՅՔԱՔՈՒՄ ԴԵՊԻ ՈՒԼՏՐԱ-ԻՄՊԵՐԻԱԼԻՉՄԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ստեղծելով⁸⁶⁾ կապիտալիստական առանձին չերկրների շրջանակներում կազմակերպված կապիտալիզմի տեսությունը, աշերն, ըստ եյության, անխուսափելիորեն պետք է հանգեյին այն հետևության, թե կազմակերպված կապիտալիզմը հնարավոր է նաև համաշխարհային մասշտաբով, այսինքն, հանգեյին հռչակյալ ուլտրա-իմպերիալիզմի տեսության:

Հիրավի, յթե յերկրի ներսում պետական կապիտալիստական տվյալ տրեստը ղեկավարող կապիտալիստների առաջ կանգնած է սոսկ կազմակերպման, ուսցիոնալ ապպարատի ստեղծման և բյուրոկրատիզմի դեմ պայքարելու պրոբլեմը, ինչպես սովորեցնում է մեզ ընկ. Բուխարինը, յեթե արտաքին շուկաների համար պայքարի դրող դասակարգային պայքարը և ձգնաձամերն անհետացել են, ինչպես մի մոդական նկարում, ապա ուրեմն, ինչպես անհաղթելի ուժեր անխուսափելի յեն դարձնում իմպերիալիստական պատերազմները, անկարելի յեն դարձնում հաստատուն համաձայնություններն իմպերիալիստական պետությունների միջև: Այդպիսով, մեր աջերը զինաթափ են կանգնած ուլտրա-իմպերիալիզմի սոցիալ-դեմոկրատական տեսության առաջ և մեկնելով իրենց մատը սատանային, հարկադրված են տալ նրան ամբողջ թևը:

Բուխարինը իր «Անցողիկ շրջանի եկոնոմիկան»

⁸⁶⁾ Ավելի ճիշտ, վոչ թե ստեղծելով, այլ յուրացնելով լեբերալներից և սոցիալ-դեմոկրատներից:

աշխատութեան մեջ ընդհուպ մոտեցել է ուլտրա-իմպերիալիզմի տեսութեանը: Նրա յերևակայութեանը Ազգերի լիգան պատկերացնում է վորպես պետական-կապիտալիստական տրեստների սինդիկատ»: ⁸⁷⁾

«Այստեղ, շարունակում է Բուխարինը, տենդենցները դեպի կազմակերպութեան դուրս են գալիս առանձին պետութեան սահմաններից: Հետևապես, կազմակերպող պրոցեսսը կապիտալիստական աշխարհի այդ փորձերում գտավ իր գերագույն արտահայտութեանը»: ⁸⁸⁾

Ինչ՞ի, սակայն, կազմակերպող պրոցեսսի այդ գերագույն արտահայտութեանը չեք կարող իր լրիվ վախճանը գտնել պետութեանների ուլտրա-իմպերիալիստական միութեան մեջ: Բուխարինը դրա պատճառը համարում է քայքայումն, արտադրութեան չափի կրճատումը: «Այդ բոլոր պրոցեսսները, գրում է նա, ընթանում էյին արտադրական ուժերի վիթխարի վաչրնչացման պայմաններում: Կապիտալիզմի ստրուկտուրային վերակազմութեանը ուղեկցում եր արտադրական ուժերի հետադիմութեանը (սեգրեսիոն): Այդտեղից ել, վերջին հաշիվով, առաջացավ ամբողջ սիստեմի անխուսափելի կործանումը»: ⁸⁹⁾

Մակայն, ներկայումս հո արտադրութեան չափն աճում է, գոյութեան ունի արտադրական ուժերի առաջադիմութեանը: «Պետական կապիտալիստական տրեստների սինդիկատը», այսինքն՝ հաշկավոր Ազ-

⁸⁷⁾ Ն. Բուխարին. — Անցողիկ շրջանի եկոնոմիկան, էջ 36:

⁸⁸⁾ Ն. Բուխարին. — Անցողիկ շրջանի եկոնոմիկան, էջ 36:

⁸⁹⁾ Ն. Բուխարին. — Անցողիկ շրջանի եկոնոմիկան. (2-րդ ընդգծումն իմն է. Ս. Պ.):

գերի իրգան, նույնպես գոյութեան ունի: Ուրեմն, ի՞նչ փաստարկումներ կարելի չեն բերել ուլտրա-իմպերիալիզմի տեսութեան դեմ, մնալով իմպերիալիզմի բուխարինյան վերլուծման հողի վրա:

Այդպես, քայլ առ քայլ, իմպերիալիզմի բուխարինյան ըմբռնումը ներաճում է սոցիալ-դեմոկրատական տեսութեան մեջ:

Յ. ԸՆԿ. ԲՈՒԽԱՐԻՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ

Ընկ. Բուխարինի հեղափոխութեան տեսութեանը, վոր կազմվեց 1915 — 17 թվականներին, ըստ ելութեան բացառում էր սոցիալիստական շինարարութեան հարցի, վորպես յերկարատև ետապի, առաջադրումը: Կազմակերպչական վիթխարի կարևորութեան ունեցող խնդիրները, մանր ապրանք արտադրողների սոցիալիստական վերամշակման պրոբլեմը, չեք դրված նրանց առաջ: Բուխարինի և նրան հետևող ձախ կոմմունիստների Փրակցիայի կարծիքով, սոցիալիստական շինարարութեան խնդիրներն ելին միայն, «չերևան հանել» պետական կապիտալիզմի սիստեմի աստառը:

Սոցիալիստական շինարարութեան պրոբլեմները ձախ կոմմունիստները սերտորեն կապում ելին մի յերկրի շրջանակներում սոցիալիստական հաջող շինարարութեան մերժման հետ: Ձախ կոմմունիստները, հեգնելով «սոցիալիզմը մեկուսի» կառուցելու փորձերը, հայտարարում ելին «վերջինս (սոսական սոցիալիստական հեղափոխութեանը Ս. Պ.) կամ մա-

բում ե կամ ծավալվում ե ավելի հեռուն, վորովհետև նա ընտել չի դարգանում խցանված շշի մեջ»⁹⁰)

«Վորպեսզի այդ վիթխարի խնդիրները (սոցիալիստական շինարարութեան խնդիրները, Ս. Պ.) կենսագործվեն, անհրաժեշտ ե, վոր համապատասխան ձեռնարկումներ կիրառվեն հարևան այն յերկրներում, վորոնց հետ Ռուսաստանը ունի և ունենալու յե ամենամոտ և ամենասերտ ապրանքափոխանակութիւնը: Այդ սկզբունքային դիրքի վրա յե հիմնված մեր ամբողջ տակտիկան, տնտեսական վերակազման մեր ամբողջ պլանը: ⁹¹)

Արդեն վերջին իսկ ցիտատից յերևում ե, վոր ձախ կոմմունիստները մեր յերկրում սոցիալիստական հաջող շինարարութեան անկարելի լինելու հանգամանքը կապում եյին վոչ միայն, նրանց կարծիքով, ամենամոտ ապագայում անխուսափելի ռազմական հարձակման հետ, վոր գործելու չեն իմպերիալիստները խորհուրդների յերկրի վրա, այլև այն հանգամանքի հետ, թե տնտեսապես անկարելի յե կառուցել սոցիալիզմը կապիտալիստական այն շրջապատում, վորի հետ մենք պետք ե առևտուր անենք:

«Առանձնացած բանվորա-գյուղացիական ռուսական հեղափոխութիւնը, գրում եյին ձախ կոմմունիստները, անկարող ե փրկվել: Նա կամ կփոխադրվի Ռուսաստանի սայամաններից դուրս, կամ կկործանվի: Կկործանվի վոչ միայն կապիտալիզմի ռազ-

⁹⁰) Ն. Քուխարին. — Ոպպորտյունիստական ֆրազի մասին «Կոմմունիստ» թերթ, № 1:

⁹¹) Մ. Քրոնսկիյ. — Մեր տնտեսական զրութիւնը և Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը. «Կոմմունիստ» թերթը, № 5:

մական հարվածներից, այլ սեփական տնտեսական կազմակերպչական անգորութիւնից»⁹²)

Այդտեղից ձախ կոմմունիստները տակտիկական հետևութիւններ եյին անում թե անհրաժեշտ ե հեղափոխական պայքար մղել՝ ապահովելու համար սոցիալիստական հաղթական շինարարութեան հիմնական սայամանները: Թե պետք ե յերկրի ներսում գրոհ տալ կապիտալի վրա և ձեռնամուխ լինել սոցիալիստական հասարակութեան հիմքերի կազմակերպմանը, հուշս ունենալով, վոր այդ աշխատանքին կաջակցի այլ յերկրներում հաղթանակող հեղափոխութիւնը:

Այդ պատճառով, ձախ կոմմունիստները պաշտպանում եյին իմպերիալիզմի դեմ անհապաղ և վճռական հեղափոխական պատերազմ մղելու քաղաքականութիւնը, վոչ միայն յելակետ ունենալով «սկզբունքային» այն նկատառումները թե իմպերիալիզմի հետ «սկզբունքորեն» անթույլատրելի յե կոմպրոմիսի հանգել, այլ և նպատակ ունենալով ապահովել սոցիալիզմի հաջող կառուցման սայամանները:

Ձախ կոմմունիստների ներքին և արտաքին քաղաքականութեան այդ կապը ամենից ավելին ցայտուն կերպով արտահայտուի եր Ն. Ոսսինսկու «Առաջին ծիծեռնակ» հոդվածում: Այդ հոդվածում, ընկ. Ոսսինսկին, ապացուցելով, վոր գերմանական իմպերիալիզմի հետ գործարք կնքելու հետևանքը կլինի հրաժարումն սոցիալիստական քաղաքականութիւնից յերկրի ներսում, գրում եր.

⁹²) «Համաշխարհային տարեդարձը՝ առաջնորդող «Կոմմունիստ» թերթում, № 7, 1918 թ. մարտի 12-ին:

«Հոֆմանի հետ կնքված խաղաղության դաշնագիրը Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները լիկվիդացիան ե յերկրի ներսում: Այդ նվաճումները մինչև վախճանը հասցնելը չենթադրում ե քաղաքացիական պատերազմ ոտարչերկրյա իմպերիալիզմի դեմ: Մյուս կողմից, քաղաքացիական այդ պատերազմը չենթադրում ե տնտեսական բնույթ կրող մի շարք ձեռնարկումներ, ավելի վճռական, քան նախկինները, ձեռնարկումներ, վորոնք լրացնեն անցյալում սկսվածները: Նա չենթադրում ե կոմունիստական քաղաքականությունը»: ⁹³⁾

Կամ մի այլ տեղում՝

«Քաղաքացիական պատերազմն անխղճ իրեն կապված ե մասնավոր սեփականության վճռական լիկվիդացիայի հետ, սոցիալիստական իրավակարգի իրականացման և ուղղակի կոմունիզմին անցնելու հանդամանքի հետ»: ⁹⁴⁾

Սակայն, ձախ կոմունիստներին հակառակ, Գերմանիայի հետ խաղաղությունը կնքելուց հետո ևս, յերբ տնտեսության հրամայական բարձունքները պրոլետարիատի կողմից նվաճելու խնդիրը հիմնականում լուծված եր, յերբ հերթի դրվեցին այլ խնդիրներ, այն ե հաշվառման և վերահսկողության կազմակերպումը, մանր բուրժուական տարերքի սանձահարումը, աշխատանքի արտադրականության բարձրացումը և այլն, ձախ կոմունիստները առաջվա նման

⁹³⁾ Ն. Ոստինսկիյ.— Առաջին ծիծեռնակը. «Կոմունիստ» № 7:

⁹⁴⁾ Ն. Ոստինսկիյ.— Քաղաքացիական պատերազմը և կոմունիզմը, «Կոմունիստ» թերթը, № 4:

պաշտպանում ելին իրենց պլանը, այն ե՝ վճռաբար լիկվիդացիայի չենթարկել մասնավոր սեփականությունը, արագորեն կազմակերպել սոցիալիստական տնտեսությունը և «կառուցել պրոլետարական սոցիալիզմը՝ բանվորների իրենց դասակարգային ստեղծագործությունը և վոյթե «արդյունաբերության կապիտանների» (այսինքն, բուրժուական մասնագետների. Ս. Պ.) ցուցումով: ⁹⁵⁾

Ձախ կոմունիստների հայացքները՝ մեր յերկրում սոցիալիստական շինարարության խնդիրներ և հեռանկարների նկատմամբ, ձեռնարկվում ելին գլխավորապես, այն քննադատություններ, վոր տեղի յեր ունենում Լենինի առաջարկած տնտեսական շինարարության պլանի շուրջը:

Լենինյան պլանը չեղակետ ուներ այն հանգամանքը, թե անհրաժեշտ ե ապահովել պրոլետարիատի համար վճռական հրամայական բարձունքները ժողովրդական տնտեսության մեջ, նացիոնալիզացիայի չենթարկելով բանկերը, ամենից ավելի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները՝ արդյունաբերության հիմնական ճյուղերում: Միևնույն ժամանակ, Լենինը տեսնում եր, թե վորքան վիթխարի խնդիր ե՝ ստեղծել փորձված կազմակերպիչների կադրեր, դաստիարակել իշխանությունն իր ձեռքն առած դասակարգի ներկայացուցիչներին պատվաստել նրանց տնտեսավարելու և կառավարելու հմտություն: Հենց այդ պատճառով ել նա նախզգուշացնում եր բոլոր ձեռնարկություններն, առանց խարուստյան, չափից

⁹⁵⁾ Ն. Ոստինսկիյ.— «Սոցիալիզմի կառուցումը». «Կոմունիստ» ժուրնալը № 2, եջ 5:

դուրս հապճեպ, շեշտակի թափով, նացիոնալիզացիայի յենթարկելուց

Այդ իսկ պատճառով, նա կոչ եր անում սովորել բուրժուական մասնագետներից և տրեստների կազմակերպիչներին, մեծադուչն չափով ոգտագործել նրանց գիտելիքները, հմտութունն և փորձառութունը:

1918 թվականի առաջին կիսին, Լենինն առանձնապես առաջադրում և ընդգծում եր այսպես կոչված պետական կապիտալիզմի դերը, վորպես սոցիալիզմի աջակից: Պետական կապիտալիզմի ոգտագործման պլանի հյուսթյունն այն եր, վոր յերկրի տնտեսության մեջ գլխավոր դեր կատարող պրոլետարիատը, տնտեսության սոցիալիստական ձևերը կազմակերպելով հանդերձ, թույլ ե տալիս յուրահատուկ պետական կապիտալիզմի գոյությունը, այսինքն՝ մի կապիտալիզմի, վոր պայմանագրական սերտ հարաբերություններ ունի պրոլետարական պետության հետ, վոր գտնվում ե պետական վերահսկողության և կարգավորման տակ:

Ընդամին, Լենինն յեղնում եր այն հանգամանքից, վոր պրոլետարական սոցիալիզմի գլխավոր քրոնամին հանդիսանում ե մանր-բուրժուական տարերքը, վորը վիժեցնում ե հաշվառում և վերահսկողություն կազմակերպելու բոլոր փորձերը:

«Մանր-բուրժուական յերկրում գերակշռում ե և չի կարող չգերակշռել մանր բուրժուական տարերքը. հողագործների մեծամասնությունը, այն ել ահագին մեծամասնությունը, հանդիսանում են մանր ապրանք արտադրողներ: Պետական կապիտալիզմի թաղանթը (հացի մոնոպոլիան, վերահսկողության յենթակա

ձեռնարկությունները և առևտրականները, բուրժուական կոոպերատորները) մերթ այստեղ, մերթ այնտեղ ճեղքում են սպեկուլյանցներ և սպեկուլյացիայի գլխավոր առարկան հանդիսանում ե հացը:

Գլխավոր պայքարը ծավալվում ե, հատկապես, այդ ասպարիզում: Վորոնց միջև տեղի յե ունենում այդ պայքարը, յեթե խոսենք եկոնոմիկական կատեգորիաների տերմիններով, ինչպիսին ե որինակ՝ «պետական կապիտալիզմը»: Վոչ թե պետական կապիտալիզմն ե պայքարում այստեղ սոցիալիզմի դեմ, այլ մանր բուրժուազիան պլյուս մասնավոր տնտեսական կապիտալիզմը միասին պայքար են մղում և՛ պետական կապիտալիզմի, և՛ սոցիալիզմի դեմ: Մանր բուրժուազիան դիմադրում ե թե պետական կապիտալիստական և թե պետական սոցիալիստական ալեմ մի միջամտությանը, հաշվառմանը և վերահսկողությանը: Դա — իրականության միանգամայն անժխտելի փաստն ե, վորի չհասկանալն ե հենց, վոր կազմում ե «ձախ կոմմունիստների» տնտեսական սխալների արմատը⁹⁶):

Ձախ կոմմունիստները լենինյան այդ պլանին հակադրեցին իրենց այն հայացքների սխտեմը, վորոնք, տեսական իմաստով, մեղանչում եյին դիալեկտիկական չհասկանալով, իսկ քաղաքական իմաստով հանդիսանում եյին մանր-բուրժուական մի ընդվզում՝ պրոլետարական կազմակերպվածություն ստեղծելու և կարգապահություն հաստատելու առաջին քայլերի դեմ:

Ձախ կոմմունիստները գլխավոր ուշադրությունը նվիրում եյին պրոլետարական հեղափոխության կոր-

96) Վ. Լենին. — հատոր 15, էջ 264—265.

ծանարար կողմի վրա, անթույլատրելի չափով քիչ զբաղվելով սոցիալիստական շինարարութեան գրական պրոբլեմների մշակմամբ: Այդ տեսակետից բնորոշ է ընկ. Բուխարինի այն գրախոսականը Լենինյան «պետութունը և հեղափոխութունը» աշխատանքի վերաբերմամբ, վոր գեանդվել է «Կոմունիստ» ժուրնալի 1-ին համարում, ⁹⁷⁾ վորտեղ նա վոչ մի խոսք չի ասել պրոլետարական դեկտատուրայի այդ գրական շինարարական խնդիրների մասին:

«Յես պետք է խղճի մտոք ասեմ,—գրում էր Լենինը, նշելով այդ փաստը,—վոր լուծման (հարցի. թարգմ.) բնույթըն յերևան է հասնում մի տխուր և նշանակալից փաստ՝ Բուխարինը պրոլետարական դեկտատուրայի խնդիրների վրա նախում է յերեսը շուռ տալով դեպի անցյալը և վոչ թե դեպի ապագան: Բուխարինը նկատեց և ընդգծեց այն, ինչ վոր կարող է ընդհանուր լինել պետութեան հարցում պրոլետարական և մտնր-բուրժուական հեղափոխականի համար: Բուխարինը «չնկատեց» հենց այն, ինչ վոր բաժանում է առաջինը յերկրորդից:

Բուխարինը նկատեց և ընդգծեց, վոր հին պետական տպարատը պետք է «ջախջախել», «պայթեցնել», վոր բուրժուազիտային պետք է «վերջնականապես խեղդել» և այլն: Կատաղած մտնր-բուրժուական նույնպես կարող է ցանկանալ այդ: Յեվ այդ, գլխավոր գծերով, արդեն արել է մեր հեղափոխութունը 1917 թվականի Հոկտեմբերից մինչև 1918 թվականի փետրվար ամիսը:

⁹⁷⁾ Տես «Կոմունիստ», № 1 էջ 19.

Սակայն այն, ինչ վոր չի կարող անել նույնիսկ ամենահեղափոխական մտնր-բուրժուական, ինչ վոր ցանկանում է գիտակից պրոլետարը, ինչ վոր դեռ չի արել մեր հեղափոխութունը, գրա մասին նմանապես խոսվում է իմ բրոշյուրում: Յեվ այդ խնդրի մասին, վաղվա խնդրի մասին, Բուխարինը լուրջ չուս է պահպանում:

Իսկ յես դրա մասին չլուրջ հիմք ունեմ առավել ևս այն պատճառով, վոր նախ կոմունիստից պետք է սպասել մեծ ուշադրութուն վաղվա և վոչ թե յերեկվա խնդիրների հանդեպ, իսկ յերկրորդ՝ իմ բրոշյուրը գրված է յեղել նախքան իշխանութեան գրավումը բալլեիկները կողմից, յերբ բալլեիկներին չեր կարելի հրամցնել գոեհիկ-մեշանական այն նկատառումը, թե «դե, իշխանութունը գրավելուց հետո, իհարկե, սկսեցին յերգել կարգապահութեան մասին»⁹⁸⁾:

Դրա հետ միասին «ձախ կոմունիստները» վճռաբար հարձակվում էին պետական կապիտալիզմի լենինյան պլանի վրա: Այդ պլանի դեմ արված տեսական առարկումները արժանի չեն լուրջ քննութեան: Դրանք հին յերգրի կրկնութունն էին, թե՛ պետական կապիտալիզմը բուրժուական պետութեան մեջ յենթադրում է բուրժուական դեկտատուրայի գոյութունը, արտադրութեան միջոցների մասնավոր սեփականութեան անխախտելիութունը: Հետևապես, ասում էին նրանք, «պետական կապիտալիզմ» հասկացողութունը անտեղի չէ մի յերկրում, վորտեղ «հաղթանակել է բանվոր-գյուղացիական հեղափոխութունը»:

⁹⁸⁾ Լ. Ենից.—հատոր 15, էջ 278—279.

Նրանք բնավ չեյին հասկանում, վոր յեթե իշխանությունը պատկանում է պրոլետարիատին, ապա պետական կապիտալիզմը, այսինքն՝ այն կապիտալիզմը, վորին մենք պահում ենք սանձահարած, ինչպես պատկերավոր կերպով արտահայտում եր Լենինը, հանդես է գալիս արդեն սոցիալիզմի ոժանդակողի դերում, ոգնելով պրոլետարական պետությանը մանրբուրժուական տարերքի և սպեկուլացիայի սանձահարման գործում:

«Հրապարակ հանելով պետական կապիտալիզմի» խրովիլիակը, գրում եր Լենինը, նրանք ցույց են տալիս, վոր չեն հասկանում խորհրդային պետության տնտեսական տարբերությունը բուրժուական պետությունից»⁹⁹⁾:

Թերևս, այստեղ բանը միայն նրանց չհասկանալը չէր, թե պետական կապիտալիզմը, չէր պետությունը բանվորական է, միանգամայն այլ է, քան պետական կապիտալիզմը բուրժուական պետության մեջ: Չախ կոմմունիստները, ըստ ելույթյան, ժխտում էին մեր պետության և նույնիսկ կուսակցության պրոլետարական բնույթը:

Նրանց կարծիքով, պրոլետարիատը պետք է ուղղագիծ քաղաքականություն վարի, սուանց կոմպրոմիսներին, առանց նահանջի և մանևրելու: Այդ պատճառով, խաղաղություն կնքելու կողմնակիցներին հաղթանակը նրանք բացատրում էին մանրբուրժուազլիայի ներգործությամբ:

⁹⁹⁾ Լենին. — Գրվածքների ժողովածու, հրատարակ. 2-դ, 22, էջ 513.

«Սորհրդային իշխանությունը, գրում էին նրանք, մի դասակարգի իշխանություն չէ. նա բանվորներին և գյուղացիներին իշխանությունն է»: ¹⁰⁰⁾

«Բայլևիկների կուսակցությունը հեղափոխության ժամանակ դարձավ ընդհանուր ժողովրդական կուսակցություն», ¹⁰¹⁾ գրում եր հետագայում Ռադեկը: Պրոլետարական ղեկատուության 5 ամիս գոյություն ունենալուց հետո, Ռադեկը պնդում եր, թե պետական իշխանությունը պատկանում է յերկու դասակարգերին՝ պրոլետարիատին և գյուղացիությանը (և այդ պատճառով կոչ եր անում «ուժեղացնել պրոլետարիատի ազդեցությունը խորհրդային իշխանության վրա»), իսկ կոմմունիստների կուսակցությունը բաժանվեց մանրբուրժուական և պրոլետարական կոմունիստների, վերագրելով վերջինների թվին, հարկավ, նաև իրեն և իր Ֆրակցիան:

Համենայն դեպս, ձախ կոմմունիստները պետական կապիտալիզմի դիրքերն անցնելը հավասարագոր էյին համարում սոցիալիստական հեղափոխության կործանմանը:

«Սոցիալիստական հայրենիքը, վողբում էին նրանք, հակադրելով սոցիալիստական տնտեսական քաղաքականությունը պետական կապիտալիզմին, սկսում է անհետանալ և նրա տեղը զբաղում է պետական կապիտալիստական հայրենիքը»¹⁰²⁾:

¹⁰⁰⁾ «Զիջումների քաղաքականությունը և պրոլետարիատը «Կոմունիստ» թերթի, № 1, առաջնորդող:

¹⁰¹⁾ Լ. Ռադեկ. — Հինգ ամից հետո. — «Կոմմունիստ» ժուրնալ, № 1, էջ 3.

¹⁰²⁾ Ն. Ուսինսկի. — Առաջին ծիծեռնակը «Կոմմունիստ» թերթը № 7:

Ձախ կոմմունիստները «ընթացիկ մոմենտի թեզերում» առարկելով կոսակցության մեծամասնության այն քաղաքականությանը, վորով ներգրավում էլին բուրժուական մասնագետներն ու կազմակերպիչները և ստեղծվում էլին տրեստներ ու խառն ձեռնարկություններ, գրում էլին. «Արտադրության կազմակերպման այդ սխտեմը սոցիալիստական բազա չե ստեղծում եվրոպեացի համար դեպի պետական կապիտալիզմը և հանդիսանում է նրա անցողիկ աստիճանը»¹⁰³);

Ձախ կոմմունիստներին առարկելով, Լենինը գրում էր. — «Ձախ կոմմունիստների դատողությունները» իբրև թե մեզ սպառնացող «պետական կապիտալիզմի» մասին ամբողջովին տնտեսական սխալ է և բացահայտ ապացույց է, վոր նրանք գերի չեն ընկել հենց բուրժուական իդեոլոգիային»¹⁰⁴);

Իրոք, գրում էր Լենինը, «պետական կապիտալիզմը մի քայլ կլինեք դեպի առաջ մեր Սորհրդային Հանրապետության իրերի ներկա գրության դեմ: Յեթե մոտավորապես, կես տարուց հետո, մեզանում հաստատվեր պետական կապիտալիզմը, ապա դա կլինեք հսկայական մի հաջողություն և ամենավստահելի գրավականը, վոր մի տարուց հետո մեզանում վերջնականապես կամրապնդվի և անհողթելի կդառնա սոցիալիզմը»¹⁰⁵);

Ձախ կոմմունիստների վերաբերմունքը դեպի պե-

¹⁰³) «Ընթացիկ մոմենտի թեզերը» «կոմմունիստ» ժուրնալ, № 1, էջ 8.

¹⁰⁴) Լ. Ե. Ե. — 22, հատոր, յերկրորդ հրատարակ. 519 էջ:

¹⁰⁵) Լ. Ե. Ե. — հատոր, 22, յերկրորդ հրատարակ. էջ 512.

տական կապիտալիզմը չերևան է հանում նրանց մանր-բուրժուականությունը: «Նրանք իրենց մանր-բուրժուականությունը չերևան են հանում հենց նրանով, վոր չեն սեպնում մանր-բուրժուական տարերքը, վորպես սոցիալիզմի գլխավոր թշնամին մեզանում»¹⁰⁶);

Սակայն, ինչ էլին հակադրում ձախ կոմմունիստները տնտեսական այն քաղաքականության, վորը պաշտպանում էր Լենինը: Դրական ինչ բան էլին առաջադրում նրանք՝ սոցիալիստական շինարարության հարցերում, գործողությունների ինչպիսի՞ ծրագիր էլին պաշտպանում նրանք: Արդեն նրանց բաց թողած լոգունգները՝ «արտադրության մասնագիտաց-թողած լոգունգները»¹⁰⁷) կամ «պրոլետարական մամբ դեպի սոցիալիզմը»¹⁰⁷) կամ «պրոլետարական սոցիալիզմի կառուցումը՝ բանվորների դասակարգա-յին ստեղծագործությամբ»¹⁰⁸) բավականաչափ պայ-ծառ լույս են սփռում նրանց դիրքի էություն վրա: Այդ դիրքը բնորոշվում է մանր-բուրժուական գյուղացիական յերկրում սոցիալիզմի կառուցման ամբողջ դժվարության կատարյալ թերագնահատմամբ:

Վոչնչացնել արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, դլխովին նացիոնալիզացիալի յենթարկել ամբողջ արդյունաբերությունը, ստեղծել պլանային տնտեսություն, վոչնչացնել շուկայական հորաբերությունները և փողի շրջանառությունը, կազ-

¹⁰⁶) Լ. Ե. Ե. — հատոր 22, էջ 513:

¹⁰⁷) Մ. Բուխարին. — Ժամանակակից եկոնոմիկայի մի քանի հիմնական հասկացողությունները. — «կոմմունիստ» ժուրնալ, № 3, էջ 11:

¹⁰⁸) Մ. Ոստիցսկիյ. — Սոցիալիզմի կառուցումը. — «կոմմունիստ» ժուրնալ № 2, էջ 5:

մակերպել մթերքների փոխականակությունն քաղաքային և գյուղական կոմմունաների միջև, ստեղծել գյուղում խոշոր համաչնացված տնտեսություն—սրանք եյին այն ձեռնարկությունները, վորոնք,—ձախ կոմմունիստների կարծիքով, անմիջականորեն ստեղծելու եյին սոցիալիստական իրավակարգ:

Իսկ գլխավորը՝ վոչ մի կոմպրոմիս: Վոչ մի շեղում զուտ կոմունիստական ձեռնարկումներից: Վոչ մի զիջում մանր տերերին:

«Պետք է, գրում էր Ոստինսկին,—թվելով այն պայմանները, վորոնց հիման վրա ձախ կոմմունիստական հայացադետեսների համաձայն, հնարավոր էր սոցիալիստական հաջող շինարարություն,—պետք է վոր արտադրության ներսում չխանգարի սեփականության վոչ մի անջրպետ: Հարկավոր է, վոր նա կարողանա միասնական պլանով հավաքել արտադրական կիսակործան ուժերը, հարկավոր է վոր կազմակերպվող արդյունաբերության համատարած ծովում գոյությունն չունենան մասնավոր սեփականության անձեռնմխելի կղզիներ:

Խաչատուակ խաղաղության դաշինքը ժխտում է այդ բոլոր նախադրյալները և այդ պատճառով ժխտում է յերկրի արտադրական ուժերի վերականգնման հնարավորությունն իսկ: Ել չենք խոսում արտադրության սոցիալիստական կազմակերպման մասին: «Իժբախտ» խաղաղության դաշնագիրը ստորագրող մարդիկ, պետք է բացերբաց և անկեղծորեն ասեյին, թե նրանք հրաժարվել են Ռուսաստանում սոցիալիստական շինարարությունից»¹⁰⁹⁾:

¹⁰⁹⁾ Ն. Ոստինսկիյ.—Քաղաքացիական պատերազմը և կոմմունիզմը, «Կոմմունիստ» թերթը №4.

«Վերադառնալ դեպի ազատ առևտուրն ու մասնավոր տնտեսությունը անկարելի չէ», բացականչում էր նա նույն հոդվածում, միանգամայն անտես առնելով գյուղացիական մասնավոր մանր-բուրժուական տնտեսությունների ծովի գոյությունը, վորի հետ կապ հաստատել հնարավոր էր միմիայն շուկայի հիման վրա:

Չախ կոմմունիստների տնտեսական պլատֆորման ամենից ավելի մտնում ևս նուրբ արտացոլվեց Ն. Ոստինսկու «Սոցիալիզմի կառուցումը» բրոշյուրում:

Սակայն ինչպես է վորոշում նա սոցիալիստական շինարարության խնդիրներն ու բովանդակությունը:

«Սոցիալիստական շինարարության ընդհանուր խնդիրը (և միաժամանակ կապիտալիզմի լիկվիդացիան) կայանում է նրանում, վոր՝ 1) պետք է մեր ձեռքն առնենք կապիտալիստական տնտեսության հիմնական հանգուլցները «ստրատեգիկ կետերը», 2) զսեղք տրնտեսական ապարատը, նրա հասարակայնորեն անողուտ բոլոր մասերից և կցորդներից, 3) միաժամանակ վերակառուցենք այդ ապարատը, դարձնելով նրան միասնական, շարկապված, հասարակության կողմից պլանաչափ և գիտակցորեն կառավարվող մի ապարատ, վորն աշխատում է բավարարելու հասարակության ճշտիվ հաշվարկված պահանջները»¹¹⁰⁾:

Սոցիալիստական վերակազմումը, ասում է Ոստինսկին,—պետք է ընթանա հետևյալ հինգ ուղղություններով՝ 1) վարկ և փողային շրջանառություն, 2) արտադրություն, 3) ապրանքային շրջանառու-

¹¹⁰⁾ Ն. Ոստինսկիյ.—Սոցիալիզմի կառուցումը.—հրատարակ. «Կոմմունիստ»-ի 1918 թվական. էջ 39:

թյուն, (բացի մանրածախս շրջանառությունից),
4) ստորին տպրանքային շրջանառություն ու մաս-
նավոր սպառում և 5) բանվորական ուժի շուկա» 111):

«Վարկի և փողային շրջանառության ասպար-
իզում, — գրում է Ոստինսկին, — առաջին խնդիրն է՝
բանկերի, վորպես կապիտալիստական արտադրության
գլխավոր ռեգուլյատորի գրավումը»:

Այդ բոլորը ճիշտ է: Սակայն հետազոտում Ոս-
տինսկին յերազական պատկերացումներ է տալիս, թե
հնարավոր է բանկերն անհապաղ վերածել հասարա-
կական ձեռնարկությունների և հիմնարկների վճարողա-
կան գրամարկդների ու հաշվետեսության գրասեն-
յակների, թե հնարավոր է փողային շրջանառության
մոտավոր մահացումը:

Արտադրության ասպարիզում պահանջվում է
«նախկին սեփականատերերից խել և հասարակու-
թյան սեփականություն դարձնել (բռնադրավում)
արտադրության միջոցները»:

Այստեղ, նացիոնալիզացիայի աստիճանների
հարը զանց է առնվում: Ինչ ավելին՝ անհրաժեշտ է
հայտարարվում անհապաղ նացիոնալիզացիայի յին-
թարկել վոչ միայն խոշոր արդյունաբերական ու գյու-
ղատնտեսական ձեռնարկությունները, այլ և միջակ-
ներն ու մանրերը: «Միջակ և մանր արդյունաբերա-
կան ձեռնարկությունները, նկատում է Ոստինսկին, —
պետք է կամ միացնել խոշոր միավորների, կամ հար-
կադէր կերպով միացնելով, դարձնել սինդիկատներ,
կամ բոլորովին փակել» 112):

111) Ն. Ոստինսկի — Սոցիալիզմի կառուցումը, էջ 42—43:

112) Ն. Ոստինսկի — Սոցիալիզմի կառուցումը, էջ 43:

Սպառողական կոմմունաներ և աշխատանքային
ընդհանուր պարհակ — սրանք են 4-րդ և 5-րդ խնդիր-
ները լուծելու մեթոդները: Սակայն, ձախ կոմմու-
նիստների ամբողջ դիրքի համար ամենից ավելի բնո-
րոշ է նրանց մոտեցումը սոցիալիստական շինարա-
րության 3-րդ խնդրի լուծմանը՝ տպրանքային շրջա-
նառության կազմակերպմանը (կամ ավելի ճիշտ, նրա
հաղթահարմանը):

«Տպրանքային շուկայի միջոցով, գրում էր Ոս-
տինսկին, կապ է պահպանվում վոչ միայն կապիտա-
լիստական ձեռնարկությունների և մանր տպրանք
արտադրողների մասսայի միջև (մանավանդ գյուղա-
տնտեսության մեջ): Հենց այդ է, վոր առաջ էլ դժվա-
րացնում էր շրջանառության կազմակերպումը Ռու-
սաստանում (որինակ՝ հացի մոնոպոլիայի կազմակեր-
պումը), դժվարացնում է նաև ներկայումս, սոցիալիս-
տական հեղափոխությունից հետո»:

Այդ ասպարիզում պրոլետարական դիկտատու-
րայի հիմնական խնդիրներն են՝ 1) մեր ձեռքը վեր-
ցնել գոյություն ունեցող սինդիկատները և առևտրա-
կան խոշոր ֆիրմաները, 2) ոգտվելով գրանից, այդ
ապարամներով և գլխավորապես, հիմնելով նորերը,
մտցնել պետական մոնոպոլիա և հաստատուն գների
սիստեմ, նախ, արդյունաբերական բոլոր մթերքների՝
սկսած կարևորներից և ապա աստիճանաբար հողա-
գործության մթերքների ասպարիզում, 3) ոգտվելով
արտադրության տպրանքի պաշարի և պահանջի հաշ-
վառումից, կազմակերպել մթերքների պլանաչափ բա-
շխումը ձեռնարկությունների և սպառողների միջև,
հնարավոր չափով փոխարինելով փողային հաշվետե-

սությունը հաշվապահական հաշվետեսությամբ»¹¹³⁾,
 Յերբ 1918 թվականի ապրիլին Ֆինանսների
 Ժողովրդական կոմիսարի տեղակալ ընկ. Գուսակովսկին
 հանդես յեկավ Ֆինանսական ռեֆորմի նախագծով՝
 բյուջեն և փողային շրջանառութիւնը կանոնավորելու
 համար, ապա այդ նախագծի դեմ սկզբունքային
 առարկունքներ արին «ձախ կոմմունիստները», վորոնք
 պահանջում էին վոչ թե «կարկատել» հինը, այլ կազ-
 մակերպել մթերքի անփող փոխանակութիւն:

«Ձախ կոմմունիստների որգանը գրում եր «ան-
 հրաժեշտ ե հետևողական կերպով, առանց սայթաքելու
 դեպի բուրժուական ռեյսերը, առանց ուղարկելու
 տական թեքումներ, ընթանալ ապրանքի անփող
 շրջանառութիւն կազմակերպման ուղիով: Հեղափոխու-
 թիւնը հենց այդ ուղիով ել զարգանում ե: Այժմ աշ-
 խատում են նրան շեղել այդ ուղուց դեպի բուրժուա-
 կան վարկի վերականգնումը և այլն ռեֆորմներ: Ձախ
 կոմմունիստ, ընկ. Բուխարինը շատ տեղին բնորոշեց
 կոմիսարական այդ յերկունքը: Հիմարութիւն ե մտա-
 ծել, ասում եր նա, սոցիալիստական հեղափոխութիւն
 շրջանում վերականգնել վարկի բուրժուական
 բնույթը»¹¹⁴⁾:

Այդպես ուրեմն, ձախ կոմմունիստների համար
 փողի շրջանառութիւնն ու վարկը, անկախ նրանից
 թե ով ե կազմակերպում դրանք, բուրժուական ձեռ-
 նարկունքներ են: Դա վերին աստիճանի ձևական, վոչ
 դիալեկտիկ մոտեցում ե, վորը հաշվի չի առնում այն

113) Ե. Ռասիսկիյ.—Սոցիալիզմի կառուցումը, էջ 45—46:

114) Ա. Լոսով.—Տնտեսական դիտողութիւններ, — «Կոմ-
 մունիստ» ժուրնալ № 2, էջ 21—22:

հանգամանքը, վոր փողի շրջանառութիւնը և վարկը
 կազմակերպող պրոլետարական պետութիւնը դրանով
 իսկ ամբացնում ե իր սոցիալիստական տնտեսութիւնը
 և արագացնում ե սոցիալիստական շինարարութիւնը:

Նույնպիսի ձևական մոտեցում ունեցին ձախ կոմ-
 մունիստները աշխատանքի արտադրողականութիւն
 բարձրացմանը՝ պրոլետարական պետութիւն պատկա-
 նող ձեռնարկութիւններում, և աշխատանքի վարձա-
 տրութիւն ձևերին: Լենինը հիանալի կերպով հաշվի
 առնելով, վոր կոլլեկտիվիստական հոգեբանութիւնը
 չի ստեղծվում պրոլետարիատի հաղթանակի հենց
 հաջորդ որը, պաշտպանում եր այն միտքը, թե անհրա-
 ժեշտ ե կիրառել աշխատանքի գործարքային վարձա-
 տրութիւն՝ նրա արտադրականութիւնը խթանելու
 համար: Իսկ ձախ կոմմունիստները այդ համարում էին
 մի վերադարձ դեպի կապիտալիզմը, անկարող լինելով
 տարբերել ձեն ելութիւնից, բովանդակութիւնից:
 Նրանք միանգամայն անթույլատրելի համարելով գոր-
 ծարքային վարձատրութիւնը և խրոնոմետրաժը,
 յենթադրում էին վոր բանվորն աշխատանքի ինտեն-
 սիվութիւնը պետք ե բարձրացնի վոչ թե աշխատա-
 վարձի հետևից ընկնելով, այլ իրենց դասակարգային
 շահերի համար¹¹⁵⁾:

Դրա հետ միասին, ձախ կոմմունիստները բնավ
 չէին հասկանում, թե ինչպես պետք ե զուգակցել
 ընդհանուր դասակարգային շահերը չուրաքանչուր
 առանձին բանվորի անձնական շահերի հետ, չենին
 հասկանում՝ նմանապես, վորպես տիրող դասակարգ,

115) Ե. Ռասիսկիյ.—Սոցիալիզմի կառուցումը «Կոմ-
 մունիստ» ժուրնալ, № 2, էջ 6:

վորպես պետութիւն կազմակերպված պրոլետարիատի փոխհարաբերութիւնները բանվոր դասակարգի առանձին ջոկատները հետ:

«Հարցն այդպես դնելով, (այսինքն՝ թե բանվորներն աշխատանքի արտադրողականութիւնը կարող են բարձրացնել միմիայն համակված լինելով դասակարգային գիտակցութեամբ Ս. Պ.), գրում ե Ոստինսկին, — մենք չենք կարող մեր վստահութիւնը դնել պրոլետարիատի դասակարգային բնագոյր, դեպի նրա դասակարգային ինքնագործունեութիւնը: Այլ կերպ չի ել կարելի դնել այդ հարցը: Յետեւ պրոլետարիատն ինքը չկարողանա ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ սոցիալիստական աշխատանքի կազմակերպութեան համար, ապա վոչ վոք նրա փոխարեն չի անի այդ բանը և վոչ վոք չի հարկադրի նրան այդ բանին: Բանվորների բարձրացրած մահակը (!) գտնվելու յե հասարակական այնպիսի ուժի ձեռին, վորը կամ գրտնվում ե հասարակական այլ դասակարգի ազդեցութեան տակ. կամ պետք ե ընկնի նրա ազդեցութեան տակ: Յետեւ այդ մահակը գտնվի խորհրդային իշխանութեան ձեռին, ապա խորհրդային իշխանութիւնը հարկադրված կլինի, ընդդեմ բանվորների, հենվել մի այլ դասակարգի վրա (որինակ՝ գյուղացիութեան վրա) և զբանով նա կկործանի իրեն, վորպես պրոլետարիատի գիտատուրան: Սոցիալիզմը և սոցիալիստական աշխատանքը կկազմակերպի ինքը, պրոլետարիատը կամ դրանք բնավ չեն կառուցվի այլ կկառուցվի մի տարրեր բան՝ պետական կապիտալիզմը ¹¹⁶⁾»:

116) Ն. Ոստինսկի. — Սոցիալիզմի կառուցումը.

կրկնում ենք, վոր այստեղ նրանք բնավ չեն հասկանում պրոլետարական պետութեան փոխհարաբերութիւնները պրոլետարիատի առանձին խավերի հետ, չեն հասկանում այն, վոր պրոլետարական պետութիւնը չենելով ընդհանուր դասակարգային և տեղական շահերից, չի կարող ներգործել պրոլետարիատի հետամնաց խավերի և առանձին պրոլետարների վրա: Նախ և առաջ, այստեղ նույնպիսի թերամտածում կա այն հարցի մասին, թե ինչպես պետք ե զուգակցել անձնական շահերը պրոլետարական պետութեան շահերի հետ: Առանց այդ բանը հասկանալու, ընկ. Ոստինսկին գոհանում եր «մահակի» վերաբերյալ խղճուկ ֆրազներով, պատկերացնելով այդ մահակով աշխատանքի գործարքային սիստեմը:

Վերլուծելով ձախ կոմունիստների հայացքները աշխատանքի արտադրողականութեան բարձրացման, միանձնյա ղեկավարութեան, վորպես տեխնիկական մասնագետներ նախկին կապիտալիստների ներգրավման և ոգտագործման մասին, Լենինը գրում եր. «Յերը մեզ ասում են, թե կապիտալիստների ղեկավարման միջոցով աշխատանքային կարգապահութեան լուծումը իբրև թե վտանգ ե սպառնում հեղափոխութեանը, չես ասում եմ՝ այդ մարդիկ չեն հասկացել մեր հեղափոխութեան հենց սոցիալիստական բնույթը. նրանք կրկնում են հենց այն, ինչ վոր դուրսին կերպով միացնում են նրանց մանր-բուրժուազիայի հետ, վորը վախենում ե կարգապահութեանից, կազմակերպութեանից, հաշվարկումից և վերահսկողութիւնից, ինչպես սատանան խաչից» ¹¹⁷⁾:

117) Լենին. — Գրվածքների ժողովածու, հատ. 15, էջ 240.

Ձախ կոմմունիստների հիմնական սխալը սոցիալիստական շինարարության հարցերում

Մենք հետևեցինք ձախ կոմմունիստներին ամենահիմնական հայացքներին՝ մեր չերկրի սոցիալիստական վերակառուցման խնդիրների և ուղիների նկատմամբ: Իրանք բնորոշվում են նրանով, վոր ձախերը բնավ չեն հասկանում և նկատի չեն առնում այն բոլոր դժվարությունները, վորոնք բղխում են չերկրում արտադրության հասարակ ապրանքային չեղանակի գերակշռումից, բղխում են այն հանգամանքից, վոր անսահման տարածություն վրա ցրված են չերկու և կես տասնյակ միլիոնից ավելի գյուղացիական առանձին տնտեսություններ:

Տնտեսական հարցերում ձախ կոմմունիստներին զիրքերի հիմքում դրված եր թերազնահատումն այն պարզ փաստի, վոր այդ պայմաններում գյուղատնտեսության արտադրական ուժերի աճումը հնարավոր կլիներ, չերք մանր արտադրողի հսմար գոյություն ունենար ազատություն, իր ուզածի նման տնորինելու իր ավելցուկների, թերազնահատումըն կազմակերպչական այն բոլոր դժվարությունների, վորոնք կապված են բոլոր (և՛ խոշոր, և՛ միջակ, և՛ մանր) ձեռնարկությունների անհապաղ պետականացման հետ:

Պատկերացնում եյին, արդյոք, «ձախ կոմմունիստները» կապիտալիզմի վերականգման այն վտանգը, վոր բղխում եր մեր չերկրի մանր գյուղացիական բնույթից: Հաշվի առնում եյին, արդյոք, նրանք իրենց կառուցումների մեջ այն հանգամանքը, վոր գյուղա-

չքիական մանր տնտեսություն զարգացումը, քանի նա ի լինթարկված սոցիալիստական արդյունաբերության ներգործմանը, մանր բուրժուական կապիտալիստական մի զարգացում ե: Յեվ թե այդ վտանգը ու զարգացման այդ բնույթը կարելի չե վոչնչացնել միմիայն արտադրական վերափոխման լինթարկելով գյուղացիական տնտեսությունները, նրանց աստիճանաբար միացնելով և վերածելով գյուղատնտեսական խոշոր կուլիկտիվների:

Այդ հարցին պատասխան կտան ընկ. Ոստինսկու հետևյալ դատողությունները:

«Միմիայն դրա լուծումն ե, (հասարակական փոխանակության կազմակերպման խնդրի լուծումը Ս. Պ.) վոր վերացնում ե սոցիալիստական իրավակարգին սպառնացող մանր բուրժուական վսանգը: Շուկան այն վտարկիչ ոշախն ե, վորտեղ շարունակ ծագում են կապիտալիստական իրավակարգի սաղմերը: Հասարակական փոխանակության մեխանիզմի տերապետումը կոչնչացնի պեկուլյացիան, նոր կապիտալների կուտակումը, նոր կապիտալների ստեղծումը, նոր սեփականատերերի առաջացումը: Նա գյուղական մանր սեփականատերերին կհարկադրի նախ յենթարկվել հասարակական վերահսկողությանը՝ իրենց տնտեսության վրա, ապա անցնել հանրային տնտեսության: Հողագործության բոլոր մթերքների ձիշտ կենսագործված մոնոպոլիան, չերք անկարելի կլինի կողմնակի կերպով վաճառել վոչ մի Ֆունտ հացահատիկ, վոչ մի պարկ գետնախնձոր, միանգամայն աննպատակ կղարձնի ինքնուրույն տնտեսավարումը գյուղում»¹¹⁸):

118) Ն. Ոստինսկի. — Սոցիալիզմի կառուցումը. — էջ 46.

Այստեղ դժվար չէ նկատել—վոր ձախ կոմմունիստները առաջադրել են գյուղի սոցիալիստական վերակառուցման լենինյանին տրամագծորեն հակառակ պլան: Ըստ Լենինի, մանր ապրանք արտադրողների գոյության պայմաններում անխուսափելի շուկայական հարաբերությունները վերջ են գտնում նրանց արտադրական միավորմանը զուգընթաց: Շուկայական հարաբերությունները հետևանք են հասարակապրանքային արտադրության գոյության և կարող են վերացվել վերջինիս վերացմամբ: Իսկ ըստ Ոսսինսկու, բավական է «փակել շուկան», բավական է սահմանել արևտրի պետական մոնոպոլիա և մանր արտադրողներին այլ բան չի ֆուլում անել, բաց յիթե անցնել համայնացված տնտեսության:

Մենք ել չենք խոսում նրա մասին, վոր նմանորինակ հայացքները հանդիսանում են Մարքսիզմի բացահայտ խեղաթյուրումը, վորն ուսուցանում է, վոր ապրանքի բաշխման ապարիզում գոյություն ունեցող հարաբերությունները սոսկ հետևանք են արտադրության մեջ գոյություն ունեցող հարաբերությունների և այդ պատճառով, միմիայն հասարակապրանքային տնտեսության արտադրական վերակառուցմանը զուգընթաց տեղի կունենա շուկայական հարաբերությունների մահացումը:

Մենք չենք շուշափում նաև այն, վոր այդ պլանները կենսագործելիս, սոցիալիստական տնտեսության կառուցման տյգպես մոտենալու փորձը անխուսափելիորեն առաջ կբերի բանվոր զասակարգի խզումը գյուղացիությունից և պրոլետարական դիկտատուրայի կործանումը: Մենք ընթերցողի ուշադրությունն ենք

դարձնում՝ այն հանգամանքի վրա, վոր արտահայտված հայացքները բացահայտորեն նվազեցնում, առ վոչինչ են դարձնում սոցիալիստական շինարարության դժվարությունները մի չերկրում, վորտեղ գերակշռում է մանր բուրժուական արտադրությունը, բացահայտորեն թերագնահատում են մանր բուրժուական տարերքի հալթահարման վտանգն ու դժվարությունները: Այդ կետում կարելի չե նկատել ձախ կոմունիստներին և ձախ եսերների «քաղաքական մտքի զուգադիպումը»: Այդպես, ձախ եսերական տեսաբաններից մեկը՝ Վլադիմիր Տրուտովսկին, յեղնելով այն հանգամանքից, վոր «հողի սոցիալիզացիան»¹¹⁹⁾ «թուլացնում է գյուղացու սեփականատիրական բընադրները և կոլեկտիվիստական սովորույթ է մտցընում հողագործության մեջ»,¹²⁰⁾ պնդում եր, վոր սպառողական կոոպերատիվների զարգացմամբ կարելի չե հասնել սոցիալիզմին:

«Կոոպերատիվի (սպառողական) բնորոշ դերը, գրում եր նա, այն է, վոր նա սկիզբն է առնում վոչ թե արտադրողից այլ սպառողից: Յեվ վորովհետև ամեն մարդ սպառող է, ապա իդյալական սխեմի համաձայն, «սպառողների միությունների միությունը»

¹¹⁹⁾ Վերհիշենք, վոր հողի սոցիալիզացիա ասելով, եսերները հասկանում եյին հողի բունազրավումը կալվածատերերից և նրա հանձնումը գյուղական համայնքների ոգտագործմանը: Վերջիններս հողը բաշխում են անհատական տնտեսություններին: Թե ինչպես այդ թուլացնելու յեր սեփականատիրական բնադրները, Տրուտովսկին չի ասում:

¹²⁰⁾ Վլադիմիր Տրուտովսկի.— Անցողիկ շրջանը.— (կապիտալիզմի և սոցիալիզմի միջև).— Հրատարակ. «Հեղափոխական սոցիալիզմի», Պետրոգրադ. էջ 66.

պետք է կազմակերպել յերկրի ազգաբնակչության անմիջական ամբողջ պահանջը: Այդտեղից բխում է կոոպերատիվների առաջին խնդիրը՝ կազմակերպել կատարելագործված բաշխիչ ապարատ... Իսկ դրանով սեղծվում է հսկայական կաբեվորուքյուն ունեցող մի փաստ, վոչնչանում է մասնավոր առեվտրի ապարատը, վորը առանձնապես վտանգավոր է գյուղական պայմաններում: Առևտրականների դասակարգը կորցնում է իր նշանակությունը, ինչպես և կուլակները, վաշխառուների և ուրիշների խմբակը:»¹²¹⁾

Գյուղատնտեսության վերակառուցման ձախ կոմունիստների և ձախ եսերների պլանները տարբերվում են միմիայն նրանով, վսր առաջինները կողմնակից եյին շուկան բռնի կերպով փակելու, իսկ յերկրորդներն առաջարկում եյին հաղթահարել նրան զարգացնելով սպառողական կոոպերացիան: Ըստ եյուլթյան, թե մեկը և թե մյուսները իդեալացնում եյին գյուղացիական մանր տնտեսությունը և չեյին հասկանում, վոր սոցիալիզմը ստեղծելու համար, կապիտալիզմն արմատախիլ անելու համար բավական չե տիրապետել շուկան, այլ անհրաժեշտ է նաև արտադրական վերակառուցման յենթարկել գյուղացիական մանր, առանձնացած տնտեսությունը և վերածել նրան խոշոր, կոլլեկտիվ արտադրություն: Բնորոշ է, վոր ընկ. Բուխարինը, վորը «Կոմունիստ» ժուրնալում¹⁷²⁾ գետեղել եր Տրուտովսկու այդ աշխատանքի

¹²¹⁾ Ալադիմիլ Ծրուտովսկի. Անցողիկ շրջանը (կապիտալիզմի և սոցիալիզմի միջև): Հրատարակ. «Հեղափոխական սոցիալիզմի» 1918 թ. էջ 86:

¹²²⁾ Տես «Կոմունիստ» ժուրնալ № 1 էջ 20:

գրախոսականը, իր քննադատություն մեջ անտես է արել զբքի հենց այն մասը, վորը վերաբերվում է սոցիալիստական շինարարության ուղիներին և մեթոդներին: Իսկ դա կազմում է անցողիկ շրջանի պրորեկտին նվիրված զբքի հենց կենտրոնական մասը: Բայց Բուխարինը հանդամանորեն—սրամտորեն քննադատում է Տրուտովսկուն՝ նրա մարքսիստական թուլլ գրադիտություն համար, սովորեցնում է նրան թե ինչ բան է հավելյալ արժեքը և սոցիալական հեղափոխությունը. սակայն վոչ մի խոսք չի ասում, չի տարրորդվում սոցիալիզմի կառուցման ձախ կոմունիստական պլանից: Այդ չի վկայում արդոք, վոր ձախ կոմունիստների և ձախ եսերների այդ պլանները նման են իրար:

Յեթե այժմ այդ վիճաբանություններից, վորոնք տեղի եյին ունեցել իշխանությունը գրավելուց անմիջապես հետո հետևող շրջանում, աշխատենք հայտաբերել նրանց հիմնական բովանդակությունը. յեթե աշխատենք գտնել գլխավոր այն անըրպետը, վոր պոլություն ունեւր սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի և դեպի այդ պլանը ցուցաբերված ձախ կոմունիստական մոտեցման միջև, վերանալով պատմականորեն վաղանցուկ և պատահական մոմենտներից, ապա այդ անըրպետը կլինի մանր—բուրժուազլաչի դերը անցողիկ շրջանում տարբեր ձևով հասկանալը: Ձախ կոմունիստներին մեծապես հատուկ եր մանր բուրժուազլաչի գերակշիռ մեծամասնություն գոյությունից առաջացող վտանգի թերազնահատումը, ալդ կողմից կապիտալիզմի վերականգման վտանգի թերազնահատումը:

Չախ կոմմունիստները պետական կապիտալիզմի դեմ ելին հենց այն պատճառով, վոր նրանք չենին հասկանում թե խոշոր կապիտալին վճռական հարված հասցնելուց հետո, գլխավոր թշնամի յե դառնում մանր բուրժուական տարերքը, վորն արգելք է հանդիսանում սահմանելու պրոլետարական հաստատուն հաշվառում և վերահսկողություն:

Այդ պատճառով ել նրանք աչդպես հեշտությունք ձեռք ելին քաշում պուղացիության սոցիալիստական վերակազման պրոբլեմից, միանգամայն անտես առնելով այն վտանգը, վոր կապված է գյուղի գարգացման կապիտալիստական ուղու հետ, ստեղծելով իրենց ուսույթիկ պլանները, վորով գյուղում պետք է համաշնացված անտեսություն ստեղծվի առևտրի արգելմամբ շուկան փակելով:

Այդ տեսակետից հետաքրքիր է նաև Բուխարինի և Լենինի ծրագրային վեճերը կուսակցության 8-րդ համագումարում, վորտեղ Բուխարինը ռադիկալ առաջարկ արեց՝ դուրս գցելու մեր կուսակցության ծրագրից այն ամենը, ինչ վերաբերում է կապիտալիզմի և հասարակ ապրանքային անտեսություն բնութագրությանը. սահմանափակվելով միայն կապիտալիզմի վերջին աստիճանի՝ իմպերիալիզմի նկարագրությունք: Ինչպես ցույց տվեց Լենինը, Բուխարինի այդ առաջարկի տակ թագնված էր միջակի, վորպես անտեսավարման մանր-բուրժուական ձևը կրողի թերագնահատումը, թաղնված էր այն հանգամանքը, վոր նա չի հասկանում իմպերիալիզմի եյուլությունը, վորը սոսկ վերնաշենքն է հին կապիտալիզմի և հասարակ ապրանքային արտադրության վրա, վերնաշենք, վոր գոյություն

ունի արտադրության այդ հետմնաց ձևերի հետ միասին: Իսկ Բուխարինի վերլուծումն—անալիզը վերանում է անտեսություն մինչիմպերիալիստական ձևերի գոյություն փաստից, գործ ունենալով միմիայն իմպերիալիզմի հետ, վորն իբրև թե վերջնականապես վերափոխել է հին կապիտալիզմը: Բուխարինը դրանով իսկ կոծկում է սոցիալիստական շինարարության իրական դժվարությունները:

«Յեթե գոյություն ունենար ամբողջական մի իմպերիալիզմ, վորն ամբողջովին վերափոխած լիներ կապիտալիզմը, ապա մեր խնդիրը հարյուր հազար անգամ ավելի հեշտ կլիներ: Դա առաջ կբերեր այնպիսի մի սիստեմ, չերը ամեն ինչ կենթարկվեր միմիայն ֆինանսական կապիտալին: Այն ժամանակ կարիք կլիներ միմիային հեռացնել վերնախավը և մնացածը հանձնել պրոլետարիատին: Այդ չափազանց հաճելի կլիներ, սակայն իրականում այդ չկա: Իրականություն մեջ գոյություն ունի հին կապիտալիզմի հսկայական ներքնահողը»¹²³):

Յեվ ապա, ուշադրություն նվիրելով սոցիալիստական շինարարության արմատական հարցին՝ դեպի միջակ գյուղացին մեր ունենալիք վերաբերմունքին, Լենինը շարունակում էր.

«Հիրավի, վորտեղից կարող եր առաջանալ միջակ գյուղացին գուտ իմպերիալիստական կապիտալիզմի շրջանում: Չե վոր հույնիսկ հասարակ կապիտալիստական յերկրներում նա գոյություն չունի: Յեթե մենք լուծելու լինենք այդ համարյա միջնադարյան յերևույթն (միջակ գյուղացիությունը) մեր ցուցա-

¹²³) Ե. Լ. Ե. Ե., Հատոր 15, էջ 115:

բերելիք վերաբերմունքի հարցը, առաջնորդվելով բացառապես իմպերիալիզմի և պրոլետարիատի դիկտատուրայի տեսակետով, մենք կշարդենք մեր գլուխը: Իսկ յեթե մենք փոխենք մեր վերաբերմունքը դեպի միջակ գյուղացիությունը, ապա նեղություն կրեք նաև տեսական մասում ասելու, թե վորտեղից առաջ յիկավ նա, ի՞նչ է ներկայացնում նա: Նա մանր ապրանք արտադրող է: Ահա կապիտալիզմի աչն այբուբենը, վորը պետք է ասել, վորովհետև մենք այդ այբուբենը դեռ չենք անցել: Ձեռք քաշել դրանից և ասել, թե՛ «ինչու զբաղվենք այբուբենով, յերբ մենք ուսումնասիրում ենք Ֆինանսական կապիտալը» այդ ծայր աստիճան թեթևամտությունն է»¹²⁴):

Ընկ. Բուխարինը բոլորովին չեր ըմբռում այն, ինչ Լենինը ընդգծում էր շարունակ, աչն է, վոր մանր գյուղացիական տնտեսությունը կապիտալիզմի ամենախոր հիմքն է, վոր այդ հիման վրա կապիտալիզմը միշտ վերածնվում է: Բուխարինը չենթադրում էր, վոր չնայած ապրանքաշրջանառություն թուլատրություն, կապիտալիստական հարաբերությունները չեն կարող ծնվել: «Յեթե մենք այժմ տեսնում ենք, ասում էր նա վիճելով Լենինի հետ 8-րդ համագումարում, — ապրանք արտադրող գյուղացուն կամ խոշոր կապիտալիզմի քայքայման հողի վրա վերածնվող արհեստավորին, ապա ապրանքային հիմն ձևի կազմությունը գեռևս բնավ չպետք է հիմք ծառայի նոր կապիտալիզմի ծագման համար...

Փաստ է, վոր յերևույթները գոյություն ունեն, և նույնիսկ փաստ է, վոր նրանք զարգանում են,

¹²⁴) Լենին, հատոր 16, էջ 116:

բայց փաստ չէ, վոր նրանք կտանեն դեպի կապիտալիստական նոր հարաբերությունների վերածնունդը... այլ արտահայտելով հնի քայքայումը, տանելու յեն դեպի գյուղատնտեսություն սոցիալիստական կազմակերպման նոր ձևերը»: *)

«Անցման շրջանի եկոնոմիկան» իր աշխատություն մեջ Բուխարինը կրկնում է այդ միտքը: «Պրոլետարիատի դիկտատուրան, — գրում է նա — անխուսափելիորեն ուղեկցվում է պալքարով՝ պրոլետարիատի կազմակերպող տենդենցի և գյուղացիություն ապրանքային — անարխիական տենդենցի միջև»:

Ընդգծելով այս խոսքերը, Լենինը լուսանցքում կտրուկ ուղղում է Բուխարինին. «Պետք էր ասել, — կրում է նա Բուխարինի գրքի լուսանցքում, — պրոլետարիատի սոցիալիստական տենդենցի և գյուղացիություն ապրանքային — կապիտալիստական տենդենցի միջև: «Կազմակերպող» բառը դնել այստեղ՝ տեսական անճշտություն է, Կարլ Մարքսից մի քայլ յետ դեպի Լուի Բլանը» **):

Լուի Բլանը, ինչպես հայտնի յե, մանր բուրժուական սոցիալիստ էր, վոր կարծում էր, թե սոցիալիզմը հնարավոր է մանր սեփականատիրական տնտեսություն հիման վրա: Գլխավոր չարիքը Լուի Բլանը տեսնում էր վոչ թե արտադրություն միջոցների մասնավոր սեփականություն գոյություն, այլ շուկայի գոյություն փաստի մեջ: Ըստ Լուի Բլանի բավական է կազմակերպել մանր ապրանքարտադրողներին վաճառ-

*) ՌԿԿ (Բ) 8-րդ համագումարի սղագր. հաշվ. էջ 93—94:

**) Լենինյան ժողովածու, XI, էջ 368.

ուհանման և գնման կոոպերատիվները մեջ և հաղթահարել մասնավոր կապիտալը շրջանառութեան ասպարիզում, վորպեսզի չքանա կապիտալիստական վտանգը: Այսպես եր Լուի Բլանի ուտոպիական (վորովհետև դա անիրագործելի յե, և ռեակցիոն) իդեան, (վորովհետև նա տանում է վոչ թե առաջ՝ դեպի խոշոր մեքենական արտադրութունը, այլ հավերժացնում է յետաձգ, միջնադարյան, մանր սեփականատիրական տրնտեսութունը):

Սոցիալիստական շինարարութ. հարցերի շուրջը ընկ. Բուխարինի և կուսակցութեան միջև ներկայումս տիրող բոլոր տարաձայնութունների հիմքը կազմում է թերագնահատումն այն վտանգի, վոր սպառնում է կապիտալիզմի վերականգնումը, շնորհիվ գյուղացիական տնտեսութեան զարգացման կապիտալիստական ուղու հնարավորութեան: Սակայն մանր-բուրժուական թեքումը ներկայումս արտահայտվում է նոր ձևով:

Հարկավ, սխալ կլիներ աջ թեքման պլատֆորմում ներկայումս փնտռել լիակատար կրկնութունն այն հայացքների, վորոնց հետևում է յին նրա ալթիմյան առաջնորդները 1918 թվականին: Ներկայիս հայացքները շատ բանով նույնիսկ հակադիր են իրենց ձևով հներին: Սակայն, կրկնում ենք, նրանց հիմքը կազմում է նույն այդ մանր բուրժուական մտտեցումը սոցիալիզմի կառուցման հարցերին: 1918 թվականին Բուխարինը և «ձախ կոմունիստները» ամբողջ խմբակը արտացոլում հր պատերազմի ու քայքայումի սարսափներից կատաղած մանր խոզեյնի տրամադրութունը և պահանջում եր ամենառազիկալ ձեռնարկումներ, զրա հետ միասին պայքար մղելով պրոլետարա-

կան հաշվառման և վերահսկողութեան դեմ: Ներկայումս, աջ թեքումը Բուխարինի դեկավարութեամբ, արտացոլում է արդեն հանգստացած այն խոզեյնի տրամադրութունը, վորը պահանջում է վոչնչացնել բոլոր արդեւքները իր անհատական տնտեսութեան զարգացման համար:

Կապիտալիստական վերականգման վտանգի թերագնահատման հողի վրա աճեց կուլակի սոցիալիզմի մեջ ներաճելու տեսութունը, կերտվեց սոցիալիստական շինարարութեան աջ բացահայտ-ուղորդունիստական լրիվ կոնցեպցիան:

Բուխարինը անցման օրհանում մղվող դասակարգային պայքարի մասին

Ընկ. Բուխարինի և կուսակցութեան ժամանակակից տարաձայնութունների կենտրոնն է կազմում անցողիկ շրջանի դասակարգային պայքարի հարցը: Վորմնք են ընկ. Բուխարինի հայեցակետները, այդ հարցի նկատմամբ:

Նա վերցնում է այն հայտնի դրույթները, թե անցողիկ շրջանն ավարտելուց հետո, մենք ունենալու լինք անդասակարգ սոցիալիստական հասարակութուն և զրանից հետևութուն է անում, թե սոցիալիստական շինարարութեան պրոցեսսին ուղեկցելու յե դասակարգային պայքարի աստիճանաբար, բայց մշտական թուլացումը: Բացառվում է սոցիալիստական շինարարութեան վորոշ ետապներում դասակարգային պայքարի սրման հնարավորութունն ու անխուսափելիութունը: Այդ սրումը կարող է լինել միայն մեր սխալ տակտիկայի կամ խորհրդային ու կուսակցական ավարտի թերութեան հետևանքը:

Ընկ. Բուխարինի սխալն այն է, վոր նա կոնկրետը փոխարինում է վերացականով: ¹²⁵⁾

Փոխանակ քննելու այն բոլոր պայմանները, վորով ընթանում է սոցիալիստական շինարարությունը, փոխանակ դասակարգային ուժերի ամբողջ բարդ դասավորությունը և փոփոխությունները քննելու այդ շինարարության պրոցեսում, նա վերցնում է այն վերացական ճշմարտությունը, թե անցողիկ շրջանի վերջում վերացված պիտի լինեն դասակարգերը և հանգում է այն հետևություն, վոր սոցիալիստական շինարարության յուրաքանչյուր քայլին գուզընթաց, թուլանալու, մաքելու չէ դասակարգային պայքարը: Իսկ իրոք, գրության ամբողջ բարդությունը հենց հետևյալն է՝ քանի վոր Նեպոլի վերականգման շրջանում պրոլետարիատը չի կարող քիչ թե շատ լուրջ կերպով նպաստելու գյուղացիական մանր տնտեսության կուլիկտիվ վերակառուցմանը, այն չափով այդ տնտեսությունն անխուսափելիորեն և տարբերայնորեն առաջ էր բերում կապիտալիստական տարրեր: Տնտեսության սոցիալիստական ձևերի ամրացման հետ միասին, բացարձակ կերպով աճում էին նաև գյուղի կուլակային կապիտալիստական տարրերը:

Նկատի առնելով այդ հանգամանքը, Լենինը կուսակցության 11-րդ համագումարում իր արտասանած լեզրափակման ճառում ասել էր, վոր այստեղ

¹²⁵⁾ Լենինն այդպիսի սխալ նկատել է նաև 1918 թվականին, ձախ կոմունիստների մոտ: «Ամեն մի վերացական ճշմարտություն, մատնանշում էր նա ձախ կոմունիստներին, յեթե դուք գործադրեք նրան առանց վտրեկ վերլուծման, վերածվում է ֆրաշի»:

մենք պետք է «վերջին և վճռական պայքար մղենք վոչ թե միջուգային կապիտալիզմի դեմ, — այնտեղ դեռ շատ «վերջին և վճռական կռիվներ» են լինելու, — վոչ, այլ ուսական կապիտալիզմի դեմ, այն բանի դեմ, վորն աճում է գյուղացիական մանր տնտեսությունից, նրա դեմ, վորին աջակցում է նա»:

Այստեղ ահա, ասում էր Լենինը, մոտ ապագայում տեղի չեն ունենալու մի մարտ, վորի ժամկետը դժվար է ճշտել վորոշել: ¹²⁶⁾

Միանգամայն պարզ է, վոր մենք թեև կոնկրետ չենք ներկայումս այդ վերջին և վճռական մարտի շրջանը:

Սակայն ինչպե՞ս է բացատրում ընկ. Բուխարինը դասակարգային պայքարի ներկայումս սկսված սրումը: Դուրս է գալիս, վոր «մեր տակտիկան միանգամայն իդեալական չի չեղել»:

Սակայն, հարց է ծագում, թե ի՞նչ տեսակետից բոլորովին իդեալական չի չեղել մեր տակտիկան: Վճչ արդյոք կուլակի տեսակետից, վորի դեմ ուղղված է մեր տնտեսական քաղաքականության սուր կողմը:

Բուխարին ասում է, վոր կուլակային վտանգի, մանր գյուղացիական տնտեսությունից կապիտալիզմի զարգանալու մասին չեղած խոսակցությունները ճիշտ չեն իբր թե նրա համար, վոր ճնշող մեծամասնությամբ մեր գյուղացիությունը ունի թղուկ տնտեսություններ, վորոնցից մինչև կապիտալիստական տնտեսությունը շատ յերկար ճանապարհ է: Յեվ Լենինը նույնիսկ իր վերջին հոդվածներում «կուլակի հարցը չի դրել»:

¹²⁶⁾ Լենինի. — հատոր 18, մասն 2-րդ, էջ 33—34

Ընկ. Բուխարինի այս դատողությունները խիստ հիշեցնում են բուրժուական պրոֆեսսոր Կոնդրատևի գաղափարները: Ամեն կերպ պաշտպանելով կուլակի տնտեսությունը, ազատ դարգացման հնարավորություն տալը, Կոնդրատևը փորձում էր հավատացնել, վոր կուլակի աճումը բնավ սարսափելի չէ սոցիալիզմի համար, վորովհետև մեր կուլակը՝ համեմատած ամերիկյան խոշոր ֆերմերներին— թղուկ է, արհամարհելի մեծություն: Նման չերգեր մարքսիստները լսել են դեռ անցյալ դարում «ժողովրդի բարեկամների»՝ նարոզնիկները բերանից:

«ժողովրդի բարեկամները»,— պատասխանում էր նրանց Լենինը,— չերբեք չեն կարող ըմբռնել, վոր գյուղացիական արհեստագործության մեջ՝ նրա ընդհանուր վողբալի վիճակով, նահապետական տեխնիկայով և փոքրաթիվ վարձու բանվորներով՝ կարող եկապիսալիզմ լինել: Նրանք չերբեք ընդունակ չեն ըմբռնելու, վոր կապիտալիզմը— դա վորոշ հարաբերություն է մարդկանց միջև, հարաբերություններ, վորովոնք մնում են նույնը՝ համեմատելի կատեգորիաների թե մեծ և թե՛ փոքր աստիճանի դարգացման պայմաններում: Բուրժուական տնտեսագետները չերբեք չկարողացան հասկանալ այս...*)»:

Բայց, ցավոք սրտի, այժմ այդ չի կարող կամ չի ուզում հասկանալ ընկ. Բուխարինը, հենց դրանով սայթաքելով դեպի բուրժուական տնտեսագետների գոեհիկ գաղափարները:

*) Լենին, հատոր I՝ էջ 128.

Կուլակի՝ սոցիալիզմի մեջ ներառելու տեսությունը

Ընկ. Բուխարինի չերկրորդ հիմնական սխալն այն է, վոր նա պաշտպանում է սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներաճման տեսությունը: Այդ տեսությունը Բուխարինը ստեղծել է 1925 թվականին: Այդ ժամանակից ի վեր, այն գիրքը, վորի մեջ ամենից ավելի լրիվ կերպով ձևավորված էր այդ հակալենինյան տեսությունը՝ «Սոցիալիզմի ուղին և բանվոր-գյուղացիական դաշինքը» գիրքը, առանց փոփոխությունների վերահրատարակվել է է. 1926 և 1927 թվականներին: 1929 թվականին ընկ. Բուխարինը հայտարարեց, վոր նա վոչ մի սխալ չի գտնում իր այդ գրքում: Հետագայում, ընկ. Բուխարինի քաղաքական համախոհները պաշտպանելով և քարոզելով այդ լիբերալ տեսությունը ընդհատակյա մի թուուցիկի մեջ, վերագրեցին այն... Լենինին: Ընդհանուր առմամբ. այստեղ մենք գործ ունենք վոչ թե պատահական սխալի հետ, այլ հայացքների ձևավորված սիստեմի հետ:

Սակայն ի՞նչ է ասում այդ տեսությունը:

Պրոլետարիատը տիրապետում է տնտեսական, հրամայական բարձունքների սիստեմին: Նրա ձեռքում գտնվում է սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը: Մեքենայական խոշոր ինդուստրիան վճռական դեր է խաղում յերկրի եկոնոմիկայի ասպարիզում: Ուրեմն, գյուղատնտեսության զարգացումը վերջին հաշիվով, պետք է անխուսափելիորեն ընթանա, սոցիալիստական ուղիով, գյուղատնտեսական արտադրական նարաբերությունները պետք է վերակազմվեն հարևան արդյունաբերության արտադրական հարաբերություններին:

Բուրժուական հասարակութեան մեջ, կապիտալիստական արդյունաբերութիւնը, ներգործելով մանր բուրժուական գյուղի վրա, առաջացնում էր հասարակ ապրանքային տնտեսութեան քայքայումը, հասարակ ապրանք արտադրողների դասակարգի շերտավորում, բաժանելով նրանց բուրժուազիայի և պրոլետարիատի: Գյուղում նույնպէս ստեղծվում է ամրանում էր կապիտալիստական տնտեսութիւնը: Գյուղը ներառում էր կապիտալիզմի մեջ: Անցողիկ շրջանի հասարակութեան մեջ, սոցիալիստական արդյունաբերութեան ներգործումը գյուղատնտեսութեան վրա, առաջացնում է արդեն հակառակ արդյունքներ: Գյուղը ներառում է սոցիալիզմի մեջ:

Ինչպէս անցողիկ շրջանի դասակարգային պայքարի նկատմամբ Բուխարինի ունեցած հայացքների մեջ, վորոնք քննել էինք վերև, այստեղ ևս կա ճշմարտութեան հատիկ: Ճիշտ է, ի հարկէ, ընդհանուր այդ դրութիւնը, թէ քաղաքը իր հետևից տանում է գյուղը և սոցիալիստական քաղաքը տանում է գյուղը հակառակ կողմը՝ կապիտալիստականի հետ համեմատած: Սակայն, ընկ. Բուխարինի այդ ընդհանուր գըրույթները չի կարողանում կոնկրետացնել և համաձայնեցնել տարբեր այն յեղանակներին, ուղիներին յեղանակներին, վորով ներգործում են գյուղի վրա կապիտալիստական և սոցիալիստական արդյունաբերութիւնը:

Իսկ եյականը հենց այդ է:

Այդ պատճառով, Բուխարինը լենինիզմի հիմնական գրույթները անձանաչելի չափով աղավաղել և խեղաթուրել է, սանրել և լիբերալ ձևով: Կուլակի սո-

ցիալիզմի մեջ ներառման բուխարինյան տեսութիւնը աչքաթող է անում այն պարզ փաստը, վոր մանր գյուղացիական տնտեսութիւնը մանր-սեփականատիրական, մանր-բուրժուական տնտեսութիւն է: Այդ տնտեսութեան եյութեան մեջ իսկ թաղնական են կապիտալիստական տենդենցներ. կապիտալիզմի պայմաններում նա կամ քայքայվում է կամ վերածվում է կապիտալիստականի:

«Մտնր տնտեսութեան զարգացումը, գրում էր Լենինը, մանր բուրժուական զարգացում է, կապիտալիստական զարգացում է—այդ անվիճելի ճշմարտութիւն է, քաղաքական տնտեսութեան այբբենական ճշմարտութիւնը»¹²⁸):

Այդ պատճառով, յիթեմանր տնտեսութեան վերաճումը կապիտալիստականի տեղի չէ ունեցել, այսպէս ասած, տարեբայնորեն, շնորհիվ նրանում պարփակված տենդենցների, և կապիտալիստական խոշոր արդյունաբերական ներգործութիւնն այն էր, վոր նա արագացնում էր այդ զարգացումը, ապանրա վերաճումը սոցիալիստական տնտեսութեան հնարավոր է միայն այն պայմարի հիման վրա, վոր գոյութիւն ունի սոցիալիստական հրամայական բարձրունքների և մանր-բուրժուական տնտեսութեան զարգացման կապիտալիստական տենդենցների միջև: Նույնիսկ մանր բուրժուական միջակ տնտեսութեան ներառումը սոցիալիզմի մեջ վոչ թէ սահնակներով ներս սլանալ է, ինչպէս նկարագրում էր յերբեմն ընկ. Բուխարինը, այլ յերկարատե մի պրոցեսս, վոր կատարվում է կա-

) Լենին. — Կատոր 18, մասն 1-ին, էջ 190.

պիտալիզմի մանր տնտեսութիւննից աճող տարրերի հաղթահարման ասպարիզում:

«Ռուսաստանի եկոնոմիկան պրոլետարիատի դիկտատուրայի եպոխտում, — գրում է Լենինը — հանդիսանում է կոմմունիստականորեն միացած՝ միասնական մասշտաբով հսկայական աշխատանքի պետութիւն — պայքարի առաջին քայլերը՝ ընդդեմ մանր ապրանքային արտադրութիւնն և պառնպանված, ինչպես և նրա հիման վրա վերածնվող կապիտալիզմի» *):

Փոխադրելով այդ բոլոր դասակարգային հարաբերութիւնները լեզվի, պետք է ասել, վոր գյուղատնտեսութիւնն կոլլեկտիվացումը, ինչպես գրում է Լենինը, չենթադրում է «սիստեմատիկ ղեկավար Գեդդու-ճուքուն (այդ էլ պայքար է, սակայն հատուկ տեսակի պայքար, վորոշ, ճիշտ է, միանգամայն տարբեր դիմադրութիւն հաղթահարում և միանգամայն տարբեր տեսակի հաղթահարում) բոլոր աշխատավորների վրա, բացի պրոլետարներից»:¹²⁹⁾

Սակայն, յետեւի կարելի ասել խոսել մանր գյուղացիական տնտեսութիւնն սոցիալիզմի մեջ սահնակով ներս սլանալու մասին, ապա առավել ևս անհեթեթ և արտառոց մի բան է, խոսել կուլակային կապիտալիստական տնտեսութիւնների սոցիալիզմի մեջ խաղաղ ներածման մասին: Չէ՞ վոր այստեղ մենք գործ ունենք սկզբունքորեն չերկու տարբեր հասարակական-տնտեսական կարգերի հետ, վորոնց կրողներն են հանդիսանում հակադիր դասակարգեր՝ պրոլետարիատը և բուրժուազիան: Այդ պատճառով, իրականում, տեղի

*) Լենին, հատ. 16. էջ 348.

129) Լենին. — հատոր 3-րդ, էջ 449.

յե ունենում վոչ թե կապիտալիզմի ներածումը սոցիալիզմի մեջ, այլ համառ պայքար սոցիալիզմի և կապիտալիզմի միջև և կապիտալիզմի դուրս մղումը: Պետք է ուղղակի ասել, թե անանց վիճ է ընկած լենինյան մեթոդով, անհաշտ պայքարի հիման վրա, կապիտալիզմը տնտեսութիւնն ասպարիզից դուրս մղելու, գյուղացիական մանր տնտեսութիւննից աճող կապիտալիզմի դեմ վերջին և վճռական պայքարի անխուսափելիութիւնն լենինյան նախատեսման է բուխարինյան այն տեսութիւնն միջև, թե կուլակը ներածելու յե սոցիալիզմի մեջ՝ իր և պրոլետարիատի խաղաղ համակեցութիւնն ու փոխադարձ ծառայութիւնները հիման վրա:

Ընկեր Բուխարինը հայտարարում է, վոր ինքը դիալեկտիկաբար է մոտենում դասակարգային պայքարի հարցերին, վոր յետեւ մինչև 1921 թվականի շրջանը նրա համար բնորոշ է չեղել ձևական արոցկիստական մոտեցումը, ապա այժմ այդ վերացել է: Սակայն, ընկ. Բուխարինը չափազանց պրիմիտիվ հասկացողութիւնն ունի դիալեկտիկայի մասին: Նրա համար դիալեկտիկան հանգում է այն դատողութիւնն, թե կապիտալիզմի ժամանակ այսպես է, իսկ մեզ մոտ ընդհակառակը: Բուրժուական հասարակութիւնն մեջ մանր տնտեսութիւնը ներածում երկապիտալիզմի մեջ, իսկ մեզ մոտ սոցիալիզմի մեջ: Սակայն, դիալեկտիկան այդպես հասկանալը շատ քիչ նմանութիւնն ունի լենինիզմի հետ: Լենինը մեզ սովորեցրել է քննել և ուսումնասիրել յուրաքանչյուր յերևուցթ, նրա ամբողջ կոնկրետութիւնը, կապված այլ յերևուցթների հետ, նա սովորեցրել է, վոր ճշմարտութիւնը կոնկրետ է, նա ամենից

ավելի պայքար էր մղում սին ընդհանրացումների և ձևական այնպիսի յեզրակացութունների դեմ, վորոնք չեն հիմնված բազմակողմանի ուսումնասիրության վրա հուլակը և՛ կապիտալիզմի ժամանակ, և՛ անցողիկ հասարակության մեջ պրոլետարիատի թշնամին և սոցիալիզմի թշնամին. և խոսքը կարող է վերաբերվել միմիայն նրա դեմ ուղղված պայքարի ձևերի փոխելու մասին, և վոչ թե պայքարը դադարեցնելու մասին:

Դիալեկտիկայի այն մեկնաբանումը, վոր տալիս է Բուխարինը, միանգամայն հար և նման է Սուխառովի մեկնաբանությանը: 1929 թվականին հանդես գալով ընկ. Կրիցմանի «Դյուղացիական ծխի անալիզը» գեկուցման առթիվ, Սուխառովը հայտարարել էր.

«Այժմ, հասարակական բոլոր յերևույթները շուտ են յեկել 180 աստիճանով: Կապիտալիստական պետության փոխարեն հրապարակ յելավ բանվորների պետութունը և դրան համապատասխան մի ամբողջ շարք յերևույթներ, անհրաժեշտ է քննել այլ կերպ, ինչ վոր լավ էր, դարձավ վատ, ինչ վոր վրասակար էր—դարձավ արդյունավետ»: ¹³⁰⁾

Այդպիսի, իբրև թե դիալեկտիկայի տեսակետից, դուրս է գալիս, վոր յեթե առաջ կուլակը պրոլետարիատի թշնամի յե չեղել, ապա այժմ նա դառնում է նրա բարեկամը: Հենց այդ հետևութունն էր արել

¹³⁰⁾ Տես «Ազրարային ճակատում» ժուրնալը, 1929 թիվ, № 7, էջ 101: Զուր չէ, վոր Լենինը գրել է, թե Սուխառովը չի հասկացել այն, ինչ վոր վճռական դեր է կատարում մարքսիզմի մեջ՝ նրա հեղափոխական դիալեկտիկան: Տես՝ Լենին «Մեր հեղափոխության մասին», հատոր 18, մասն 2-րդ, հին հրատարակութուն:

Սուխառովը, սկսելով պաշտպանել սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներաճման տեսութունը:

Իսկ Լենինը, միշտ սովորեցրել է կուսակցությանը, թե դասակարգային հակասութունները պրոլետարիատի և կուլակների միջև անհաշտելի յեն: «Կուլակը, գրում էր նա, — Սորհրդային Իշխանության կատաղի թշնամին է՝ կուլակին կարելի յե՝ և հեշտությամբ կարելի յե, հաշտեցնել կալվածատիրոջ հետ, ցարի և տերտերի հետ, յեթե ուզնիսկ նրանք գժտվել են, սակայն բանվոր դասակարգի հետ—յերբեք»: ¹³¹⁾

Բուխարինը, Սուխառովի հետ միասին, սովորեցնում է պրոլետարիատի և կուլակների համերաշխության, շահերի ընդհանրության մասին: ¹³²⁾

Կուլակը, փող կուտակելով, մտցնելու յե մեր վարկային ընկերութունները վորովհետև նա «ուրիշ ճար չունի», իսկ փողը խորհրդային բանկը մտցնելով կուլակը հաստատապես շահագրգռված է լինում, վոր պրոլետարական դիկտատուրայի իրավակարգը ամուր լինի, դառնում է նրա ջերմ պաշտպանը:

«Յենթադրենք, գրում է Բուխարինը, թե մեր առաջն է մի ունևոր գյուղացի, վորն ունի ավելորդ փող, վորը ցանկանում է կուտակել: Ու՞ր է մտցնում նա այդ փողը: Սպառողական դրամարկղը, վորը կապված է

¹³¹⁾ Լենին. — հատոր 20, մասն 2-րդ, էջ 256.

¹³²⁾ Զուր չէ, վոր Սուխառովը, շոշափելով աջ թեքումը, հայտարարում է. «Առանց այլևայլության և ուղղակի խոսելով, յես դրան համամիտ եմ Աջ ուղիներսներին յես համարում եմ աջ և նրանց գժած ուղղին համարում եմ ստեղծված դրութունից Դուրս գալու միակ հնարավոր միջոցը» Տես «Պրավդա» № 231, 1929 թվականի, հոկտեմբերի 6.

մեր պետական բանկերի հետ: Այդպիսով գյուղացին շահագրգռված է, վոր մեր պետական ռեժիմը հաստատուն լինի: Յեւ շահագրգռված է խորապես: Իսկ չեթե այդ բանկը, վարկային կազմակերպութեան միջոցով, նրան տալիս է ավելի եժան վարկ, քան տալիս էին թագավորի ժամանակ, ապա նրա շահագրգռվածութունը ավելի է մեծանում է»:

Սոցիալիզմի համար սարսափելի է, արդյոք, այդ դեպքում կապիտալիստական տարրերի աճումը: Վոչ, սարսափելի է: Դեռ ավելին, Բուխարինը սովորեցնում է, վոր կուլակների աճումը և նրանց հարստացումը անհրաժեշտ է մեզ համար: Մենք վորոշ միջոցներ կըստանանք կուլակից հարկերի միջոցով և այդ միջոցներով կոգնենք չքավորին:

«Վերջենք մեզ համար ամենից ավելի անձեռնտու մի որինակ: Կուլակին, վորը շահագործում է իր բաժարակներին, կուտակում է, ստանում է հավելյալ արժեք, մտցնում է ավանդներ: Ո՞ւր է մտցնում նա այդ ավանդները: Վերջին հաշիով, մեր բանկերը: Այդ դեպքում, վորեն ոգուտ ստանում ենք մենք: Ստանում ենք, վորովհետև զրանով իսկ մենք ունենում ենք լըրացուցիչ միջոցներ, վորոնց աճումը մեզ հնարավորութուն է տալիս վարկավորելու միջակային կոոպերացիան և գյուղացիական ամբողջ մասսային տանել դեպի տնտեսական վերելքը: Կուլակի ավանդը մենք ոգտագործում ենք նրա համար, վոր ոժանդակենք գյուղացիական մյուս խավերին»:

«Մենք նրան ոգնում ենք, սակայն նա յեւ մեզ է ոգնում: Վերջ ի վերջո, գուցե կուլակի թոռն էլ շընորհակալութուն հայտնի մեզ, վոր մենք այդպես վարվեցինք նրա հետ:

ԼԵՆԻՆԻ ԼԵՎ ԲՈՒԽԱՐԻՆԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԱԿԻՑ ՎՂԱՏՆԵՐԸ

Ընկեր Բուխարինը նոր աստիճանի վրա յե դընում ձախ կոմունիստների սխալները, պատկերացնելով գործը այնպես, թե մենք սոցիալիզմը կստեղծենք շրջանառութեան, ապրանքա-շրջանառութեան պրոցեսաների կազմակերպմամբ: Ներկայիս աջ ուլունիստների և ձախ կոմունիստների ամբողջ տարբերութունն այդ հարցում այն է, վոր այժմ ընկ. Բուխարինը հնարավոր է համարում շուկայի տարերքը հաղթահարել վոչ թե վարչական արգելքով, այլ ազգաբնակչության ներառյալ նաև բոլոր մանր ապրանք արտադրողներին, առևտրական կոոպերացման միջոցով:

«Այդտեղ (այսինքն գյուղատնտեսութեան մեջ Ս. Պ.), մենք սոցիալիզմին կհասնենք, գրում է այժմ ընկ. Բուխարինը, ԵՐՁԱՆԱՌՈՒՅՈՒՄԻ ԱՐՈՑԵԱՍԻ միջոցով և վոչ թե անմիջականորեն արտադրութեան պրոցեսի միջոցով: Մենք կհասնենք այստեղ կոոպերացիայի միջոցով», այսինքն շրջանառութեան ասպարիզի կոոպերացիայի, առևտրական կոոպերացիայի միջոցով:

Մի այլ տեղում ընկ. Բուխարինը պնդում է.

«Քանի ավելի գյուղացիական տնտեսութունը շրջանառութեան պրոցեսի միջոցով կներգրավի սոցիալիստական շրջանակի մեջ, այնքան ավելի կջնջվեն դասակարգային սահմանները, վորոնք կլուծվեն անդասակարգ հասարակութեան մեջ»:

Բուխարինի այդ պնդումները համաձայն, դասակարգերը վոչնչանալու յին, յերբ մենք առևտրական կոոպերացիայի միջոցով ընդգրկենք բոլոր ինքնուրույն

ապրանքաարտադրողներին: Այդ մանր-բուրժուական կոմ-նարոզնիկական գաղափարը վոչ մի ընդհանուր կետ չունի Լենինի ուսմունքի հետ, վորը ընդգծում եր, վոր «կոոպերատիվ քաղաքականութունը, ¹³³⁾ հաշոդության դեպքում, կառաջացնի մասն տնտեսության վերելք և կդուրացնի նրա անցումը խոտր արտադրության՝ կամավոր միավորման հիմունքներով»: ¹³⁴⁾ Մանր տերերի կոոպերացիայի սոցիալիզմին անցնելը, գրում եր նույն տեղում Լենինը, մի անցում է մանր արտադրությանից դեպի խոտրը, այսինքն ավելի բարդ, սակայն ընդունակ՝ արմատախիլ անելու հին, մինչ-սոցիալիստական, նույնիսկ մինչ-կապիտալիստական հարաբերությունների ավելի խորն, ավելի կենսունակ արմատները... ¹³⁵⁾

Իսկ ընկ. Բուխարինի կոնցեպցիայից դուրս ե ընկնում այդ ավելի դժվարին անցումը, նրա կարծիքով, սոցիալիզմը ստեղծելու համար, բավական է հանրայնացնել ապրանքա-շրջանառությունը: Սակայն, դա մանր բուրժուական ուտոպիա չէ, վորովհետև առևտրական կոոպերացիայի կողմից ազգաբնակչության նույնիսկ լիակատար և գլխովին ընդգրկումը, չի վոչնչացնի գյուղացու և բանվորի դասակարգային տարբերությունը, չի վերացնի մանր առանձնացած արտադրության այն հողը, վորի վրա անխուսափելիորեն աճում են շահագործումը և կապիտալիստական հարաբերությունները:

¹³³⁾ Ներկա դեպքում, ինչպես յերևում է կոնտեքստից, Լենինի խոսքը վերաբերվում է, հատկապես առևտրական կոոպերացիային:

¹³⁴⁾ Լենին. — հատոր 18, մասն 1-ին, էջ 220:

¹³⁵⁾ Լենին. — հատոր 18, մասն 1-ին:

Իր կոոպերատիվային պլանը Բուխարինը փորձում է վերագրել Լենինին, պնդելով, թե վերջինս ուներ կոոպերատիվային յերկու պլան առաջինը՝ կազմված նեպին անցնելու շրջանում, 1921 թ. և մյուսը, — բոլորովին տարբեր, նրա կողմից առաջադրված արդեն 1923 թ.: Լենինի յերկրորդ պլանը հենց՝ սոցիալիզմին անցնելու պլանն եր՝ շրջանառության պրոցեսսների համայնացման հիման վրա:

Ճիշտ է, արդյոք, վոր Լենինն ուներ յերկու պլան: Մեզ թվում է, վոր սա բացարձակապես սխալ է, Լենինը 1923 թ. կոոպերացիայի մասին գրած հոդվածը անցման շրջանում կոոպերացիայի մասին առաջներում նրա բոլոր գրածներին հակադրելու փորձը, բոլորովին անհիմն և անճիշտ է: Պատուելով Լենինյան կոոպերատիվ պլանը, առասպել հնարելով ինչվոր բոլորովին նոր պլանի մասին՝ 1923 թ., ընկ. Բուխարինը դրա յերևույթի տակ փորձում եր (գուցե անգիտակցաբար) մեջտեղ քաշի իր կոոպերատիվային պլանը, վորը, ինչպես կտեսնենք ներքևում, ընդհանուր շատ քիչ բան ունի Լենինի դմի հետ:

Հիրավի, Լենինը միշտ ընդգծում եր, վոր կոոպերացիայի խնդիրը անցման շրջանի պայմաններում հանդիսանում է վոչ միայն գյուղացիների միացումը, վորպես վաճառողների և գնողների. վոչ միայն նրանց միացումը շրջանառության ասպարիզում, այլ և հողագործության մեջ խոշոր կոլեկտիվ տնտեսության ըստեղծումը: Յեվ «Պարենտուրը մասին» գրքույկում Լենինը նույնպես նշում եր, վոր գյուղացիության սոցիալիստական վերափոխումը առաջադրում է առանձին գյուղացիական տնտեսությունների վերակառու-

ցումը խոշոր մեքենայական տեխնիկայի հիման վրա, առաջադրում է գյուղացիութեան բազմակողմանի արտադրական կողմնակալացումը: Գյուղի սոցիալիստական այս վերակառուցումը հնարավոր է միայն պրոլետարիատի և նրա տրամադրութեան տակ գտնվող ծանր ինդուստրիայի ղեկավար ազդեցութեամբ:

Իսկ վորտեղից պետք էր սկսել գյուղի սոցիալիստական վերակառուցումը: Պարզ է, վոր ամենից առաջ հարկավոր էր վերականգնել խախտված տնտեսական կապը քաղաքի և գյուղի միջև: Կապի այս վերականգնումը հնարավոր է միայն ծավալուն ապրանքաշրջանառութեան հիման վրա,

«Առևտուրը—գրում է Լենինը—միակ հնարավոր տնտեսական կապն է տասնյակ միլիոնավոր մանր հողագործների և խոշոր արդյունաբերութեան միջև, չեթե... չեքք այդ հողագործների կողքին չկա փառավոր խոշոր մեքենայական ինդուստրիա՝ ելեկտրական թելերի ցանցով, մի ինդուստրիա, վոր ընդունակ է մատակարարել մանր հողագործներին լավագույն արտադրանքներ մեծ քանակությամբ, ավելի արագ և էժան, քան առաջ»*):

Այսպիսով այն ժամանակ առաջին պլանի վրա միանգամայն բնականորեն դրվում էր ապրանքաշրջանառութեան կոոպերացումը: Նշելով այս, վորպես հերթական խնդիր, ասելով թե առևտուրը հերթական ողակ է, վորից պետք է կանչել, առաջ քաշելու համար սոցիալիստական շինարարութեան ամբողջ շրջութան, Լենինը լիովին վորոշակի տեսնում էր, վոր

*) Լենին, հատ, 18, մաս 1, էջ 380:

շրջանառութեան կոոպերացումը լոկ առաջին քայլն է գյուղի սոցիալիստական վերակառուցման ուղու վրա, վոր հաջորդ անհրաժեշտ քայլն է արտադրութեան կոոպերացումը: «Կոոպերացման քաղաքականութեանը»--գրում էր Լենինը հաջորդութեան դեպքում, մեզ կտա մանր տնտեսութեան վերելք և կհեռացնի նրա անցումը դեպի խոշոր արտադրության կամավոր միավորման հիման վրա»**):

Այն կոոպերատիվային պլանը, վոր ստեղծել է Լենինը նեպին անցնելիս, հիմք է կազմում լենինյան ուսմունքին՝ գյուղի սոցիալիստական շինարարութեան մասին և բնավ չի փոխվել Լենինի կողմից: Ի՞նչ առիթ տվեց ընկ. Բուխարինին խոսել կոոպերատիվային չերկու պլանների մասին: Բուխարինը վերցնում է Լենինի դիտողութունները «Պարենատուրքի մասին» բրոշյուրում, վոր կոոպերացիան պետկապիտալիզմ է. վերցնում է նրա խոսքերը «Կոոպերացիայի մասին» հոդվածից, վոր մեզ համար այժմ կոոպերացիայի պարզ աճումը համանման է սոցիալիզմի աճման, և պնդում է, թե Լենինն ունի կոոպերատիվային չերկու պլան: Այնինչ Լենինի հիշյալ մտքերը վկայում են միայն, վոր յեթե 1921 թ. պայմաններում մանր ապրանքարտադրողների կոոպերացիան, կապվելով տնտեսութեան պետական—կապիտալիստական ձևերի հետ (իսկ այդ ժամանակ կարծվում էր, վոր դրանք սկզբներում կլինեն փերակղող ձևեր), ինքն ել կլինիր պետկապիտալիզմի տարբեր տեսակներից մեկը, ապա 1923 թ., յերբ

*) Տվյալ դեպքում, ինչպես յերևում է կոնտեքստից, Լենինը խոսում է հենց առևտրական կոոպերացիայի մասին:

***) Լենին, հատար 18, մաս 1, էջ 220.

սոցիալիստական արդյունաբերութիւնը սկսել երկանգնել վտառի վրա և չերբ պետական կապիտալիզմի պլանը, վորպես միջին ողակ դեպի սոցիալիզմը, մի կողմն եր թողնված,— Լենինը ամբողջ ուժով շեշտում եր, վոր կոոպերացիայի աճումը համանման ե սոցիալիզմի աճման: Ուրիշ խոսքով, նրանք հատկանշում են միայն կոոպերացիայի սոցիալական «դեմքի» զանազանութիւնը 1921 և 1923 թ.) վոր բացատրվում ե կոնկրետ կացութիւն տարբերութիւնը. նրանք ցույց են տալիս, վոր մեզ մոտ կոնցեսիոն կապիտալիզարգացման դեպքում, սկզբում առևտրական կոոպերացիան, կապվելով պետկապիտալիզմի հետ, ինքը կլինէր վերջինից տեսակներից մեկը: Աւիթ տալիս ե սա արեւոյք ասելու, թե Լենինը յերկու կոոպերատիվ պլան ունի: Վոչ, վորովհետև լենինյան հիմնական դրութիւնը սպառողա-վաճառահանման կոոպերացիայի զարգացման վերաբերմամբ և հաջորդական անցումը նրանից դեպի գյուղացիութիւն արտադրական կոոպերացումը, դեպի խոշոր կոլեկտիվ տնտեսութիւն ստեղծումը հողագործութիւն մեջ, ժամանակակից մեքենայական տեխնիկայի հիման վրա. այս դրութիւնը յերբեք չի փոխվել Լենինի կողմից:

Ուրեմն ինչու համար ընկ. Բուխարինը խոսում ե Լենինի յերկու կոոպերատիվային պլանների մասին: Նրա համար, վորպեսզի Լենինի այսպես կոչված յերկրորդ պլանի տեղ առաջ քաշի իր՝ բուխարինյան կոոպերատիվ պլանը: Ուրեմն, չեթե կարելի յե խոսել կոոպերատիվային յերկու պլանների մասին, ապա վոչ թե Լենինի յերկու պլանների, այլ մեկ Լենինի, մյուսը Բուխարինի պլանի մասին: Սրանում համոզվելու

համար տեսնենք, թե ինչպես Բուխարինը հիմնավորում ե իր միտքը՝ Լենինի կոոպերատիվային յերկու պլանների գոյութիւն մասին.

«Յերբ մենք անցանք նոր տնտեսական քաղաքականութիւն ընկ. Լենինը առաջադրեց մի ռազմագիտական պլան, իսկ չերբ նա գրեց իր հողվածը կոոպերացիայի մասին, այսինքն, թողեց մեզ վորոշ կտակ տնտեսական քաղաքականութիւն հիմքերի բնագավառում, նա առաջադրեց մի այլ ռազմագիտական պլան:

Առաջին ռազմագիտական պլանը միանգամայն պարզ ե. մենք պետք ե հասնենք սոցիալիզմին, այսինքն՝ պլանային տնտեսութիւն,— սա մեր վերջնական նպատակն ե: Պետք ե անել մի շարք զիջումներ գյուղացիական տնտեսութիւն: Բայց մանր բուրժուական տարրերը մեր գլխավոր թշնամին ե, և պետք ե հաղթահարենք նրան՝ դաշնակցած խոշոր կոնցեսիոն կապիտալի, պետական կապիտալիզմի հետ: Կոոպերացիան պետական կապիտալիզմի կարևոր ողակն ե. կոոպերացիան դա այնպիսի մի ողակ ե, վոր առաջին հերթին ոգնում ե կապիտալիստական տարրերին գյուղի կուլտային տարրերին, բայց մենք այդ ողակը զօրում ենք մեր պետական կապիտալիզմի սիստեմին և այդպիսով մենք ի վիճակի կլինենք՝ բոլոր կազմած կապիտալիստական այդ տարրերի հետ, հաղթահարել մանր բուրժուական տարրերը, վոր ծանրանում ե մեզ վրա:

Վ. Իլիչի վերջին հողվածում «Կոոպերացիայի մասին», մենք տեսնում ենք հարցի տարբեր դրում: Այս հողվածում չի խոսվում այն մասին, թե կոոպե-

բացիան պետական կապիտալիզմի՝ ողակ է, այլ աս-
ված է, վոր կոոպերատիվիային հասարակակարգը մեր
պայմաններում սոցիալիզմ է:

Մենք բլոկ կնքեցինք գյուղացիութեան հետ:
Գյուղացիութեանը, կազմակերպված կոոպերացիայի
մեջ՝ պլյուս մեր արդյունաբերութեանը (սոցիալիստա-
կան), հանդես է գալիս խոշոր կապիտալի և ընդհան-
րապես մասնավոր կապիտալի մնացորդների դեմ): *

Բավական է մի քիչ մտածել բերված ցիտատի
վրա, հասկանալու համար, թե Բուխարինը ինչու մն
տեսնում 1921 թ. պլանի տարբերութեանը 1923 թ.
պլանից:

1921 թ., չեբ մեր արդյունաբերութեանը թույլ
էր, ալ ժամանակ մանր գյուղացիական տնտեսու-
թեան մանր բուրժուական զարգացումը առաջացնում
էր կապիտալիզմի տարրերի աճում և դրա համար
հարկավոր էր հող տանել, վորպեսզի տարրերային
կերպով աճող մասնավոր-տնտեսական այդ կապիտալը
«ընդունվեր մեր սիստեմում», վերածվեր մեր կողմից
կարգավորվող պետական կապիտալիզմի: Մրտնումն
էր կայանում լենինյան դրույթի իմաստը 1921 թ.:
Իսկ 1923 թ., շնորհիվ մեր սոցիալիստական հրամա-
նատարական բարձունքների ամրապնդման, մանր
գյուղացիական տնտեսութեան զարգացումը իր սեփա-
կան հիման վրա այլևս վտանգ չէր ներկայացնում
կապիտալիզմի վերականգման իմաստով, այլ ընդհա-
կառակը, միանալով կոոպերացիայի մեջ և առևտրա-
կան կապ հաստատելով պետութեան հետ, սոցիալիս-

*) Ն. Բուխարին «Մեր գյուղացիական քաղաքականութեան
նոր խնդիրները» «Պրավդա», 1925 թ. ապրիլի 24:

տական արդյունաբերութեան հետ, մանր տնտեսա-
տերերը հենց դրանում ներաճում էին սոցիալիզմի
մեջ, դառնում էին մեր տնտեսական սիստեմի մի
ողակը, մի սիստեմ, վորի մեջ վճռական դեր խաղում
էն սոցիալիզմի հրամանատարական բարձունքները—
խոշոր պետական արդյունաբերութեանը, բանկեր և
այլն: Շնորհիվ իրենց միացմանը շրջանառութեան աս-
պարիզում և շնորհիվ սերտ կապի՝ սոցիալիստական
արդյունաբերութեան հետ, մանր տնտեսատերերը դա-
դարում են առանձին զտասակարգ լինելուց, դառնալով
սոցիալիստական հասարակութեան մի մասը:

Կուլակային ընկերութեանները, կուլակային
կոոպերատիվ բուլջները նույնպես ներաճում են մեր
ընդհանուր սիստեմի մեջ, կուլակը նույնպես զնալու
տեղ չունի և նա կգառնա միայն վորոշ չափով խորթ
տարր մեր չերկրի սոցիալիստական սրգանիզմի մեջ:

«Միանգամայն բնական է—ասում է ընկ. Բու-
խարինը—վոր այս նոր կացութեան մեջ Լենինն ա-
ռաջադրեց ռազմագիտական նոր պլան: Հարցը դրվում
է այսպես: Մանր բուրժուական ձգտումների զարգա-
ցումը պետք է դնել այնպիսի պայմաններում, վոր
նրանք ոգնեն մեզ և վորպեսզի մենք նրանց ոգնենք
և վորպեսզի միաժամանակ ամրապնդվի մեր տնտե-
սութեանը»: *)

Դրա հետ միասին Բուխարինը ամեն կերպ հա-
խազդուլացնում էր ներկա և ապագա հույսերից կուլ-
տընտեսական շինարարութեան վերաբերմամբ: Նրա
կոնցեպցիայի համաձայն կուլանտեսութեանները բնավ
չեն կարող համարվել գլխավոր ուղի դեպի սոցիալիզ-

*) Նույն հոդվածը «Պրավդայում»

մը: Կոլտնտեսութիւնները՝ դա միայն միացման ձև եւ ամենից ավելի սակավուժ չքավորների մի մասի համար: Մնացած գյուղացիութիւնը կգա դեպի սոցիալիզմը իր անհատական տնտեսութեան հիման վրա, կապվելով պետութեան հետ միայն արտադրական, վարկային և այլ կոոպերացիայի գծով:

«Մենք չենք կարող գործն այնպես պատկերացնել, թե կսեղմենք կոլտնտեսական շինարարութեան վրա և գյուղացին շուտով կգնա կոլտնտեսութիւններէ միացման ուղիով: Կոլտնտեսութիւնները խոշոր դեր են խաղում—սա անկասկած է, մենք պետք է աջակցինք նրանց: Բայց չի կարելի պնդել, վոր դա գլխավոր ուղին է. վորով գյուղացիական մասսաները կըզնան դեպի սոցիալիզմ: Մենք շահագրգռում ենք գյուղացուն, վորպես մանր սեփականատերի, մանր տընտեսատերի: Սա բնավ ստրասափելի չէ, վորովհետև վերջիվերջո մանր տնտեսատերը անխուսափելի կերպով կներաճի մեր պետական-սոցիալիստական սխտեմի մեջ, ճիշտ այնպես, ինչպես կապիտալիստական յերկրներում նա ներաճում է կապիտալիստական հարաբերութիւնների սխտեմում»:^{*})

Ըստ ելուժեան, Բուխարինը սոցիալիզմը համարում է վորպես մի գումար կազմված սոցիալիստական արդյունաբերութիւնից, մանր անհատական արտադրութիւնից, միացած կոոպերատիվների մեջ շըրջանառութեան սսպարիզում, առանձին կոլտնտեսութիւններից, նույն ձևով կապված պետութեան հետ, և առանձին կուլակային բույններից, վորոնք հանդի-

^{*}) Ն. Բուխարինի նույն հոդվածը «Պրավդայում»:

սանում են կապիտալիստական անկող հյուր սոցիալիստական ընդհանուր ընտանիքում:

Հասկանալի չէ, վոր այս տեսակետից միանգամայն անիմաստ պետք է թվար այն դիրքը, վոր բռնել է այժմ կուսակցութիւնը ուղղելով այն դեպի կոլտնտեսական և խորհրտնտեսական շինարարութեան լիակատար դաճացումը, մանր գյուղացիական արտադրութեան արմատական հեղափոխական վերակազմումը, մանր տնտեսութիւնների միացումը արտադրական կոլլեկտիվների մեջ, ինչպես և մեծ եկամտիկայից կուլակին վտարելու դիժը: Ինչու համար է այս ամենը, չերը հարկավոր է միայն առափելագույն չափով ազատութիւն տալ ապրանքաշրջանառութեան, ապահովել հնարավոր յեղած չափով ավելի:

Տնտեսական առանձին ձևերի միջև, և ամբողջ սխտեմը, զարգանալով, կներաճի սոցիալիզմի մեջ: Բուխարինի տեսակետով ամեն մի կուսակում, նույնիսկ մասնավոր-տնտեսականը, մինչև անգամ կապիտալիստականը պլյուս է սոցիալիզմի համար և մեր պետութեան խնամքի առարկա:

Իրա համար էլ ընկ. Բուխարինը ստում էր, թե «մեր քաղաքականութիւնը գյուղի վերաբերմամբ պետք է զարգանա այնպիսի ուղղութեամբ, վոր լայնացվեն, իսկ մասամբ էլ վոչնչացվեն շատ սահմանափակումներ, վորոնք արգելք են հանդիսանում ունեւ վոր և կուլակային տնտեսութեան աճմանը: Գյուղացիներին, բոլոր գյուղացիներին պետք է ասել—հարստացե՛ք, զարգացրե՛ք ձեր տնտեսութիւնը և մի անհանգստանա՛ք, վոր ձեզ կսեղմեն»:^{*})

^{*}) Ն. Բուխարին, «Գյուղացիական քաղաքականութեան նոր խնդիրները»

Նկարելով սոցիալիստական հասարակութեան իր պատկերը, Բուխարինը չեր կարող չըմբռնել, վոր դա ընդհանուր վոչինչ չունի այն բանի հետ, վոր գրել են գիտական սոցիալիզմի հիմնադիրները սոցիալիզմի մասին, վորպես խոշոր արտադրութեան հասարակարգի, վորի մեջ չի լինի արտադրութեան միջոցների մասնավոր սեփականութուն, վորպես անդասակարգ հասարակութեան: Դրա համար նա հաճույքով ընդունելով, վոր հեռավոր մշուշապատ ապագայում մանր արտադրողները կմիանան խոշոր արտադրութեան համար, առաջադրում եր «սոցիալիզմի զանազան տիպերի» տեսութունը: Ինչպես կապիտալիստական աշխարհում մենք նկատում ենք մի շարք յերկրներ, վորոնք ավելի կամ պակաս պահպանել են ֆեոդալական արտադրութեան մնացորդները և այլն, այնպես ել սկզբնական շրջանում իրարից զանազանվելու յեն սոցիալիստական յերկրները: Որինակ, Գերմանիան կլինի գլխավորապես ինդուստրիալ սոցիալիզմի յերկիր, Ռուսաստանը—ազրարային—կոոպերատիվային սոցիալիզմի յերկիր:

Հենվելով «կոոպերացիայի մասին» հոդվածի այն մասի վրա, վորտեղ Լենինն ասում է, վոր մեզ համար աչժմ բավական է լիակատար կոոպերացումը և կուլտուրական հեղափոխութունը, լիովին սոցիալիստական յերկիր դառնալու համար, Բուխարինը փորձում է վերագրել Լենինին ազրարա-կոոպերատիվային սոցիալիզմի իր թեորիան: Լենինը Բուխարինի մեկնութեամբ, վորպես թե գտնում եր, վ՛ր բավական է միացնել ազգաբնակութունը առևտրական կոոպերացիայի մեջ, բավական է սովորեցնել մեր

կոոպերատորներին առևտուր անել յեվրոպական ձևով, և սոցիալիզմը արդեն պատրաստ կլինի, սոցիալիզմը կկառուցվի: Բուխարինը նախընտրում է ուշադրութեան չառնել հոդվածի այն տեղերը, վորտեղ Լենինը ընդգծում է, վոր կոոպերացիայի քաղաքականութեան և կուլտուրական հեղափոխութեան հաջողութեան համար անհրաժեշտ է «նյութական բազա», վոր կարող է լինել միայն խոշոր մեքենայական արդյունաբերութունը, վերակազմակերպելով նաև հողագործութունը:

Իսկապես սրանում է կայանում, ըստ Բուխարինի, Լենինի կոոպերատիվային յերկրորդ պլանը: Համաձայն Բուխարինի հավաստիացումներին, Լենինը 1923 թվից, յերբ սկսեց վտուքի կանգնել մեր սոցիալիստական արդյունաբերութունը, յեկավ այն յեզրակացութեան, վոր մանր տնտեսատերը և կուլակը որևէ յելք չունին և բավական է միացնել նրանց շրջանառութեան ասպարիզում, վորպեսզի յերկիրը լիովին սոցիալիստական դառնա:

Սա, իհարկե, Լենինի կոոպերատիվային պլանը չէ, այլ այդ պլանի կոպիտ ծաղրանկարը: Ապացուցելու համար յերկու կոոպերատիվային պլանների մասին յեղած խոսակցութունների ամբողջ դատարկութունը, բերում ենք մի ցիտատ «Սորհրդային իշխանութեան հերթական ինչիքիները» հոդվածի ուրվագծից, վոր արել է Լենինը 1918 թ. մարտի 28-ին:

«Կոոպերատիվը կրպակ է, և ինչպիսի փոփոխութուններ, կատարելագործումներ, ուսմաններ ել լինեն, չեն փոխի այն, վոր նա կրպակ է: Նման հայացքի վարժեցրել է սոցիալիստներին կապիտա-

լիստական եպոխան. և կասկած չկա, վոր այդ հայացքները ճիշտ արտահայտությունն էյին կոոպերատիվների եյուլթյան, քանի դեռ նրանք մնում էյին վորպես մի մասնիկը բուրժուական հասարակարգի մեխանիզմի: Բայց խնդիրն այն է, վոր կոոպերատիվների դրությունը արմատապես սկզբունքորեն փոխվում է պետական իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցնելուց հետո, այն մոմենտից, յերբ պրոլետարական պետական իշխանությունը ձեռնարկում է սոցիալիստական կարգերի սխտեմատիկ ստեղծման: Այստեղ քանակն անցնում է վորակի: կոոպերատիվը, վորպես փոքր կզգի կապիտալիստական հասարակության մեջ, կրպակ է: Իսկ յեթե կոոպերատիվը ընդգրկում է ամբողջ հասարակությունը՝ վորտեղ սոցիալիզացիայի յե յենթարկված հողը և ազգայնացված են գործարանները և ֆաբրիկաները, դա սոցիալիզմ է: Սորհրդային իշխանության խնդիրը՝ այն բանից հետո, յերբ բուրժուազիան սեփականազրկված է քաղաքականապես և տնտեսապես, ակներև կերպով (զըլխավորապես) կայանում է նրանում, վոր պետք է տարածել կոոպերատիվային կազմակերպությունները ամբողջ հասարակության վրա, վորպեսզի ավյալ յերկրի բոլոր քաղաքացիները անխտիր դառնան մեկ, համազգային, կամ ավելի ճիշտը, համապետական կոոպերատիվի անդամներ»:*)

Բայց գուցե Լենինն այստեղ նույնպես խոսելով կոոպերատիվի մասին, վորպես սոցիալիզմի հիմքի, հասկանում էր միայն առևտրական կոոպերացիան, մոռանալով արտադրական բազայի վերակառուցման և

*) Լենին, Յերկ. Ժող. հրատ. 2-րդ հատ. 22, էջ 420:

գյուղացիության կոլեկտիվացման անհրաժեշտությունը: Վորպեսզի առիթ չտա իր խոսքերի նման խեղաթուրման, Լենինը նույն հողվածում շեշտում է, վոր «Ռուսաստանի տնտեսական կարգի վերակազմակերպության ուղին կաշանում է խոշոր, մեքենայական ինդուստրիայի վրա կառուցված տնտեսության անցնելու, սոցիալիզմին անցնելու մեջ»:*)

Լենինը չերբեք չէր մոռանում, վոր կապիտալիզմի արմատները միայն կարող են վոչնչացվել արտադրության միջոցների մասնավոր սեփականության կարգի վոչնչացումով, մանր տնտեսատերերի՝ արտադրական կոլեկտիվների մեջ միացումով, այսինքն նրանց վոչնչացումով, վորպես մանր տնտեսատերերի: Մանր բուրժուական, լուրջլանական ուտոպիաները սոցիալիզմի մասին, վորպես ունեոր և ինքնուրույն մանր սեփականատերերի հասարակարգի, նա վճռականապես մերժում էր, ինչպես մերժում էր Բուխարինի եկլեկտիկ կառուցումը, վորի համաձայն սոցիալիզմը կարող է լինել զուգակցություն մանր ապրանքային արտադրության հողազործության մեջ, միացած շրջանառության ասպարիզում, և խոշոր սոցիալիստական արդյունաբերության: Լենինը շատ լավ հիշում էր մարքսիզմի այբուբենական այն ճշմարտությունը, վոր ասում է, թե վոչ մի միացում շրջանառության ասպարիզում, չի կարող վերացնել մարդու շահագրգացումը, յեթե սահպանվում է արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը: Վերջապես, Լենինը միշտ հիշում էր, վոր բարգավաճ մանր

*) Լենին, Յերկ. Ժող. հրատ. 2-րդ հատ. 22, էջ 420:

անտեսութեան մասին չեղան ուտարիան լոկ մանր բորբոսայի խաբկանքն ե, վոր իսկական յեղքը աղքատութունից, յետամնացութունից, վաշքենացումից և «դյուղական կյանքի իգիտարիզմից» մանր գլուղացու համար հանդիսանում ե այն ուղին, վոր տանում ե դեպի նրա միացումը արտագրական խոշոր կոլլեկտիվի մեջ:

Հինց նման կոմնարդնիկական թեորիա եր զարգացնում ընկ. Բուխարինը, չերբ ասում եր, վոր «անտեսական ընդհանուր աճման գուղահեռ սկզբում առաջ կգա անտեսական դանագանութունների աճում, իսկ հետո ընդհակառակը, միջակի անտեսութունը կմոտենա ավելի ուետր անտեսութեան մակարդակին» *):

Բայց, չեթե Բուխարինը դեռ 1925 թ. պաշտպանում եր նման սեփեգիտնիստական գաղափարներ, ապա ինչպես կարող եր պատահել, վոր նա 14-րդ կուսկոնֆերանսի և 14-րդ կուսհամագումարի շրջանում պաշտպանում եր կուսակցութեան գիծը արոցկիստական խեղաթուրումների դեմ: Ինչպիս կարող եր թեկուզ ժամանակավորապես գուղագրիպել կուսակցութեան գիծը Բուխարինի գծի հետ:

Այս հարցի պատասխանը ինքըստինքյան դրվում ե, յերբ ըմբռնելի լինի կոոպերատիվ պլանը և քննվի 1925—1926 թ. կոնկրետ կացութունը: Լենինյան կոոպերատիվ պլանը, վորպես վերջին ողակ նկատի ունենալով դյուղացիութեան արտագրական լիակատար կոոպերացումը, նրա լիակատար միացումը խոշոր կոլ-

*) Ն. Բուխարին. Մեր դյուղացիական քաղաքականութեան նոր խնդիրները:

անտեսութունների մեջ, մեկնում ե այն բանից, վոր սկզբնական, և նախապատրաստական խնդիրը դրա համար հանդիսանում ե կոոպերացումը ապրանքաշրջանառութեան ասպարիզում: Վերջինս դեռևս գլուղացուց չի պահանջում վոչ մի խզում սեփականատիրական սովորութունների և ոտտինայի հետ, այլ ընդհակառակը թեկուզըրվում ե նրան մասնավոր անտեսական շահերից: Իսկ ապրանքաշրջանառութեան ասպարիզում յեղած միացումից դյուղացին կանցնի դեպի արտագրութեան ասպարիզում կազմված միացումը, մղվելով խոշոր արտեսութունների որինակից, խոշոր մեքենաշակարան տեխնիկայի հեղափոխիչ աղբեցութունից, և այլն:

Ուստի, չերբ Բուխարինը 1925 թ. ասում եր, թե դյուղացիական անտեսութեան զարգացման համար գլխավոր ուղին հանդիսանում ե վոչ թե կոլտնտեսութունները, այլ առևտրական կոոպերացիան*), նա կոպիտ սխալ եր գործում, վորովհետև «գլուղի սոցիալիստական զարգացման գլխավոր ուղին կազմում ե Լենինի կոոպերացիային պլանը, վոր ընդգրկում ե գլուղատնտեսական կոոպերացիայի բոլոր ձևերը, ստորիններից (մատակարարողական-սպառողական) մինչև ամենաբարձրերը (արտագրական-կոլտնտեսային): Հակադրել կոլտնտեսութունները կոոպերացիային—նշանակում ե ծաղրել լենինիզմը և ստորագրել սեփական օպիտութեանը» **):

*) Ի. Ստալին, մեծ բեկման տարին:

**) Մի քանի ընկերներ կարծում են,—ասում եր ընկ. Բուխարինը, պարզաբանելով 14-րդ կուսկոնֆերանսի վորոշումները, թե սոցիալիզմի գլխավոր ուղին կոլտնոցն ե: Յես այս պնդումը համարում եմ սխալ: Գլխավոր ուղին անցնում ե սովորաբար կոոպերացիայի միջով վաճառահանում, գնում, վարկ: Ն. Բուխարին «Ընթացիկ մոմենտը և մեր քաղաքականութեան հիմքերը», հրատ. «Մոսկ. Ռաբոչի» 1925 թ. և շ 28.

Բաց ընկ. Բուխարինը մոռանում ե հենց կոպե-
րացիայի բարձրագույն ձևերի մասին (արտադրական
կողմնատեսային), չըմբռնելով, վոր գյուղացիութեան-
հիմնական մասսան անխուսափելի կերպով կապիտալի
ստորին ձևերից անցնելու չե բարձրագույններին:

1925 թ. կուսակցութեանը դեռևս չունեի նյու-
թական անհրաժեշտ նախադրյալներ, վորպեսզի ամ-
բողջ հասակով գներ գյուղի արտադրական կոոպերաց-
ման խնդիրը: Սոցիալիստական շինարարութեան հեր-
թական ողակը, վորից պետք եր կառչել ամբողջ ուժով,
հաղթահարելով արոցկիստական և զինովկական ող-
պողկեցիայի ընդդիմութեանը, հանդիսանում եր գյուղի
առևտրական կոոպերացման ողակը: Յեզ այդ ողակից
կուսակցութեանը քաշեց Բուխարինի հետ միասին,
միաժամանակ վճռականորեն շտկելով նրա սխալները,
նրա ողպորտյունիստական լոգոնդները և լենինիզմի
խեղաթյուրումները: Իսկ այժմ, չեթե հերթական ողակը
հանդիսանում ե արդեն արտադրական կոոպերացիան
այդ ողպորտյունիստական սխալները վոչ միայն չեն
դեռ ուղղված Բուխարինի կողմից, այլ հասել են ամե-
նաբարձր աստիճանի և ուղղակի խոչընդոտ են հանդի-
սանում սոցիալիստական շինարարութեան գործին և
դրա հայար պետք և հաղթահարվեն:

«Քանի դեռ չկար կողմնատեսային մասսայական
շարժում, — գրում ե ընկ. Ստալինը, — «զլխավոր ուղի»
ելին հանդիսանում կոոպերացիայի ստորին ձևերը,
մատակարարական և սպառողական կոոպերացիան, իսկ
չորր հրապարակ յեկով կոոպերացիայի բարձրագույն
ձևը, նրա կողմնատեսային ձևը, վերջինս դարձավ զար-
գացման «զլխավոր ուղին»:

«Լենինի քաղաքական կտակում» Բուխարինը
Լենինի կոոպերատիվային պլանի մեկնաբանութեանը
հասցնում ե մինչև անհեթեթութեան: «Մենք պետք ե
գյուղացուն կառչել տանք իր շահերին, առանց խորի-
մաստ գատողութեանների՝ մենք պետք ե փնտնենք
նրան մոտենալու ամենապարզ ձևեր: Կոոպերատիվ
պլանի իրագործման համար հարկավոր ե կուլտուրա-
կան հեղափոխութեան, վորովհետև անխտիր կոոպե-
րացումը իրագործելու համար հարկավոր ե առաջին
հերթին, վոր կոոպերատորները քաղաքակիրթ կերպով
առևտուր անեն: Մեր կոոպերատորը, գրում եր ընկ.
Լենինը բառացի. «այժմ ասիական ձևով ե առևտուր
անում, իսկ առևտրական լինելու համար պետք և առև-
տուր անել յեվրոպական ձևով»*):

Այսպես այժմ, սոցիալիզմը իրագործելու համար
ավական ե միայն, վոր մեր կոոպերացիան սկսի առև-
տուր անել յեվրոպական ձևով: Դուրս քաշելով առան-
ձին ցիտասներ Լենինից, Բուխարինը փորձում ե ներ-
կայացնել նրան վորպես «գյուղացիական փրկիստի»,
գյուղացիական սանձանափակութեան չերզիչ, այնինչ
Լենինը հենց հակապես իր վերջին հորվածներում
նախազգուշացնում եր այդ վտանգից, կոչ անելով պրո-
լետարիստին՝ գյուղացիական ձիուց իջնել և բարձրա-
նալ մեքենայական խոշոր ինդուստրիայի և ելեկ-
տրիֆիկացիայի ձիու վրա:

Բուխարինը վերցնում ե Լենինի հայանի խոս-
քերը, թե անժամանակ ե գուտ և նեղ կոմունիստա-
կան գաղափարների տեղափոխութեանը գյուղում և
փորձում ե Լենինի այս արտահայտութեանը, վոր վե-

*) Բուխարին, Լենինի քաղաքական կտակը, էջ 70

բարեբուժում ե 1923 թ. կոնկրետ կացութեան, դարձնել մեր զարգացման ներկա շրջանի համար ել պետքական լոգոսներ:

«Ձի կարելի, — գրում եր Լենինը. — խեղճն գյուղ տանել գուտ և նեղ-կոմունիստական գաղափարներ: Քանի դեռ մեր գյուղում չկա նյութական հիմք կոմունիզմի համար, մինչ այդ կարելի յե ասել դա կլինի զուսակար, դա կլինի, կարելի յե ասել, «կործանում կոմունիզմի համար»:

«Վոչ, նախ պետք ե սկսել քաղաքի և գյուղի միջև կապ հաստատելուց, բնավ կանխակալ նպատակ չդնելով գյուղում կոմունիզմ պատվաստել: Նման նպատակ այժմ չի կարող ձեռք բերվել. այդպիսի նպատակ անժամանակ ե: Այդպիսի նպատակ դնելը գործին զուս կբերի, փոխանակ ոգուտի»^{*)}:

Մեկնաբանելով Լենինի այս խոսքերը, Բուխարինն ասում ե.

«Սա կազմակերպիչի իմաստութեանն և, վորը (կազմակերպիչը) կազմակերպում ե վոչ թե յերիտասարդների մի ըջիջ խորհրդային ծառայողներից, այլ կազմակերպում ե տասնյակ և հարյուրավոր միլիոնների և գիտե — ինչպես մոտենալ այդ տասնյակ միլիոնների»^{**)}:

Լենինը վճռական թշնամի յիր ամեն տեսակի խփոստիզմի (պոչականութեան) և նրանց, վորոնք անիմաստ կերպով կրկնում են լոգոսները առանց հաշվի առնելու այն կոնկրետ կացութեանը, վորոնց վերաբերում են այդ լոգոսները:

^{*)} Լ.ԵՆԻՆ, հատ. 18, մաս 2, էջ 116

^{**)} Ն. Բուխարին, Լենինի քաղաքական կտակը, էջ 18:

Պատմութեան մեջ հաճախ պատահել և, — ասում եր Լենինը «լոգոսները առթիվ» իր հոգվածում, վոր նույնիսկ առաջավոր կուսակցութեանները ավելի կամ պակաս յերկար ժամանակ չեն կարող հարմարվել նոր դրութեան, կրկնում են լոգոսները, վոր ճիշտ հլին յերեկ, բայց այսոր կորցրել են իրենց իմաստը¹⁾:

«Մարքսիզմը պահանջում ե մեզնից, — գրում եր նա մի այլ տեղ, ամենաճիշտ, որչեկտիվ և ստուգելի կերպով հաշվի առնել դասակարգերի փոխաբարութեանները և յուրաքանչյուր պատմական մոմենտի կոնկրետ առանձնահատկութեանները: Մենք, բայց և Իկնիքս: միշտ աշխատել ենք հավատարիմ մնալ այս պահանջին, վոր անպայման պարտադիր ե քաղաքականութեան գիտական ամեն մի հիմնավորման աեսակետից... «Մեր ուսմունքը զոգմա չե, այլ ղեկավարութեան գործողութեան համար — այսպես ելին ասում միշտ Մարքս և Ենգելսը, արդարացիորեն ծագրելով նրանց, վորոնք սովորում և պարզապես կրկնում ելին «ֆորմուլաներ», վորոնք ընդունակ են միայն լավագույն դեպքում նշել ընդհանուր խնդիրները, վոր անհրաժեշտաբար կերպարանափոխվում են պատմական պրոցեսսի յուրաքանչյուր առանձին փուլի տեսական քաղաքական կոնկրետ կացութեամբ»¹⁾:

Այնինչ, Բուխարինը լիովին հրաժարվելով սոցիալիստական շինարարութեան նոր պայմանները հաշվի առնելուց, չնկատելով, վոր կուսակցութեան կոմունիստական գաղափարները արդեն մարմին են առնում, մեջքը դարձնելով գյուղում հասարակական սեկ-

¹⁾ Լ.ԵՆԻՆ, հատ 14 մաս 2, էջ 12:

¹⁾ Լ.ԵՆԻՆ, հրատ. 2-րդ. հատ. էջ 120:

տորի անձան աննախընթաց տեմպին, փորձում ե Ղե-
նինի տակտիկական ցուցմունքը, վոր աճել և վորոչ կա-
ցության պայմաններում, դարձնել նրա «կտակը», լու-
զունդ, պետքական սոցիալիստական շինարարության
ամբողջ ժամանակաշրջանի համար:

Բուխարինը Գեպի յեվ կապի Գոր ձեպերի մասին

Պակաս վողբալի չե նեպի Բուխարինյան հասկա-
ցողության վիճակը: Միանգամայն մոռանալով այն,
վոր նեպը ինքը հենց ստեղծում ե հիմքեր սեփական
հողթահարման համար, մոռանալով, վոր նեպի ուել-
սեբի վրայով մենք պիտի գնանք դեպի սոցիալիզմ, և
վոր դրա համար նեպը ինչ վոր անփոփոխ էլութուն
չե, այլ փոխում ե իր դեմքը, վորքան մոտենում ե սո-
ցիալիզմին, Բուխարինը փորձում ե տալ նեպին ինչ-
վոր համապարփակ բնորոշում, պետքական սոցիալիս-
տական շինարարության բոլոր ետապների համար:
Այս բոլորով միասին լիովին անհասկանալի չե մնում,
թե ինչպես պետք ե վերանա նեպը, քանի վոր նրա
դրութունը մնում ե անփոփոխ:

Նեպի այդ անփոփոխ էլութունը, նրա ամենա-
խոր իմաստը Բուխարինը տեսնում ե շուկայի հարա-
բերությունների թուլատրման, պահպանման և զար-
գացման մեջ: Այսպես, Բուխարինը բնորոշում եր նեպը
դեռևս 1925 թվին:

«Տնտեսական նոր քաղաքականության իմաստը
և մեր նոր հայացքը դեպի սոցիալիզմ առաջխաղաց-
ման վրա՝ կարելի չե ձևակերպել այսպես: Ծշմարիտ
տնտեսական քաղաքականութուն, վոր ոգտագործում
ե տնտեսական բոլոր ուժերը և իսկապես բարձրաց-

նում ե լերկրի արտադրողական ուժերը, մենք կարող
ենք վարել միայն ծավալուն ապրանքաշրջանառու-
թյան պայմանով»*):

Այստեղ նկատենք, վոր Բուխարինի Ֆորմուլան
աչքից փակցնում ե այնպեսի մի «մանրուք», ինչպի-
սին ե ապրանքաշրջանառության կարգավորման ան-
հրաժեշտութունը:

Ուրեմն, իսկական ճիշտ տնտեսական քաղաքա-
կանութուն մենք կարող ենք վարել միայն ծավալուն
ապրանքաշրջանառության պայմաններում: Բայց, մեր
առաջ դրված ե նեպական լերկիրը սոցիալիստական
դարձելու խնդիրը: Ինչպես հնարավոր ե այս փոփո-
խությանը, յեթե նեպը զարգացման ամբողջ ընթաց-
քում չի փոխում իր էլութունը, չի մեղմում, սկսած
զարգացման վորոչ աստիճանից:

Բուխարինի Ֆորմուլան սրան վոչ մի պատաս-
խան չի տալիս: Բուխարինի Ֆորմուլան պետքական
եր նեպի զարգացման առաջին աստիճանների վրա,
յերբ մեր առաջ իսկապես դրված եր ապրանքաշրջա-
նառութունը ազատ թողնելու խնդիրը, վորպես միակ
հնարավոր ձևը այդ ժամանակ կապ հաստատելու մի-
լիոնավոր մանր հողագործների և խոշոր արդյունաբե-
րության միջև:

Իսկ այժմ, յերբ կուսակցության կենտրոնական
խնդիրը հանդիսանում ե հաստատել կապի արտադրա-
կան ձևեր, յերբ առանձնապես կարևոր նշանակելություն
ե ստանում կոնտրակտացիան, յերբ հետևաբար դասա-
վորվում են պայմաններ կապի ապրանքաշուկայական

*) Ն. Բուխարին Մեր գյուղացիական քաղաքականության
նոր խնդիրները:

ձևի մահացման համար, միանգամայն պարզ է դարձել, վոր Բուխարինի ֆորմուլան լիովին անբավարար է, աղավաղում է պրոլետարիատի առաջ դրված խնդիրները, և պետք է դեն շարտվի:

Բուխարինը, ունիվերսալական կերպով խեղաթյուրելով Լենինի քաղաքական կտակը, ասում է, վոր Լենինը վորպես թե տեսնում եր կապի միակ հնարավոր մի ձև բոլոր ժամանակների համար, այսինքն առևտրական կապը կոոպերատիվային շրջանառության միջոցով:

«Կոնկրետացնելով այն հարցը, թե կազմակերպչական ինչ հիման վրա առաջ կգա կապ աճող արդյունաբերության և մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսությունների միջև, Լենինը զարգացնում է իր «կոոպերատիվային պլանը, կապի պլանը «կոոպերատիվային շրջանառության միջոցով»*):

Ճիշտ է արդյոք, վոր Լենինը հնարավոր եր համարում կապ հաստատել սոցիալիստական արդյունաբերության և գյուղացիական մանր տնտեսության միջև միայն ապրանքաշրջանառության միջոցով: Ճիշտ է արդյոք, վոր Լենինը նեպի իմաստը տեսնում եր միայն վորքան կարելի յե ավելի լայն ապրանքաշրջանառության ծավալման մեջ: Բավական է միայն թուույիկ կերպով ծանոթանալ Լենինի իսկական կարծիքների հետ՝ համոզվելու համար, վոր լենինյան ուսմունքը նեպի մասին ընդհանուր վոչինչ չունի նրա Բուխարինյան մեկնաբանության հետ: Լենինը շարունակ ընդգծում եր, նույնիսկ այն ժամանակ, լերբ մենք անցնում եյինք նեպին, վոր ապրանքաշրջանառության

*) Ն. Բուխարին, Լենինի քաղաքական կտակը, էջ 18:

զարգացումը լոկ հերթական ողակ է սոցիալիստական շինարարության շղթայում, վոր հետագայում անհրաժեշտ է անցնել հաջորդ ողակներին, ամբողջ շղթային տիրելու համար:

«Տվյալ մոմենտին գործունեություն այն ասպարիզում, վորի մասին խոսվում է, նման ողակ հանդիսանում է ներքին առևտրի աշխուժացումը, նրա (առևտրի) պետական ճիշտ կարգավորումով (ուղղություն տալով): Առևտուրը— ահա այն «ողակը»՝ անցքերի պատմական շղթայում՝ 1921-22 թ. մեր սոցիալիստական շինարարության անցողիկ ձևերի մեջ, «վորից պետք է կառչենք ամբողջ ուժով», մենք, պրոլետարական պետական իշխանությունը, մենք՝ դեկավար կոմունիստական կուսակցությունը: Ցեթե այժմ մենք բավական ամուր «բռնենք» այդ ողակից, մոտիկ ապագայում հաստատապես կտիրենք ամբողջ շղթային: Այլապես չենք տիրի ամբողջ շղթային, չենք ստեղծի սոցիալիստական տնտեսական հարաբերությունների հիմքը»*):

Իսկ հերթական ողակները, վորտեղից անհրաժեշտ է բռնել ամբողջ շղթային տիրանալու համար, հանդիսանում է կապի արտադրական ձևերի զարգացումը, աստիճանական անցումն անմիջական մթերափոխանակության սոցիալիստական արդյունաբերության և գյուղացիական տնտեսության միջև, անցում դեպի վերջինիս վճռական վերակառուցումը սոցիալիստական հիմունքների վրա:

Այսպիսով նեպի լենինյան տեսությունը ցույց է տալիս մեզ, թե ինչպես աստիճանաբար, զարգանալով նեպի հիման վրա, մենք գալիս ենք նրա ժրխա-

*) Լենին, հատ. 18, մաս 1, էջ 379:

մանը, թե ինչպես նեպը ստեղծում է պայմաններ իր հաղթահարման համար, ինչպես նա աստիճանաբար մահանում է, թե ինչպես կապի առևտրական ձևն ըսկզբում լրացվում է և ապա փոխարինվում է անմիջական կապով արդյունաբերութան և համայնացվող գյուղացիական տնտեսութան միջև:

Առևտուրը, — նշում եր Լենինը, — նոր տնտեսական քաղաքականութան հիմքն է այնքան ժամանակ, վորքան մենք զեռ չենք լիովին վերականգնել արդյունաբերութունը, իսկ այդ ժամանակը կարելի չէ հաշվել տասնյակ տարուց վոչ պակաս, և մենք այդ ժամանակամիջոցում պետք է այնպիսի ձևեր տանք բանվոր դասակարգի և գյուղացիութան հարաբերութուններին, վորոնց հիման վրա մենք պետք է կառուցենք մեր եկոնոմիկան, այդ դասակարգերի միջև ստեղծենք այնպիսի դաշինք, վոր հաշվի առնի մանր գյուղացուն, վորպես մանր գյուղացու, քանի զեռ մենք նրան չենք կարող տալ խոշոր արդյունաբերութան բոլոր արտադրանքները*)»:

Չըմբռնելով պատմականորեն առևտրի անցույթի նշանակութունը, ընկ. Բուխարինը տեսնելով այն փաստը, վոր գյուղացին ազատ շուկայում հաց վաճառողից զգալի չափով վերածվում է կոնտրակտացիայով պետութան հաց հանձնողի, համարում է այդ կապի վերահաս խզում պրոլետարիատի և գյուղացիութան միջև:

Իսկ Բուխարինի քաղաքական համախոհ ընկեր Տոմսկին ուղղակի ասում եր, վոր կապի նոր ձևերը տանում են դեպի դժվարութուններ, թե տնտեսա-

*) Լենին, հատ. 18, մաս 1, էջ 269,

կան և թե դասակարգային իմաստով: «Յերբ սկսում են վախեցնել «նոր» կապով, ամենանորովը, — ասում է ընկ. Տոմսկին, — ուզում են ասել ինչ-վոր վոչ լենինյան, այլ իրենց վերջին, «ամենանոր» թերրիական խոսքը, — ինձ տիրում է տազնապը. կապի այդ ինչ նոր ձև ե... դուք սպառնում եք մեզ նեպի նոր ձևերով և մեթոդներով, այստեղ վոչ մի նոր բան չըկա, այլ կան արտակարգ միջոցներ և հացի գրքույկ»:

Ընկ. Տոմսկուն թվում է, թե կապի արտադրական նոր ձևերի զարգացումը, վորոնք այնքան վախեցնում են նրան, նահանջ է լենինիզմից: Այնինչ Լենինը գրում եր, վոր միայն արտադրական կապի զարգացումով պրոլետարիատը «հաստատ և ճշմարիտ կերպով իր կողմը կգրավի գյուղացիութունը»:

Միայն այն դեպքում, — ասում է Լենինը, — չերբ աջողվի գործով ցույց աալ գյուղացիներին հասարակական, կոլլեկտիվ, արտելային ընկերական հողագործութան առավելութունները, չերբ աջողվի ոգնել գյուղացուն, ընկերակցական, արտելային տնտեսութան միջոցով, միայն այդ ժամանակ բանվոր դասակարգը, վոր իր ձեռքն է պոհում պետական իշխանութունը, ինկապես կապացուցի գյուղացուն իր արդարացի լինելը, իսկապես իր կողմը կգրավի հաստատ և ճշմարիտ կերպով բազմամիլիոն գյուղացիական մասսան:

Պրոլետարական հեղափոխությունը գյուղացիական պատերազմից գուժագրելու մասին

Բուխարինը զանազան ձևերով կրկնում է կուլակին պրոլետարիատի դաշինքին մասնակից դարձնելու գաղափարը: Այսպես, որինակ՝ Բուխարինն աս-

սում ե, վոր պրոլետարիատի գլխավոր խնդիրը սոցիալիստական շինարարութեան տվյալ ետապում հանդիսանում է պրոլետարական հեղափոխութեան գուգակցութեանը գյուղացիական պատերազմի հետ:

«Սոցիալիստական շինարարության գլխավոր յերաշխիքն է, — ասում է ընկ, Բուխարինը, — դասակարգային ուժերի ամենաբարենպաստ կերպով զուգակցումը, վորն ապահովել մեզ համար սոցիալիզմի հետագա կառուցման հնարավորությունը, «պրոլետարական հեղափոխությունը» «գյուղացիական պատերազմի» հետ նոր, ձեւով այս անգամ «կառուցողական» ձեւով զուգակցումը¹³⁶»:

Մակայն, Բնչ բան է գյուղացիական պատերազմը: Այդ ամբողջ գյուղացիութեան, նրա բոլոր խավերի՝ և՛ կիսապրոլետարական, և՛ մանր-բուրժուական, և՛ կապիտալիստական խավերի պատերազմը: Այդպիսի պատերազմ կարող է ծագել միմիայն բուրժուական-դեմոկրատական վոչ լրիվ հեղափոխութեան պայմաններում և կարելի չէ ուղղել Ֆեոդալիզմի մնացորդների դեմ, վորոնց դեմ մղվող պայքարը միացնում է ամբողջ գյուղացիութեանը:

Իսկ բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեանը սոցիալիստականին անցնելը չենթադրում է դասակարգերի այլ հարաբերութեան, չենթադրում է գյուղացիութեան պառակտումը և կուլակութեան ջախջախումը:

Լենինը հետևյալ ձևով էր նկարագրում գյուղի սոցիալիստական հեղափոխութեան պրոցեսսը գյուղում.

¹³⁶) Ն, ԲՈՒՆԱՐԻՆ, — Լենինի քաղաքական կտակը. (ընդգծումը Բուխարինինն է. Ս, 9.):

«Այն գյուղում, վորը մի մարդու պես պայքարում էր կալվածատերերի դեմ, առաջացավ չերկու բանակ՝ աշխատավոր չքավորագույն գյուղացիութեան բանակը, վորը բանվորների հետ միասին շարունակում էր հաստատուն քայլերով առաջ ընթանալ դեպի սոցիալիզմի իրականացումը և կալվածատերերի դեմ մղվող պայքարից անցնում էր կապիտալի դեմ մղվող պայքարի, վորի իշխանութեան, հողային մեծ բարենորոգումը կուլակի կողմից ոգտագործելու դեմ մղվող պայքարի — և ավելի ունևոր գյուղացիների բանանակը:

Այդ պայքար վերջնականապես անջատելով հեղափոխութեանից ունևոր, շահագործող դասակարգերին, փոխադրեց մեք հեղափոխությունը սոցիալիստական այն ուղիների վրա, վորոնց վրա քաղաքի բանվոր դասակարգը հաստատապես և վճռակալորեն ուզում էր դնել նրան հոկտեմբերին, սակայն վորի վրա նա յերբեք չի կարող հաղթանակորեն ուղղել հեղափոխութեանը, չեթե գիտակից, ամուր միաձուլված աջակցութեան չգտնի գյուղում»¹³⁷):

Նախկին ընդհանուր գյուղացիական ճակատի այդ պառակտումը Լենինը լավագույն ապացուցն էր համարում մեր հեղափոխութեան սոցիալիստական բընուկթի:

Յեթե, գրում էր նա, մայրաքաղաքների և արդյունաբերական խոշոր կենտրոնների բայընիկյան պրոլետարիատը չկարողանար իր շուրջը համախմբել գյուղի չքավորներին հարուստ գյուղացիութեան դեմ, այն ժամանակ դրանով ապացուցված կլիներ Ռուսաստանում:

¹³⁷) Լենին, հատոր 15, էջ 476:

տանի «առասուխունը» սոցիալիստական հեղափոխութեան համար, այն ժամանակ գյուղացիութիւնը կը մնար «ամբողջական»¹³⁸։

Պրոլետարական հեղափոխութիւնը գյուղացիական պատերազմին զուգակցելու հարցում պահաս խառնաշփոթութիւնն չեն մտցրել և այն ընկերները, վորոնք իրավացի կերպով քննադատել են այդ հարցի ոպպորտունիստական խեղաթուրումն ընկ. Բուխարինի կողմից։ Այսպէս՝ ընկ. Ստեղցովն իր «Լենինի քաղաքական կտակն ընկ. Բուխարինի պատկերացումով» հոդվածում («Բայլընիկ» 1929 թ., № 19) գրում է «Ամենքին հայտնի է, վոր պրոլետարական հեղափոխութեան և գյուղացիական զուգակցութեան» ֆորմուլան նշանակում էր պրոլետարիատի դաշինքն ամբողջ գյուղացիության հետ։ Այս լուրնգր վերաբերում է բուրժուական դեմոկրատական հեղափոխության օրջանին, այսինքն 1917 թ. փետրվարյան հեղափոխութեան» (էջ 22)։ Այնուհետև ընկ. Մարեցովը գրում է, — վոր չափով հոկտեմբերյան հեղափոխութիւնը թուղցիկ կերպով լուծում էր բուրժուական - դեմոկրատական հեղափոխութեան խնդիրները, այն չափով այդ լուրնգրը նըրանում գտավ իր իրադործումը։ Ընկեր Մարեցովի միտքն էլ ավելի խորացնում է ընկ. Չերնյակը, հայտարարելով, վոր պրոլետարական հեղափոխութեան և գյուղացիական պատերազմի զուգակցութեան ֆորմուլան շքնորոշ էր 1905 թ. հեղափոխության յետ 1917-ի փետրվարյան հեղափոխության համար։ Մասամբ դա բընորոշ է և Հոկտեմբերյան հեղափոխութեան համար,

բայց միայն այն չափով, վորչափով 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխութեան շրջանում սոցիալիստական հեղափոխութեան կատարման ընթացքում ավարտվեց բուրժուական - դեմոկրատական հեղափոխութիւնը», (Ի. Չերնյակ, Լենինի քաղաքական կտակն ընկ. Բուխարինի պատկերացումով, «Ռզվեստի», 29 սեպտ., 1929 թ.)։ Հիշյալ ընկերներին անհայտ է, վոր գուգակցութեան ֆորմուլան հենց խոսում է յերկու պըրոցեսները — պրոլետարական հեղափոխութեան և գյուղացիական պատերազմի ձուլման մասին, և դրա համար Հոկտեմբերին (մինչև 1918 թ. ամառը) իրագործվեց վոչ թե մասամբ, այլ ամբողջովին, իսկ այս ֆորմուլան կիրառելի չէ 1905 թ. և 1917 թ. փետրվարի վերաբերմամբ։ Ընկ. ընկ. Մարեցովը և Չերնյակը հաշիվ չեն անում այն, վոր Մարքսը խոսելով պրոլետարական հեղափոխութիւնը գյուղացիական պատերազմի յերկրորդ հրատարակութեամբ ամրացնելու հավանական հնարավորութեան մասին, նկատի ունի հենց դասակարգային ուժերի այնպիսի զուգակցութիւն, յերբ սոցիալիստական հեղափոխութեան համար նախադրյալներ հասունացել են անավարտ ագրարային հեղափոխութեան պայմաններում։ Հենց այսպիսի դրութիւն ստեղծվեց Հոկտեմբերյան հեղափոխութեան առաջին շրջանում։ 1905 թ. և 1917 թ. փետրվարին հարցը վոչ թե պրոլետարական հեղափոխութիւնը գյուղացիական պատերազմով ամրացնելու մասին էր, այլ բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեան հաղթանակի։ Դժվար չէ տեսնել, վոր ընկ. ընկ. Մարեցովի և Չերնյակի սխալը կախնում է նրանում, վոր նրանք նույնացնում են պրոլետար-

¹³⁸) Լենին, հատոր 15.

րական հեղափոխութեան և գյուղացիական պատերազմի զուգակցութեան» հասկացողութեանը «բանվոր դասակարգի և գյուղացիութեան դաշինքի» հասկացողութեան հետ, մոռանալով, վոր յերկրորդ հասկացողութեանը զգալիորեն լայն և առաջինից:

Այդ պատճառով, յերբ ներկայումս ընկ. Բուխարինը տեսնում է, թե հնարավոր է մեր հեղափոխութեան հետագա զարգացումը կառուցողական ձևով զուգակցված պրոլետարական հեղափոխութեան և գյուղացիական պատերազմի հետ, յերբ նա հետևապես պահանջում է վերականգնել ընդհանուր գյուղացիական Ֆրոնտը, դաշինք կնքել ամբողջ գյուղացիութեան հետ, ապա այդ որոշակիւթեան նշանակում է, իհարկե, մեր հեղափոխութեանը յետ մղելու, նրան բուրժուական - դեմոկրատական դիրքերը վերագործնելու մի փորձ:

Հարկավ, իրոք վոչ մի զուգակցում չի կարող լինել պրոլետարական հեղափոխութեան և գյուղացիական պատերազմի միջև, վորովհետև անհեթեթութեանը և կուլակին պատկերել սոցիալիստական շինարարութեան մասնակցողի դերում: Կուլակին ուզում է կառուցել վոչ թե սոցիալիզմը, այլ իր շահագործական տնտեսութեանը և նա կատարի դիմադրութեան և ցույց տալիս իր կապիտալիստական շահագործման, առավել ևս նրա դուրս մղումը սահմանափակելու դեմ:

Իսկ ընկ. Բուխարինի յիշույթը սերտորեն կապակցվում է սոցիալիզմի մեջ կուլակի ներածման նրա տեսութեան հետ:

Տեսլի հարցերը

Վորևե անհրաժեշտութեան կամ արդյոք արագ կերպով կիրառելու յերկրի ինդուստրիացումը: Ընկեր Բուխարինի ամբողջ կոնցեպցիայից հետևում է, վոր բնավ կարիք չկա այդ անելու, վորովհետև միևնույն է, սոյիալիզմի հաղթանակը մեզանում ապահովված է տարերայնորեն, ինքնահոս կերպով: Կուլակին ամբացրնելու չէ իր դիրքերը: Վոչինչ, նրա աճումը մենք կողտագործենք սոցիալիզմն ուժեղացնելու համար, և բացի դրանից, նա ինքը ներածում է սոցիալիզմի մեջ: Ուստի պատահականութեան չէ, վոր ընկ. Բուխարինը 14-րդ համագումարում հայտարարեց, թե կարիք չկա շտապելու, թե մենք սոցիալիզմը կարող ենք կառուցել կրիսիսի քայլերով¹³⁹⁾: Սակայն բանն էլ հենց այն է, վոր ընթանալով կրիսիսի քայլով, մենք սոցիալիզմն չենք կառուցի:

Ներկայումս պատահական կերպով չէ, վոր Բուխարինի համախոհ Ուզլանովը տարակուսանքի մեջ է ընկել, թե ինչու մենք զարկ ենք տալիս ինդուստրիացման տեմպին, անցնում ենք անընդհատ շարաթվա

¹³⁹⁾ «Այս դեպքում անհրաժեշտ է, ասում էր Բուխարինը 14-րդ համագումարում, մենք լիովին, ինձ թվում է, նվաճեցինք ամբողջ կուլակցութեան համար պարզ և ճշգրիտ համոզում, թե մեր յերկրում դասակարգային տարբերութեանը պատճառով, մեր տեխնիկական հետաձգողութեան պատճառով, մենք չենք կործանվել, թե մենք սոցիալիզմը կարող ենք կառուցել նույնիսկ այս տեխնիկական բազայի վրա, քե սոցիալիզմի այդ աճումը ցուս ավելի դանդաղ կընթանա, քե մենք ցարժվելու չենք կրիսիսի քայլերով, բայց թե այնուամենայնիվ սոցիալիզմը մենք կառուցում ենք և կկառուցենք»: (Համկոմկուսի 14-րդ համագումար. սղազիլ հաղվեալութեան. ընդգծումն իմն է. Մ. Պ.):

«Մեր տունը հո կրակ չի ընկել», հայտարարեց նա ժողովուրդին այն նիստում, վորը քննարկում էր անընդհատ շարաթված անցնելու հարցը:

Այդ պատճառով է, վոր ընկ. Բուխարինն իր «Տնտեսագետի ղիտոգություններում» պաշտպան է կանգնում ինդուստրիացիներին տեմպի կրճատմանը, առաջարկելով հավասարվել «նեղ տեղերին», փոխանակ ախտիվ կերպով հաղթահարելու դրանք՝ սոցիալիստական ծավալուն առաջխաղացման պրոցեսում:

Բուխարինի բոլոր սխալ տեսական հայացքների հետ սերտորեն կապված է նաև նրա մոտեցումը հավասարակշռության պրոբլեմին: Իրոք, յեթե մեզանում պրոլետարական ղիկտատուրայի իրավակարգով իսկ կանխորոշած է սոցիալիզմի տարերային աճումը, յեթե մենք աներկբայորեն կկառուցենք սոցիալիզմը նույնիսկ կրիայի տեմպով զարգանալով, ապա գլխավոր ուղղությունը պետք է նվիրել վոչ թե նպատակադիր ընթացքին դեպի սոցիալիզմը, և վոչ թե այդ առաջընթացության առավելագույն հնարավոր տեմպի աշխուժմանը, այլ հարկավոր է միայն հետամուտ լինել, վոր ժողովրդատնտեսական տարրեր տարրերը «հավասարակշռվեն», պետք է հետևել, վոր նըրանք հավասարակշռության մեջ գտնվեն¹⁴⁰):

Ընդամին, աչքաթող և արվում, վոր հավասարա-

¹⁴⁰) Ժամանակին այդպիսի սխալ տնում էլին նաև «Ճախ կոմունիստները»: «Մեր տնտեսական քաղաքականության կենսական խնդիրն է, սկսած Հոկտեմբերյան հեղափոխությանից— գրում էր «Ճախ կոմունիստներին» որդանք,— գայլեր անել ժողովրդական տնտեսության հավասարակշռությանը վերականգնելու համար»: «Կոմունիստ» թերթը, № 5:

կշռություն սահմանելու բոլոր յիղանակներն էլ ընդունելի չեն մեզ համար:

Այդպես, ըստ Բուխարինի, պլանի խնդիրներն են «Նշել արտադրության ու սպառման զանազան ասպարեզներին և արտադրության զանազան ասպարեզների իրար հետ ճիշտ զուգակցելու պայմանները կամ, այլ խոսքով՝ անհետակամ ցարժման հավասարակշռության պայմանները»¹⁴¹):

Ընդ. Բուխարինն իսպառ աչքաթող է անում շարժման տեմպի և ուղղության հարցերը:

Ընկ. Բուխարինի ժամանակակից հայացքները մեր յերկրի սոցիալիստական շինարարության ուղիների և տեմպի նկատմամբ, հանդիսանում է հակախնդրյան լրացրած կոնցեպցիա: Դասակարգային պայքարի մարելը մեր յերկրում, սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման տեսությունը, ամբողջ գաղափարության հետ դաշինք կնքելու պահանջը, այսինքն՝ կուլակի հետ միասնական ճակատ ստեղծելը, ինդուստրիացի ման տեմպը թուլացնելու «նեղ տեղերին» հավասարվելու պահանջը այս բոլորը մի ամբողջական շղթայի ողակներն են: Ընկ. Բուխարինի բոլոր հայացքներինիմքն է հանդիսանում կապիտալիզմի բուրժուական իդիոլոգիայի առաջ: Նրա բոլոր գործնական պահանջների հիմքը կազմում է նահանջ կուլակի առաջից:

Ս. ջերի Բաղաբակյան գիծը գասակարգային քեճամի-ների գեճահասությամբ

Ընկ. Բուխարինի տեսական հայացքները հանդիսանում են մարքսիզմ-լենինիզմի ռեվիզիա, նրա

¹⁴¹) Ն. Բուխարին. — Տնտեսագետի ղիտոգությունները, էջ 14.

խեղաթշուրումը՝ բուրժուական ամեն տեսակի «մոգայական» թեորիաների վողով: Իզուր չէ, վոր այդպես շուտ համերաշխում են ընկ. Բուխարինի պլատֆորմի հետ ուստրալովականները, մենշեիկները, հսերները և պրոլետարիատի դասակարգային այլ թշնամիները:

Այլ թեքման իդեոլոգիան ամենից շատ մոտենում է նարոդնիկության, հսերականության, կրկնելով նրանց մանր-բուրժուական ուսմունքները գյուղացիական անտեսությունների ազատ, անկաշկանդ զարգացման հիման վրա սոցիալիզմի անցնելու մասին: Իհարկե, իրականում նման հիմքի վրա, ինչպես ցույց են տալիս վոչ միայն տեսական նկատառումները, այլև պատմական չերկարատե փորձը, հնարավոր է միայն անցնել ֆերմերական կապիտալիզմի: Եսերները մոռանալով Բուալոյի բարի խորհուրդը՝ «կատվին ասա կատու», նախընտրում են այդ ֆերմերական կապիտալիզմն անվանել սոցիալիզմ:

Չարմանալի չէ, վոր հսերներն ամեն կերպ խըրախուսում են աջ ուղևորներին, նրանց վորպես որինակ ցույց տալով «ամրակուռ բայլընիկներին» վորոնք ուզում են հավատարիմ մնալ Լենինի ավանդներին:

«Հանձին աջ թրքման, — գրում է ականավոր հսեր Ստալինսկին «նարոդնիկական ոպպոզիցիան» հոդվածում, — առաջին անգամը բայլընիզմի մեջ առաջ է գալիս մի հոսանք, վոր փաստորեն ժխտում է բայլընիկյան տնտեսական քաղաքականության հենց ելությունը, տյնպես, ինչպես այն քաղաքականությունը տարվել եր գիկտատուրայի չերկար տարիներին ընթացքում:

Նեղ-պրոլետարական սոցիալիզմի բայլընիկյան կոնցեպցիան՝ կիրառվելով նման խորապես ազրարային չերկրի վերաբերմամբ, ինչպիսին է Ռուսաստանը, արտահայտվում է վերելից անց կացվող միջոցներով՝ արհեստականորեն հզոր արդյունաբերություն ստեղծելու ծրագրում, իհարիվ գյուղացիության և գյուղացիության «սոցիալիստական վերափոխման» մեջ կոմունիստական իշխանության կողմից, վոր հենվում է իր աճող ինդուստրիալ բազայի վրա:

Այլ թեքումը հասկացավ գյուղացիության (կարդա կուլակի Ս. Պ.) հետ հաշտվելու անհրաժեշտությունը, հանուն չերկրի սոցիալական առաջադիմություն ամենաիրական և վոչ թե ուտոպիական շահերի: Այդ թեքման ներշնչողները եմպիրիկ ճանապարհով չեկան այն համոզման, վոր նման հաշտություն հնարավոր է միայն արմատապես փոխելով այն գիծը, վոր բայլընիզմն անց եր կացնում իր անտեսական քաղաքականության մեջ:

Բայց նման փոփոխություն պահանջի՝ նշանակում է ընդունել, վոր բայլընիզմը հակառակ ծայրից է սկսել նոր Ռուսաստանի կառուցումը:

Դա նշանակում է հրաժարվել «սոցիալիզմի ուղի» կոմունիստական կոնցեպցիայից, վոր վորոշում եր այդ գիծը, և անցնել նարոդնիկական-եսերական կոնցեպցիային, վոր մեկնում է Ռուսաստանի առանձնահատկություններից, հիմնվում է նրանց վրա և հարմարեցնում է իր ծրագիրը տվյալ իրական հրնարավորություններին:

Ահա թե ինչու աջ ուղևորները հրաժարվում են «քաղաքի պրոլետարական դեկավար ազգեցության»

տխրահուշակ թեորիայից, չսարսափելով «մանր-բուր-
ժո ական տարերքի» խրտվիլակից:

Ահա թե ինչու նրանց քննադատությունը կու-
նակցության սլաշտոնական քաղաքականության վե-
րաբերմամբ՝ նույնությամբ կրկնում է եսերական-նա-
րողնիկական փաստարկումները: Ահա թե ինչու տըն-
տեսական-ծրագրային սլահանջների բնագավառում նը-
րանք այնքան շատ մոտենում են եսերության:

Տեսական մեկնաբանությամբ նրանք տանում են
դեպի Լ. Կոնինի հեակյալ Ֆորմուլայի ուղիղիան՝ «դա-
շինք գյուղացիության հետ», վորի մեջ պրոլետարի-
ատին է պատկանելու «զեկավար դերը»:

Ստալինյան մամուլն իսկական ահով արձանա-
պըրում է, վոր սա «դիրքերի հանձնում է մանր-բուր-
ժուազիային», փոխարինում լենինյան Ֆորմուլայի՝
դաշինք «դեկս լարությամբ», դաշինք «իրավահավա-
սարության սկզբունքներով» ֆորմուլայով:

Իսոց հենց սա չե, վոր ամենից ավելի հեռացը-
նում է աջ թեքումը բալլեիկյան պաշտոնական իդեո-
լոգիայից և ամենից ավելի մոտեցնում նարողնիկա-
կանին:

Նրա ծրագրի իրագործումը խթան կհանդիսա-
նար վերափոխելու խորհրդային տնտեսակարգը, կեն-
դանի, ամեն ինչ ճնշող իր սկզբունքներով, և զարձ-
նելու աշխատանքային, տնտեսական մի գեոմիլրատիա
վոր մոտենում է այն իդեալին, վոր առաջադրում է
սոցաական եսերությունը փամանակակից շրջանի հա-
մար»:

Այսպես է աջերի գիծը եսերների գնահատու-
թյամբ: Արդարև, մի բանում պ. Ստալինսկին իրա-

վացի չե, աջերի իդեոլոգիան—եսերականության կըր-
կնությունն է, յուրատեսակ կոմարողնիկություն:

Պակաս հետաքրքրական չե աջերի գնահատակա-
նը պ. Ուստրյալովի, կապիտալիստական սեստավրա-
ցիայի այդ յերգչի կողմից: Ուստրյալովը լավ գիտե
եսերական դատարկախոսության արժեքը «սոցիալիզ-
մի» մասին, նա շատ լավ է հասկանում, վոր մանր-
բուրժուական տնտեսության ազատ զարգացումը կը-
տանի դեպի կապիտալիզմի վերականգնումը և զրա
համար նա յեկ կողմնակից է աջերին:

«Բուխարինը,—գրում է Ն. Ուստրյալովը,—գծա-
գրում է վորոշակի: Յեթե կուսակցական քամիները
ավյալ մոմենտին աննպաստ են նրան, ապա պատ-
մական քամիները՝ ընդհակառակը նպաստավոր են:
Բուխարինը—դա խաղաղությունն է, կապ և կուլտու-
րականություն: Ըստ եյության, չերը Բուխարինը սըր-
տից է խոսում, անկուսակցական աջ ուղեկիցները կա-
րող են լուկ:

Այն, ինչ Բուխարինն արտահայտում է ավելի
կամ պակաս սկադեմիական ակնաբկնեբով, նրա կող-
մնակիցները և զինակիցները ճշտում և սրում են: Նը-
րանցից միքանիսը նույնիսկ նմանեցնում են ձախ
կուրսը «ազգաբնակչությունից բռնի հարկ հավաքող
թաթար խաների քաղաքականության», անվանում են
այն «գյուղացիության սոցաական և ֆեոդալական
շահագործում», Իհարկե, բանը խոսքերի մեջ չե—
խսկզբանե չեր գործը: Հեղափոխությունները, ինչպես
և հակահեղափոխությունները, արվում են դասակար-
գերի, մասսաների, ժողովրդների կողմից:

Պետրոս առաքյալը, վոր յերեք անգամ ուրացավ

Գրիստոսին, այնուամենայնիվ հավերժացավ վորպես քրիստոնեյության մեծ առաջնորդ: Այսպես ել պ. Բուխարինը, յերեք անգամ ուրանալով իր «հարստացե՛ք լողունգը, անցնելու չե պատմության մեջ ընդմիշտ լուսավորված այդ հյութալի լողունգի շնորհով*):

Մենք միտք չունենք դատել, թե վորքան իրավացի չե պ. Ուստրյալովը ընկ. Բուխարինի պատմական ապագայի գնահատության մեջ, բայց նրա դովեստն ընկ. Բուխարինի ժամանակակից տեսությունների և լողունգների վերաբերմամբ ցույց ե տալիս նրանց որչեկտիվ բուրժուական և լիբերալ էջությունը:

Գովաբանական ընդհանուր խորից լետ չեն մընում նաև միլյուկովականները, աջերից պահանջելով «ուզմա-ֆեոդալական շահագործման» տերմինի հեղինակության իրավունքը և մենշեիկները: Որինակ՝ Փ. Դանը հետևյալ կարծիքն ե հայտնել Համկոմկուսի(բ.) մեջ աջ թեքման զարգացման վերաբերմամբ.

«Աջ թեքման մեջ,—գրում ե նա,—արտահայտվում ե մի ընդհանուր զգացում, թե Ռուսաստանում բուրժուական կապիտալիստական զարգացումը անհաղթահարելի չե և «աջ թեքման» այն պլատֆորմը, վոր այժմ ընդհանուր գծերով կայանում ե «ինդուստրիացման տեմպի դանդաղեցման», գյուղի վրա ճընշում գործ գնելուց հրաժարվելու և կոլտնտեսությունների ու խորհունտեսությունների «գերհարվածային» շինարարությունը դադարեցնելու մեջ, իհարկե, հանդիսանում ե լոկ առաջին քայլը դեպի խորհրդային կա-

*) Ն. Ուստրյալով. Hic Rondus hile solta! Թարբին, 1929 թիվ, էջ 6 և 12, ցիտ. քստ «Պրավդայի»:

ուվարության քաղաքականությունը բուրժուական կապիտալիստական զարգացման անհաղթահարելի պահանջներին հարմարեցնելու փորձը և դրանով հող ստեղծելու կառավարության և գյուղացիության հաշտեցման համար:

4. ԸՆԿ. ԲՈՒԽԱՐԻՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԿ. Բուխարինի փիլիսոփայության մեխանիստիկան քեբումը

Այլ ոպպոզիցիայի առաջնորդ ընկ. Բուխարինի քաղաքական բուր սխալները սերտորեն կապված են տեսական այն դրույթների հետ, վոր նա զարգացնում ե իր մի շարք աշխատություններում: Այդ պատճառով, քաղաքականության հարցերում աջ թեքման գծի տեսական արմատները մերկացումը ներկայացնում ե մեծագույն շահագոգություն, հնարավորություն տալով մինչև վերջը հասկանալու նրա ոպպորտյունիստական սեվիդիոնիստական էյությունը, Լենինն ասում եր, վոր «չի կարելի լիվ ըմբռնել, վոչ մի սխալ, ներառյալ նայեմ Բադախանը, յեթե մտք վերահասու չլինի այն ամենի սխալի ճեսական արմատներին, ով գործում ե այդ սխալը՝ յեղեկով վորոշակի, զիտակցորեն իր ընդունած դրույթներից» *):

Դրա հետ միասին, Լենինը մատնանշել եր, վոր ընկ. Բուխարինի քաղաքական սխալների հիմքն ե հանդիսանում նրա եկլիկտիկայի հիմունքները, վորով նա յերբեք լրջորեն չի զբաղվել: Հիրավի, ընկ.

*) Լենին. — Հատոր 18 մաս 1-ին, էջ 19.

Բուխարինի փիլիսոփայական հայացքները ներկայացնում են մի եկլեկտիկ շիլափլավ, վորում ի մի չեն խառնված և բողոքանովյան մեխանիզմը, և սուբեկտիվիզմը, և մարքսիզմի տոանձին դրույթները:

Բուխարինը հետևում է փիլիսոփայության մեջ այսպես կոչված մեխանիստական ուղղության, վորը չի տեսնում մատերիալի և հասարակության շարժման բաղմազանությունը և ըստ վորի շարժման և դարձացման բոլոր տեսակները հանգում են մեկի՝ մեխանիստական շարժմանը:

Սակայն կարելի չե արդյոք ճիշտ բավարար համարել մեխանիստական մոտեցումը՝ բնության և հասարակության բոլոր յերևույթներն ուսումնասիրելու և բացատրելու համար: Վոչ, չի կարելի, չի կարելի այն պարզ պատճառով, վոր մեխանիստական շարժումը շարժման ամենապարզ ձևերից մեկն է միայն, նրանց հետ միասին, գոյութուն ունեն նաև շարժման շատ և շատ ամենաբազմազան ձևերը, վորոնց մեջ, մեխանիկական ձևերի հետ միասին, գործում են ավելի բարձր որենքներ՝ քիմիական, կենսաբանական, հասարակության շարժման որենքները և այլն:

Այդ պատճառով, դեռ մարքսիզմի հիմնադիրները վճռաբար պաշտարել են, վոր բազմատեսակ և բազմազույն իրականությունը ներկվում է տաղտկալի միապաղաղ գորշագույն ներկով, պաշտարել են «անմիտ մատերիալիզմի» դեմ, վորն անխուսափելի հետևանք էր մինչ քիմիական 18 դարի, յերբ միակ ավելի կամ պակաս չափով մշակված գիտությունը մեխանիկան էր:

«Մեխանիկայի չափանիշի բացառիկ գործադրումն այն յերևույթների նկատմամբ, գրում էր Ենգելսը,

վորոնք ունեն քիմիական և որգանական գոյություն, այն յերևույթների նկատմամբ, վորոնց մեջ մեխանիկայի որենքները հարկավ շարունակում են գործել, սակայն հեռեհե մզվում այլ ավելի բարձր որեցեցերի կողմից, կազմում է Ֆրանսիական կլասիկ մատերիալիզմի յուրահատուկ, բայց իր ժամանակի համար անխուսափելի սահմանափակությունը»:

Առավել ևս անթույլատրելի չե հասարակական դարձացման որենքները սահմանափակել մեխանիկայի կամ բիոլոգիայի որենքներով «ընդհանրապես, գրում էր Լենինը, բիոլոգիական հասկացողությունների փոխադրումը հասարակական գիտությունների ասպարեզը—Ֆրադա չե: Չկա ավելի հեշտ բան, քան «եներգետիկ» կամ «բիոլոգիական-սոցիոլոգիական» դրոշմ դնել այնպիսի յերևույթների վրա ինչպիսիքն են՝ ճգնաժամերը, հեղափոխությունները, դասակարգերի պաշտարը և այլն, սակայն չկա ավելի անպտուղ, սխուլաստիկ մեռած գործ, քան այդ զբաղմունքը. . . Այդ հարմարեցման, «սոցիալական եներգետիկայի» այդ պրիոմներն ամբողջովին կեղծ են»:

Այնինչ, ընկ. Բուխարինը հակառակ մարքսիզմի այդ ալքրենական դրույթներին, վոչ միայն բիոլոգիական այդ հասկացողությունները փոխադրում է հասարակական ասպարեզը, այլ ավելին՝ հասարակության վրա փոխադրում է մեխանիկայի որենքները:

Վերցնում ենք, որինակ, նրա «պատմական մատերիալիզմի տեսությունը» գրքի նորագույն հրատարակությունները: Այդ գրքում կարելի չե կարգալ հետևալը.

«Մեխանիկական» և «որգանական»: Մինչև վեր-

Չին ժամանակներս մեր միջավայրում այդ հասկացողութունները հակադրվել են իրար: Հասարակագիտության ասպարիզում, մենք, մարքսիստներս, բողոքում ելինք «մեխանիկական բացատրության» դեմ գերադասելով խոսել «որգանական» կապերի մասին և այլն, թեպետ բնավ համամիտ չեյինք այսպես կոչված «որգանական դպրոցի» նախադաշարումներին սոցիոլոգիայի ասպարիզում *):

Այդ ժամանակից ի վեր հանդես լեկան յերկու վճռական դործոններ. նախ հեղաշրջում մատերիայի կառուցվածքին վերաբերյալ պատկերացումների մեջ, յերկրորդ՝ իդեալիզմի չափազանց աճումը բուրժուական պաշտոնական գիտության մեջ: Մատերիայի կառուցվածքի ուսմունքի ասպարիզում տեղի ունեցած հեղափոխությունն արմատապես փոխեց այն պատկերացումը ատոմի մասին, թե ատոմը բացարձակապես մեկուսացած մի միավոր է: Այն ինչ, հենց այդ հին պատկերացումն ատոմի մասին փոխադրվում էր անհատի վրա: Հասարակական գիտությունների ռորինզոնազանները ճշտիվ համապատասխանում էյին հին մեխանիկայի ատոմներին: Մինչդեռ հասարակական

*) Այդ հարկավ սխալ է: Մարքսիստները բողոքում էյին վոչ միայն հասարակության շարժման մեխանիկական բացատրության դեմ, յեյնեով մեխանիկայի սկզբունքներից, այլև որգանական բացատրության դեմ, բիոլոգիական հասկացողությունները հասարակական գիտությունների ասպարեզը փոխադրելու դեմ Այլ խոսքով, նրանք բողոքում էյին որգանական դպրոցի վոչ միայն առանձին «նախադաշարումներին» դեմ, այլև արմատապես մերժում էյին հենց այն կարծիքը, թե հնարավոր է սահմանել հառարակական զարգացման որինքները հասարակության և որգանիզմի անալոգիայի հիման վրա:

գիտությունների ասպարիզում խոսքը վերաբերում էր հենց այն ռորինզոնազանների հաղթահարմանը: Հարկավոր էր ամբողջ ուժով և վճռականությամբ հանդես բերել հասարակական տեսակետը, վորք և հանճարեղ կերպով կատարեց Մարքսը...

Ճիշտ են լեղել արդյոք «մեխանիկականի» դեմ ուղղված բողոքները հասարակական գիտությունների ասպարիզում: Իհարկե, ճիշտ են լեղել: Սակայն չի կարելի հիշատակել միմիայն տերմինները, չհասկանալով գործի էյուլթյունը: Այժմ ճիշտը դիպլեկտիկորեն վերածվում է իր հակադրությանը: Վորովհետև մատերիայի ներկայիս պատկերացումը տապալեց հին հայացքները *):

Ուրեմն ըստ Բուխարինի առաջ, յերբ ատոմները համարվում էյին անբաժանելի և առանձնացած միավորներ, հարկավոր էր ընդգծել հասարակական յերևուլթների յուրահատուկ կողմը, իսկ այժմ յերբ այդ պատկերացումը վերացավ, այդ ընդգծումը կորցրեց իր ամբողջ իմաստը, վորովհետև հասարակության մեջ անհատը միանգամայն համապատասխանում է մատերիայի ատոմին:

Ներկայումս ընկ. Բուխարինի հայանությունները համաձայն այլևս հիմք չունեն, սխալ են այն բողոքները, վորոնք ուղղված են հասարակական յերևուլթների մեխանիկական բացատրության դեմ: Ընկ. Բուխարինն այդպիսի գծհիկ բացատրություն տալով հասարակական յերևուլթների էյուլթյանը, ստորագրվում է, վոր նա մեխանիստական մատերիալիստ է: Այնինչ

*) Ն. Բուխարին.— Պատմական մատերիալիզմի տեսությունը: Հրատ. 8-րդ, 1929 թ. էջ 360:

դիալեկտիկական մատերիալիզմը պահանջում է յերևան հանել այն հատուկ, յուրատեսակ որենքները, վորոնք գտնվում են հասարակութայն զարգացման հիմքում: «Բազմաթիվ «դեպքերի» մի ընդհանուր սկզբունքի բերելը Հեգելը յերբեք չի անվանել դիալեկտիկա» — ինչպես նշում էր դեռ Մարքսը:

Այստեղ կարևոր է նշել, վոր ընկ. Բուխարինը ցանկանալով արդարացնել մեխանիկայի սկզբունքների փոխադրումը հասարակութայն շարժման որենքների ուսումնասիրութայն ասպարեզը, հենվում է դիալեկտիկայի վրա: Յեթե առաջ ճիշտ էլին հասարակութայն «մեխանիկական» բացատրութայն դեմ ուղղված բողոքները, պնդում է ընկ. Բուխարինը, ապա ներկայումս, դիալեկտիկական զարգացման բոլոր որենքներով, ճիշտը վերածվում է իր հակադրութայնը: Մակայն դժվար չէ տեսնել, վոր ընկ. Բուխարինը դիալեկտիկան հասկանում է և գործադրում է ձևականորեն, առանց ըստ էյութայն վերլուծելու գործի բոլոր հանգամանքները, առանց ցույց տալու իրական փաստերով, թե ճիշտ է արդյոք նրա դիալեկտիկական փոխանցումը: Իրականում ընկ. Բուխարինի մոտ դիալեկտիկայի փոխարեն ստացվեց հասկացողութունների բողոքանովյան սխուլաստիկա:

Բուխարինի այդ հատկութունը, այն է՝ կոնկրետ անալիզը հասկացողութունների սխուլաստիկ խաղով փոխարինելը, Լենինը նկատել էր դեռ առաջ, Այդպես «Անցողիկ շրջանի եկոնոմիկան» գրքի լուսանցքում, Լենինը գրում է. «Հեղինակը է՛ չարն է գործ դնում «դիալեկտիկական ժխտումն» խոսքը, չի կարելի գործա-

ծել այդ խոսքը, առանց նախապես զգուսորեն, փաստերով ապացուցելու» *):

Կոնկրետի փոխարինումը վերացականով

Ընկ. Բուխարինն իր տեսական կառուցումների մեջ շատ հաճախ իրականութայն կոնկրետ անալիզը փոխարինում է վտիտ, անպտուղ արստրակցիաներով, մոռանալով մարքսիստական այն տարրական թեզը, թե «ճշմարտությունը միշտ կոնկրետ է», թե բարդ է և թե հակասական իրականությունը, նրա բոլոր լուրահատուկ գծերով ճանաչելու համար, հարկավոր է լինել ամենապարզ, վերացական հասկացողութուններից, բարձրանալով զրանցից դեպի ավելի բարդը և կոնկրետը: Որինակ՝ խոսելով արտադրութայն այլ և այլ ձևերին հատուկ որինաչափութունների ուսումնասիրութայն մասին, Մարքսն ասում է.

«Կան վորոշումներ, վորոնք ընդհանուր են արտադրութայն բոլոր աստիճանների համար, վորոնք վորպես ընդհանուր է արձանագրում մտածողությունը. սակայն, ամեն տեսակ արտադրութայն, այսպես կոչված բոլոր ընդհանուր պայմանները վոչ այլ ինչ են, բայց յեթե այդ արստրակտ մոմենտները, վորոնց ոգնությամբ չի կարելի հասկանալ արտադրութայն և վոչ մի իրական պատմական աստիճանը»:

Այդպիսով Մարքսը վճռաբար բողոքում էր, վոր ընդհանուր արստրակտ հասկացողութունների մեջ թաղվի իրականութայն ամբողջ բազմազանութունը,

*) Բուխարինի «Անցողիկ շրջանի եկոնոմիկան» գրքին վերաբերյալ Լենինի բոլոր դիտողութունները քաղել ենք Լենինյան 9-րդ ժողովածուից:

բողոքում եր այն բանի դեմ, վոր այդ իրականութիւնն ուսումնասիրութիւնը փոխարինւի միջանի ճապաղ ճշմարտութիւններով, վորոնք պիտանի չին այլ և այլ չերևոյթիներ համար, սակայն անընդունակ են բացտորելու նրանցից ամեն մեկի չորատեսակ առանձնահատկութիւնները, չորատեսակ որին աչափութիւնները:

Իսկ Բուխարինը, լինելով միխանիստ, այսինքն՝ պնդելով, վոր բոլոր չերևոյթիներն ել յենթակա յեն միխանիկական պարզ որենքերին, վոր բոլոր բարդ չերևոյթիները կարելի չե բերել պարզի, շարունակ սայթաքում ե, ձգտելով կոնկրետ անալիզը փոխարինել արատրակցիաներով:

Այդպէս որինակ, Բուխարինը դեռ համաշխարհային պատերազմի շրջանում, փոխանակ ըմբռնելու և ընդդժելու քարդ իրականութեան բոլոր կողմերը, կապիտալիզմի զարգացման անհամաչափութիւնը, հասարակական-տնտեսական զարգացման այն տարբերատիճանները, վորոնց վրա գտնվում են առանձին չերկրները, և դրան համապատասխան կառուցելու իր քաղաքական հետևութիւնները, Տրոցկու հետ միասին ստեղծեց զուտ իմպերիալիզմի ծայրահեղորեն պարզացրած մակերեսային սխեմը: Բուխարինը, Տրոցկու հետ միասին, վերացավ այնպիսի «մանրունքից», ինչպիսին ե իմպերիալիզմի խորն յենթահողի գոյութիւնը՝ կապիտալիզմի և հասարակ ալըանքային արտադրութեան ձևով վերացավ այն փաստից, վոր գոյութիւն ունեն հետամնաց գաղութային և կիսագաղութային չերկրներ ու ազգային շարժումներ:

Ահավասիկ Տրոցկու արատրակտ մոտեցման մի նմուշը:

«Ազգային հեղափոխութիւնների ժամանակն անցել ե՝ աննվազը Յեվրոպայի համար—այնպես ինչպես և ազգային պատերազմների ժամանակը: Թե մեկի և թե մյուսի մեջ գոյութիւն ունի ներքին խորը կապ: Մենք ապրում ենք իմպերիալիզմի շրջանում... Վերջինս հակադրում ե վոչ թե բուրժուական ազգութիւնը հին ռեժիմին, այլ պրոլետարիատը բուրժուական ազգին *):

Սակայն—Տրոցկու սխալներն ավելի խորացնում եր Բուխարինը, հայտարարելով, թե «ազգերի ինքնորոշման լոզունգը ուտոպիկական ե և ֆրաստկար»:

Բուխարինը Տրոցկու հետ միասին չեր հասկանում, թե ինչպէս կարելի չե զուգակցել պրոլետարական հեղափոխութեան լոզունգը ազգային ազատագրական ու դեմոկրատական շարժումներին ոժանդակելու հետ: Բուխարինը չեր հասկանում այն պարզ ճշմարտութիւնը, թե վերջին շարժումները, ուղղված լինելով անմիջականորեն իմպերիալիզմի դեմ, թուլացնում են իմպերիալիզմի ուժը և զլուրացնում են պրոլետարական հեղափոխութեան հաղթանակը:

Իմպերիալիստական պատերազմում պրոլետարիատը չի կարող տուանց դավաճանելու իր դասակարգային շահերին, պաշտպանել «իր» իմպերիալիստական կառավարութիւնը—նա պետք ե նպաստի նրա պարտութեանը: Պրոլետարիատը չի կարող պաշտպանել «Նալրենիքի պաշտպանութեան» լոզունգը, սակայն ազգերի ինքնորոշման իրավունքի պաշտպանութեան լոզունգը նշանակում ե՝ ճանաչել ճնշված ազգութիւնների պրոլետարիատի իրավունքը և նույնիսկ ան-

*) Լ. Տրոցկի.— Գրվածքների ժողովածու, հատոր 3, մաս 1:

հրաժեշտութիւնը՝ պաշտպանելու այդ հայրենիքը իմպերիալիստական զիշատիչների հարձակումից և բռնութիւնից: Իսկ Բուխարինը, վոչ մի կերպ չէր կարողանում համադրել հայրենիքի պաշտպանութեան լոզունգի ժխտման հնարավորութիւնը՝ իմպերիալիստական յերկրներէ համար և միաժամանակ այդ լոզունգի առաջադրումն այն յերկրներէ համար, վորտեղ պարզանում և ազգային—ազատագրական շարժումը:

«Ինքնորոշման լոզունգը,—գրում եր Բուխարինը, վոչ այլ ինչ է, բայց լեթե «հայրենիքի պաշտպանութեան» մի այլ ձևը, վորովհետև լեթե մենք կոչ չանենք նյութապես պաշտպանելու պետական համապատասխան սահմանները, ապա այդ «լոզունգից կմտա միայն մի դատարկ ֆրագ» *) և այդ հիման վրա ընկ. Բուխարինը պայքարում եր ինքնորոշման լոզունգի դեմ: Քննադատելով հարցի վոչ դիալեկտիկ դրվածքը, վոր հատուկ է Բուխարինին, Լենինը գրում եր.

«Ինքնորոշումից բղխում է հայրենիքի պաշտպանութիւնը», համառորեն պնդում է հեղինակը: Այստեղ նրա սխալն այն է, վոր նա ուզում է հայրենիքի պաշտպանութեան ժխտումը վերածել ռաբլոնի, հետևցնեք վոչ քե սվյալ պատերազմի կոնկրետ պատմական առանձնահատկութիւնից, այլ «ընդհանրապես»: Դա մարքսիզմ չէ:

Հեղինակին վաղուց արգին ասված է, և նա այդ չի հերքում—թե՛ փորձեցեք գտնել ազգային

*) Ազգերի ինքնորոշման իրավունքը՝ լոզունգի մասին տես. «Պատկերներ Հոկտեմբերյան Հեղափոխութեան պատմութիւնից», հատոր 1, էջ 517:

ճնշման կամ անիրավահավասարութեան դեմ պայքարելու աջակիսի մի ֆորմուլ, վորը չարդարացնի «հայրենիքի պաշտպանութիւնը»: Դուք չեք կարող անել այդ:

Արդոք, դա նշանակում է, վոր մենք հակառակ ենք ազգային ճնշման դեմ պայքարելուն, յեթե դրանից կարելի չէ հետևցնել հայրենիքի պաշտպանութիւնը:

Վնչ, վորովհետև մենք վոչ թե «ընդհանրապես դեմ ենք «հայրենիքի պաշտպանութեան» (տես՝ մեր կուսակցութեան բանաձևը), այլ դեմ ենք այդ խարբբայական լոզունգով զարդարելու տվյալ իմպերիալիստական պատերազմը:

Հեղինակն ուզում է (սակայն չի կարողանում. նա այստեղ ևս մի տարի չէ, վոր յերկունքի մեջ է...) սխալ, վոչ պատկանորեն դնել «հայրենիքի պաշտպանութեան» հարցը *):

Չհասկանալով, վոր կարելի չէ իրար զուգակցել «հայրենիքի պաշտպանութեան» լոզունգը՝ ազգային պատերազմների համար, և այդ լոզունգի ժխտումն՝ իմպերիալիստական պատերազմների համար, Բուխարինը Լենինին մեղադրում եր «դուալիզմի» մեջ, յենթադրելով, վոր Լենինը մինչև վերջը չի մշակել ինքնորոշման լոզունգը, վոր Լենինը չի հասկացել, թե նրանից բղխում է «հայրենիքի պաշտպանութեան» լոզունգը:

Չեղ մոտ,—գրում եր Բուխարինը Լենինին,— ստացվում է դուալիստական կոնցեպցիա՝ հայրենիքի

*) Լենին. — իմպերիալիստական եկոնոմիզմի ճնշող ուղղութեան մասին, «Բայբլետի» № 15, 1929 թ. էջ 84:

պաշտպանության նկատմամբ դուք հետևում եք ժամանակակից տեսակետին, իսկ ինքնորոշման լոզունգի նկարմամբ՝ «անցյալ դարի» տեսակետին» *):

«Իռալիզմին վերաբերյալ խոսքերը, բացատրում ե լենինը Բուխարինին, ցույց են տալիս, վոր հեղինակը չի հասկանում, թե ինչ ե մոտիվը և ինչ ե դուալիզմը:

Յեթե չես «միացնում եմ» կոշկի վրձինը և կաթնասուն կենդանուն, միթե դա «մոտիվ» կլինի:

Յեթե յես ասեմ, թե (ա) նպատակին հարկավոր ե գնալ (բ) գետից դեպի ձախ, իսկ (գ) կետից դեպի աջ:

(գ) (ա) (բ)

Դա «դուալիզմ» կլինի արդյոք:

Միատեսակ ե, արդյոք, ճնշող և ճնշված ազգերի պրոլետարիատի դրությունն ազգային ճնշման նկատմամբ: Վոչ, միատեսակ չե, միատեսակ չե յեվ սեքսուալես, յեվ քաղաքականապես, յեվ գաղափարականորեն, հոգեվոր տեսակետից յեվ այլն:

Ուրեմն:

Ուրեմն, զանազան յելակետներից մի նպատակի (ազգերի միաձուլումն) վումանք կընթանան մի կերպ, ուրիշները՝ այլ կերպ: Դրա ժխտումը մի «մոտիվ» ե, վոր միացնում ե կոշկի վրձինը — կաթնասունի հետ»**):

Այդպիսով, թեորիայի տեսակետից, ընկ. Բուխարինի սխալները պատերազմի տարիներին հիմնված

*) Մեջ եմ բերում Բակսիու «Բայրէկիները 3-րդ Ինտերնացիոնալի համար մղվող պայքարում» հոդվածից: «Պատմագիտամարքսիստ, հատոր 11, էջ 37:

**) «Բայրէկի» № 15, 1929 թ. էջ 84-85:

եյին այն բանի վրա, վոր փոխանակ հաշվի առնելու բարդ իրականությունը նրա ամբողջ բաղմագանությամբ, նա չենում ե իր իսկ ստեղծած միատարր դուալիզմի վերացական սխեմից: Բուխարինը չեք կարողանում հասկանալ դիալեկտիկ տրամաբանության հիմնական կանոններից մեկը, վորը պահանջում ե կոնկրետ կերպով ուսումնասիրել իրականությունը:

Սակայն բնորոշ ե, վոր բավական ժամանակ անցնելուց հետո ևս Ն. Ի. Բուխարինը «Անցողիկ շրջանի տնտեսությունը» աշխատության մեջ, տեսական նման սխալ ե գործում, վոչինչ մոռացած չլինելով և վոչինչ չսովորելով այդ հարցում Լենինից:

«Այսպես կոչված ազգային պետությունը, գրում ե Բուխարինը, արդեն մինչ պատերազմյան շրջանում դուալ ֆիկցիա չեք»: «Վոչ թե դուալ ֆիկցիա, ուղղում ե նրան Լենինը, այլ վոչ մաքուր ձևը: Դիալեկտիկ մատերիալիզմի խախտում ե հանդիսանում սրամաքանական (վոչ նյութական) բուրժուար մի բանի կոնկրետ աստիճանների վրայով: Հեղինակը մոռացել ե, վոր 1) իմպերիալիստական պետությունները ծնել — աճել են ազգային պետություններից, 2) վոր «զաղուխներում ևս ձևավորվում են ազգային պետություններ»:

Յերբ Բուխարինը ասում ե, թե պատերազմը «մրցության մեթոդներից մեկն ե զարգացման վորոշ աստիճանի վրա», թե վերջինս անհրաժեշտ ե քննել այդ տեսակետից, Լենինը գրում ե, «Վոչ ընդհանրապես, վոչ ամեն մի պատերազմ»: Յերբ մի այլ տեղ Բուխարինը, վերլուծելով իմպերիալիստական պատերազմի առանձնահատկությունները, խոսում ե առ հա-

սարակ պատերազմի մասին, Լենինը լուսանցքում նը-
շում է,--«1914--18 թվականի պատերազմը, սակայն
վոչ թե 1911--12 թվականին: Ակադեմիկոսը բաց է
թողել չուրահատուկ տարբերությունը»:

Յեթե այժմ մի հայացք գցենք ընկ. Բուխարինի
տյն սխալներին վրա, վոր գործել է նա Բրեստի դաշ-
նագրի շրջանում մեթոդոլոգիայի տեսակետից, ապա
դարձյալ դժվար չէ տեսնել, վոր դրանց հիմքն է կազ-
մում կոնկրետի փոխարինումը վերացականով: Փո-
խանակ ուշի ուշով և բազմակողմանի կերպով վերլու-
ծելու այն պայմանները, վորով ստիպված ելինք պաշ-
քար մղել գերմանական իմպերիալիզմի դեմ, փոխա-
նակ վերլուծելու տարբեր դասակարգերի վերաբեր-
մունքը դեպի այդ պատերազմը և այլն, Բուխարինը
սահմանափակվեց ընդհանուր ֆրազով, թե մենք,
կնքելով խաղաղության «խայտառակ պայմանագիր»,
համաձայնում ենք «գործարք» կնքել իմպերիալիզմի
հետ և այդ պատճառով պետք է անպատճառ և անպաշ-
ման դիմենք հեղափոխական պատերազմին:

Այդպես, ձախ կոմմունիստները Բուխարինի գլխա-
վորությունը, կուսակցության Կենտկոմին իրենց
տված հայտարարության մեջ, հանդես գալով Կենտ-
կոմի դեմ, վոր վերջինս համաձայն է կնքելու
խաղաղության պայմանագիրը, գրում են ին.

«Պրոլետարիատի թշնամիների առաջին իսկ
գրոհի պահին տրված այդ համաձայնությունը միջա-
ազգային պրոլետարիատի առաջավոր ջոկատի կապի-
տուլյացիան է միջազգային բուրժուազիայի առաջի
ժուլգադրելով ամբողջ աշխարհի առաջ պրոլետարական
դեկտատուրայի անգործությունը Ռուսաստանում, նա

հարված է հասցնում միջազգային պրոլետարիատի
գործին, վորն առանձնապես սոսկալի չէ արևմտյան
Յեվրոպայում տիրող հեղափոխական ճգնաժամի պա-
հին և դրա հետ միասին, մի կողմն է վանում ռուսա-
կան հեղափոխությունը միջազգային շարժումից:

Մենք գտնում ենք, վոր իշխանությունը գրավե-
լուց հետո, բուրժուազիայի վերջին հեներանները
պրոլետարիատի կողմից լիովին ջախջախվելուց հետո,
անխուսափելիորին հանդես է գալիս քաղաքացիական
պատերազմը միջազգային մասշտաբով զարգացնելու
խնդիրը, մի խնդիր, վորն իրագործելու համար նա
չի կարող կանգ առնել վորևէ դժվարությունների
առաջ: Դրանից հրաժարվելը կորստի չէ հասցնում
ներքին տարրալուծումից. դա հավասարազոր է ինքնա-
սպանություն»:

Լենինը հանրամատչելի ձևով բացատրեց Բուխա-
րինին. թե «գործարքներին» մեջ տարբերություն կա:

Լենինը, յերևան հանելով ձախ կոմմունիստների
սխալների տեսական արմատները, քննելով նրանց
վերոհիշյալ թեզերը, գրում էր.

«Այդ առարկունները քննելիս, իսկույն աչքի յե
զարնում հեղինակների հիմնական սխալը: Նրանք վոչ
մի խոսք չեն ասում տվյալ մոմենտի հեղափոխական
պատերազմի կոնկրետ պայմանների մասին: Այն, ինչ
վոր խաղաղության կողմնակիցների համար հանդիսա-
նում է գլխավոր և հիմնական նկատառում, այն է՝
այժմ պատերազմելը մեզ համար հնարավոր չլինելը,
հենց այդ է, վոր նրանք զանց են տանում: Իպտաս-
խան թեկուզ իմ թեզերի, վորոնք լավ հայտնի յեն
հունվարի 8-ի հեղինակներին, բերվում են բացառա-

պես բնդհանուր նկատառումներ, մի արտարակցիա, վոր անխուսափելիորեն վերածվում է ֆրագի: Վորովհետև հետևածն մի պատմական նկատառում, վոր գործադրվում է առանձին դեպքի վերաբերմամբ, առանց քննելու հենց տվյալ մոմենտի պայմանները, դառնում է ֆրագ:

Վերցնենք առաջին դրույթը: Նրա ամբողջ «աղը» մի կշտամբանք է, բացականչութուն, դեկլամացիա մի ձգտում է «ամաչեցնել» հակառակողին, մի դիմումն է զգացմունքներին: Թե՛ ահա ինչպես անխելք էք դուք, ձեզ վրա արշավում են իմպերիալիստները, իրենց նպատակ «հայտարարելով» պրոլետարական հեղափոխության ճնշումը, իսկ դուք պատասխանում եք խաղաղություն կնքելու համաձայնություն: Սակայն յեր առարկումը՝ հեղինակների համար ակնհայտորեն հենց այն է, վոր հրաժարվելով ծանր խաղաղությունից, մենք հենց դյուրություն ենք տալիս թշնամուն՝ ճնշելու պրոլետարական հեղափոխությունը: Յեվ մեր այդ առարկումը հաստատված է (որինակ՝ իմ թեզերի մեջ) մի շարք կոնկրետ ցուցումներով՝ բանակի վիճակի, նրա դասակարգային կազմի նկատմամբ և այլն: Հեղինակներն անտես են առել կոնկրետը և ստացվել է դատարկ ֆրագ:

Արհմիություններին վերաբերյալ դիսկուսիայի մեջ, Լենինը նույնպես նշում է, թե Բուխարինը չլուրտեց կոնկրետորեն մոտենալ իր քննած հարցերին, չգիտե «ընդգծել ամենաեզականը, զարգացման գծի կամ շղթայի մեջ»: Մատնանշելով, վոր Բուխարինի մոտեցման մեջ դեպի արհմիությունների խնդիրները «փորձի նշույլ անգամ չկա»՝ հարցն ուսումնասիրելու

«տվյալ ժամանակ, տվյալ կոնկրետ հանգամանքներում», մատնանշելով, թե «նա (Բուխարինը Ս. Պ.) մոտենում է առանց վորևէ կոնկրետ ուսումնասիրության, դատարկ արտարակցիաներով», Լենինը ցույց տվեց, վոր հարցն այդպես դնելով, Բուխարինը հանգում է ելլելու տիզմին, փրցնում է մեկից մի կտոր, մյուսից մի այլ կտոր: Իսկ «հարցը ձիշտ դնելու համար, հարկավոր է դատարկ արտարակցիաներից անցնել կոնկրետին»:

Ընկ. Բուխարինի հնացած հիվանդությունն արտահայտվում է ներկայումս, յերբ նա լուծում է կապիտալիզմի զարգացման և անցողիկ շրջանի տեսություն հիմնական հարցերը:

Քննելով ժամանակակից կապիտալիզմը, Բուխարինը ինչպես տեսանք, ստեղծում է կազմակերպված տեսություն մի վտիտ, արմատապես սխալ արտարակցիա: Արտարակցիաներով տարվելը, իրականությունից բազմակողմանի և ուշի-ուշով ուսումնասիրություն զանց առնելը, Բուխարինին հասցրեց այնտեղ, վոր նա վերացավ կապիտալիզմի հենց ամենաեզական կողմերից և գլորվեց սոցիալ-դեմոկրատական «եֆորմիստական իդեոլոգիայի ճահիճը»:

Իհու պատերազմի ժամանակ, Լենինը նշում էր, վոր իմպերիալիզմի հարցի միակողմանի դրվածքը Բուխարինի կողմից, նրան մղում է իմպերիալիզմի ապոլոգայի (գովաբանությունից) հակասությունները կոծկելու՝ դիրքերը: Լենինի այդ գնահատականը կարելի է ամբողջովին գործադրել Բուխարինի ներկա գրվածքների նկատմամբ, վորոնց մեջ կազմակերպված կապիտալիզմի տեսությունը ապրում է իր յերկրորդ յերիտասարդությունը:

Դասակարգային հակասութիւնները մարեցու աե, սութիւնը դարձալ արդյունք ե այն հանգամանքի-վոր նա վերանում ե մեր յերկրի դասակարգային պայ-քարի զարգացման կոնկրետ ընթացքից, վերջինս փո-խարինում ե անբովանդակ և տափակ ճշմարտութիւն-ներով: «Աշխատանքային մսխումները» հոչակավոր «որենքը»,—վորն ըստ Բուխարինի կոչված ե հանդի-սանալու հասարակական ամեն տեսակ ֆորմացիայի ռեզուլյատորը, այն տարբերութիւն միայն, վոր զա-նազան ֆորմացիաներում նա հանդես ե գալիս տար-բեր պատմութեանով, իսկ սոցիալիզմի ժամանակ իս-պառ առանց պատմութեանի, մի որենք, վորի համա-ձայն, մեր կուսակցութեան տնտեսական քաղաքակա-նութիւնը պետք ե սահմանափակվի գիտակցորեն պահպանելով մեր տնտեսութեան մեջ այն պրոպոր-ցիաները, վորոնք կապիտալիզմի պայմաններում կը-սահմանվելին տարբերայնորեն,—հանդիսանում ե մի նմուշ թե ինչպես Բուխարինը չգիտե գտնել և առանձ-նացնել խորհրդային եկոնոմիկայի չորահատուկ լնույթը և պլանի իրական դերը նրանում:

Անցողիկ հասարակութեան «յերկրասակարգ մո-դելը», վորի համաձայն անցողիկ հասարակութեան մշտական հիմնական որինաչափութիւններն ուսում-նասիրելիս կարելի յե վերանալ մանր ապրանքային տրտադրութեան կապիտալիստական տարրերի գոյու-թեան փաստից և մանր ապրանքային տրտադրութեան կապիտալիստական տեղեկանքների փաստից—ցույց ե նտալիս, վոր աջ թեքման առաջնորդների տեսական սխալները նրանց հասցնում են բացահայտ ոպորտու-իստական հետեութիւնները՝ քաղաքականութեան մեջ,

Այդպես, Բուխարինն, յեկնելով իր յերկրասա-կարգ մոդելից, պնդում ե, թե ՆԵՊ-ը դասակարգային տեսակետից հանդիսանում ե «ճիշտ հարաբերութիւն-ների սահմանում գյուղացիութեան հետ», միանգա-մայն անտես առնելով, վոր դրա հետ միասին Նեպ-ը դասակարգային տեսակետից մի քաղաքականութիւն ե, վորի նպատակն ե հաղթահարել և դուրս մղել կա-պիտալիստական տարրերը:

Այդպես, շնորհիվ այն հանգամանքի, վոր ընկ-Բուխարինը վերացավ անցողիկ եկոնոմիկայի կապի-տալիստական տեղեկանքների գոյութեանից, ստացվեց այն հետեութիւնը, թե Նեպ-ի վճռական դասակար-գային խնդիրներից մեկը՝ կապիտալիստական տար-րերի սահմանափակման, հաղթահարման և դուրս մղե-լու խնդիրը, դուրս ընկավ նրա տեսողութեան շրջանից:

«Նեպ-ը, ասում ե ընկ. Ստալինը, հանդիսանում ե պրոլետարական պետութեան հատուկ քաղաքակա-նութիւնը... վորը նկատի ունի կապիտալիստական և սոցիալիստական տարրերի պայքարը, վորը նկատի ունի ուժեղացնել սոցիալիստական տարրերի դերը՝ իջնաս կապիտալիստական տարրերի, վորի նպատակն ե սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտա-լիստական տարրերի նկատմամբ, վորի նպատակն ե վոչնչացնել դասակարգերը, կառուցել սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը»: Գործի հենց այս կողմը համա-ռորեն չի ուզում տեսնել ընկեր Բուխարինը:

ԸՅԿ. Բուխարինի եմպիրիզմը

Սակայն հարց ե ծագում՝ ինչպե՞ս հաշտեցնել կոնկրետը վերացականով փոխարինելն այն հանգա-

մանքի հետ, վոր ընկ. Բուխարինի ներկայիս ամբողջ պլատֆորմը հերկայացնում ե պրոլետարիատի տեական և արմատական շահերի տեսակետից մոտենալու կատարյալ անկարողութուն, նրանց մոռացութեան տալն իհաճույս բոլորի շահերի: Չէ վոր փաստ ե, վոր շողկապի նոր ձևերի և ինգուստրիացման արագ տեմպի անհրաժեշտութեան ժխտումը, նեղ տեղերին հավասարվելու լոգուհզը, սոցիալիստական վերակառուցման առաջին ետապի առջև դժվարութեանները հանդեպ խուճապի չենթարկվելը և այլն, այդ բոլորը ցույց ե տալիս հենց ընկ. Բուխարինի սողոսկուն եմպիրիզմը, ցույց ե տալիս, վոր նա չգիտե այսորվա կարիքները շողկապել կուսակցութեան հիմնական գծի հետ: Ինչ ե ցույց տալիս, վերջապես, այն, վոր ընկ. Բուխարինը չգիտե առաջագրել և ընդգծել պրոլետարիատի և նրա կուսակցութեան առջև ծառայող նոր խնդիրները, չգիտե յուրացնել նոր լոգուհզները, չգիտե ըմբռնել սոցիալիստական շինարարութեան զարգացման նոր շրջանը: Կամ Նեպո-ի նրա մեկնաբանութունը, վոր նկատի չի առնում այն հանգամանքը, վոր Նեպ-ը աստիճանաբար պատրաստում ե իր վոչընչացման պայմանները, թե նա աստիճանաբար վերացնում ե իրեն և մահանում ե:

Այստեղ ամենուրեք բացահայտորեն արտահայտվում ե սողոսկուն այն եմպիրիզմը, վորն այնպես խարազանում եր ժամանակին Լենինը:

«Պարոնայք ոսվորոժդեհնցիներ, գրում եր նա որինակ, չգիտեն մի այլ ռեալիզմ, բացի սողոսկուն (ռեալիզմից թարգմ.): Նրանց միանգամայն խորթ ե մարքսիստական ռեալիզմի հեղափոխական դիալեկտի-

կան, վորն ընդգծում ե առաջավոր դասակարգի մարտական խնդիրները, վորը գոյութուն ունեցածի մեջ չերևան ե բերում նրա խորտակման տարրերը» *):

Առաջին հայացքից այստեղ իրոք հակասութուն կա: Առաջին հայացքից կարող ե թվալ վոր յեթե Բուխարինը կոնկրետը փոխարինում ե վերացականով, ապա դրանով իսկ նա ապահովված ե սողոսկուն եմպիրիզմից: Սակայն բանն ել հենց այն ե, վոր Բուխարինյան արտրակցիաներն անարյուն, վտիտ արստրակցիաներ են, վորոնք չեն կապված կոնկրետ իրականութեան հետ, վորոնք ընդհանրացում չեն: Յեվ այդ պատճառով, կոնկրետի և վերացականի միջև խզումն անողոքաբար հասցնում ե այնտեղ, վոր ընկ. Բուխարինը կամ սավառնում ե ամպերի մեջ, վերանալով պրոլետարիատի պայքարի և նրա հերթական խնդիրների կոնկրետ պայմաններից, կամ թփրտում ե մանր գործերի խորքում, կորցնելով հեղափոխական հեռանկարը, չկարողանալով կառչել հեղափոխական շղիթայի հերթական ողակին և անհեռատես գործարարութեամբ փոխարինելով Լենինյան հեղափոխական գործնականութունը, մի գործնականութուն, վորը չենթադրում ե զարգացման ամբողջ պրոցեսի իմաստավորումը, ըմբռնումը:

«Մենք չենք կարող բավարարվել նրանով, գրում եր Լենինը, վոր մեր տակտիկական լոգուհզները կաղալով ընթանան անցքերի հետևից, հարմարվելով դրանց՝ նրանք կատարվելուց հետո: Մենք պետք ե ձգտենք, վոր այդ լոգուհզները մեզ առաջ տանեն,

*) Լենին, հատոր 4 էջ 286.

լուսավորեն մեր հետագա ուղին, բարձրացնեն մեզ բոլորիս անմիջական խնդիրներից վեր»*):

Վորջան հեռու յե դրանից մեր աջ ուսուցիչները:

ԸՃԿ. ԲՈՒԽԱՐԻՆԻ սուբյեկտիվիզմը

Փոխարինելով կոնկրետը վերացականով, իր քաղաքական հետևությունների մեջ հրաժարվելով հաշվի առնել որչեպև իրադրությունը՝ նրա բոլոր յուրահատուկ պայմաններով, ընկ. Բուխարինը շատ հաճախ ընկնում է սուբյեկտիվիզմի մեջ, փոխարինում է իրականը ցանկալիով: Լնկ. Բուխարինի սուբյեկտիվիզմն այն է, վոր նա հաճախ մոռանում է թե մեր ճանաչողությունը սոսկ որչեպև իրականության մի արտացոլում է և ընկնում է հասկացողությունների անպատեղ խաղի մեջ, հասկացողությունների սխալաստիկայի» մեջ: Ձուր չե, վոր Լենինը «անցողիկ շրջանի եկոնոմիկայի» լուսանցքում, վերափոխելով հայտնի առածը, թե «իմ լեզուն իմ թշնամին է», գրել էր, «իմ (այսինքն Բուխարինի,—Ս. Պ.) Begriffsscholastic-ը իմ գլխավոր թշնամին է»:

Այն փաստը, վոր Բուխարինը մինչև վերջը չվոչնչացրեց իդեալիզմը և հաճախ ընկնում է սուբյեկտիվիզմի մեջ, Լենինը նշել էր դեռևս «Անցողիկ շրջանի եկոնոմիկայի» վերաբերյալ իր դիտողությունների մեջ: Շատ հաճախ, գրում է Լենինը, շատ հաճախ հեղինակը (Բուխարինը,—Ս. Պ.) ընկնում է գիտելիության մատերիալիզմի (այսինքն մաթեմատիկայի) հակա-

*) Լենին. հատոր 6, էջ 239.

սող իդեալիզմի մեջ («տրամաբանություն» «տեսակետ» և այլն, առանց գիտակցելու նրանց ծագումը և տեսերիալիզմից որչեպև իրականությունից և այլն): Հենց այստեղից բխում են մի շարք տեսակետ անճշտություններ, գիտական աղբ, ակադեմիկ հիմարություններ»:

Որինակ՝ ուսումնասիրելով արտադրական պրոցեսի առանձին տարրերը, Բուխարինը գրում է, թե ինչ տեսակետից են քննվում դրանք, ինչու նրանք «տեսականորեն հետաքրքիր են», այդպիսով հարցերը քննելով բացառապես սուբյեկտիվորեն: Լենինը չերկուռ անգամ ընդգծելով չակերտների մեջ առնված խոսքերը, գրում է. «այդ խոսքերը չեն: «Բողոքանովյան» տերմինոլոգիայի սխալը չերևան է գալիս՝ սուբյեկտիվիզմ, սուբյեկտիզմ: Բանն այն չե, թե ով է «քրննում», ում համար «հետաքրքիր է», այլ այն, թե ինչն է անկախ մարդկային գիտակցությունից»:

Բուխարինը իր «պատմական մատերիալիզմի տեսության» մեջ վորոշելով գիտությունը, գրում է. «Գիտությունը նախասանում է շարժապատճ, իրար հարմարեցված, սխտեմատիկ մտքեր, վորոնք ներդաշնակ, շարքերով ընդգրկում են գիտակցությունից վորևե առարկան»*):

Ըստ Բուխարինի, հենց «կարգի բերված գաղափարների, մտքերի, սխտեմա կազմում է գիտությունը բառիս բուն իմաստով»**):

*) Ն. Բուխարին. Գաղափարական մատերիալիզմի տեսությունը. էջ 240.

***) Ն. Բուխարին. Գաղափարական մատերիալիզմի տեսությունը. էջ 181.

Ինչպես յերևում է, Բուխարինը, մի փոքր խորհրդակցութիւնից հետո, վորոշելով գիտութիւնը, ընկնում է սուբյեկտիվ իդեալիզմի մեջ: Իրօք, կարելի չէ կազմել մտքերի համաձայնեցված և ներդաշնակ սխտեմ շրջապատի մասին, սակայն այդ մտքերի սխտեմը կարելի չէ գիտական անվանել միմիայն այն ժամանակ, յերբ նա ճիշտ է արտացոլում ուեալ իրականութիւնը: Իսկ ճշմարտութեան չափանիշ է հանդիսանում հասարակական մարդու պրակտիկան: Իսկ յեթե ընդունենք Բուխարինի վորոշումը, ապա գիտութիւն կարելի չէ անվանել նաև կրօնը, վորովհետև վերջինս նույնպես ներկայացնում է մտքերի բավականաչափ շտղկապված մի սխտեմ շրջապատի մասինը:

«Անցողիկ շրջանում, գրում է մի այլ տեղ Բուխարինը, անալիզը չի կարելի սահմանափակել, նախադրյալ ընդունելով դասակարգի ամբողջական միատարրութիւնը»: Լենինը դարձյալ ընդգծելով «նախադրյալ» բառը, Բուխարինին սովորեցնում է, վոր «բանը նախադրյալը չէ, (դա իդեալական է) այլ նյութական է .. Այդպիսի ամբողջական միատարրութիւն չկա»: Բուխարինը հետագայում ևս չվճնչացրեց այդ սուբյեկտիվիզմը: Վերջինս կազմում է անցողիկ շրջանի բնույթին վերաբերյալ նրա հայացակետերի հիմքը:

Այդ տեսակետից չափազանց բնորոշ է Բուխարինի կարծիքը անցողիկ շրջանի բնույթի մասին: «Լենինը, վորպես մարքսիստ» ղեկուցման մեջ նա ստում է.

«Յերբ բանվոր դասակարգը և հեղափոխական

կուսակցութիւնը գրավում են իշխանութեան համար պաշարողներին դրութիւնը, ապա իդեոլոգիական բոլոր աշխատանքներում, ամեն տեղ և ամենուրեք մենք պետք է անխուսափելիորեն որենք, շեշտենք, վերլուծենք հակասական բոլոր կողմերը, մենք պետք է նըշենք կապիտալիստական հասարակութեան բոլոր հիմնական անհարթութիւնները, մենք պետք է խնամքով նշենք ընտրենք և վերակազմենք տեսական կարգում այն, ինչ վոր բաժանում է այդ հասարակութիւնը տարբեր տարբերի: Այն պարզ պատճառով, վոր մեզ համար գործնականորեն կարևոր է, գտնելով ճեղքերը, այդ ճեղքերի մեջ խցկել ամենից ավելի սուր և ամենից խիստ գործող սեպը: Մեր առաջ կանգնած է կործանարար խնդիր: Մենք պետք է տապալենք կապիտալիստական ուժիմը և այդ պատճառով, ըստ ինքյան հասկանալի չէ, վոր առաջին հերթին տեսական բոլոր դրոյթներին և ողակներին ընտրութիւնը ընթանում է հենց այդ գծով: Մեզ համար տեսականորեն կարևոր է խորացնել Յերբ տեսականորեն կարևոր է խորացնել Յերբ բանվոր դասակարգը կանգնում է իշխանության գլուխը բանվոր դասակարգը և ծառանում միացնելու հասարակական ամբողջութեան տարբեր մասերը՝ բանվոր դասակարգի վորոշ հեգեմոնիայի տակ: Գործնական շահագրգռութիւն են ներկայացնում մի շարք այնպիսի հարցեր, վորոնք առաջ հետաքրքիր չէին, վորոնք այժմ պետք է ավելի մեծ չափով իմաստ ստանան: Այժմ մենք պետք է վոչ թէ կործանենք, այլ հառուցենք*):

*) Տես Բուխարին. «Ստակա» ժողովածուն. Պետերս

Այստեղ ընկ. Բուխարինի սուբյեկտիվիզմը հանդես է գալիս չափազանց ցայտուն կերպով: Կապիտալիստական հասարակութայն հակասությունները ընկ. Բուխարինի համար նախ և առաջ վոչ թե սուբյեկտիվորեն գոյություն ունեցող հակասություններ են, վորոնք աճում են կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց, այլ արդյունք են մարքսիստների անձնական ցանկությունների, վորոնք ընդգծում ու շեշտում են այդ հակասությունները: Յեվ շնորհիվ այդ սուբյեկտիվիզմի, Բուխարինը ստեղծում է անցողիկ շրջանի չափազանց աղավաղված, ռևիզիոնիստական տեսությունը: Նա առաջին պլանն է քաշում վոչ թե ռբյեկտիվ իրադրության անալիզը, վոչ թե դասակարգային հակասությունների բնութագրությունը, այլ իր սուբյեկտիվ ցանկությունները: Իսկ կտրվելով ռեալ իրականությունից, նա գերի չե ընկնում իր իսկ ստեղծած սխեմին, վորի համաձայն բանվոր դասակարգը, վոր նպատակ է դրել կառուցել սոցիալիստական թունտեսություն, միացնելու յե հասարակական ամբողջության զանազան մասերը: Բուխարինը իսպառ վերանում է դասակարգային հակասություններից և դասակարգային պայքարից, մոռանալով, վոր սոցիալիզմը կարելի չե կառուցել միմիայն հաղթահարելով կապիտալիստական տարրերի դիմադրությունը և սահմանափակելով նրանց աճումը, իսկ ներկայումս, նաև դուրս մղելով նրանց: Այստեղից ել ծնունդ է առել նրա հրեշավոր՝ մարքսիզմի հետ վոչ մի առնչություն չունեցող գաղափարը հասարակական ամբողջության տարբեր մասերի միացման մասին (Բուխարինը նրբամտորեն այդպես է գերադասում անվանել դասակարգերը):

Այս որինակով մենք տեսանք, վոր Բուխարինի ռևիզիոնիստական բոլոր գաղափարները՝ սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներածման տեսությունը, պրոլետարական հեղափոխությունը կառուցողական ձևով գյուղացիական պատերազմի հետ զուգակցելու գաղափարը (այսինքն՝ մեր զարգացման ավյալ ետապում ամբողջ գյուղացիության հետ դաշն կնքելու գաղափարը) բղխում է նրա հակալենինյան այն պատկերացումից, վորի համաձայն, անցողիկ շրջանը զարգացման մի այնպիսի շրջան է, յերբ պրոլետարիատը կառուցում է սոցիալիստական հասարակություն, «միացնելով» թշնամի դասակարգերին: Իսկ այդ պատկերացման փրիլիստիայական արմատները թաղված են ընկ. Բուխարինի սուբյեկտիվիստական այն սխեմների մեջ, վորոնք նա, Լենինի խիստ քննադատությունից հետո, վոչ միայն չողողեց, այլ, ընդհակառակը, վերարտադրեց ել ավելի ծավալուն, խեղված ձևով:

«Տվյալ հասարակության բովանդակ փոխհարաբերությունների, առանց բացառության բոլոր դասակարգերի փոխհարաբերությունների միմայն որջեկտիվ հաշվառումը, հետևապես այդ հասարակության զարգացման որջեկտիվ աստիճանի հաշվառումը և նրանց ու այլ հասարակությունների փոխհարաբերությունների հաշվառումը կարող է հենարան հանդիսանալ առաջավոր դասակարգի ճիշտ տակտիկայի համար» — սովորեցնում եր Լենինը *):

Իսկ Բուխարինը, ընկնելով սուբյեկտիվիզմի մեջ չյուրացրեց տակտիկական այդ խելացի կանոնը, մարքս-

*) Լենին: Գրվածքների ժողովածու, հրատ. 2, հատ. 18, էջ 29.

սիզմի այդ քաղաքական գիծը, վորը «անխղի՛րորեն կապված է նրա փիլիսոփայական հիմունքների հետ» (Լենին): Այստեղից են բղխում նրա անվերջ տակտիկական սխալները:

Համաշխարհային պատերազմի շրջանում պարավոզական լոգոնոզի բացասումը, Բրեստի խաղաղության պայմանագրի շրջանում հեղափոխական ավանսյուրիզմի մի տակտիկա, վոր հիմնված է դասակարգերի փոխարարբրության և մասնավորապես գյուղացիության վերաբերմունքի կատարյալ անտեսման վրա, վորը «վտաներով քվեարկեց» պատերազմի դեմ: Արհմիութենական դեակուսիայի շրջանում — պաշտպանունն արհմիությունների պետականացման տրոցկիստական գծի, ուղղմական — կոմունիստական քաղաքականության կուրսի անհեթեթության հասցնելը և այն ել հենց այն ժամանակ, չերը տղալիսի քաղաքականություն վարելու հարկադրող հանգամանքները սկսել էին վերանալ: Այլ խոսքով, դարձյալ կատարյալ վերացում դասակարգերի ոբյեկտիվ փոխարարբրությունից և նրանց շահերից, անտեսունն գյուղացիության պահանջների: Ներկայումս — սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման մեղրածոր, լիբերալ տեսությունը, վորն ուղղակի ապշեցնում է նրանով, վոր Բուխարինը բացարձակապես չի հասկացել և մոռացության է մատնել դասակարգերը և դասակարգային պայքարը, մոռացել է տարրական այն նկատառումը, վոր կուլակը կատաղի պալքար է մղում հարածուն սոցիալիզմի դեմ:

ԸՅԿ. Բուխարինի հավասարակուռքան անուրյունը

Լենինը դիալեկտիկայի անկյունաքարն է համարում հակադրությունների միասնության որենքը: «Միասնականի չերկատումը (раздвоение) և նրա հակասական մասերի ճանաչումը... հանգիստանում է դիալեկտիկայի եյությունը»: Այսպես էր գրել Լենինը «Դիալեկտիկայի հարցի շուրջը» իր հոդվածում: «Դիալեկտիկան համառոտակի կարելի յե վորոշել, վորպես մի ուսմունք հակադրությունների միասնության մասին: Դրանով կընդգրկվի դիալեկտիկայի կորեղը»:

Հիրավի, հակադրությունների միասնության որենքը մեզ բացատրում է ինքնաշարժման պատճառը, վորեք սիստեմով ընթացող ինքնաշարժմանը տալիս է վորակական վորոշակիություն: Արտաքին ուժերը, արտաքին միջավայրը — այդ բոլորը, հարկավ, ներգործում են վորեք սիստեմի շարժման վրա, բայց արտաքին միջավայրի ներգործությունը ընդունակ է սիստեմին հաղորդելու միմիայն շարժման քանակ, արագացնել կամ դանդաղացնել նրան, ինչպես և փոխել շարժման ուղղությունը: Մակայն արտաքին միջավայրի ներգործությամբ բնավ չի կարելի բացատրել շարժման վորակական վորոշակիությունը:

Մեխանիկան, վորն ուսումնասիրում է արտաքին ուժերի ներգործությունն այս կամ այն սիստեմի վրա, գործ ունի միմիայն շարժման քանակների հետ և բնավ չի շոշափում նրա վորակը: Մեխանիկան շոշափում է վորակազուրկ մարմինների շարժումը:

Այժմ պարզ է, թե ինչու և՛ Ենգելսը և՛ Լենինը

չելին հոգնում ընդդեմիւց, վոր շարժման մեխանիկական բացատրությունը սահմանափակ է և անբավարար, չելին հոգնում մատնանշելուց, վոր մեխանիկական շարժումը հանդիսանում է շարժման միմիայն մասնավոր ձևը: Շարժման մեխանիստական կոնցեպցիայի ընդունելը ընդունակ կլինե՞ր բացատրելու քանակական փոփոխությունները, սակայն իսպառ կփակե՞ր շարժման վորակապես տարբեր ձևերի հատուկ բնույթը, հատուկ որենքները, այն է քիմիական, բիոլոգիական, հասարակական հատուկ որենքները հասկանալու ուղին:

Լենինը գրում էր կամ «գարգացման (եվոլյուցիայի) յերկու հիմնական (կամ յերկու հնարավոր, կամ պատմութեան մեջ նկատվող յերկու) կոնցեպցիաներ՝ զարգացումը—վորպես նվազում, և ավելացումը վորպես կրկնություն: Յեվ զարգացումը վորպես հակադրությունների միասնություն (միասնականի յերկատումը իրար բացասող հակադրությունների և նրանց փոխհարաբերությունը): Առաջին կոնցեպցիան մեռած է, զժգուշն և չոր ու ցամաք: Յերկրորդը՝ կենսալից է: Միմիայն յերկրորդն է տալիս ամբողջ գոյություն ունեցողի «ինքնաշարժման» բանալին, միմիայն նա չէ, վոր տալիս է «թռիչքների», «աստիճանականութեան ընդհատման», «հակադրութեան վերածվելու» հնի վոչնչացման և նորի ծագման բանալին: Շարժման առաջին կոնցեպցիայի դեպքում, սովերի օտակ է մնում ինքնաշարժումը, նրա շարժող ուժը, նրա աղբյուրը, նրա մտախիղ (կամ այդ աղբյուրը փոխադրվում է դուստր՝ աստված, սուբյեկտ և այլն): Յերկրորդ կոնցեպցիայի դեպքում գլխավոր ուշադրությունը

ձգտում է հատկապես «իմֆնաօարժման» աղբյուրի ճանաչողութեան:

Այնինչ, Բուխարինը հենց ամբողջովին կանգնած է հատկապես առաջին կոնցեպցիայի հողի վրա:

Նրա տեսական բոլոր աշխատությունների միջով կարմիր թելով անցնում է դիալեկտիկայի հիմնական որենքի՝ հակադրությունների միասնութեան չհասկանալը: Նա «ամողջ դատողութեան» նման,—վորն այնպես շեշտակի ծաղրել է Մարքսն իր «բարոյականացնող քննադատությունը և քննադատական բարոյականությունը» հոդվածում,— չեթե տեսնում է տարբերությունը, ապա չի նկատում միասնությունը, և ընդհակառակը՝ չեթե տեսնում է միասնությունը, չի նկատում տարբերությունները, հակասությունները, հակադրությունների պայքարը:

Վերցնենք կազմակերպված կապիտալիզմի Բուխարինյան տեսությունը: Այդ տեսութեան մեջ Բուխարինը չկարողանալով համադրել մոնոպոլիաների ու պետական կապիտալիստական տենդենցների աճումը՝ ժամանակակից կապիտալիզմի մեջ, մրցութեան պայքարի ուժեղացման փաստի հետ, միակողմանի կերպով վերցնում է ժամանակակից կապիտալիզմի կողմերից մեկը, այն է՝ մոնոպոլիաների աճումը և դրա վրա կառուցում է կազմակերպված կապիտալիզմի սխեմը: Բուխարինը չի հասկանում, վոր արտադրութեան համակենդրոնացումից աճող մոնոպոլիան վոչ միայն չի վերացնում մրցությունը, այլ ընդհակառակը, վերջինս հասցնում է նոր, ավելի բարձր աստիճանի Բուխարինը մրցութեան և մոնոպոլիայի համադրակցութեան փաստը համարում է վոչ թե ներքուստ հա-

կասական միասնություն, այլ մեքենայական զուգակցում: Ըստ Բուխարինի, ներքին շուկայում հաղթանակում է տինդենցը դեպի կազմակերպված տնտեսությունը, իսկ արտաքին շուկայում պահպանվում և նույնիսկ ուժեղանում է մրցությունը: Բուխարինը չի հասկանում, վոր արտաքին շուկայում տեղի ունեցող մրցությունը հետևանք է ազգային շրջանակներում գոյութուն ունեցող կապիտալիստական տնտեսության անարխիկ բնույթին, Բուխարինը չի հասկանում, վոր «չկա վոչինչ զուտ արտաքին և զուտ ներքին, վորովհետև ինչ վոր արտահայտվում է դուրսը, նա գոյութուն ունի ներսում» (Գլուխ):

Բուխարինը ապացուցելով, վոր ժամանակակից կապիտալիստական պետություններում աճում է «կազմակերպված պետական կապիտալիզմը» վորն ըստ Բուխարինի նշանակում է շուկայի տարրերի հաղթահարումը և կազմակերպված տնտեսության հաղթանակը, գրում է.

«Ի՞նչ է նշանակում պետական կապիտալիզմը մրցության տեսակետից: Այդ մշանակում է մրցության մարումը կապիտալիստական յերկրի ներսում և մրցության առավելագույն սրումը կապիտալիստական յերկրների միջև»*):

Ըստ Բուխարինի, մրցությունը և մոնոպոլիան վոչ թե հակադրությունների փոխադարձ թափանցում է իրար մեջ, այլ միմիայն մեքենայորեն ընդհարվող, ներքուստ միմյանց հետ շաղկապված ուժեր են: Բու-

*) Ն. Բուխարին: Կազմակերպված տնտեսականության տեսությունը:

խարինը չի տեսնում, վոր «մրցությունը տանում է դեպի մոնոպոլիա, իսկ մոնոպոլիաները մրցում են իրար հետ»: Այն ինչ Մարքսը գեռ «Փիլիսոփայության աղքատությունը» գրքում, հիանալի կերպով ճիշտ եր առաջադրել մրցության և մոնոպոլիայի համագոյակցության հարցը:

«Գործնական կյանքում մենք գտնում ենք վոչ միայն մրցությունը, մոնոպոլիան և նրանց հակամարտությունը, այլ և նրանց սինթեզը, վորը վոչ թե ֆորմուլ է, այլ շարժում: Մոնոպոլիան ստեղծում է մրցություն: Մրցությունը ստեղծում է մոնոպոլիա: Մոնոպոլիաները մրցում են իրար հետ, իսկ մրցակիցները դառնում մոնոպոլիաներ: Մինթեզը կայանում է նրանում, վոր մոնոպոլիան կարող է ապահովել շնորհիվ միմիայն այն հանգամանքին, վոր նա շարունակ մղում է մրցության պայքար»*):

Հար և նման մատնանշում ենք գտնում մենք Ենգելսի մոտ:

«Մրցությունը հիմնված է շահի վրա, իսկ շահը դարձյալ ստեղծում է մոնոպոլիա, կարճ ասած՝ մրցությունը վերածվում է մոնոպոլիայի: Մյուս կողմից մոնոպոլիան չի կարող կանգնեցնել մրցության հոսանքը. այդ դեռ քիչ է, նա ինքը ծնում է մրցություն, այնպես, ինչպես ներմուծման արդեւքը կամ բարձր մաքսեր առաջ են բերում մրցություններ, մաքսանենգություններ»**):

*) Մարքս. «Փիլիսոփայության աղքատությունը». 1928 թ. էջ 144:

**) Ենգելս. «Բնագաղափարական քաղաքականության ակնարկներ»: Մարքսի և Ենգելսի աշխատությունների ժողովածու, հատ. 2-րդ, էջ 308:

Բուխարինը չի կարողանում ըմբռնել աշխատանքի տեխնիկական և հասարակական բաժանման համագոյակցութեան փաստը, չի կարողանում հասկանալ այն, վոր կապիտալիզմի զարգացումը բնավ չի թուլացնում աշխատանքի հասարակական բաժանումը:

Ըստ Բուխարինի ազգային շրջանակներում վերջնականապես հաղթահարում է աշխատանքի տեխնիկական բաժանումը, դուրս մղելով հասարակական բաժանումը, վորը պահանջումը միմիայն միջազգային մասշտաբով:

Նմանապես կապիտալիստական տնտեսութեան ներքին հակասութեանները, ըստ Բուխարինի, վոչընչացվում են, իսկ արտաքին հակասութեաններն ուժեղանում են:

Հավասարակշռութեան որենքը Բուխարինը փոխառել է Բոգդանովից: Բացասելով ինքնաշարժման դիալեկտիկ որենքը, վորը հետևանք է ներքին հակասութեանների, դուրս գցելով ԵՄԲԻԿ հակասութեանները իր անալիզի շրջանից, Բոգդանովը աշխարհը համարում է առանձին, ներքին միասնութեամբ չհաղկապված տարրերի մի ամբողջութիւն, վորոնք գտնվում են փոխադարձ ներգործման պրոցեսում: Հակադրութեանների միասնութեան որենքին, «յուրաքանչյուր իրի» ԵՄԲԻԿ հակասականութեանը նա հակադրում է ԵՄԲԻԿ հակասութեանների որենքը: Հավասարակշռութեան որենքի ձևակերպումն ամենից ավելի պարզորոշ կերպով դրված է Բուխարինի «Պատմական մատերիալիզմի տեսութեանը» աշխատութեան մեջ՝

Աշխարհում,—գրում է Բուխարինը, գոյութեան ունեն իրար հանդեպ տարբեր կերպով ուղղված ու-

ժեր: Միմիայն բացառիկ դեպքերում նրանք վորոշ ժամանակ հավասարակշռում են իրար: Այդ դեպքում մենք ունենք հանգստի վիճակը, այսինքն նրանց իսկական պայքարը սքողված է մնում: Սակայն հենց վոր փոփոխում է ուժերից մեկը, իսկուցնեցիթ «ներքին հակասութեանը» յերևան է զալիս, տեղի չն ունենում հավասարակշռութեան խախտումը, և յեթե մի բոլոր սահմանվի նոր հավասարակշռութեան, ապա նա կըսահմանափակվի նոր հիմքի վրա, այսինքն՝ ուժերի մի այլ համադրութեան պայմաններում և այլն: Հենց այստեղ էլ մենք տեսնում ենք այդ պրոցեսի ձևը՝ նախ դա հավասարակշռութեան վիճակն է, յերկրորդ՝ այդ հավասարակշռութեան խախտումն է, յերրորդ՝ հավասարակշռութեան վերականգնումն է նոր հիմքի վրա»:

Այդ որենքի համաձայն մի վորևէ յերևույթի դարգացման ու փոփոխման պատճառը պետք է փնտռել վոչ թե ներքին հակասութեանների, այլ արտաքին ուժերի ներգործութեան մեջ: Յեթե յերբեմն Բուխարինը առանձին դեպքերում ճանաչում է տնտեսական ներքին հակասութեանների գոյութեանը, ապա արդեն ներքին հակասութեանները, ըստ Բուխարինի, միշտ յենթարկված են արտաքին հակասութեաններին և զարգանում են կախում ունենալով նրանցից:

Հավասարակշռութեան այդ որենքը կազմում է ընկ. Բուխարինի տեսական և քաղաքական շատ և շատ սխալների հիմքը: Այսպես, յելնելով այդ որինակից, Բուխարինը վերանում է հասարակութեանից, վորպես ներքուստ հակասական տարրերի միասնութեանից (դասակարգեր և այլն), վերանում է հասարակական զարգացման յուրահատուկ որենքներից և գտնում է,

վոր հասարակական հավասարակշռութեան կաշուկանութեան համար հարկավոր ե հետամուտ լինել, վորպէսզի հասարակութեան և բնութեան միջև տեղի ունեցող նյութերի փոխանակման պրոցեսում, հասարակութեանը բնութեանից ստանա ավելին, քան մտնել ե ինքն աշխատանքի պրոցեսում: Մենք ել չենք խոսում այն բանի մասին, վոր մխավող աշխատանքի քանակը և բնութեանից հասարակութեան ստացած բարիքները քանակը չափելու փորձը արատավոր ե իր հիմքով իսկ, վոր չի կարելի գտնել եներգետիկ այնպիսի միավոր, վորը համաչափելի դարձնի այդ հասկացողութեանները: Բանն այն ե, վոր այդպիսի դիրքավորման դեպքում, արտադրական ուժերի զարգացման սրենքն ազատաբար դառնում ե գերագույն որենք: Այդ տեսակետի կողմնակիցներն ակամայից գլորվում են դեպի ստրուվիզմը, վորը արտադրական ուժերի աճումը քննում ե անկախ սոցիալիստական այն ձևից, վորի շրջանակներում տեղի յե ունենում արտադրական ուժերի զարգացումը:

Հիրավի, աջ ուկրոնիստները, իրենց մի շարք յելույթներում, ցույց տվին, վոր նրանք անցողիկ եկոնոմիկայի զարգացման բարձրագույն որենքը, մեր տնտեսական քաղաքականութեան հիմնական նպատակն են համարում արտադրական ուժերի զարգացման հոգատարութեանը: Յեղ չնայած այն հանգամանքին, վոր աշիքը ժլատութեան չեն անում վերապահումների նկատմամբ, վորոնք պետք ե ցույց տան, թե նրանք կողմնակից են տնտեսութեան սոցիալիստական ձևերի զարգացմանը, այնուամենայնիվ ողպորտյունիստական այն կոնցեպցիան, թե ինչ դնով

ել լինի պետք ե զարգացնել արտադրական ուժերը, թափանցում ե նրանց բոլոր յելույթները:

Շատ ել պատահական չի, վոր աջ ուկրոնիստները հնգամյա պլանի հիմնական խնդիրն յեն համարում ընդհանուր ժողովրդական աշխատանքի արտադրականութեան բարձրացումը: Այնքան ել պատահական չի, վոր ընկ. Բուխարինը, հանդես ե գալով ԽՍՀՄ-ի ԺՏԳԽ-ի չորրորդ պլենումում, սոցիալիստական շինարարութեան խնդիրները սահմանափակման ե տրտադրական ուժերի զարգացման խնդրով:

«Մտտակա տարիներում մեղ վիճակված այն կոիվներում, վորոնք մղելու յենք արտադրական ուժերի զարգացման համար, մենք կարող ենք հաղթանակել, միմիայն դարձնելով գիտութեանը ե տեխնիկան նյութական արտադրութեան ամենահզոր լծակներից մեկը»*):

Բուխարինը այստեղ միանգամայն վորձատում ե սոցիալիստական տեսութեան զարգացման համար մղովելիք ե մղվող պայքարների դասակարգային բնույթը: Իսկ «չխանգարել կուլակային տնտեսութեանները արտադրութեանը» լողունքը կարող ե աճել միմիայն այն դպրոցի գրկում, վորը անցողիկ եկոնոմիկայի զարգացման բարձրագույն խնդիրն ե համարում արտադրական ուժերի զարգացումը:

Արտադրական ուժերի զարգացման մերկ չափունիչն այն պատճառով անընդունելի յե վորպէս մեր տնտեսական քաղաքականութեան դեկավար հիմք, վոր անցողիկ տնտեսութեանը ներկայացնում ե ամենա-

*) Տես «Աւետրական-արդյունաբերական թիւրթ», 1929 թ. հոկտեմբերի 14-ի համարը:

տարբեր հասարակական-տնտեսական կարգերի մի համադրութիւնն՝ սկսած նատուրալ տնտեսութիւնից մինչև սոցիալիստական տնտեսութիւնը:

Ձխանադարելով կուլակային տնտեսութիւնները զարգացմանը, մենք հասնում ենք այն դրութեանը, վոր զարգացման տվյալ ետապում, ավելի արագ կաճեն արտադրական ուժերը, սակայն վերջին հաշվով կուլակային տնտեսութիւնների զարգացումը, կապիտալիստական հիմունքների հաղթանակը խորհրդային գյուղում, նշանակելով չքավոր և միջակ տնտեսութիւնները հիմնական մասսայի քայքայումը, կղանդադեցնի արտադրական ուժերի զարգացումը: Այդ պատճառով ավելի քան կարճատեսութիւն կլինեն բոլոր շահերի համար, մոռանալ պրոլետարիատի հարատե խնդիրները: Վերջին հաշվով տնտեսութեան սոցիալիստական ձևերի զարգացման շահերը զուգարկւում են արտադրական ուժերի պարզացման շահերին վորովհետև միմիայն սոցիալիստական հիմքի վրա հնարավոր է հաղթանակել ցիրուցան, առանձնացած մանր գյուղացիական տնտեսութիւնների հետամնացութիւնը և ստեղծել սոցիալիստական արտադրական ուժերի աննախընթաց բարգաւաճման համար:

Այդ պատճառով, կուսակցութիւնը չի կարող վորպես իր տնտեսական քաղաքականութեան լողունը ընդունել, ինչ գնով ել լինի արտադրական ուժերի զարգացումը, վորը նետում են կուսակցութեան առաջ աջ ուղիով ստանալը: Այդ պատճառով կուսակցութիւնը կողմնակից է արտադրական ուժերի այնպիսի զարգացման, վորին ուղեկցում է սոցիալիստական տարրերի ուժեղացումը և ամբողջումը մեր եկոնոմիկայում

Այդ պատճառով կուսակցութիւնը կողմնակից է կապիտալիստական տարրերի դուրս մղելուն:

Յենելով հավասարակշռութեան բողոքանքային որենքից, Բուխարինը պլանի խնդիրն է համարում նախ և առաջ այն, վոր մենք պետք է ձգտենք հավասարակշռել ժողովրդական-տնտեսական տարրերը, սահմանենք համաչափութիւն արտադրութեան առանձին գյուղերի միջև: Ընդհանրապէս Բուխարինը գտնում է, վոր համաչափութիւն սահմանելը ԽՍՀՄ-ի պլանավորման հիմնական խնդիրն է, հաճախ աչքաթող անելով, վոր ամեն մի համաչափութիւն, վոր ամեն մի «հավասարակշռութիւն» ընդունելի յի պրոլետարիատի համար: Որինակ, կուսակցութիւնը վրձնաբար մերժում է հավասարութեան սահմանումը նեղ տեղերին հավասարվելու հիման վրա, վորովհետև հավասարակշռութիւն սահմանելու այդ մեթոդը վոր մի արդիւնք չէր տա, բացի մեր սոցիալիստական զարգացումը դանդաղեցնելուց:

Հավասարակշռութեան որենքը Բուխարինը մղում է դեպի բուրժուական տնտեսագետների բանակը: Հաշվի առնելով, վոր զննելը մեղանում սահմանվում են թե շուկայական ուժերի խաղերի ազատ տարբերքի հիման վրա, այլ կարգավորվում են պետութեան կողմից, ընդհանրապէս Բուխարինը այնուամենայնիվ գրում է. «սակայն այդ ամենին չի նշանակում, վոր այստեղ կա վորևէ բան, վոր հակասում է աշխատանքային պրոպորցիոնալ մխտումների որենքին, (վորը ընկեր Բուխարինը համարում է հասարակական տնտեսական ամեն մի ֆորմացիայի արտադրութեան կարգավորող — Ս.Պ.): Ընդհակառակը, այստեղ գոյութիւն ունի նախ-

նական կանխագործումն այն յերևույթի, վորը տարերայնորեն կարգավորելիս, սահմանվելու յեր post fesum*):

Արտադրութեան առանձին ճյուղերի աշխատանքի բաշխման կապիտալիզմի պայմաններում և ԽՍՀՄ-ի միջև գոյութիւն ունեցող ամբողջ տարբերութիւնն, ըստ Բուխարինի այն է, վոր առաջին դեպքում պրոպորցիաները սահմանվում են տարբերայնորեն, իսկ ԽՍՀՄ-ում նույն պրոպորցիաները գիտակցաբար սահմանում են տիրապետող պրոլետարիատը: Հարկավ, այդ պնդումը վոչ մի առնչութիւն չունի իրականութեան հետ, վորովհետև ամեն մի պիտանքի համար անգամ պարզ և, վոր գները և աշխատանքի բաշխումն ըստ արտադրութեան առանձին ճյուղերի կապիտալիզմի ժամանակ կսահմանվելին միանգամայն տարբեր ձևով, քան սահմանվում են նրանք պրոլետարիատի որոք, վորը համառորեն կուրս է բռնում դեպի յերկրի սոցիալիստական ինդուստրիացումը և կոլլեկտիվացումը: Սակայն բնորոշ է, վոր ընկ. Բուխարինը միմիայն կրկնում է այն մտքերը, վորոնք արտահայտել էին բուրժուական տնտեսագետները, նույնպէս չի ներկայում հավասարակշռութեան որոնքից: Այսպէս որինակ, Ալբերտ Վայնշտեյնը ներկայումս փակված «Ֆինտոլկոմատի կոնյունկտուր ինստիտուտի տնտեսական բյուլետեն» ժուրնալի էջերում գրում է.

«Տնտեսական դժվարութիւնները վերացումը պետք է ընթանա խախտված հավասարակշռութեան վերականգնման ուղիով, այսինքն՝ հիմնական շինա-

*) Ն. Բուխարին: Անցողիկ շրջանի որինաշափութիւններին վերաբերելու հարցի շուրջը: Հրատ. «Մոսկ. սար.», էջ 52—53:

րարութիւնը և արտադրութեան միջոցների արտադրումը պետք է համապատասխան դարձնել յերկրի ռեալ կուտակմանը: Այդ ուղին, վորը կապիտալիստական տնտեսութիւնը բռնում է տարբերայնորեն և ճգնաժամի հետևանքով. ԽՍՀՄ-ում պետք է կիրառվի պլանային ձեռնարկումների ոգնութեամբ»*):

Վայնշտեյնի նման, ընկ. Բուխարինը պլանի խնդիրն է համարում միայն սահմանել տնտեսական զարգացման այնպիսի պրոպորցիաներ, վորոնք սահմանվում են կապիտալիզմի պայմաններում տարբերայնորեն, ճգնաժամային ցնցումների միջոցով: Նման հայացքները թերևս համաձայնվում են «աշխատանքային մսխումների որոնքի հետ»**) և հավասարակշռութեան տեսութեան հետ, սակայն բնավ չեն համակերպվում մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման խնդիրներին հետ:

Հավասարակշռութեան տեսութիւնը, ինչպէս մատնանշեցինք, վճռական նշանակութիւն է տալիս արտաքին հակասութիւններին, արտաքին միջավայրի ներգործութեան սխտեմի վրա: Այդ արտահայտեց Բոգդանովը: «Պատճառականութեան զարգացման համաձայն,—գրում էր նա, ձեռքի ամեն մի փոփոխման չեղակետը վերջի վերջ գտնվում է դրանց միջավայրում»***):

Բոգդանովից հետո այդ կրկնեց նաև Բուխարինը:

*) Տես նախորդը, № 11—12, 1927 թ. էջ 15:

**) Այդ որոնքի քննադատութիւնը տես ընկ. Ա. Լեոնտևի հիանալի աշխատութեան մեջ՝ «Աշխատանքային մսխումների որոնքը» վերնագրով: 1929 թ.

***) Ա. Ֆոգդանով. Եմպլոյի տնտեսական խնդիրը 3-րդ, էջ 5:

«Միանգամայն պարզ ե, պնդում ե ընկ. Բուխարինը, վոր սիստեմի ներքին կառուցվածքը (ներքին հավասարակշռութունը), պետք ե փոխվի նայած այն հարաբերութւանը, վորը գոյութւուն ունի սիստեմի և միջավայրի միջև: Միստեմի և միջավայրի հարաբերութւունը վճռական մեծութւուն ե»*):

Կարճ ասած, Բուխարինը ասում ե նույնը. ինչ վոր ասել ե Բոգդանովը, միմիայն միքիչ տարբեր խոսքերով: Բոգդանովը ստեղծելով «հավասարակշռութւան տեսութւունը, ուղղակի խոստովանում եր, վոր այդ տեսութւունը տարածանում ե Ենգելսի գրածից: «Ռեալ հակասութւուն ասելով, գրում ե որինակ Բոգդանովը, կարելի չե հասկանալ միայն մի բան՝ ո՞նք ուժերի, հակառակ կողմը ուղղված յերկու ախտիվութւունների պայքարը: Արդո՞ք դրա մասին ե խոսել Ենգելսը: Ակնհայտորին վոչ»**):

Իսկ Բուխարինին թվում ե, վոր նա շարագրելով «մատերիալիզմի դիալեկտիկան» հավասարակշռութւան տեսակետից, «շարունակում ե Մարքսին ամենաորոթոքսալ կերպով հասկանալու տրադիցիաները»***):

Բուխարինի ընդունած բոգդանովյան այդ հայացքը-

*) Ն. Բուխարին. Պատմական մատերիալիզմի տեսութւունը, էջ 82:
**) Ա. Բոգդանով. Կենդանի փորձի փիլիսոփայութւունը, էջ 190:
***) Տես Ն. Բուխարին. «Պատմական մատերիալիզմի տեսութւունը» գրքի առաջաբան և «Համաշխարհային հեղափոխութւան մասին...» (պատասխան պրոֆ. Պավլովին):

ների հիման վրա կարող եր ծնվել նրա մղման տեսութւունը, վորն այնպես խիստ քննադատել եր Լենինը: Հիրավի, յեթե վճռական դեր են խաղում վոչ թե սիստեմի ներքին հակասութւունները, այլ միջավայրի արտաքին ներգործութւունը սիստեմի վրա, ապա հեղափոխութւան պատճառներն ևս պետք ե փնտուել նախ և առաջ արտաքին ներգործութւան մեջ, մասնավորապես ռազմական մղումի մեջ:

«Նմանորինակ տեսութւունը,— գրում եր Լենինը, կատարելապես կըհակասեր մարքսիզմին, վորը միշտ ժխտել ե հեղափոխութւունների «մղումը» հեղափոխութւունների, վորոնք զարգանում են հեղափոխութւուններ ծնող դասակարգային հակասութւունների սրութւան հասունացմանը զուգընթաց»*):

Այժմ ես նմանապես, չերբ Բուխարինը նոր հեղափոխութւան հնարավորութւունը տեսնում ե միմիայն իմպերիալիստական պատերազմ ծագելու դեպքում, չերբ նա կապիտալիստական յերկրներում դասակարգային պայքարի զարգացումը կախված ե համարում կապիտալիստական յերկրների արտաքին հակասութւուններից, — ոպպորտունիստական այդ հայացքների տեսական հիմքը այն ե, վոր նա վճռական նշանակութւուն ե տալիս արտաքին հակասութւուններին:

Պատահականության պրոբլեմը ընկ. Բուխարինի մեկնաբանությանը

Հետաքրքիր ե նաև հետեւի ընկ. Բուխարինի փիլիսոփայական մի սխալի և նրա քաղաքական տա-

*) ԼԵՆԻՆ. Գրվածքների ժողովածու, հրատ. 2-րդ 300:

տանուսները կապակցութեանը: Հայտնի յի, վոր ընկ. Բուխարինը բացասում է պատահականութեան, վորպես որ յեկտիվ կատեգորիայի, գոյութիւնը: «Պատմական մատերիալիզմի տեսութիւնը» գրքում նա գրում է.

«Հետեանք առջ բերող պատճառները չեն յենթարկվում գործնական հաշվառման: Նրանք գոյութիւն ունեն, սակայն մենք չենք կարող հաշվառել դրանք, ուստի մենք չգիտենք այդ պատճառները: Մեր այդ չգիտենալը անվանում ենք . . . պատահականութիւն»:

Այսպիսով, ճիշտ ասած, վոչ մի պատահական, այսինքն՝ առանց պատճառի, յերևույթ չկա: Իսկ «պատահական» կարող են թվալ մեզ յերևույթները, քանի մենք բավարար չափով չգիտենք նրանց պատճառները:

. . . Այդպիսով մենք տեսնում ենք, վոր ճիշտ ասած, հասարակութեան պատմական զարգացման մեջ չկա վոչ մի պատահական յերևույթ:

. . . Նախորդից հետևում է, վոր պատահականութեան հասկացողութիւնը հարկավոր է դուրս գցել նաև հասարակական գիտութիւններից» *):

Սրանք են ընկ. Բուխարինի մի շարք հայտարարութիւնները:

Այստեղ նախ և առաջ սխալ է հարցի դրվածքն իսկ: Պատահականութիւնը պատճառ չունեցող յերեւույթ չէ, այդպիսի յերևույթներ չկան և ընկ. Բուխարինը այնպես հեշտ կերպով վերջացրեց իր հաշիվը պատահականութեան հետ միմիայն այն պատճառով,

*) Ն. Բուխարին. Պատմական մատերիալիզմի տեսութիւնը, էջ 41—44:

վոր նա պատահականութիւնը փոխարինեց պատճառ չունեցող յերևույթի հետ: Պատահականութիւնը այնպիսի յերևույթ է, վոր անհրաժեշտորեն բխում է վորևէ յերևույթի ներքին տրամաբանութիւնից, նրա զարգացման ներքին որինաչափութիւնից: Այսպիսի որինակ. մարդու մահը տրամվայի տակ պատահական է այն պատճառով, վոր նա անհրաժեշտորեն բխում է ներքին այն պրոցեսներից, վորոնք տեղի էյին ունենում նրա մեջ և հանդիսանում է մարդու նկատմամբ «արտաքին» հանգամանքերի ներգործութեան հետեանքը, հանդիսանում է պատճառական յերկու շարքերի բաղխման հետեանքը:

Պատահականութեան պրոբլեմը շատ լավ է արծարծել որինակ Պլեխանովը:

«Լյուդովիկ 15-րդի կրքոտութիւնը,—գրում էր նա՝ «Պատմութեան մեջ անձնավորութեան դերին վերաբերյալ հարցի շուրջը» հոդվածում, անհրաժեշտ հետեանք էր նրա որդանիզմի վիճակի: Սակայն Փրանսիայի զարգացման ընդհանուր ընթացքի նկատմամբ այդ վիճակը պատահական էր: Մինչդեռ, ինչպես ասացինք, նա առանց ազդեցութեան չննաց Փրանսիայի հետագա ճակատագրի վրա և ինքը մտավ այն պատճառներին շարքը, վորոնք պայմանավորեցին այդ ճակատագիրը: Միբարոցին հարկավ մահ պատճառեց միանգամայն որինական հիվանդագին պրոցեսները: Սակայն այդ պրոցեսների անհրաժեշտութիւնը բխում էր վոչ թէ Փրանսիայի զարգացման ընդհանուր ընթացքից, այլ հոշակավոր հետտորի կազմվածքի մի քանի մասնավոր առանձնահատկութիւններից և Ֆիզիկական այն պայմաններից, վորոնց մեջ նա վարակ-

վիւ եր: Ֆրանսիայի զարգացման ընդհանուր ընթացքի նկատմամբ այդ առանձնահատկութիւնները և այդ պայմանները պատահական են: Մինչդեռ Միրաբոյի մահը ազդեց հեղափոխութեան հետագա ընթացքի վրա և մտավ այն պատճառների շարքը, վորոնք պայմանավորեցին այդ ընթացքը*):

«Պատմութիւնը,—գրում էր Մարքսը Կուզելմանին—շատ միտոիկական բնույթ կունենար, յետե պատահականութիւնները վոչ մի դեր չկատարելին»: Հիւրավի, յետե մարդու մահը արամվայի տակ կամ այն փաստը, վոր «առվույտի այս ծաղիկը այս տարի բեղմնավորվել էր մեղվի միջոցով, իսկ մյուս ծաղիկը չէր բեղմնավորվել, այն էլ այս վորոշ մեղվի միջոցով և այս վորոշ ժամանակ» և այլն, յետե այս բոլոր փաստերը «կապված են անխախտ անհրաժեշտութեամբ և գազային այն գունդը, վորից ծագել է արևի սիստեմը, կառուցված լինել այնպես, վոր այդ դեպքերը կարողանային տեղի ունենալ այսպես և վոր թե այլ կերպ», ապա այդ հոյացքը մի կապիտուլյացիա չե կանխորոշման ուսմունքի առաջ: Ուստի Ենգելսը միանգամայն ճիշտ է նկատում, վոր «այդ տեսակ անհրաժեշտութեան ասպարիզում մենք գեռ մինչև այժմ էլ չենք դուրս գալիս թեոլոգիական հոյացքի սահմաններից՝ բնութեան նկատմամբ: Գիտութեան համար միանգամայն միևնույն է, թե Ավգուստինի և Կալվինի հեռ միտքին մենք այդ կանվանենք աստծու հավիտեանական վճիռը, թե թուրքերի հեռ միտքին կանվանենք դամբթ, կամ անհրաժեշտութիւն»**):

*) Պիլյառով. Գրվածքների ժողովածու, հատոր 3, էջ 203—204:

**) Յ. Սեգելը. Բնութեան գիտելական: Ե՛, Մարքսի և Յ. Ենգելսի արեթիվը, հատոր 2-րդ, էջ 103:

Սակայն պատահականութիւնների, այսինքն՝ մի քանի պատճառական շարքերի բաղխան հետևանքով ծագող վորևէ պրոցեսի զարգացման ներքին որինաչափութիւնը անհրաժեշտորեն չբղխող յերևույթների որչեղարիվ գոյութիւնը ընդունելուց ամենեկին չի բըղխում անհրաժեշտութեան բացասումը: Պատահականութիւնները մերժում են հասարակութեան զարգացման դեպի այս կամ դեպի այն կողմը զարգանալու անհրաժեշտ ընթացքը, նրանք ազդում են շարժման արագացման կամ դանդաղացման վրա, սակայն միանշուստ վերով, նրանք վերջին հաշիւով հավասարակշռում են իրար:

«Այդ պատճառով բոլոր հասարակութիւնների մեջ տիրապետում է անհրաժեշտությունը, վորի արտահայտութեան լրացումն ու ձևն է հանդիսանում պատահականությունը: Անհրաժեշտութիւնը, վոր այստեղ դուրս է ցայտում ամեն տեսակ պատահականութեան միջից, գարձյալ բացառապես տնտեսական է»*):

Դրա հետ միասին Ենգելսը ցուց տվեց, վոր մեխանիկական մատերիալիզմը, ժխտելով պատահականութեան գոյութիւնը, անհրաժեշտութիւնը, փաստորեն իջեցնում է ինչ վոր գուտ պատահականի աստիճանը: «Յետե այն փաստը, վոր վորոշ պատշանի մեջ գտնվում է վեց, վոր թե 5 կամ 7-ը սիսեռ, նույն կարգի յերևույթ է, ինչպիսին է նաև արեգակի սիստեմի շարժման որինքը կամ հներգիայի փոխման որինքը,

*) Ճ. Սեգելը. 1894 թ. հունվարի 25-ին Շտարկենբուրգին ուղարկված նամակը: Տես Մարքսի և Ենգելսի նամակները՝ չբատ, Մոսկ. Ռաք., էջ 315:

ապա ուրեմն իրոք նշանակում ե վոր վոչ թե պատահականությունն ե բարձրանում մինչև անհրաժեշտության մակարդակը, այլ անհրաժեշտությունն ե իջնում պատահականության մակարդակը»*):

Բացի դրանից, Ենդելսը միանգամայն ճիշտ պնդում ե, վոր գոհնիկ և անըովանդակ մեխանիկական դետերմինիզմը «խոսքով, ընդհանուր առմամբ ժխտում ե պատահականությունը, գործնականում ճանաչելու համար վերջինս՝ չուրաքանչյուր առանձին դեպքում»**):

Այժմ անցնենք այն սխալներին, վորոնք գործում ե ընկ. Բուխարինը, չկարողանալով դիպել կտիկոններն առաջագրել պատահականության և անհրաժեշտության հարաբերության վերաբերյալ հարցը:

Յեթե վերցնենք կապիտալիզմի խորտակման պրոբլեմը, ապա դրա լուծումը դիպել կտիկ մատերիալիզմի տեսակետից այն ե, վոր կապիտալիզմի խորտակումը և սոցիալիստական հասարակության ստեղծումը կապիտալիստական հասարակության զարգացման հիմնական որինաչափություններից բղխող պատմական չեղկաթե անհրաժեշտությունն ե: Արտադրության և կապիտալի համակենտրոնացումը, աշխատանքի հարածուն հանրայնացումը, պրոլետարիատի աղքատացումը և աշխատանքի ու կապիտալի միջև անդունդի խորացումը, կապիտալիստական արտադրական հարաբերությունների ավելի ու ավելի ցայտուն կերպով դրսևորվող դանդաղացող դերն արտադրական ու-

ժերի զարգացման ասպարիզում, արտադրության անարխիան և ճգնաժամերը, պատերազմները — այդ ամենը պայքարի չե հանում պրոլետարիատին՝ կապիտալիստական ստրկությունը վոչնչացնելու համար և որչեղտիվ նպաստավոր պայմաններ ե պատրաստում պրոլետարիատի հաղթանակի համար:

Սակայն յեթե վերցնենք այդ անհրաժեշտության դրսևորման ձևը, ապա նա չի կարող պատահական լինել:

Լենինը միշտ վճռականորեն բողոքել ե, չերբ խոսել են, թե անխուսափելի չե կապիտալիզմի կործանումը այս կամ այն շրջանում, բողոքել ե Փատալիզմի դեմ: «Կապիտալիզմը չեբբեք չի ընկնի, — գրում եր նա, յեթե նրան չգցեն»: Իսկ նրան գցել կարող ե միմիայն պրոլետարիատը, ուստի նրա հատկություններից, նրա պայքարից, կուսակցությունից և թշնամիների դեմադրության ուժից ու անտիճանից ե կալված պայքարի արդյունքը:

Իսկ ընկ. Բուխարինը, դուրս գցելով պատահականության գաղափարը հասարակական գիտություններից, իր «Անցողիկ շրջանի եկոնոմիկան» գրքում կրկնում ե որինակ, վոր միանգամայն անխուսափելի չե կապիտալիզմի կործանումը և սոցիալիզմի հաղթանակն ամբողջ աշխարհում՝ 1914—1918 թվականների իմպերիալիստական պատերազմի հետևանքով, վոր կապիտալիզմի վոչ մի՝ թեկուզ ժամանակավոր, ստաբիլիզացիա հնարավոր չե:

Ըստ Բուխարին «ոեալ կերպով դրված եր կապիտալիստական արտադրական հարաբերություններին քայքայումը» և «սեսականորեն ապացուցված եր նրանց

*) Ֆ. Ենգելս. Բնության դիպել կտիկական «Վ. Մարքսի և Ֆ. Ենդելսի արխիվը», հատ. 2-րդ, էջ 193:

**) Նախորդը, էջ 195:

վերականգնման անհնարին լինելը»։ Լենինը, Բուխարինի խոսքերի հանդեպ, գրում է. «Անհնարին լինելը» կարելի չէ ապացուցել միմիայն գործնականորեն։ Հեղինակը դիալեկտիկորեն չի դնում տեսութայն և պրակտիկայի հարաբերությունը»։

Նույն դրքի մի այլ տեղում Բուխարինը գրում է. «1918 - 20 թ.։ Յեվրոպայի եկոնոմիկայի գործերի կոնկրետ դրությունը ցույց է տալիս, վոր քայքայյալ աչք շրջանը հասել է և վոչ մի սիմպտոմ չկա արտադրական հարաբերությունների հին սխտեմը վերականգնելու համար։ Ընդհակառակն»։ Լենինը լուսանցքում, մեջ է բերում Ֆրանսիական հետևյալ հայտնի առածը. «Ով չափազանց շատ է ապացուցում, նա վռչիկն չի ապացուցում»։

Այդպիսով, ընկ. Բուխարինը անհրաժեշտ էր համարում կապիտալիզմի կործանումը 1914—18 թվականների պատերազմից հետո, մինչդեռ հենց այդ կործանումը, հենց այդ տվյալ ցնցման հետևանքով, չէր կարող պատահական չլինել. կախում ունենալով նաև հեղափոխության սուբյեկտիվ գործոնից։ Տվյալ ցնցման հետևանքով կապիտալիզմի կործանման բացարձակ անխուսափելիության ընդունելը չէր տրոպք, վոր Բրեստի շրջանում ի միջի այլոց ընկ. Բուխարինին մղում էր հեղափոխական ավանսյուրիզմի ուղին, վորը կարող էր միայն տանել դեպի հեղափոխության վիժումը։ Այն ժամանակ, պատահականությունը ժըլտոտող ընկ. Բուխարինը վերջին պատճառը չէր հանդիսանա մեր հեղափոխության ճնշվելուն՝ գերմանական իմպերիալիզմի կողմից։ Յեվ շատ քիչ միլիթարություն կլիներ, վոր ընկ. Բուխարինը ստանալով այդ դասը,

թերևս կհանդեր պատահականություն պրորեկտի ճիշտ ըմբռմանը։

Բացասելով պատահականությունը, ընկ. Բուխարինը, կարծես արդարացնելով Ենգելսի խոսքերը մեխանիկական դետերմինիստների մասին, անհրաժեշտությունը իջեցնում է մինչև պատահականի մակարդակը։

Յերբ, ինչ ձևով և ինչպիսի հաջորդականություն էլ հաղթանակի սոցիալիզմը, այդ հաղթանակն ամեն մի մարքսիստի համար անհրաժեշտություն է։ Իսկ ըստ Բուխարինի, դա պատահականություն է։ Գուցե կհաղթի սոցիալիզմը, դուցե տեղի կունենա ընդհանուր վայրենացում և կուլտուրայի կործանում։ Հենվելով Մարքսի և Ենգելսի հայտնի այն խոսքերի վրա, թե «դասակարգերի պայքարը միշտ էլ վերջացել է կամ հեղափոխական վերակառուցմամբ կամ պայքարող դասակարգերի միատեղ կործանմամբ» («Կոմունիստական մանիֆեստ»), Բուխարինը հաշվի չի առնում այն հանգամանքը, թե պայքարի վերջին վախճանն անհրաժեշտ է հանդիսանում այն հասարակություններում, վորտեղ ճնշվող դասակարգը չի հանդիսանում արտադրության նոր, ավելի առաջադեմ չեղանակի կրողը։ Հակառակ դեպքում, վաղ թե ուշ, անխուսափելի չէ հատկապես հասարակության հեղափոխական վերակառուցումը՝ արտադրական նոր հարաբերությունների հիման վրա։ Պայքարի ընթացքում պրոլետարիատը կարող է շատ անգամ հետնետված լինել, սակայն «Նրա հաղթանակը և բուրժուազիայի պարտությունը հավասարապես անխուսափելի չեն»։

Բուխարինը անհրաժեշտութիւնը պատահակա-
նութեան մակարդակին և իջեցնում նաև այն ժամա-
նակ, յերբ հիշելով բողոքանոյցայն այն դրութեանը, թե
միջավայրի ներգործութեանը սխտեմի վրա վորոշող
նշանակութիւն ունի, տառապելապես ուսումնասիրում
և այդ բարձրագոյն միջավայրի զարգացած որինա-
չափութիւնը, մի կողմը թողնելով ներքին հակասու-
թիւնները: Այդպես, հեղափոխական նոր վերելքի
հասունացումը, վոր անհրաժեշտորեն բլխում և ստա-
բիլիզացիայի խախտումից և արդեն փաստ և դար-
ձել, ընկ. Բուխարինը ժխտում և և կապում և իմ-
պերիալիստական նոր սպանդի հետ:

Պատահականութեան և անհրաժեշտութեան պրոբ-
լեմը դիալեկտիկորեն առաջադրել և լուծել չգիտնա-
լը վրեժ և լուծում նաև այն ժամանակ, յերբ ընկ.
Բուխարինը ձեռնամուխ և լինում ինքնուրույն կեր-
պով վերլուծելու մեր տնտեսական դժվարութիւնները:
16-րդ համադումարից հետո տեղի ունեցած դժվարու-
թիւնները ընկ. Բուխարինը փորձեց, որինակ, անալիզի
յենթարկել իր «Հացամթերումների, Շախտիի դործի
դասերը և կուսակցութեան խնդիրները» ճառում: Նա
վերցրեց միմիայն մի պատճառական շղթա՝ մեր տըն-
տեսական պրակտիկան, և նրանից հետևցրեց հացամ-
թերումներին հետ կապված դժվարութիւնները: Դա-
սակարգային պայքարի հարցերը, կուլակի դիմա-
դրութեան սրվելը, գյուղացիական կոտորակված տըն-
տեսութեան չափազանց հետամնացութիւնը, այս բո-
լոր գործոնները վորոնց փոխադրեցութիւնից առաջ
յեկավ հացամթերման ճգնաժամը, ընկ. Բուխարինը
զանց էր առել. այդ պատճառով էլ նա տվել էր այդ
դժվարութիւնների աղճատված անալիզը: Իսկ յեթե

յեղնեյինք բուխարինյան անալիզից, ապա պրակտի-
կան ուղղելու համար, պետք է նահանջեյինք կուլա-
կի առաջից, իսկ կուսակցութեանը, տեսնելով բոլոր
պատճառները, պատճառական տարբեր շարքերի ամ-
բողջ սխտեմը և բաղխումը, ընթացավ կուլակի սան-
ճահարման, կոլլտնտեսութիւնների և խորհտնտեսու-
թիւնների ծավալուն շինարարութեան և միաժամա-
նակ տնտեսական պրակտիկայի առանձին աղավա-
ղումների ուղղման ճանապարհով, մի ճանապարհ, վո-
րը դուրս է բերում նրան հացամթերման դժվարու-
թիւններից:

Կամ վերցնենք վերջապես այն լուծումը, վոր
տալիս և Բուխարինը անցողիկ շրջանի դասակար-
գային պայքարի հարցին: Բուխարինը չի տեսնում
մեր զարգացման վորոշ հտապներում դասակարգային
պայքարն ուժեղացնելու անհրաժեշտութեանը: Նա նկա-
տի չի առնում այն հանքամտնքը, վոր պայքարի այդ
սրվելը անփուսափելիորեն բլխում և նեպի զարգաց-
ման հենց ներքին որինաչափութեանից, նկատի չի
առնում, վոր մանր և միջակ գյուղացիական տնտե-
սութեան զարգացման ներքին տրամաբանութիւնը,
ապրանքային շրջանառութեան պայմաններում, տա-
նում և դեպի կապիտալիզմի վերածնումը, վորի ա-
ճումը մենք վորոշ չափով և վորոշ ժամանակ իվի-
ճակի չեյինք կանխելու: Այդ պատճառով, փոխանակ
վերջին և վճռական կովի լեյնիյան նախատեսման,
Բուխարինի մոտ մենք տեսնում ենք դասակարգային
պայքարի պլանաչափ մարման տեսութիւնը:

Ըստ Բուխարինի, դասակարգային պայքարի
սրման շրջանները գուտ պատահականութեան են.

նրանք անհրաժեշտորեն չեն բղխում նեպի ուսերի վրա կատարվող մեր պարզացման առաջին աստիճանները որին աշխատությունից:

Բուխարինը, տալով դասակարգչին հակասությունները աստիճանաբար թուլանալու իդիլիական պատկերը, գրում է.

«Հարկավ կյանքի ընթացքն իրոք ավելի բարդ է, համաձայն մեֆիստոֆելական այն ասացվածքին, թե «բարեկամ, տեսությունը գորշ է, իսկ կանաչ է կյանքի հավիտենական ծառը». ավելի բարդ կարող են լինել նաև որչեղտիվ պայմանները և վոչ բոլորովին իդեալական կարող է լինել մեր տակտիկան: Այդ պատճառով իրականորեն կարող են լինել դասակարգչին պայքարի և նրա ձևերի սրման շրջաններ»...*)

Այդպիսով, ըստ Բուխարինի, դասակարգչին պայքարի սրման շրջանները գուտ պատահականություն են: Նրանք նեպի առաջին ետապների պայմաններում մեր չերկրի զարգացման ներքին որին աշխատություն մեջ չեն թողված, այլ հետևանք են կամ մեր տակտիկայի սխալություն կամ ինչպես գրում է Բուխարինը մի այլ տեղում**) հետևանք են մեր խորհրդային ապարատի հատկություն:

Այս որինակով, լավագույն կերպով արդարանում է այն բնութագրումը, վոր ավել է ներգիտը մեխանիկական գոհիկ մատերիալիստներին: Բուխարինն իրոք, բացասելով պատահականություն ընդհանրապես, գործնականում ընդունում է վերջինս յուրա-

*) Ն. Բուխարին: Լենինի քաղաքական կտակը, էջ 10.

**) Տես նրա «Մոսկովի գծի ուղին և բանվորագյուղացիական գաշինքը»:

քանչյուր առանձին դեպքում և ընդամին, անհրաժեշտությունն իջեցնում է պատահականություն աստիճանին:

ԸՆԿ. Բուխարինի եկեկեիզմը

Լենինը շատ անգամ նշել է, վոր բուխարինյան փիլիսոփայությունը գուտ մարքսիստական չէ, վոր Բուխարինի փիլիսոփայական աշխարհայացքը աղտոտված է ամեն տեսակ վոչ մարքսիստական նեխվածքով, վոր Բուխարինը չափազանց հաճախ մարքսիզմը եկեկեիզմներն միացնում է բողոքանովչչինայի և հակամարքսիստական ամեն տեսակ այլ տեսություններին հետ:

Լենինը բուխարինյան եկեկեիզմը հիանալի կերպով յերևան է հանել դեռ «Անցողիկ շրջանի եկոնոմիկան» գրքի առթիվ իր արած դիտողությունների մեջ: Բուխարինն այդ գրքում դիտելի տիկական մատերիալիզմը համարում է իրականությունը ճանաչելու վոչ թե միակ ճիշտ և միակ հնարավոր մեթոդը, այլ միմիայն աղբյուրի մեթոդներից մեկը: Որինակ՝ իր գրքի մի տեղում Բուխարինը ասում է, վոր «դիտելի տիկ պատմական ճեպակեթը անխուսափելիորեն պետք է ընդգծել հեղափոխական շրջանը վերլուծելիս»: այդ առթիվ Լենինը գրում է.

«Այդ Ֆրազից հիանալի կերպով յերևում է, վոր Բողոքանովի, եկեկեիզմից փչացած հեղինակի համար դիտելի տիկ «տեսակետը» հանդիսանում է հավասարազոր շատ «տեսակետներից» միմիայն մեկը: Միայն է»:

Կամ մի այլ տեղ, ընգծելով Բուխարինի խոսքերը հեղափոխություն, վորպես դիտելի տիկ պրոցեսսի

մասին, Լենինն անում է հետևյալ մակագրութունը: «Իրաւեկտիկ պրոցեսս: Հենց այդ է: Յեւ վոչ թե սխուլաստիկա, այլն Բողոքանով: Հեղինակը այդ պրոցեսսը դնում է հասկացողութունների բողոքանովյան սխուլաստիկայի կողմին (այն էլ յերկրորդ տեղը), սակայն դրա կողքին դնել չի կարելի՝ կամ-կտմ»:

Ընդգծելով Բուխարինի կողմից մեջ բերված Մարքսի մտքի այն կետը, վորտեղ նա ասում է, թե գաղափարները հանդիսանում են միմիայն իրական հարաբերութունների արտահայտութունը, Լենինը նկատում է. «Ահա սա դիալեկտիկ մատերիալիզմի ճշգրիտ, հասարակ, պարզ, անպաճուճ ձևակերպումն է: Վորքան տարբերվում է դրանից Բուխարինի եկլեկտիզմը», վորը մի կողմից համամիտ Մարքսի վերև բերված խոսքերին, իսկ մյուս կողմից սայթաքում է դեպի սուբյեկտիվիզմը և իղեալիզմը:

Այդպիսով, Բուխարինը իր «Անցողիկ շրջանի եկոնոմիկան» գրքում, մեր առաջ հանդես է գալիս վոչ թե վորպես մատերիալիստ-դիալեկտիկ, այլ վորպես եկլեկտիկ, գտնելով, վոր մարքսիզմի հետ միասին, գոյության կատարյալ իրավունք ունեն նաև փիլիսոփայական այլ սխտեմներ, իրականութունը ճանաչելու այլ մեթոդներ: Յեւ այդ եկլեկտիզմը, ինչպես յերևում է մեջ բերված վերոհիշյալ կետերից, Բուխարինը ինքքն էլ չի ծածկում: Չնայած այն հանգամանքին, վոր Բուխարինը իր հաջորդ աշխատութուններում, այլևս ի ցուլց չի դնում իր եկլեկտիզմը, չի սիրաբանում վերջինիս հետ այնուամենայնիվ այդ եկլեկտիզմը կազմում է նրա տեսական և քաղաքական բոլոր այն կարծիքների հիմքը, վորով նա շեղվում է մարքսիզ-

մից: Այդպես, դեռ արհմիութունների վերաբերյալ դիսկուսսիայի ժամանակ, Լենինը, նշելով Բուխարինի չվերացած եկլեկտիզմը, ցուլց եր տալիս, վոր վերջինս կազմում է նրա քաղաքական տատանումների հիմքը: Նույնն է կատարվում այժմ:

Եկլեկտիզմի կնիքն է դրոշմված Բուխարինի «Պարմական մատերիալիզմի տեսութունը» ամբողջ աշխատության վրա: Այդ գրքի առաջաբանում, նա հայտարարում է, վոր «հեղինակը մի քանի եյական կետերում շեղվում է առարկայի սովորական մեկնաբանութունից, այլ կետերում նա հնարավոր է համարում չսահմանափակվել արդեն հայտնի գրուլթներով, այլ ավելի զարգացնել դրանք»: Բուխարինն իրոք դիալիտրեն շեղվել է... մարքսիզմից, իսկ «հայտնի գրուլթների «ամբողջ զարգացումը հանգում է մարքսիզմի յեւ ըողգտնովչինայի եկլեկտիկ համադրության, «Հավասարակշռության և արսաքին հակասությունների տեսության, փոխանակ ինքնաշարժման դիալեկտիկ սկզբունքի, հանգում է պատահակտուության կատեգորիայի որյեկտիվ նշանակության ժըխտմանը, հեղափոխության սխուլաստիկ տեսության, այդ և նման «հայտնութունների»: Բուխարինը ջրալի յե դարձրել մարքսիզմը:

Հարկափ փիլիսոփայական այդ եկլեկտիզմը, չեր կարող իր կնիքը չդրոշմել ընկ Բուխարինի քաղաքական յելուլթների վրա, տակտիկական պրոբլեմներին տված լուծման վրա:

Ընկ. Բուխարինի եկլեկտիզմն առանձնապես վորոշակի արտահայտվեց արհմիութենական դիսկուսսիայի ժամանակ, յերբ նա փորձեց միացնել քաղաքական յերկու միանգաման տարբեր գծեր, միացնել Լենինի և Տրոցկու տեսակետները:

իր ճառերից մեկում, ընկ. Բուխարինը հայտարարեց.

«Ընկ. Զինովյեվը ասում էր, թե արհմիությունները կոմմունիզմի դպրոցն են, իսկ Տրոցկին ասում էր, վոր դա արտադրության կառավարման վարչական-տեխնիկական մի ապարատ է: Յես չեմ գտնում տրամաբանական այնպիսի հիմքեր, վորոնք ապացուցելին, թե ճիշտ է վոչ առաջինը և վոչ չերկրորդը. ճիշտ են այդ չերկու դրուլթյունները և այդ չերկու դրուլթյունների միացումը»: *)

Բնորոշելով ընկ. Բուխարինի «բուֆերային» դիրքը և չերևան հանելով նրա սխալ լինելը, Լենինը գրում էր.

«Թե մեկը և թե մյուսը», «մի կողմից—մյուս կողմից» ահա Բուխարինի տեսական դիրքը: Դա հենց եկլեկտիզմն է: Դիալեկտիկան պահանջում է բազմակողմանի կերպով հաշվի առնել փոխհարաբերությունները՝ նրանց կոնկրետ զարգացմամբ, և վոչ թե փրցնել մի կտոր մեկից, մի կտոր մյուսից»: Տրոցկին չի հասկացել, վոր հարկավոր է և կարելի չի արհմիություններին մոտենալ վորպես դպրոցի, և՛ այն ժամանակ, չերբ առաջադրում ես խորհրդային տրեդունիոնիզմի թեման, և այն ժամանակ չերբ խոսում ես ընդհանրապես արտադրական պրոպագանդի մասին, և՛ այն ժամանակ չերբ հարցն առաջադրում ես այնպես, ինչպես Տրոցկին՝ արտադրության կառավարման մեջ արհմիությունների «միաձուլման» մասին, նրանց մասնակցության մասին: Այդ վերջին հար-

*) Քաղվածք Լենինի գրվածքների ժողովածուից, հատոր 18, ս 1-ին, էջ 54:

ցում այնպես, ինչպես նա արծարծված է Տրոցկուամբողջ բրոշյուր-պլատֆորմում, սխալն այն է, վոր նա չի հասկանում թե արհմիությունները հանդիսանում են արտադրության վարչատեխնիկական կառավարման դպրոցը: Վոչ թե «մի կողմից դպրոց, մյուս կողմից ինչ վոր այլ բան», այլ բոլոր կողմերից—տվյալ վեճում, Տրոցկու կողմից հարցի տվյալ դրվածքի պայմաններում, արհմիությունները հանդիսանում են զբաղրոց, միացման դպրոց, համերաշխության դպրոց, իրենց շահերի պաշտպանության դպրոց, անտեսավարելու դպրոց, կառավարման դպրոց: Փոխանակ հասկանալու և ուղղելու ընկ Տրոցկու այդ արմատական սխալը, ընկ. Բուխարինը տալիս է ծիծաղելի մի ուղղում՝ «մի կողմից—մյուս կողմից» *):

Ընկ. Բուխարինի եկլեկտիզմը չափազանց ցայտուն չերևան է գալիս նաև ներկայումս, չերբ նա ամեն տեսակ փորձեր է անում ինքնուրույն կերպով լուծելու կուսակցության և Կոմիտեերնի առաջ գրված հիմնական խնդիրները: Այդպես, որինակ՝ նրա «Կադմակերպված կապիտալիզմի» տեսությունը ամբողջովին եկլեկտիկ մի կառուցվածք է: Բուխարինը սոցիալ-դեմոկրատիայից վերցնում է նրանց պնդումները՝ ժամանակից կապիտալիզմի ներքին հակասությունների թուլացման, ճգնաժամերի աստիճանաբար վերացման, արտադրության անարխիայի մասին և եկլեկտիկորեն միացնում է այդ պնդումին դասակարգային պայքարի սրման թեզը: Բուխարինը սոց.-դեմոկրատիայից վերցնում է նրանց թեզն իմպերիալիստական առանձին պետությունների շրջանակներում մրցության վե-

*) Լ.ԵՆԻՆ. հատոր 18, մասն 1-ին, էջ 56—57:

բացման մասին և դրան հիլեկատիկորեն միացնում և համաշխարհային շուկայում մրցութչան սրման վերաբերյալ պնդումը: Մակայն, ինչպես մատնանշեցինք վերև, Բուխարինին չի հաջողվում մնալ եկեկատիկ դիրքերում և յեթե նա չի խոստովանում իր սխալները, ապա իրերի տրամաբանութչամբ նա հանգելու յե սոցիալ-դեմոկրատական հեռուդական տեսութչան, բոլոր կետերում հանգելու յե կապիտուլացիայի՝ ուեֆորմիստական իդեոլոգիայի առաջ:

Վերցնենք ընկ. Բուխարինի սոցիալիստական հեղափոխութչան տեսութչունը, «Անցողիկ» շրջանի ըմբռնումը: Այդ տեսութչունը հանդիսանում և մարքսիզմի և սեմիդիոնիզմի հիլեկատիկ միացումը: Տնտեսական քաղաքականութչան հարցերում, Բուխարինը յուրացնելով բուրժուական տնտեսագետների կառուցած խորհրդային տնտեսութչան զարգացման տեսութչունը, վերցնելով նրանցից մեր տնտեսական դեմոկրատիկոններին անալիզը, փորձում և, մեր զարգացման և կոմունիստական կուսակցութչան խնդիրների բուրժուական կոնցեպցիայի հիլեկատիկ միացմամբ, կառուցել լենինյան ձիշտ քաղաքականութչունը: Իսկ գործնականում, ստացվում և, հարկավ, վոչ ալ ինչ, բայց յեթե ուղիղ ճանապարհով դեպի բուրժուական ուստավրացիան ասնող քաղաքականութչան զարգացումը կոմունիստական լոզունգներով:

ԸՅԿ. Բուխարինի «սոցիոլոգիան»

Վոչ պակաս եչական են նաև ընկ. Բուխարինի սոցիոլոգիական սխալները: Սոցիոլոգիայի առարկայի ըմբռման և հասարակութչան վորոշման հարցերում,

ընկ. Բուխարինը, ինչպես նշել և նաև լենինը, գերիչե բուրժուական սոցիոլոգիային: Վերջինս, ինչպես հայտնի յե, հասարակութչունը համարում և յուրատեսակ մի որգանիզմ, վորի առանձին տարրերը կատարում են տարբեր, սակայն անհրաժեշտ դեր ընդհանուր ամբողջութչան մեջ, և չեն կարող հեռացված լինել վերջինից, առանց եչական վնաս հասցնելու «որգանիզմին»: Հասարակութչան և հասարակական զարգացման որենքների նույնացումը որգանիզմի, բիոլոգիական որենքների հետ հարկավ բացատրվում և նրանով, վոր բուրժուազիսայի տեսաբանները ցանկանում են ցույց տալ, թե կապիտալիստները հասարակական ամբողջութչան տյնպիսի անհրաժեշտ տարրն են, վորը չի կարելի վոչընչացնել, վորովհետև որգանիզմից չի կարելի հեռացնել նրա եչական որգանը: Բուրժուական սոցիոլոգները, հասարակութչունը որգանիզմին նմանեցնելով, արդարացում էյին նաև դասակարգային անհավասարութչունը, բանվորները, իբրև թե հասարակութչան ձեռներ են, իսկ բուժուազիան՝ ուղեղը: Թվում է թե այդպիսի անբովանդակ և գուհիկ նմանութչունները անընդունակ են իրենց ցանցի մեջ զցելու Մարքսի տեսութչունն ուսումնասիրած մարդուն: Մակայն, այդ տեսութչունները Բուխարինին դրավել են հենց իրենց պարզութչամբ և ներդաշնակութչամբ, գրավել են նրանով, վոր հասարակական զարգացման որենքները ներսուզվել են բիոլոգիական որենքների մեջ, իսկ հասարակական տնտեսական առանձին կարգերի, արտադրութչան առանձին յեղանակների յուրահատուկ զարգացման որինաչափութչունները կսծկվել են:

Բուրժուական «սոցիոլոգներին» հետքով, Բուխարինը հրապուրվել է հասարակության և բիրտղիտական որգանիզմների միջև նմանություն գտնելով, միևնույն ժամանակ, մոռանալով, մարդկային հասարակության տարբեր շրջանների զարգացման յուրահատուկ որենքները: Այդ հանգամանքը Լենինին հաշտնի չեր և այդ պատճառով նա արդեն Ն. Ի. Բուխարինի «Անցողիկ շրջանի եկոնոմիկան» գրքի «Տրանսֆորմացիոն պրոցեսի ընդհանուր տեսությունը» լինթավերնագրին ավելացնում է հետևյալ դիտողությունները. «Սա թնչ բան է», «ընդհանրապես» ալլա Սպենսեր...»

Ընկ Բուխարինը, բնորոշելով հասարակությունը, գրում է, թե հարկավոր է «հասարակությունն ինքը համարել տարբերի կազմակերպությունը նրանց բնական-առարկայական բնութագրությունը»: Զարմանալի չէ, վոր հասարակության այդպիսի գոնիկ ըմբռնումը հանդիպեց ամենավճռական հակահարվածի Լենինի կողմից, վորը «Անցողիկ շրջանի եկոնոմիկան» գրքի լուսանցքում, այն կետի դիմաց, վորտեղ Բուխարինը հասարակությունը վորոշում է, «վորպես տարբերի սիստեմը in natura (նատուրալ ձևով) բացականչում է. «Ոգնություն»:

Արտադրական հարաբերությունները, վորոնց մեջ ամենաեյակական նշանակություն ունեն այսպես կոչված «գույքային» հարաբերությունները, մարդկանց առանձին խմբակների վերաբերմունքը դեպի արտադրության միջոցների սեփականությունը, Բուխարինը նույնացնում է մարդկանց տարածական բաշխմանը:

«Մենք, գրում է նա, — քննելով արտադրական

հարաբերությունները, նույնացնում ենք դրանք մարդկանց տարածական բաշխման հետ»:

Մնում է միայն զարմանալ, վոր արտադրական հարաբերությունների այդպիսի հրեշավոր հակամարտ սիստեմական գոնիկ նատուրալիստական մեկնաբանությունը կարող էր գուրա գալ «Մարքսիզմն ուսուսնասիրած ընկերոջ» գրչի տակից: Սակայն դա ամբողջովին զուգակցվում է այն փորձերի հետ, վորով Բուխարինը աշխատում է յուրահատուկ տարբերությունները կոծկել հասարակական-տնտեսական առանձին ֆորմացիաների որինաչափությունների հատուկ բընուկթով:

Հասարակության այն վորոշման մեջ, վոր տալիս է ընկ. Բուխարինը, համարյա միշտ վորձատված է դասակարգային բովանդակությունը: Նա գործածում է «սոցիալական սիստեմ», «հասարակական ֆորմացիա» հասկացողությունները՝ առանց դասակարգային վորոշ բովանդակություն դնելու նրանց մեջ: Այդ հանգամանքը Լենինին հարկադրում է նշելու, վոր «սոցիալական սիստեմը» «հասարակական ֆորմացիան», այդ բոլորը բավականաչափ կոնկրետ չէ առանց դասակարգ յեվ դասակարգային նաստակություն հասկացողության»: *)

Սակայն, չափազանց անբարեհաջող վիճակի մեջ է նաև բուխարինյան դասակարգ հասկացողությունը: Նախ և առաջ, Բուխարինը կասկածելի կերպով հաճախակի խուսափում է «դասակարգ» հասկացողությունից, խոսելով «հասարակական-մարդկային խմբավորումների» («Անցողիկ շրջանի եկոնոմիկան»), կամ

*) Ընդգծված է Լենինի կողմից:

«հասարակական ամբողջութեան մասերի» մասին («Լեւնինը, վորպես մարքսիստ»): Նրա համար դասակարգերը նախ և առաջ հասարակական ամբողջութեան տարրեր են. ընդգծելով միասնութեան մեծնետը, նա մոռանում է պայքարի մասին:

Լեւնինը չի կարող աչքաթող անել այն հանգամանքը. «Այդ տերմինոլոգիան. — ասում է նա, — դասակարգերի դիտավորյալ փոխարինումը խմբավորումներով և այլն արդէօք մի քայլ չի դեպի յետ, դեպի «չափերտավոր սոցիոլոգիան», այսինքն՝ դարձյալ դեպի Սպենսերիան հոչակավոր սոցիոլոգիան, վորը կոծկում է հասարակութեան յուրահատուկ գծերը և մասնավորապես նրանում տեղի ունեցող դասակարգային պայքարը:

Դասակարգի այն վորոշումը, վոր տալիս է ընկ. Բուխարինը, չափազանց անորոշ է: Յեթե կիրառենք նրա հասկացողութիւնը, ապա կարելի յի, որինակ, ամբողջ գյուղացիութիւնը այսինքն՝ ներառյալ նայել կուլակները, համարել մի դասակարգ: Հիրավի, Բուխարինը գրում է. — «Դասակարգերը ներկայացնում են նախ և առաջ անձերի խմբակներ, վորոնք միացած են ընդհանուր պայմաններով և ընդհանուր դերով արտադրութեան պրոցեսում՝ այստեղից բոլոր գետեանքներով՝ բաշխման պրոցեսի համար»: Դասակարգի այս վորոշումը, վոր տալիս է ընկ. Բուխարինը, անմիջականորեն բղխում է նրա հասկացողութիւնից արտադրական հարաբերութիւնների մասին, վորպես մարդկանց բաշխումը տարածութեան մեջ: Արտադրական հարաբերութիւնների տեխնիկական հասկացողութիւնից հետեում է նաև դասակարգի տեխնիկական հասկացողութիւնը:

Այն փաստը, վոր դասակարգերին միացնում են նրանց ընդհանուր դերը վոչ թե ընդհանրապես արտադրութեան պրոցեսում, վոչ թե արտադրութեան տեխնիկական կարգերում, այլ արտադրութեան հասարակական պրոցեսում, այստեղ բոլորովին կոծկելված է: Սակայն այդ հնարավորութիւնն է տալիս խոսելու գյուղատնտեսների դասակարգի մասին, կոշկակարներին, դերձակներին և այլ դասակարգերի մասին: Ընկ. Բուխարինը այդպիսի աչքի ընկնող անհեթեթ հետեութիւններ չի անում, սակայն ժամանակակից գյուղացիութեան մեկնաբանումը, վորպես դասակարգ, սերտորեն շաղկապված է մարքսիզմի այն խճողման և խեղաթյուրման հետ, վոր գոյութիւն ունի դասակարգի բուխարինյան վորոշման մեջ:

Բացի դրանից, ընկ. Բուխարինի վորոշումը ծածկում է դասակարգային շահագործման հարաբերութիւնը: Քննադատելով դասակարգի բուխարինյան վորոշումը, Լեւնինը գրում է. — «Դասակարգերը ներկայացնում են նախ և առաջ «անձերի խմբակներ» (ճշգրիտ չի ասված), վորոնք տարբերվում են արտադրութեան հասարակական կարգերում իրենց ունեցած դրութեամբ և տարբերվում են այնպես, վոր մի խմբակ կարող է յուրացնել մյուս խմբակի աշխատանքը»:

ԸՅԿ. Բուխարինի հեղափոխութեան տեսութիւնը

Ընկ. Բուխարինը իր հեղափոխութեան տեսութիւնը կառուցել է հասկացողութիւնների բողբոջման սխալաստիկայի բոլոր կանոններով, մի սխալաստիկա, վորով ընկ. Բուխարինը փոխարինել է հե-

դափոխութեան իսկական պրոցեսի ուսումնասիրումը: Բուխարինի հեղափոխութեան տեսութեան մեջ ամեն ինչ բաժանված է ըստ արկղերի, ըստ դարակների. նա ստեղծել է հեղափոխութեան տարբեր փուլերի փոխարինման բաժանանին ներդաշնակ մի սխեմ, ամեն նեխն մտահոգված չլինելով, վոր այդ սխեմը վոչ մի առնչութեան չունի իրականութեան հետ:

Ըստ Բուխարինի, հեղափոխութեանն իր զարգացման ընթացքում անցնում է չորս փուլ՝ իդեոլոգիական, քաղաքական, տնտեսական և տեխնիկական: Վերջանում է մի փուլը, սկսվում է մյուսը: Բուխարինի տեսութեանը չափազանց լավ հիշեցնում է գեներալ Պֆուլի բոլորի կողմից ծաղրի յենթարկված հետևյալ ստրատեգիան՝ առաջին գորաստունն առաջ է շարժվում, յերկրորդ գորաստունն առաջ է շարժվում և այդպես շարունակ:

Սակայն, ուշի ուշով դիտենք ընկ. Բուխարինի այդ անճոռնի սխեմը, վորի շրջանակներում նա փորձում է պարփակել իրական պրոցեսները:

Ըստ ընկ. Բուխարինի, հեղափոխութեան առաջին փուլն է հանդիսանում իդեոլոգիական կամ «իդեոլոգիական հեղափոխությունը, վորը կայանում է հին հոգեբանության յեվ իդեոլոգիայի վոչնչացման (վերջինս կործանում են կյանքից ներխուժած փաստեր) յեվ նոր իսկական հեղափոխական հոգեբանութեան և իդեոլոգիայի ստեղծման մեջ»: «Հեղափոխութեան յերկրորդ փուլն է հանդիսանում քաղաքական հեղափոխութեանը, այսինքն իշխանութեան գրավումն նոր դասակարգի կողմից»: «Հեղափոխութեան յերրորդ աստիճանն է հանդիսանում տնտեսական հեղափոխութեանը»: «Վեր-

ջապես, հեղափոխութեան չորրորդ (և վերջին) փուլն է հանդիսանում սեխնիկական հեղափոխությունը: Յերբ ձեռք է բերվել հասարակական նոր հովասարակչութեան, այսինքն, յերբ ստեղծվել է արտադրական հարաբերութեաններին նոր կայուն մի պատշան, վորը կարող է ծառայել վորպես արտադրական ուժերի զարգացման ձև, վորոշ կետից սկսվում է նրանց արագացրած զարգացումը: Սոչընդոտները շարգված են, սոցիալական ճգնաժամի պատճառած վերքերը բուժված են, սկսվում է աննախընթաց մի վերելք: Մտցվում են նոր գործիքներ, զցվում է տեխնիկական նոր հիմք - տեղի չե ունենում տեխնիկական հեղափոխութեան»:^{*})

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել հետեյալը: Ըստ Բուխարինի, տնտեսական հեղափոխութեանը կատարվելուց հետո, սկսվում է տեխնիկական հեղափոխութեանը, իսկ տնտեսական հեղափոխութեանը վերջանում է: Սակայն այդ նշանակում է, վոր վերջանում է սոցիալական հեղափոխութեանը, վորովհետև տեխնիկական հեղափոխութեանը տեղի չե ունենում տնտեսական հովասարակչութեանը հաստատվելուց հետո: Այդ պատճառով, յերբ այժմ Բուխարինը պնդում է, թե մենք թեակոխել ենք սեխնիկական^{**}) հեղափոխութեան շրջանը, ապա դա պետք է նշանակի, վոր մեր յերկրում սոցիալական հեղափոխութեանն արդեն

^{*}) Ն. Բուխարին: «Պատմական մատերիալիզմի տեսութեանը» էջ 291--297:

^{**}) Տե՛ս Բուխարինի յիւլյթը ՆՍՂՄ-ի ԺՏԳՆ-ի 4-րդ պետումում, «Առևտրական-արդյունաբերական թերթ», 1929 թ. հոկտեմբերի 14:

վերջացել է, թե արդեն ձեռք է բերվել «հասարակա-
կան հավասարակշռութուն» և պրոլետարիատի խըն-
դիրն է վոչ թե շարունակել հասարակութւնն հեղա-
փոխական վերակառուցումը, այլ, առաջ յեկած սը-
տադրական հարարերութւններէ հիման վրա, Եւրո-
հովել արտադրական ուժերի զարգացումը:

Ընկ. Բուխարինի պրոլետարական հեղափոխու-
թւան տեսութւնն ավելի վորոշակի յեղարգացրել իր
«Լենինը վորպես մարքսիստ» ղեկուցման մեջ: Այս-
տեղ արդեն Բուխարինը կատարելապէս ամբողջաց-
նում է իր տեսութւնը: Դեռ «Պատմական մատե-
րիալիզմի տեսութւնն մեջ» նրա դործած սխալներն
այստեղ ավելի խորացված են: Այդ պատճառով, ընկ.
Բուխարինի պրոլետարական հեղափոխութւնն տեսու-
թւան սպարտայուստական գեմքն ավելի լավ է
ցույց տալ նրա ավելի ուշ զրված աշխատութւննե-
րի մեջ:

Այստեղ Բուխարինը սնդում է վոր մեզանում
սոցիալական հեղափոխութւնը վերջացել է արդեն,
չերբ պրոլետարիատը նվաճել է իշխանութւնը և պե-
տականացրել է տնտեսական հիմնական հրամայական
բարձրունքները: Այդ վերակազմութւններէց հետո,
վորոնք հիմնականում իրադործվել են դեռ 1917—18
թվականների շրջանում, քաղաքացիական պատերա-
մը վերջանալուց հետո, սկսվել է անցողիկ հասարա-
կութւնն սոցիալական խաղաղ եվոլյուցիայի, «որգա-
նական զարգացման» շրջանը:

«Պրոլետարիատի դիկտատուրայից հետո, ստում
է ընկ. Բուխարինը, չէ վոր սկսվում է զարգացման
որգանական շրջանը: Յեթե արդեն ունենք նվաճված

բանվորական դիկտատուրա, ապա միանգամայն
պարզ է, վոր փոխվում է հարցի ամբողջ զրվածքը,
փոխվում է արմատներն, ինչպես փոխվում է ուրիշ
առ հարցերի զրվածքը: Յեվ ահա, յերբ մենք ու-
զում ենք պատասխան տալ այն հարցին, թե ի՞նչ է
տեղի ունենալու բանվոր դասակարգի կողմից իշխա-
նութւնը նվաճելուց հետո (ըստ ինքյան հասկա-
նալի չե, քանի մենք վերցնում ենք մի առանձնացած
չերկէր) — ապա պատասխանն ասում է՝ այդ յերկէր
մեջ հետագա զարգացումը դեպի սոցիալիզմն ընթա-
նում է եվոլյուցիոն ճանապարհով և այլ կերպ չի կա-
րող ընթանալ: Այսինքն, այլ խոսքով՝ բանվոր դա-
սակարգի կողմից իշխանութւնը նվաճելուց հետո
չե սկսվում ներառումը իսկական սոցիալիզմի մեջ:

Վլադիմիր Իլյիչ Լենինը այդ բանը ճշտիվ չի
ձևակերպել այստեղ: Սակայն կարելի չե բերել տնթիւ
կետեր, Վ. Ի. զրվածքներից՝ լուսաբանելու համար
այս միտքը:

Առանձնապէս իր վերջին հոգվածներում, որի-
նակ, այն հոգվածում, վորտեղ խոսքը վերաբերում է
կոոպերացիային, նա ուղղակի ստում է, վոր յեթե
հասարակական զարգացման նախորդ շրջանում մեր
ձգտումների առանցքն է կազմել մեր հեղափոխական
գիծը, կատաստրոֆների գիծը, ապա այժմ մեր շինա-
րարութւնն ընթացիկ շրջանում, մեր քաղաքականու-
թւան առանցքն է հանդիսանում կազմակերպչական
խաղաղ աշխատանքը: Այդ ձևակերպումով նա ասում
է նույնը, ինչ վոր հենց նոր ասացի յես»*

*) Ն. Բուխարին: — «Ատտակա». — Տեսական հոգվածների
ժողովածու, էջ 275:

Այդպէս ուրեմն, ընկ. Բուխարինը պնդում է, վոր իշխանութիւնը պրոլետարիատի կողմից նվաճելուց հետո, պրոլետարական հեղափոխութիւնը վերջանում է և սկսվում է եվոլյուցիոն զարգացումը, տընտեսական վոչ սոցիալիստական ձեերի խաղաղ ներահումը սոցիալիզմի մեջ: Սակայն, այդ պնդումն վոչ այլ ինչ է—բայց չեթե մարքսիզմը—«լենինիզմի արմատական դրուլթներից մեկի ուկղիան և կապիտալիզմից դեպի սոցիալիզմը տանող անցողիկ շրջանի իրական բովանդակութիւն լիկատար խեղաթյուրումն:

Հիրավի, անցողիկ շրջանի գլխավոր խնդիրն է հանդիսանում կապիտալիստական տնտեսական ձեերի դուրս մղումը և մանր, առանձնացած, անհատական-գյուղացիական տնտեսութիւն վերակառուցումը, վերափոխումը կոլլեկտիվ տնտեսութիւն: Սակայն այդ իսկական հեղափոխական աշխատանք է: Վորովհետեւ եվոլյուցիան, ի տարբերութիւն հեղափոխութիւնից, յենթադրում է վորեւ բանի վարակական փոփոխութիւնը, ավելացումն կամ նվազումն այն հատկութիւնների կամ հատկանիշների, վորոնք արդեն հատուկ են տվյալ «իրին»: Ի՞նչ է մանր գյուղացիական տնտեսութիւն եվոլյուցիոն զարգացումը: Դա նրա զարգացումն է իր սեփական մանր-բուրժուական հիմքի վրա: Իսկ մանր տնտեսութիւնների փոխանցումը կոլլեկտիվ տնտեսավարման, նրանց միացումը կոլտնտեսութիւններին մեջ, իր հյութիւնը, հեղափոխական պրոցես է:

Սակայն Բուխարինը փորձում է անցողիկ շրջանի իր ուկղիտնիստական տեսութիւնը վերագրել Լենինին: Իբրև թե Լենինը, կոպերացիային վերա-

բերյալ իր հողվածում «խոսելով այն մասին, վոր մեր քաղաքականութիւնն առանցքն է հանդիսանում կաղմակերպչական խաղաղ աշխատանքը, դրանով իսկ ասել է, թե մենք, իշխանութիւնը նվաճելուց հետո, այլևս չենք ձգտում կիրառել մեր հեղափոխական դիժը և կուրս ենք բռնում դեպի խաղաղ եվոլյուցիան: Ուստի, տեսնենք, թե իրոք ի՞նչ է ասել Լենինը «կոպերացիայի մասին» հողվածում:

«Սուաջ,—գրում է Լենինը,—ծանրութիւն կենտրոնը դնում եչինք և պետք է դնելինք քաղաքական պաշտարի վրա, իշխանութիւնն նվաճման վրա և այլն: Իսկ այժմ, ծանրութիւն կենտրոնը փոխվում է այնքան, վոր նա փոխադրվում է կաղմակերպչական, խաղաղ «կուլտուրական» աշխատանքի վրա»: ⁴²⁾

Կարելի՞ չե, միթե, Լենինի այս միտքը մեկնաբանել բուխարինյան այն մտքով, այն է՝ թե պրոլետարիատի կողմից իշխանութիւնը նվաճվելուց հետո «զարգացման ամբողջ կարգը կանգնում է որիգինալ եվոլյուցիոն շարքով»: Ի հարկե, չի կարելի: Այստեղ Լենինը միայն ասում է, թե փոխվում են մեր հեղափոխական աշխատանքի մեթոդները, թե իշխանութիւնը նվաճելուց հետո, պրոլետարիատն իր հեղափոխական աշխատանքի ծանրութիւն կենտրոնը փոխադրում է եկոնոմիկայի և կուլտուրայի վերակառուցման վրա, թե որակարգի հարց է դառնում տնտեսական և կուլտուրական հեղափոխութիւնը:

Վոր այդ իրոք այդպէս է, վոր միմիայն այսպիսի միտք կարող եր գնել Լենինը վերոհիշյալ խոսքե-

⁴²⁾ Լենին.—Հատոր 13, մասն 2-րդ, էջ 134:

րի մեջ, չերևում է նրա մի շարք ուղղակի հայտարարու-
թյուններէից: Այդպէս որինակ, «Սորհրդային իշ-
խանութեան հերթական խնդիրները» հոդածի սկզբ-
նական ուրվագծում, վոր Լենինը գրել է 1918 թվա-
կանի մարտին, այսինքն, այն շրջանում, չերբ Բրես-
տի խաղաղութեան պայմանագիրը կնքվելուց հետո,
յերկիրը վորոշ դադար եր սաացել, Լենինը, միքիչ
այլ ձևով, արատհայտել է նույն մտքերը, վորոնք ար-
տահայտված եյին նրա «Կոռպերացիայի մասին» հոդ-
վածում:

«Գործնականութեան և գործարարութեան լո-
զուենքը, ասում եր Լենինը,—քիչ ժողովրդականու-
թյունն է վայելում հեղափոխականների մեջ: Կարելի
լն նույնիսկ ասել, վոր նրանց մեջ չկար դրանից պա-
կաս ժողովրդական լոզուենք: Միանգամայն հասկանա-
լի չի, վոր քանի դեռ հեղափոխականների խնդիրն եր
կործանել կապիտալիստական հին հասարակութունը,
նրանք բացասաբար և ծաղրով պետք է վերաբերվելին
դեպի այդպիսի մի լոզուենք: Վորովհետև այն ժա-
մանակ, դործնականում, այդ լոզուենքի տակ այս
կամ այն ձևով, ձգտումն եր թագնոված՝ հաշտվելու
կապիտալիզմի հետ կամ թուլացնելու պրոլետարիատի
գրոհը կապիտալիզմի հիմքերի վրա, թուլացնելու հե-
ղափոխական պայքարը կապիտալիզմի դեմ: Միան-
դամայն հասկանալի չի, թե ինչպէս արմատորեն
պետք է փոխվեր գործը՝ իշխանութունը պրոլետա-
րիատի կողմից նվաճվելուց հետո, այդ իշխանութունն
ապահովելուց հետո, նոր, այսինքն՝ սոցիալիստական
հասարակութեան հիմքերը լայն մասշտաբով ստեղծե-
լու աշխատանքներին ձեռնամուխ լինելուց հետո»:

Հենց այստեղ ել, նախազգուշացնելու համար իր
խոսքերի այնպիսի բացատրութեան հնարավորությու-
նը, թե պրոլետարիատի կողմից իշխանութունը
նվաճվելուց հետո, սոցիալիստական հեղափոխութունը
վերջանում է, Լենինը շարունակում է.

«Մենք այժմ ևս, ինչպէս վերև նշեցինք, իրա-
վունք չունենք մաղաչափ անգամ թուլացնելու վոչ մեր
աշխատանքը՝ ազգաբնակչութեան մասսաներին մեր
պաղափարների ճշտութեան մեջ համոզելու համար,
վոչ մեր աշխատանքը շահագործողների դիմադրու-
թյունը կործանելու ասպարիղում: Սակայն, այդ յեր-
կու ֆունկցիոնների կատարման մեջ գլխավորը մենք
արդեն արել ենք: Այժմ գլխավորն ու հերթականն է
հենց գործնականութեան, հենց գործարարութեան լո-
զուենքը... Հենց հանուն մեր հեղափոխական խնդիրնե-
րի կատարման, հենց հանուն այն բանի, վոր այդ խն-
դիրները չմնան վարպետ ուսուցիչ կամ վարպետ մի ան-
մեղ ցանկութուն, այլ իրոք վերածվեն իրականութեան,—
իրագործվեն անհապաղ,—հենց հանուն այդ նպատակի,
մենք այժմ՝ վարպետ մեր առաջին, հերթական յեղ ամե-
նագլխավոր խնդիրը պէտք է առաջադրենք կազմակերպ-
չական աշխատանքի հենց գործնականութեանն ու գոր-
ծարարութեանը: Այժմ գործը հենց նրանումն է, վոր
մենք ամեն կողմից ձեռնամուխ լինենք այն շենքի
գործնական կառուցմանը, վորի պլանը մենք վաղուց
արդեն գծել ենք, վորի տակի հողը մենք բավականա-
չափ հաստատուն կերպով ենք նվաճել, վորի համար մենք
բավականաչափ նյութ ենք հավաքել և վորն այժմ հար-
կավոր ե պատելով նրան ոժտանդակ վերելակներով, հա-
գածքանփորական շորերը, առանց վախենալու վերջինս

ամեն տեսակ սժանդակ նյութերի մեջ կեղտոտելուց, խստիվ կատարելով գործնական աշխատանքը դեկավարող անձանց կարգադրությունները, — հարկավոր և կառուցել այդ շենքը, կառուցել և կառուցել»։*)

Բնորոշ և վոր Բուխարինը, թե այն ժամանակ և թե ներկայումս չեք հասկանում այդ նշանակալից միտքը, վոր արտահայտել եք Լենինը դեռ 1918 թվականին և վորը նա կրկնել եք իր «Կոոպերացիայի մասին» հոդվածում։ Այն ժամանակ, 1918 թվականին Բուխարինը, յենթարկվելով կատաղած մանր բուրժուազիայի օրամագրությանը, Լենինի լողունգի մեջ գտնում եք՝ և՛ «իշխանության տատանումը», և՛ սոցիալիզմի սկզբունքներից շեղում, և՛ կապիտուլացիա բուրժուազիայի առաջ, և՛ ուրիշ շատ բաներ։ Այն ժամանակ Բուխարինը վճռաբար մերժում եք հեղափոխական գործնականության լենինյան լողունգը, հակադրելով դրան իմպերիալիզմի դեմ հեղափոխական պայքար մղելու լողունգը։ Ներկայումս Բուխարինը օպպորտունիստորեն խեղաթյուրում և Լենինի այդ միտքը, վերջինս համարում և հրաժարումն հեղափոխական գծից և, ընդունելով այն այդպիսի ձևով, դնում և իր ռեվիզիոնիստական կառուցվածքներին հիմքում։

Այժմ վերցնենք սոցիալիստական հեղափոխության լենինյան ավելի ընդհանուր ձևակերպումը։ Մասնանշելով, վոր սոցիալիստական հեղափոխությունը չի սահմանափակվում իշխանության գրավման խնդրով, վոր դրան ավելանում են հսկայական դժ-

*) Լենին.— Գրվածքների ժողովածու.— հրատ. 2-րդ, հատոր 22, էջ, 424.

վարություններ ներկայացնող չերկու խնդիրներ ևս, այն և՛ ներքին կողմակերպության և միջազգային հեղափոխության խնդիրները, Լենինը գրում եք.

«Սոցիալական հեղափոխության տարբերությունը բուրժուականից հենց այն և, վոր այնտեղ հան կապիտալիստական կազմակերպությունների պատրաստի ձևեր, իսկ խորհրդային պրոլետարական հեղափոխությունը պատրաստ չի ստանում այդ հարաբերությունները»։*)

Բացատրելով ընկ. Լենինի այդ միտքը, ընկ. Ստալինը գրում և.—

«Բուրժուական հեղափոխությունը սովորաբար ավարտվում և իշխանության գրավմամբ, այնինչ պրոլետարական հեղափոխության համար, իշխանության գրավումը հանդիսանում և միմիայն նրա (հեղափոխության) սկիզբը, ընդվորում իշխանությունը ոգտագործվում և վարպես լծակ՝ հին եկոնոմիկայի վերակառուցման և նորի կազմակերպման համար»։**)

Յեվ, վերջապես, դեռ Մարքսը «Գոտայի ծրագրի քննադատության մեջ» միանգամայն աներկբայ կերպով հայտարարել եք, վոր «կապիտալիստական և կոմմունիստական հասարակության միջև ընկած և առաջինը չերկրորդի վերածելու հեղափոխական շրջանը»։

Այդպիսով, դուրս և գալիս, վոր Բուխարինի կառուցած հեղափոխական զարգացման տեսությունը, այն պնդումը, թե պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճվելուց հետո, անհրաժեշտ և հրաժարվել հեղափոխական գծից — մարքսիզմի ազդեհող խեղաթյուրումն և։

*) Լենին.— Հատոր 15, էջ 126.

**) Ստալին.— Լենինիզմի հարցերը, էջ 126.

Սակայն, այդ տեսութեան սլախն ե կազմում Բուխարինի կոոպերատիվ սլանը, վորի համաձայն, գյուղացիական մանր տնտեսությունները, միանալով և կազմելով անևարական կոոպերացիա և զարգանալով իրենց սեփական հիմքի վրա, սահնակով սլանում են դեպի սոցիալիզմը, վորի համաձայն կուլակային կոոպերատիվ ընկերը նույնպես ներաճում են սոցիալիզմի մեջ, միմիայն մնալով այնտեղ, վորպես վորոշ չափով խորթ մարմիններ:

Պրոլետարիատի կողմից, իշխանությունը նվաճելուց հետո անդի ունեցող եվոլյուցիոն զարգացման վերաբերյալ իր տեսութեան ճիշտ լինելը ապացուցելու համար, ընկ. Բուխարինը և նրա համախոհները սովորաբար նուշնպես հենվում են Լենինի «Վոսկու նշանակութեան մասին» հոդվածի վրա, վորտեղ Լենինը ասում է, թե «1921 թվականի գարնանից, յերբ մենք այդպիսի (հեղափոխական--Ս. Պ.) մտայնման, սլանի, մեթոդի, գործողութեան սխառնի փոխարեն առաջագրում ենք... միանգամայն տարբեր, ռեֆորմիստական ախլի (մտայնում և ալլն--Ս. Պ.)»...*)

Հետևապես, ընկ. Բուխարինի կողմնակիցների կործիքով, գուրս և գալիս, վոր ինքը Լենինը անհրաժեշտ ե համարել գործողությունների ռեֆորմիստական մեթոդը պրոլետարական դիկտատուրայի շրջանում, իսկ դա նշանակում է, վոր, ըստ Լենինի, անհրաժեշտ ե ձգտել զարգացման եվոլյուցիոն ընուլթին:

Սակայն, Լենինի վրա հենվելու այդ փորձը իր նպատակին չի հասնում:

Լենինը, խտարբերութուն Բուխարինից, գոր-

*) Լենին.—Հատոր 18, մասն 1-ն, էջ 377:

ծողությունների ռեֆորմիստական մեթոդները որենք չեր գարձնում, դրանք բնորոշ չեր համարում պրոլետարիատի դիկտատուրայի ամբողջ շրջանի համար: Նշելով, վոր ռեֆորմները հանդիսանում են հեղափոխական զասակարգային պալքարի ոմանդակ արդյունքը, Լենինն ասում եր,—վոր այն յերկրի համար, վորտեղ պրոլետարիատը հաղթանակ է տարել, դրանք հանդիսանում են քրացի դրանից, անհրաժեշտ յեկ որինական մի դադար այն դեպքերում, յերբ ուժերը՝ նրանց մեծագույն լարումից հետո, ակնհայտորեն հերիք չեն գալիս այս կամ այն փոխանցումն հեղափոխականորեն կատարելու համար»...*)

Պակաս կեղծ չե ընկ. Բուխարինի փորձը՝ իր տեսությունների համար հենարան գտնելու քաղաքացիական խաղաղութեան վերաբերյալ Լենինի թեզում: Մյասնիկյանին գրած իր նամակում, Լենինն իրոք դրել է, վոր «Ով չի հասկանում քաղաքացիական պատերազմի լողունդի փոխարինումը քաղաքացիական խաղաղութեան լողունգով, նա ծիծաղելի չե, յեթե վոչ ավելի վատ»: Այդ հիման վրա, Բուխարինը Լենինին վերագրում եր իր այն տեսությունը, վորն ասում է, թե պրոլետարիատը, իշխանությունը նվաճելուց հետո, պետք է ձգտի «միացնելու հասարակական ամբողջութեան այլ և այլ մասերը», ձգտի դասակարգելի հաշտեցմանը, վոր նա պետք է հրաժարվի իր հեղափոխական գծից, փոխարինելով վերջինս կազմակերպչական աշխատանքով: Ըստ Բուխարինի, պետությունը դասակարգային տիրապետութեան գործիքից, թշնամի դասակարգելի ճնշման գործիքից, վերածվում

*) Լենին.—Հատոր 18, մասն 1-ին, էջ 382:

ե դասակարգերի հաշտեցման «հասարակական ամբողջութեան ամրացման» գործիքը:

«Բանվոր դասակարգը, գրում է ընկ. Բուխարինը,—իր սեփական պետութեան մեջ, թշնամիները բոլոր հարձակումները լետ մղելուց և խաղաղ շինարար աշխատանքն ապահովելուց հետո, այլ ես քաղաքացիական պատերազմ չի քարոզում չերկրում, այլ քարոզում է ներքին հաշտութուն՝ նոր իշխանութեան, նրա որենքները, նրա հիմնարկների լիակատար ճանաչման հիման վրա և բոլոր խավերի՝ ներառյալ նաև իշխանութեան նախկին հակառակորդների կողմից, այդ որենքներին և այդ հիմնարկներին յենթարկվելու հիման վրա» *)

Սակայն ընկ. Բուխարինը շափազանց ազատ, սխալ է մեկնաբանում Լենինի խոսքերը քաղաքացիական խաղաղութեան լողունգի մասին: Լենինը, հակադրելով քաղաքացիական խաղաղությունը քաղաքացիական պատերազմին, տառնում է միմիայն այն պարզ նշանաբանությունը, (այդ չհասկացողը հիրավի ծիծաղելի չէ, յեթե վոչ ավելի վատ), վոր քաղաքացիական պատերազմի լողունգը բանվոր դասակարգի կողմից իշխանությունը նվաճվելուց հետո, հանդիսանում է պրոլետարական դիկտատուրայի թշնամի ուժերի լողունգը: Սակայն, դրանով Լենինը բնավ չէր ուզում ասել, վոր պրոլետարիատը պետք է հրաժարվի դասակարգային պայքարը շարունակելուց, վորովհետև պրոլետարիատի դիկտատուրայի եյությունը, ինչպես

*) Ն. Բուխարին.—Սոցիալիզմի ուղին և բանվորայուղացիական դաշինքը:

շարունակ ընդգծել է Լենինը, հենց այն է, վոր մենք շարունակենք դասակարգային պայքարը նոր ձևերով: Այդպես, «Պրոլետարիատի դիկտատուրայի մասին» բրոշյուրի կոնսպեկտում Լենինը գրում էր.—

1. «Սոցիալիստների» կողմից պրոլետարիատի դիկտատուրայի չհասկանալու հիմնական աղբյուրն է այն, վոր նրանք մինչև իր վախճանին չեն հասցնում դասակարգային պայքարի զաղափարը (համեմատել Մարքս, 1852):

Պրոլետարիատի դիկտատուրան—դասակարգային պայքարի ռաբուճակումն է նոր ձևվերալ: Այդ է առանցքը, այդ չեն հասկանում. Պրոլետարիատը՝ նոր դասակարգը, միայնակ ռաբուճակում է իր դասակարգային պայքարը:

2. Պետությունը պրոլետարիատի զենքն է միայն նրա դասակարգային պայքարում, մի առանձին մահակ և ուրիշ վոչինչ: *)

Այսպիսով, անցողիկ շրջանի և պրոլետարիատի դիկտատուրայի բուխարինյան մեկնաբանությունը հանդիսանում է Լենինի ուսմունքի սեփականության խեղաթյուրում, նրա աղավաղումն ու ֆորմիստական վորոզ:



*) Լենինյան ժողովածու, 3, էջ 500—501:





ԳԻՆԸ 60 ՀՈՂ. ՄՇՍ. (8¹/₂ (ամրու))



Н. Леман и С. Покровский
ИДЕЙНЫЕ ИСТОКИ ПРАВОГО УКЛОНА
(Об ошибках и уклонах т. Бухарина)

Госиздат ССР Армении
Эривань—1930

«Ազգային գրադարան»



NL0181994

